

ԷԶՄԻԱԾԻՆ



Զ
1998

ՀՀՊ 196


ԾԴ ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՒՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ

ՀՀՊ

1998



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Հավատքը ապահովությունն է հույսերի և չտեսնված երևույթների իրականությունը».....	3
---	---

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց ՄԱԿ-ի գլխավոր ֆարտուղարի հետ ..	8
Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհակալական նամակը Ֆրանսիայի Ազգային Ժողովի նախագահին	9
Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի խօսքը Արժանքիճի Հանրապետության նախագահ ղեկավար Կարլոս Սաուշ Մենեսի Հայաստան պետության առթիւ	10
ԱՐԱՐԱՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱՓՈԹԱՆ - Ամսվերջի հանդիսություն Գևորգյան Հոգևոր ձեռնարանում	12
1700-ամյակին ընդառաջ. Տրդատի ամսառ	16
1998-ի ուխտագնացությունը՝ Ֆրանսիա-Հայաստան	17

ԿՐՈՆԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մակար արքեպսոս Հովհաննիսյանի ֆարգը՝ խոսված Մայր Տաճարում Ս. Գրիգոր Լուսավորչի վերապից ելնելու տոնին	20
Բագրատ արքեպսոս Գալստյանի ֆարգը՝ խոսված Մայր Տաճարում հունիսի 21-ի կիրակի օրը	22
Ս. Հովհանն Ոսկեբերանի աղոթքն է դեմս Սուրբ Երրորդության	26
ՖՐԱՆՑԻՍԿԱՆ ԳԸ ՍԱԼԻ - Ուղեցույց քարեպաշտ կյանքի	31
ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ - Հայոց հնագույն օրացույցային պատկերացումները ըստ Ազաթանգեղոսի «Հայոց պատմության»	45
ԼԻԼԻԹ ԽԱԶԱՏՐԹԱՆ - Ղևոնդ Վարդապետի «Պատմություն» երկի քառային փոխառությունների մասին	54
ԺԱՆ-ՄԱՐԻ ՄԱՐՏԻՆ - Արևելյանները Հարավային Իտալիայում	59
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍԻԱՆ - Հայ Եկեղեցու թեմական բաժանումը	68
ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆԻԱՆ - Եղի է նաև Խերույան մեխիական տոնի	77
ՀՐԱԶԵԱ ՄԻՐՋՈՒՄԱՆ - Ինքնաշարժում կամ մեկ նկարի պատմություն	81
ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍԻԱՆ - Ջափարիա Երեց Ավանցու ձեռագրական ժառանգությունը	90
ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԻԱՆ - Ղուկաս Կարենցի Կաթողիկոսի նամակագրությունը Ջարբլ-Կախեթի թագավոր Հերակլ Երկրորդի և վրաց թագավորական ընտանիքի անդամների հետ	99
ՄԵՐՈՒԺԱՆ ՄԿՐՏՋԻ ԿԱՐԱՊԵՏԻԱՆ - Հովսեփ Արղության Կաթողիկոսի նորահայտ տպագիր պատկերները	107

ՍԱՍՈՒՆԻԿ ՎԻՐԱՔԹԱՆ - Էջմիածնի վանքի ջրաշինարարական աշխատանքները	114
ԳՈՂԱՐ ՂԱԶԱՐԹԱՆ - Նորայր Բյուզանդացու անտիպ ցամակները	123
ԳԵՂԱՄ ՍՐԿ. ՄԱՐՏԻՐՈՍԹԱՆ - Ուրվագիծ Հայ եկեղեցու բարեկարգության պատմության	133
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿԹԱՆ - «Խաչի ցանապարհը»	142
ՐԱԳՐԱՏ ԱՔԵՂԱ ԳԱԼՍՏԹԱՆ - Տաթևը բող տա՛թև	148
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԹԱՆ - Սուրբ Սեդանի օծում և Սուրբ Պատարագ Խոր վերապում	152
Քրիստոնեական խորհրդածողով Պաղտատի մէջ	155
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՌՈՒԿԹԱՆ - Հայ հոգևոր արժեքները Աթենքում	158
ՄԱԹՐ ԱԹՈՌՈՒՄ - եկեղեցական բեմ. լուրեր	160
ԽՈՐԵՆ ԱՔԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍԹԱՆ - «Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը (1974-1983)	163
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикоата	175
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin.	177
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	179

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԽՄԱՍՏՈՒԹՅԱՆ

«ՀԱՎԱՏՔԸ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆՆ Է ՀՈՒՅՍԵՐԻ ԵՎ ՉՏԵՍՆՎԱԾ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«Նրանք պիտի զղջան իրենց մտքում և հոգու մեղությունից ճնշված, պիտի հառաչեն ու ասեն. «Սա այն մարդն է, որին մենք ժողորմ էինք մի ժամանակ և մախատինք էինք տալիս: Մենք՝ ամմիտներս, նրա վարքը մոլորություն էինք համարում, իսկ նրա վախճանը՝ անարգանք: Բայց նա ինչպե՞ս դասվեց Աստծու որդիների շարքը՝ դառնալով սրբերին վիճակակից: Ուրեմն մենք մոլորվեցինք ճշմարտության ճանապարհից, արդարության լույսը չլուսավորեց մեզ և մեր սրտերում չծագեց արդարության արեգակը»:

ԽՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ Ե 3-6

Իմաստության Գրքից վերցված և ճաշու ընթերցվածներում ի պատշաճի տեղ զբաղեցրած այս հատվածը բոլոր ժամանակներում էլ ասես սթափության է կոչում մարդ արարածին, որ Աստծու արարչագործության կատարելատիպն է և, ավելին, ստեղծվել է Նրա իսկ պատկերով ու միանությամբ:

Մարդկության պատմության չափ հին է նաև իմաստասիրությունը, որ ծագել է ի սկզբանե, ապրել ու զարգացել մարդ-Էակի հետ համաքայլ, լրացրել, կոնկրետացրել նրա միստ ու կացը, վայրիվելումներով լի կյանքը և մշտապես փորձել է պատասխանել հենց իրեն՝ մարդուն հուզող ամենադժվարին հարցերին. ո՞վ է ինքը, ինչպե՞ս է երևան եկել երկիր մոլորակի վրա և ինչո՞ւ են այնքան շատ իրեն շրջապատող աշխարհում գոյություն ունեցող երևույթներին առնչվող անպատասխան հարցերը: Ե՞րբ և ինչպե՞ս են տրվելու դրանք կամ տրվելո՞ւ են արդյոք: Ու թվում է, թե Արարիչն ամենեցուն՝ կենդանյաց և մեռելոց, թերևս վաղուց սպառած կլինեք բանական մարդու անպատասխան հարցերի հետաքրքրական շրջանակը, եթե, անշուշտ, չարի ու քարու ինքնագիտակցումը ի հայտ չգար:

Բոլոր ժամանակներում էլ Ամենակարող Տիրոջ աչալուրջ հսկողությանմբ, հերթով, մեկը մյուսին են փոխարինում մարդկային սերունդները, և ամեն մի սերունդ իր հետագիծն է թողնում կերտվելիք պատմության անմեկնելի մատյանում, ծնունդ տալիս անհատների, ովքեր իրենց գործերով փորձում են ոչ միայն «ամբողջացնել» արարչագործության մեծ խորհուրդը (եթե դրանք քարի են), այլև «ապականել, եղծել, աղավաղել» (անշուշտ, երբ ակնարկվում է չարը): Եվ չարի ու քարու մշտանորոգ

պայքարում դարձյալ դեմ-հանդիման լույսն ու խավարն են, գեղեցիկն ու տգեղը, սերն ու ատելությունը, ճշմարտությունն ու սուտը և, ի վերջո, այս ամենից բխող երջանկությունն ու ապերջանկությունը: Իսկ այս ամենի ամսիջական հիմքը մեղքն է, որ տարբեր իրավիճակներում ու տարբեր հասարակարգերում փոխում է իր արտահայտման կերպերը. ձևերն ու մեթոդները:

* *

Մեր ապրած ժամանակաշրջանում այնուամենայնիվ մեզանից յուրաքանչյուրն ըստ երևույթին համարյա չի զգում, իսկ ավելի ճիշտ՝ անտեսում է բարոյականությանն ճորմերը, չի ճանաչում մեղքի գոյությունն ամզամ: Այն մարմինը, որը Պողոս Առաքյալը *մահու մարմին* էր անվանում և իբրև բոլոր տառապանքների ծնունդ տվող աղբյուր նկատում, և որից մա այդքան մեծ տենչանք ազատվել էր ցանկանում, մեզ համար, ընդհակառակը, կյանքի միակ կայանն է, զվարճությունների ու երջանկության միջնորդը: Ամենօրյա փորձառությունը մեզ հուշում է, որ պատվերներ, խրատներ տալով, բարոյականության գրված ու չգրված կանոնները սովորեցնելով, անկարելի է մեկին բարոյական մարդ դարձնել, ում համար մեղքը եղկելի, իսկ արդարությունն ու ճշմարտությունը բաղձալի լինեն:

Հաճախ ենք մենք հրապուրվում պարզ ու զուլալ աղբյուրների անապականությամբ, լեռների վեհությամբ, ծառի երկմասլացությամբ, անտառի երգով, արծվի վեհաթոնիչ ճախրամքով, ջերմ ժպիտով հետևում գեղեցկին, սակայն ոչ մի անգամ մեզ չի հաջողվել գտնել այն տիպար մարդուն, դեպի որը բարձրանալը, մրան հասնելը մեր կյանքի միակ ու նվիրական նպատակը դառնար: Եվ Առաքյալը մատնացույց է անում Արարչին՝ մեր Տիրոջը, որ է միակ անմեղը՝ բարոյական բարձրագույն գիտակցությամբ հանդերձ, միջնորդն ու պարզակիչը աստվածային շնորհաց: Հետևաբար, դեպի միակ կատարյալն ու Ամենակարողը տանող ճանապարհն է իրականն ու ճշմարիտը, որով ընթանալու ձգտումը յուրաքանչյուր քրիստոնյայի պարտքն է և ավելին, կասեինք մույմիսկ՝ *հավատամքը*:

* *

Հաճախ ենք տեղին ու անտեղին հիշատակում մեր քրիստոնյա լինելը, փորձում նախնյաց նմանությամբ կրթել ու դաստիարակել մեր զավակներին նահատակաց անմեռ ոգուց բխող հայրենասիրությամբ ու ազգասիրությամբ, ինչու չէ, մույմիսկ հավատքի ամենամեծ դասից բխող հետևանքներով սնել մրանց մատաղ հոգիներն ու անդադար ասել. մենք 1700-ամյա հնությունն ունեցող հավատքի ճանապարհներով ենք առաջնորդել մեր ժողովրդին, առաքելահաստատ շափղներում են աստվածային սիրուց ու լուսից ճառագող բարիքներն արարվել, նահատակաց սուրբ

արյամբ է հագեցել մեր հիմնավոր ցողի ծարավը, մեր մտքի թոփառ պարագրվել է դեղնաթերթ մագաղաթներում, իսկ ձեռքի թոփառ լեռների ծերպերին ու անտառածածկ տափարակներում ծվարած հավատի քարակերտ տաճարներում... Այո՛, կրկնում ենք, ու հպարտությամբ մի տաք այլք գալիս և ստիպում է խայտալ մեր հոգիներին, բերկրանքից թևավորվել: Եվ մեր ՀԱՎԱՏԸ, որպես անդժեռի ԺՕՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, որպես «ՄՈՐԹՈՒ ԳՈՒԾՆ», այլ ոչ թե հագուստ, վեր է հառնում մեր աչքերի առջև պատմության դասագրքերից, հանրագիտարանային էջերից, կենաց ու մահու պայքարի դաշտերից, և մենք, ակամա անդրադառնալով մեր արածին ու չարածին, փորձում ենք մեր կողքին տեսնել այն մարդուն, մեր այն մտանակին, ում համար Աստվածային խոսքը վեր է առօրեականից, ախարճ՝ անարդարից, ճշմարիտը՝ ստից, կատարյալ՝ անկատարից, հավատճ՝ անհավատությունից:

Հեթանոսաց Առաքյալի Եբրայեցիներին ուղղած թղթի ԺԱ գլխում պարզ ու հստակ կերպով ասվում է. «Հավատքը ապահովությունն է հույսերի և չտեսնված երևույթների իրականությունը»: ՀԱՎԱՏՔԻ օգնությամբ են ապացուցվում անտեսանելի երևույթները, արդյունավորվում տեսնելն ու իղձերը և, վերջապես, հավատքով են գործում տեսիլք ունեցող մարդիկ: ՀԱՎԱՏՔԸ երկնային մի պարզ և՛ մարդուն շնորհված Տիրոջ կողմից, հավատացյալի կյանքում արդյունավորվելու և գործի վերածվելու համար: ՀԱՎԱՏՔԻ շնորհիվ է ներքին լույսը ծագում մարդկային հոգում, իսկ հավատացյալը՝ հոգևոր կյանքի երջանկությունն ապրած լինելու միջոցառությունն ունենում:

Այսօր, քան երբևէ, կենսական հարցերից մեկն էլ հավատի խնդիրն է: Բազում անձկությունների մեջ եղող մարդը, երբ ամեն ինչից հոգնած, փնտրտուքներ է անում, երազում նոր ու շիտակ ճանապարհների, ներդաշնակ և ուրախ կյանքի մասին, վստահորեն պետք է անդրադառնա ման հավատքին: Եթե մարդ-անհատը կարողացավ պարզ ու հստակորեն հայտարարել, թե ինքը հավատում է, ապա մնացյալ հարցերն ինքնաբերաբար կգտնեն իրենց պատասխանները. ինչպե՞ս և ո՞ւմ հավատալ, ինչպիսի՞ք են հավատքի դրսևորման ձևերը: Ըշմարիտ հավատքը երկինքներ է իջեցնում մարդկային հոգում, դարձնում այն երկնքից վար իջնող աստվածային լույսի նյութեղեն տաճար, բացում հավատքով առկեցում կյանքի դռները և լուսեղեն ճամփեքին ընդլայնում նոր հորիզոններ:



ՀԱՎԱՏՔԻ գործությամբ կերտեցինք մեր 1700-ամյա ուղին, սրբագրեցինք մեր պատմության ճերմակ էջերը և կրկին համախմբվեցինք մահատակաց արյամբ սրբացած Եկեղեցու շուրջ, Սրբոց հիշատակաց յուրաքանչյուր տոհի կրկին մկիրումով ծնկի իջանք Աստծո Տաճարում,

սակայն երբեք չստացանք ավետարանական քարի սերմնացանին, որ, անկախ մեր դիրքից ու գրաված պաշտոնից, տրամադրությունից ու կեցվածքից, շարունակեց մշտապես ցանել իր սերմերը մեր հոգիներում: Ցանված սերմերը դարեր ի վեր, շարունակաբար իջնում են երկնքից՝ իրենց ծարձակման, ծաղկման ու պտղաբերման համար հող ու իջևան գտնելու: Նախապես, որպես խոսք, բաշխվում են դրանք ամենքին ու ետ չեն վերադառնում, ինչպես երկնքից իջած անձրևն այլևս ետ չի վերադառնում, այլ մնում ու լուծվում է Մայր հողում:

Դարեր շարունակ Աստծու պատգամը՝ Ավետարանական սերմը, եկավ մաս Հայոց հինավուրց աշխարհ, զույգ Առաքյալների միջոցով դարձավ քարոզ, դարձավ լույս ու կրոն: Մեր հավատի հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ջանքերով դարձավ գիր ու շարական, դարձավ մագաղաթ ու գրականություն, դարձավ մշակույթ՝ Սահակ-Մեսրոպի ու Թարգմանիչ Վարդապետների տքնաջան աշխատանքով: Դարձավ արվեստ, դարձավ երաժշտություն ու նկարչություն, դարձավ քանդակ ու երգ՝ Հայ Եկեղեցու կառույցից մերս, դարձավ աղոթք՝ Նարեկացու շուրթերին, շարական՝ Շնորհալի Հայրապետի գրչի տակ, և, մասնավոր, դարձավ տուն հայի համար, հայացած պատգամ ու խոսք՝ Ազգային Եկեղեցում:

Սակայն այսօր, որքան էլ մեկին հարյուր պտղավորված լինի Ավետարանի սերմը Հայոց սրբացած հողում, Աստծու պատգամն ընկալելու համար անհրաժեշտ է բանալ մեր հոգին, պայծառացնել միտքը՝ ողջ իմաստով ըմբռնելու ու հասկանալու հայորեն ցանված սերմը, որպեսզի, անտեսելով չարի ամեն մի դրսևորում, փարատելով խավարը, հեռացնելով մեզնից անարդարությունն իր քոլոր հետևանքներով, կարողանանք իրավամբ հոգով, մտքով և անգամ մեր կյանքով ընդառաջ գնալ Աստվածային անեղծելի ու ճշմարիտ պատգամներին և, մեր կողքին տեսնելով ճշմարիտ հավատացյալին, ապիկարների նման չհարցնենք ինքներս մեզ. *«Բայց նա ինչպե՞ս դասվեց Աստծու որդիների շարքը՝ դառնալով սրբերին վիճակակից»*, որպեսզի անմիջապես հարցին չհետևի մեր իսկ կողմից տրված պատասխանը. *«Ուրեմն մենք մոլորվեցինք ճշմարտության ճանապարհից, արդարության լույսը չլուսավորեց մեզ, և մեր սրտերում չծագեց արդարության արեգակը...»*:



THE SAGE UNIVERSITY

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՏ

Հունիսի 22-ին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանի հետ:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը կարևորել է Կոֆի Անանի դերը ՄԱԿ-ի գործունեության իմսենսիվացման և հակամարտությունների կարգավորման, ինչպես նաև ՄԱԿ-ում բարեփոխումների իրականացման գործում:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծել է, որ դրա լուծումը պետք է հիմնված լինի մարդու իրավունքների և ինքնորոշման իրավունքի վրա: Նա շեշտել է, որ Հայաստանը մշտապես կողմնակից է եղել հիմնահարցի խաղաղ կարգավորմանը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Մովսես Աբելյանը և ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

**ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ֆրանսիայի Ազգային Ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առիթով մայիսի 30-ին Նյու Յորքից շնորհակալական մամակ է հղել Ֆրանսիայի Ազգային Ժողովի նախագահ Լորան Ֆաբիուսին՝ արտահայտելով իր գոհումակությունը ընդունված որոշման համար:

Նախևերջին մասնավորապես ասվում է.

«Մեծ հրճվանքով և խոր գոհումակությամբ իմացանք, որ Ֆրանսիական Հանրապետության Ազգային Ժողովը, 1998-ի մայիսի 29-ին, ձեր նախագահությամբ կայացած նիստին, պաշտոնապես ճանաչեց 1915-ին կատարված հայերի ցեղասպանությունը:

Հայ Եկեղեցու Հոգևոր Պետի հանգամանքով, համուն թեմական արքեպիսկոպոսների և համայն հայ հավատացյալների ի Հայաստան, ի Լեռնային Ղարաբաղ և ի սփյուռս աշխարհի, ձեզ եմք մերկայացնում մեր խոր երախտագիտությունը և քարձր գնահատանքը Ազգային Ժողովի պատմական որոշման համար, որն արտահայտում է ճշմարտության վկայելու իմաստությունն ու քաջությունը հօգուտ արդարության դատին:

Ազգային Ժողովի որոշումը ուրախացրեց ոչ միայն հայկական ծագում ունեցող ձեր քաղաքացիներին, այլև ամբողջ հայ ժողովրդին, որը երախտապարտ է Ազգային Ժողովի արդար և արժանի որոշման համար:

Խնդրում եմք մերկայացնել մեր ջերմագին շնորհակալությունները Ազգային Ժողովի անդամներին և մեր աղոթքներն ու օրհնությունները՝ ձեր կատարած ազնիվ գործի համար, ի քաղաքավաճումն ու հառաջադիմություն Ֆրանսիայի, որ միշտ մոտ է եղել մեր՝ հայերիս, քրիստոնեական հավատքով ու եվրոպական ոգով թաթախված հոգուն:

Հաճեցեք ընդունել, պր. նախագահ, մեր աղոթքներն ու քարձր գնահատությունը, մեր լավագույն մաղթանքները՝ Ազգային Ժողովին և ֆրանսիացի ժողովրդին»:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ
ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԴՈԿՏ. ԿԱՐԼՈՍ ՍԱՌԻԼ ՄԵՆԵՄԻ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ
 (30 ՅՈՒՆԻՍ 1998)

Ի՜նչ գեղեցիկ օր է այս օրը Հայոց արդի պատմության այս նշանակալից հանգրուանին, երբ ողջ Հայաստանը իր Անկախ Պետությանը, իր դարաւոր եկեղեցիով և իր համայն ժողովուրդով կ'ողջունէ բարեբեր ժամանումը Արգենտինայի Հանրապետության ժողովրդանուէր Նախագահին՝ Նորին Վսեմութիւն Դոկաւ. Կարլոս Սառլ Մէնեմի:

Որպէս հոգևոր հայրը հայ ժողովուրդին՝ քաղցրագոյն սիրով կ'ողջունենք Ձեր գալուստը: Բացի առողջականէն որնէ՛ այլ պատճառ չէր կրնար Մեզ ֆիզիքապէս հեռու պահել մեր մայրենի հողէն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, Հայ ժողովուրդի քրիստոնէական ծննդավայրէն, մեր անկախ պետության վսեմաշուք Նախագահին ու պետական աւագանիին ու հոգևորական դասուն հետ ողջագործելու Ձեզ, ինչպէս խոստացած էի 1996-ի Օգոստոսին երբ երջանկագոյն պահերէն մէկը ապրեցայ Պուէնոս Այրէսի մէջ Ձեզ անձամբ հանդիպելով և Մեր յարգանքն ու սէրը արտայայտելով:

Ձեր այս այցելութեամբ որ իբրև պատմակերտ դէպք պիտի արժանագործի մեր նոր սերունդներու յիշողութեան մէջ, Դուք անգամ մը ևս պերճախօս փաստը ցոյց կու տաք այն բայժը համարումին և գնահատանքին, զորս կը տածէք հանդէպ Արգենտինայի այն հայերուն, որոնք ահա աւելի քան ութ տասնամեակներէ ի վեր նոր կեանք գտան Արգենտինայի մէջ, երբ անոնք կորսնցնելու վրայ էին կեանքն ու ապատութիւնը իրենց նախնեաց դարաւոր հայրենիքին՝ Մայր Հայաստանի մէջ: Ձեր շուրջը, Ձեր պատուիրակութեան կազմին մէջ, ականաւոր և շինարար արգենտինացի հայերու ներկայութիւնը՝ շքեղ փաստերէն մէկն է այս ճշմարտութեան:

Մենք բարձրօրէն կը գնահատենք Ձեր այցելութիւնը Հայաստանի նոր անկախ Հանրապետութեան, որ 1991 թուականի Սեպտեմբերէն ասդին օրէ օր կ'ամրանայ ու կը վարզանայ որպէս մայր օճախը ամբողջ հայութեան ի Հայաստան և ի համայն արտասահմանի: Դուք այս այցելութեամբ ամբողջ Հայոց ազգն ու Եկեղեցին է որ մեծարած կ'ըլլաք:

20-րդ դարու այս վերջին տասնամեակը ապատության և անկախութեան լոյսը բերաւ յաճախ խաւարի ու աւերածութեան, քարդերու և ցեղասպանութեան չարիքներէն հարուածուած մեր պատմական հայրենիքին: Ձգայուն շրջան մըն է այս անկախութեան առաջին ժամանակը: Հայաստանը պէտք ունի ճշմարտօրէն բարեկամ երկիրներու ամբողջական և անվերապահ պօրակցութեան: Արգենտինան, Ձեր

իմաստուն և քաջարի ղեկավարութեան ներքն, եղաւ առաջին երկիրներէն մէկը. որ գիտցաւ բարձրագոյն աստիճանի աջակցութիւն ցուցաբերել հանդէպ մեր նորածին Հանրապետութեան: Չեր այցելութիւնը վստահ եմ որ պիտի բանայ նոր ուղիներ յառաջիկայի տարիներուն համար թէ՛ պետական, թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական, թէ՛ մշակութային և թէ՛ կրօնական հոգևոր մարկերուն մէջ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Արգենտինայի մեր եկեղեցական թեմի միջոցաւ միշտ իր քաջալերանքը արտայայտած է բոլոր մեծ իրագործումներուն համար, զորս Արգենտինայի Հանրապետութիւնը ընծայած է և կ'ընծայէ բոլոր ժողովուրդներուն առանց ցեղային կամ կրօնական և դասակարգային տարբերութեան և խտրութեան: Մենք կը մնանք միշտ երախտագէտ այն բոլոր բարիքներուն համար, զորս Արգենտինան ընծայեց և կը շարունակէ վերջին տարիներուն առաւել ևս ընծայել Չեր վերին իշխանութեան ներքն, մեր սիրեցեալ Հայ ժողովուրդին Արգենտինայի ամբողջ տարածքին:

Կ'աղօթենք որ Աստուած Չեպի պարգևէ քաջառողջ և երկար կեանք, Չեր պատգամաւորութեան անդամներուն՝ առաւել արդիւնաւորութիւն, և Արգենտինայի պետութեան և ժողովուրդին բարգաւաճ օրեր՝ Աստուծոյ փառքին և մարդկութեան բարիքներուն համար: Թող Արգենտինայի և Հայաստանի Հանրապետութեանց եղբայրական գործակցութիւնը նոր ոյժ, մղում և առատագոյն բարիքներ ընծայէ մեր երկու հայրենիքներուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւետ օրինեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 18-ից Գևորգյան Հոգևոր ժեմարանի հանդիսությամբ դահլիճում տեղի ունեցավ 1997-98 թթ. ուսումնական տարվա փակման արարողությունը՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի նախագահությամբ:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Գևորգյան Հոգևոր ժեմարանի դասախոսները, ողջ ուսանողությունը, ինչպես նաև բազմաթիվ հյուրեր: «Հայր մեր»-ից հետո, ավանդույթի համաձայն, հնչեցին Հայաստանի Հանրապետության հիմնը և Հոգևոր ժեմարանի քայլերգը՝ ղեկավարությամբ Ռ. Օարթաթյանի:

Հանդիսության մասնակիցներին օրհնության խոսք էր հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետի խոսքն ընթերցեց ժեմարանի փոխտեսուչ հոգեշնորհ Տ. Բաբկեն արղ. Սալթիյանը:

**«ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ
ԽՈՍՔԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐԵՐՋԱՆԻ ՓԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

15 Յունիս, 1998

Նիւ Եորք

Սիրելի Տեսուչ Հայր Սուրբ,

Ուսուցչական կազմի հոգեւորական եւ աշխարհական անդամներ,

Սպասաւորք բանին Աստուծոյ եւ դպրութեան հայոց,

եւ թանկագին սանունք

Գեորգեան Հոգևոր ժեմարանի

Ա. Էջմիածին

Սկսա իր աւարտին է հասել 1997-1998 կրթական տարեշրջանը Գեորգեան Հոգևոր Ճեմարանում: Այս տարի զրկուած եմ զգում ինձ այն հոգելից մթնոլորտից, որը ստեղծուի է ամէն տարի շրջանաւարտութեան հանդէսի առիթով: Բայց Նիւ Եորքի այս ժխորաձայն քաղաքում ես լսում եմ ձեր ձայները, ձեր տեղեկագիրները, ձեր արտասանութիւնները, երգերը, ուղերձները, որ հայկական սրնգի նման ջինջ հնչում են իմ ականջին:

Նախ փառք եւ գոհութիւն եմ տալիս Բարձրեալն եւ Ամենախնամ Աստծուն, որ կարելի դարձրեց մեզ բոլորիս համար այս դպրոցական տարեշրջանը աւարտել անխռով եւ ատոք ու բարւոք արդիւնաւորութեամբ: Երբեք պիտի չմոռանաք, որ մեր կեանքի եւ գործի աղբիւրը Ի՜նքն է՝ Աստուած, եւ աղօթքը մեր հաղորդակցութեան կապն է Նրա հայրախնամ սիրոյն եւ հոգածութեան հետ:

Ընտրահաշորում եմ տեսուչ Հայր Սուրբին, տեսչության, ուսուցչական կապմի անդամներին, պաշտօնէութեանը, բարերարներուն, որոնք ոչինչ չինայեցին անցնող տարուայ ընթացքում պտղայից արդիւնքներ ձեռք բերելու համար: Ես հաւատում եմ, որ ամենապակի գործը մարդկային կենսքում, դաստիարակութեան գործն է թէ՛ ուսուցողական եւ թէ՛ ինքնուսողական մակարդակների վրայ:

Ցանկանում եմ, որ երբ այժմ ամառային արձակուրդն է սկսում, այն չդառնայ ուսումնական աշխատանքից անջատման աղիք: Արձակուրդի ժամանակ շատ յաճախ մարդիկ շատ աւելի ինքնաշխատութեան են տալիս իրենք իրենց եւ յաջողութիւններ են ձեռք բերում գիտութեան եւ վարձագման բնագաւառներում:

Աղօթում եմ, որ Սատուած իր շնորհները առատօրէն հեղու ձեր բոլորի վրայ: Ընտրիները ստանալը մի բան եւ շնորհները «արծարծելը» Ս. Պօղոս Սոաքեայի բառով՝ ուրիշ բան է:

Թող Սատծու ամենատես Աչքը եւ ամենապօր Աջը հովանի եւ պահապան լինեն ձեր բոլորի եւ մեր հոգեւոր տան եւ օճախի՝ Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի եւ Մայր Աթոռի վրայ:

Հայրական սիրոյ ջերմ ողջունիւ եւ օրհնութեամբ
Աղօթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ «ԱՅՈՅ»

Գևորգյան Հոգևոր Ընթարանի տարեկան Քաջկենտրոնական ամփոփ Գերկայացմամբ Քանոն եկավ տեսուչ Քոզեքմորի Տ. Հայկազուն Ժ. վարդապետ Նաչարյանը՝ ճախ Գերկայացնելով վերաբացված Գևորգյան Հոգևոր Ընթարանում տարեկանից ի վեր կատարված աշխատանքներն ու վերափոխումները, կրթօջախի գործունեությունը, ընդարձակելու ծրագրերը, ինչպես նաև դրանց իրականացման ուղիները: Հայր սուրբն ի մասնավորի, մշեց. «1997-98 թթ. տարեշրջանը Գևորգյան Հոգևոր Ընթարանի պատմության մեջ անմոռանալի է մնալու, որովհետև 80 տարի այս շենքը Քոզեքմոր իմաստով դատարկ մնալուց ետք վերջապես վերադարձվեց իր տերերին: 80 տարի ետք դարձյալ այս կառույցը լցվում է Քաջ շարականների երգեցողությամբ, ինչպես Կոմիտասի ժամանակ և Քաջ Քոզեքմոր գրականության արձագանքներով, ինչպես էր Գարեգին Հովսեփյանցի, Չորեքչյանի, Գալուստ Տեր-Մկրտչյանի և նրանց սերնդակիցների ժամանակ:

Լույս և խումկ մրանց Քիշատակին՝ բոլոր տեսույներին, դասախոսներին, որոնք աշխատեցին դժվարին պայմաններում վաղ պահել Լուսավորչի կանթեղը:

Իզուր չէր, որ 1997 թ. սեպտեմբերի 18-ին Քաջ պետականության ավագանին, Քախախարանական և ակադեմիական գիտնականների ընտրանին եկել էին Գերկա լինելու այս Քախատության վերաբացման Քանոնությունը: Նրանք եկել էին Քարգելու Գևորգյան Ընթարանի երախտավորների Քիշատակը՝ ի Քարկե մաղթելով նաև նման Քաջողություններ այս մոր սերնդին:

Այս ամենը պարտավորեցնում է մեզ՝ տեսչությանը, դասախոսական կազմին, ինչպես նաև ուսանողությանը: Տա Աստված, որ մենք բոլորս էլ արժանի հետևողները լինենք Գևորգյան Ընտարանի այն փառավոր սերնդի:

Վեհափառ Հայրապետն ինչպես նախկինում, այս տարի ևս գլխավորեց դասախոսական կազմը: Մեր խորին շնորհակալությունը Նորին Սրբությանը, որ հակառակ իր մտազբաղ և ծանրաբեռ աշխատանքին, որքան ատողջությունը մերեց, աշխատեց իր դասերն առաջ տանել մեծ սիրով և հոգատարությամբ: Այս սիրո արտահայտությունն է իր օրհնության խոսքը, որ ուղղել է մեզ: Կադրոսն է Նորին Սրբության ապաքինման և շուտափույթ վերադարձին ի Մայր Աթոռ:

Ուսումնական տարում Ընտարանում հոգեւոր բարձրագույն կրթություն էին ստանում 104 ուսանող, որոնցից 18-ն ավարատեց վերջին՝ 6-րդ լսարանը: Ինչպես նախորդ տարիներին, այս ուսումնական տարում ևս Ամենայն Հայոց Կաթողիկոսը գլխավորում էր հոգևորականներից և աշխարհականներից կազմված դասախոսական կազմը: Այնուհետև տեսուչ հայր սուրբն իր խոսքը եզրափակեց հետևյալով. «Մենք աշխատելու ենք առաջ տանել մեր աշխատանքները՝ հույս ունենալով դրանց շնորհիվ տալ մեր եկեղեցուն կարգապահ, միկրյալ և ուսումնատենչ եկեղեցականներ: «Տէր, զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»:

Յուրահատուկ ուշադրության արժանացավ ավարտական լսարանի սան Վազգեն կիսասարկավազ Քեսաբյանի երախտիքի խոսքը ողջ ուսանողության անունից՝ ուղղված ներկաներին և մասնավորապես Ընտարանակից կրտսեր եղբայրներին:

«Ընտարանից հեռանալուց առաջ ուզում ենք վստահեցնել ձեզ, որ միննույնն է, մենք մշտապես ձեր հանդեպ տածելու ենք մեր եղբայրական սերը, և ուր էլ որ լինենք, մշտապես մեր հոգու մեջ պահելու ենք ձեզ հետ անցկացրած ճեմարանական օրերի լավագույն հուշերը: Իսկ այս պահին մաղթում ենք ձեզ, որ դուք բարձր հաջողություններով կարողանաք պսակել ձեր առաջիկա ուսումնական տարեշրջանները և Աստծո կամքով մի գեղեցիկ օր արժանանաք ավարտական այս պահին»:

Ավանդույթի համաձայն՝ Ընտարանի լավագույն ուսանողներին հանձնվեցին խրախուսական մրցանակներ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանի և գերաշնորհ Տ. Ծառե արքեպիսկոպոս Աճեմյանի կողմից՝ ուսման մեջ ցուցաբերած առաջադիմության և օրինակելի վարքի համար:

Զեկույցներն ընդմիջվում էին ուսանողների և երգչախմբի ելույթներով:

Հանդիսության ավարտին Տ. Ներսես արքեպս. Պողապալյանն օրհնեց Ընտարանի սաներին՝ ճրանց պատգամելով լինել Հայ Առաքելական եկեղեցու արժանի սպասավորներ:

«Այս հարկի տակ գտնվում ենք, առաջին անգամ լինելով, որպես ամսվերջի հանդեսի մասնակիցներ, մոռնով փոխադրվում ենք դեպի անցյալը. Կոմիտաս վարդապետ, Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց, Գևորգ Զ Չորեքշյան Կաթողիկոս, Օրմանյան, որ այստեղ դասավանդել է, և այն բոլոր լուսատու և լուսավոր դեմքերը, որոնք անցել են այս վայրից, մի անգամ ևս մրանց հետ մոռնով հաղորդության մեջ ենք մտնում, մեր սրտերը հոգեպես պայծառանում են, երջանկանում, որովհետև մրանք էին հիմքը դնողը այս հոգևոր ուսումնական հաստատության, որ 80 տարի գերության շրջանին մեջ անցկացնելուց հետո՝

նորից ազատագրվեց, լույսի առջև նորից իր դոմները քայցեց: Թեև այն տարիները, որոնք ազատագրված տարիներ եղան այս հաստատության համար, մեկ օգտակար դարձան հայ պատանուն մշակույթի աշխարհի և աշակերտության համար. քայց շենքը, որ կառուցվել է մի վեճ նպատակի համար, վերստին այդ վեճ նպատակին եկավ ծառայելու:

Մենք երջանիկ ենք, որ կյանքի հոլովություն այնպիսի կերպով փոխվեց, որ կարողացանք մեր իդեալներին և երազներին հասնել, ազատության և անկախության շենքից ներս մտնել առանց արյունահեղության: Եվ սա ես համարում եմ մեծագույն հաղթանակը, հայ ժողովրդի հոգու քարձրության և հասկացողության, որ հայ ժողովուրդը կարողացավ իր կորցրած հոգևոր արժեքները վերագտնել, իր անկախության հետ, իր ազատության հետ, իր իմաստության ճամփով: Եվ սա շատ կարևոր է մեր կյանքի համար, որովհետև հայ ժողովուրդն անցյալ դարավերջից և այս դարի առաջին քառորդից սկսյալ՝ այնքան արյուն թափեց, որ կարծեցինք՝ արյունաքամ է եղած: Բայց փառք ենք տալիս Աստծուն, որ արյունաքամ չենք եղած, հայ հոգին փյունիկի պես իր մոխիրից վերստին ծնվեց, ոտքի կանգնեց և տեր դարձավ իր հողին, իր մշակույթին, իր հոգևոր արժեքներին, իր ավանդության, և ամեն ինչ, որ հայության նկարագրին հարիր էր, այս բոլորը վերստին ստացավ»:

Հանդիսությունն ավարտվեց Պահպանիչ և Տերունական աղոթքներով:

Ինչպես մշված էր հայտագրում, հանդեսը մվիրված էր 20-րդ դարի բոլոր այն հոգևորականների հիշատակին, որոնք իրենց կյանքի գնով տեր և պաշտպան կանգնեցին Հայոց Եկեղեցուն՝ այն իբրև սրբազնագույն ավանդ պահելով գալիք սերունդների համար:

ԱՐԱՐԱՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱՓՈՅԱՆ

1700-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ. ՏՐԴԱՏԻ ԱՆՏԱՌ

Վերջին ամիսներին ծրագիր է մշակվում խոր Վիրապի շրջապատում 17.000 ծառերի անտառ տնկելու՝ ի փառավորումն 1700-ամյակի տոնակատարությանը։ Այս հարցի բազմակողմանի քննարկման համար 1700-ամյակի գործադիր վարչության և մի քանի պատասխանատու անձների հետ սույն թվականի մայիսի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ խորհրդակցական ժողով, որին մասնակցեցին 1700-ամյակի գրասենյակի գործադիր վարիչ-հարտողար Տ. Մեսրոպ արքեպս. Աշնյանը, Գործադիր մարմնի անդամներ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Գրիգոր Խանջյանը, ինչպես նաև խոր Վիրապի վանահայր Տ. Մխիթար քհն. Սարիքեկյանը, Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության նախագահ պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, Հայաստանի պատմական և մշակութային հուշարձանների պահպանման և զգալիության վարչության պետ պրոֆ. Կոյուն Դաֆադարյանը, Հնագիտության և ազգագրության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն պրոֆ. Արամ Գալանթաբյանը, նույն ինստիտուտի բաժնի վարիչ Ժորես Խաչատրյանը, «Հայանտառի» գլխավոր տնօրենի տեղակալ Ռուբեն Պետրոսյանը և Ամերիկայի Հայկական համագումարի Հայաստանի «Մոռատունկ» ծրագրի կառավարիչ Արթուր Հայրումյանը։

Ժողովի նախագահ Տ. Մեսրոպ արքեպս. Աշնյանը Վեհափառ Հայրապետի անունից ողջունեց ներկաներին և ծանոթացրեց խոր Վիրապի շրջակայքում Տրդատ քաղաքի անունով անտառ տնկելու ծրագրին։ Ժողովը մանրամասն քննարկեց առաջարկված ծրագիրը։ Եվ քանի որ այդ նույն տարածքում, որտեղ նախատեսվում է անտառ տնկել, գտնվում է Հայաստանի պատմական մայրաքաղաք Արտաշատը, կարծիքների փոխանակությունից հետո համձմեռողովը որոշեց մինչև հուլիսի 31-ը ներկայացնել մի նախագիծ՝ նշված այն տարածքներով, ուր հնարավոր է տնկումներ կատարել, և որը չի վնասի Արտաշատ մայրաքաղաքի հետագա պեղումներին ու պատմամշակութային առումով նրա պահպանմանը։ Վերջնական արդյունքներից հետո ծրագրեր կմշակվեն խոր Վիրապի կանաչապատման և շրջակայքում գեղեցիկ ու հանգստավետ պուրակներ ստեղծելու համար։

ԴԻԱՍՆ 1700-ԱՄՅԱԿԻ

«ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԵՐԿԻՐ ՈՒՆՏԱՎԱՅՐ»

1998-Ի ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Քրիստոնեության՝ Հայաստանի պետական կրոն հռչակման 1700-ամյակի կապակցությամբ կազմակերպված տարեկան ուխտագնացություններից երկրորդը (Ֆրանսիա-Հայաստան, 10-30 օգոստոս) թվում է, թե պիտի լինի ամենաճե-տաքոքրական և ինքնատիպ ուխտագնացություններից մեկը: Եվ, արդարև, այս տարին ոչ միայն հայերի համար սիրելի մի երկիր՝ Ֆրանսիան, պիտի միացնի Հայաստանի երկու թեմերին՝ Արագածոտնի և Օիրակի թեմերին, այլև ի հայտ պիտի բերի այն խորունկ և դարավոր կապը, որ կա հայերի և ֆրանսիացիների միջև, խաչակիրներից շատ առաջ՝ 6-7-րդ դարերից սկսած: Ֆրանսիայում պիտի ընտրվեն այն ուխտավայրերը, որոնք հնարավոր է այցելել, ուր կարելի է աղոթել, հարգանք մատուցել և դրանցով հոգեպես լիցքավորված՝ ճամփա ելնել դեպի Հայաստան, Սբ. Էջմիածին և խոր Վիրապ, այնուհետև այցելել Օիրակի թեմ, որ տակավին տառապում է աղետալի երկրաշարժից, Արագածոտնի թեմ, ուր պիտի խոնարհվենք Սբ. Մեսրոպ Մաշտոցի շիրիմի առջև:

Ուխտագնացությունը կազմակերպվում է 1700-ամյակի կենտրոնական հանձնախմբի կողմից, որի ատենապետն է Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովհան արքեպիսկոպոս Տերտերյանը: Հայաստանի թեմերի առաջնորդները՝ Նավասարդ եպս. Կճոյանը ու Փառեն ծ. վարդապետ Ավետիքյանը, արդեն իսկ պատրաստել են իրենց թեմերի հայտագրերը, ուր կան ուխտագնացություններ, Պատարագ, Ժողովդական և ազգագրական հանդեսներ, այցելություններ դեպի Անի, Հառիճավանք, Մարմաշեն, ինչպես նաև ծերանոցներ, մանկատներ և այլն: Ամենուրեք պիտի տեղի ունենա պետական պաշտոնական ընդունելություն:

Ուխտագնացության՝ Ֆրանսիայի մասը հովանավորում է Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ, Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազաշյանը, որ գործի անմիջական ղեկավարությունը վստահել է իր փոխանորդ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանին:

Այս առթիվ մայիսի 10-ին խորհրդակցական հանդիպում տեղի ունեցավ Փարիզում՝ մասնակցությամբ Նորվան եպիսկոպոսի, Փարիզից՝ պարոնաջ Գեղամ Թորոսյանի, Լևոն Բաղդասարյանի, Գեղամ Գևորգյանի և Մովսես Պաշալյանի: Ժողովին ներկա էր նաև 1700-ամյակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աջնյանը, որ այս կապակցությամբ մի քանի օրեր ի վեր գտնվում էր Փարիզում և նույն առավոտյան քարոզել էր Փարիզի Սբ. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցում:

Ստորև տալիս ենք տեղեկություններ բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են այս ուխտագնացություններով:

1998 թվականի ուխտագնացությունները կազմակերպվում են երեք շաբաթվա ծրագրերով:

Առաջինը սկսվում է օգոստոսի 11-ին Փարիզից՝ մեկ շաբաթվա հայտագիր ունենալով Ֆրանսիայի և մեկ՝ Հայաստանի մեջ: Վերադարձ՝ օգոստոսի 24-ին: Այս ծրագրի մեջ կա այցելություն փարիզահայ գաղութ, Պատարագ, թափո՜ր՝ Նոտր-Ռամից Սբ. Հովհաննես եկեղեցի, այցելություն հայկական Փարիզին

(թանգարան, շրջանի եկեղեցիներ, Պեր-Լաշեզի գերեզման, Լեոն Ե Լուսինյանի դամբարան՝ Սեն Տըմիում և այլն)։ Հասուն ուխտագնացություններ պիտի լինեն դեպի երեք ուխտավայրեր, որոնք ավելի շատ ֆրանսիացիներին են ծանոթ, քան թե մեզ։ Մենք առիթ պիտի ունենանք ճանաչելու Ֆրանսիայի «մեր սրբերին» և «մեր սրբավայրերը»։

Այդ սրբավայրերն են.

1. Բիթվիկի Ս. Գրիգոր Բայոց մատուռը։ Բիթվիկն գտնվում է Փարիզի հարավային մասում՝ Օրլեան քաղաքից 25 կիլոմետր հյուսիս-արևելք։ Այստեղ է գտնվում հայազգի մի սրբի՝ Ս. Գրիգորի աղոթարանը, իսկ Մայր եկեղեցու մեջ՝ նրա մասունքները։

2. Ժերմինի-դե-բրեի եկեղեցին։ Դարձյալ Փարիզի հարավային մասում, ուր և գտնվում է 804 թ. կառուցված մի եկեղեցի։ Ծարտարապետը Օթո լը Միսիմ անունով հայ է, որ Օսլըմանյի համար կառուցել էր Էքս-լա-Շաբլիի տաճարը։ Եկեղեցու ճարտարապետությունը Էջմիածնի տաճարի և Ռազարանի եկեղեցու ազդեցությունն է կրում։

3. Սբ. Վլաս Հայրապետի գերեզմանը։ Գտնվում է Փարիզից 45 մղոն դեպի հարավ-արևելք՝ Միլի լա Ֆորե գյուղի մոտ։ Սուրբ Վլասը բույսերով դարմանող հրաշագործ բժիշկ է եղել։

4. Կիլիկիայի հայ վերջին թագավորի՝ Լեոն Ե-ի տապանաքարը։ Ճուցադրվում է Փարիզի Սեն Տըմի աթոռությունում։ 1993-ին, երբ Կիլիկիայի ցուցահանդեսը կազմակերպվեց, Գարեգին Ա Կաթողիկոսն աղոթեց և ծաղկեպսակ գետնից այցտել։

Փարիզյան օրերն ունեն այլ հետաքրքրական հայտագրեր ևս, որոնցից հատկանշականը պիտի լինի օգոստոսի 15-ի գիշերը, երբ ժամը 9-ին մոմերով թափոր կազմած հարյուրավոր ուխտավորներ, Փարիզի շքեղաշուք Նոտր-Դամից դուրս գալով, պիտի անցնեն Փարիզի հռչակավոր կամուրջներով և Սենի ափերով հասնեն հայոց եկեղեցի։

Ուխտագնացության՝ Հայաստանի բաժինը սկսվում է օգոստոսի 15-ին, երբ Հայաստան կհասնեն Փարիզի ուխտավորները՝ մեկ և երկու շաբաթվա ուխտագնացությամբ մասնակցելու համար, ու հաև Միջին Արևելքի ուխտավորները՝ երկու շաբաթվա համար։

Հայաստանում նախատեսված են ուխտագնացություններ դեպի Սբ. Էջմիածին և խոր Վիրապ։ Արագածոտնի թեմ՝ Օշական, Մուղնի, Սաղմոսավանք, Տեղեր, Օհանավանք, Կարբի և այլն։ Օիրակի թեմ՝ Հառիճավանք, Մարմաշեն, Անի-Պեմզա, իսկ բուն Գյումրիի մեջ՝ Պատարագ Սբ. Աստվածածին՝ «Ցոթ վերջ» եկեղեցում. այնուհետև այցելություն երկրաշարժի աղետյալ շրջաններ, հիվանդանոց, ծերանոց, որբանոց, հաշմանդամների կենտրոն և այլն։

Ամառային այս 2-3 հազեցած շաբաթների ընթացքում ուխտավորները կծանոթանան իրենց անցյալին, իրենց պատմական և ներկա ազատ ու անկախ Հայաստանին և առավել կմտերմանան իրենց հարազատ մոր՝ Հայոց եկեղեցու հետ։

ԻՐԱՆԸ - ԲԱՆԵՍԻՐԵԿԸՆ



**ՄԱԿԱՐ ԱՔԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՁԻ
ՎԻՐԱՊԷՑ ԵԼՆԵԼՈՒ ՏՈՆԻՆ
(13 ՀՈՒՆԻՍԻ 1998 Թ.)**

*«Ընդ որոյ սիւն բոցոյ առաջնորդեր
անձանօք ճանապարհին. զարեգակն
անվնաս ետուր առատ ասպնջակա-
նութեան» :*

(ԻՄԱՍՍ. ՍՈՂՈՄՈՆԻ ԺԸ Յ)

Աստվածաստեղծ տիեզերքը՝ աստվածային այս հրաշալի տնտեսությունը, որը Տերունական ներդրում է, անտարակույս, անցյալի լինել չի կարող. քանզի որտեղ Աստված է՝ այնտեղ է նպատակը, նշմարիտը և իրականը: Այդ նպատակադրյալ տիեզերքի մեջ գլխավորումը է հանդիսանում մարդ արարածը Աստծո իր նմանությամբ, ինչպես Սուրբ Գրքում է ասում. «Մարդ ստեղծեմք մեր կերպարանով ու նմանությամբ» (ԾՆ. Ա .26), այսինքն՝ բանականությամբ և ունեցած ստեղծագործ կարողությամբ: Հիրավի մեզ շնորհված աստվածային պատկերն ու նմանությունը այլ բան չէր կարող լինել, ի՞նչ ոչ այն ստեղծագործ ուժը, որը յուրաքանչյուր անհատ ունի իր իսկ էության խորքերում, և այդ ուժի որոնումը, փնտրումը, ջանքը կարևոր ազդակ է մեր լինելիության արժևորման ճանապարհին: Այլ կերպ ասած, տիեզերքի մեջ ապրելով մարդը հասուն կարտականություն ունի՝ կոչված է հատուկ առաքելության, որն է՝ մասնակցություն աստվածային հավերժական և կատարյալ ստեղծագործական ծրագրին:

Այս մտածումները մեզ ավելի են տալիս խորհելու այն մասին, թե արդյո՞ք ինչպիսի՞նք կլինեն մարդ էակի կյանքը առանց աշխատանքի, ի՞նչ իմաստ գոյություն պիտի ունենա մարդկային կյանքում քառանգ մորը արարելու, գեղեցիկը ստեղծելու, առանց ջանքի Աստծով մեր իսկ կյանքը արժևորելու:

Սիրելի՛ հավատացյալներ, շատ են զանազան կերպերը ստեղծագործ կյանք ունենալու: Եկեղեցու կարևոր պարտականություններից մեկն այն է, որ մարդ անհատը անցնելով Սուրբ Գրքի աստվածնաճշողական պրիզմակից, պիտի գտնի այն մնայուն արժեքը, որի մասին մեր Տեր Հիսուս Քրիստոս իր եռամյա առաքելության ընթացքում հաճախ էր խոսում, ֆարգում, հայտարարում, և որն էլ պատճառ դարձավ, որ առաքյալներից մի քանիսը, լավ ըմբռնելով իրենց վարդապետի բերած նոր կյանքի, առավել կյանքի ձգտումը, հայտարարեցին, թե՛ «Դու հավիտենական կյանքի խոսքն ունես» (Հովհաննես Զ 69):

Ահավասիկ Հիսուսի առաքյալները այդ իսկ խոսքերի տարածման պատասխանատուները հանդիսացան աշխարհով մեկ, քանզի նրանց տրվեց պարտականությունը Տիրոջ կողմից. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և ֆարգեցե՛ք Ավետարանը բոլոր մարդկանց» (Մարկոս ԺԶ 15):

Անտարակույս հավիտենական կյանքից անմասն մնալ չէր կարող նաև մեր ժողովուրդը, որը առաքելական առաջին իսկ շրջանից բացեց իր հոգու դռները Աստծո խոսքի առաջ իրեն պարարտ հող՝ գիտակցելով և ըմբռնելով, թե որտեղ է

կյանքի իրական և հշմարիտ արժեքը: Մշտապես ունկնդիր լինելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի այն հրաշալի հայտարարությանը, քե՛ս « Խ՞նչ ոգուս է մարդուն, երբ ամբողջ աշխարհը շահի, քայց իր անձը կորցնի» (Մարկոս Ը 36), հայ ժողովուրդը երբեք չցանկացավ կորցնել իր անձը, սնանատականությունը, իր գեմը: Եվ ինքն իրեն պահպանելու համար կտրեց, անցավ Գողգոթայի չարչարաշատ նանապարհը, մինչև որ երկնային Տերը շնորհեց նրան «Լույսն Իմանալիս» մեր հավատո հոր՝ Ս. Գրիգոր Լուսավարչի կողմից, Հայաստան աշխարհում ֆրիտուսնության պետականացման նախադրումը, որը մշտապես իր հոգում վառ պահեց Տիրոջ խոսքերը իբրև չափ սերունդական. «Խալվարի փախալին և ժողովրդին առաջնորդում էր բոցի սյունը սնծանդ» նախապարհին» (Իմաստ. Սողոմոնի ԺԸ 3):

Սիրելի հավատացյալներ, Հայաստանյայց մեր Սուրբ եկեղեցին այսօր տոնում է մեր հավատո հոր՝ Ս. Գրիգոր Լուսավարչի ելնելը վիրապից: Երկար տարիներ վիրապում մնալուց հետո, Տիրոջ նախախնամությամբ դուրս գալով, Ս. Գրիգորը, համաձայն Ագաթանգեղոսի մեզ ավանդած պատմության, Տիրոջ ավետիսով լցունց Նախըան երկրի զավակներին հոգեմբեր: Եվ երբ Տիրոջ վերջին մուտքը Երուսաղեմ հաղթական մուտք հեն անվանում՝ իմանալով հանդիս, որ Նա գնալի չարչարանք, խաչելություն և մահ էր գնում, ապա Ս. Գրիգոր Լուսավարչի ելքը վիրապից անվարանորին հաղթական ելք էր, բանգի ինչպես Տերը հարություն առավ չարչարանքից, Լուսավորիչը ևս հարուցյալ կերպով դուրս եկավ վիրապից վստե փրկության ուղիք հայոց:

Այսօր մեր ժողովրդի համայն, հետևապես, կարևորագույն տոներից մեկն է՝ մեր հավատի իմնադրության տոնը, ելքատակումը: Եվ մենք որպես եկեղեցի, բաժանյալ և ժողովուրդ այսօր Միածնալից այս առհարում, այս սրբազան վայրում, հավանված ենք միասին մեկ անգամ ևս գոհություն և վառ մասուցանելու առ Աստված այն լույսի համար, այն հավիտենական խոսքերի համար, որոնք Աստված հեղեց մեր օրինած երկրի վրա:

Զմուռանաք, որ երկնային Տերը մեր անցած 1700 տարիների հաճախարհին մեզ համար «անվնաս արապակ էր» (Իմաստ. Սողոմոնի ԺԸ 3), ապավեն մեր բոլոր դժվարությունների ժամանակ:

Սիրելի հավատացյալներ, այս հրաշալի օրվա առթիվ մեզ մնում է շնորհավորել մեր հավատավոր ժողովրդին ողջ աշխարհով մեկ՝ մաղբիլով, որ Տերը լինի մեր նորոգյալ կյանքի, ազատ, ինքնիշխան և անկախ մեր հայրենիքի և պետականության միակ առաջնորդը դեպի հավիտենական կյանք:

«Շնորհիք, սեր և խաղաղություն Տեսուն մերոյ ելիցի ընդ ձեզ և ընդ ամենեքեանդ»:

Ամեն:

**ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ԿԻՐԱԿԻ ՕՐԸ**

*«Ո՛չ գիտեք թե որում պատրաստեք զանձինս
ձեր ծառայս ի հնազանդութիւն, ծառայ էք որում
հնազանդիքն, եթէ մեղաց՝ մահու, եւ եթէ ի
հնազանդութիւն՝ արդարութեան»:*

*«Չգիտեք, թե ում որ ծառա եք, նրան էլ
հնազանդվում եք:*

*Եթե մեղքին եք ծառայում, մահվան է տանում,
իսկ եթե ծառայում եք Աստծո հնազան-
դությանը, տանում է դեպի արդարություն»:*

(ՀՌՈՄ. Զ 16)

Պողոս Առաքյալն է խոսում այսօր մեզ հետ Հռոմեացիներին, Հռոմում գտնվող ֆրիստոնյա հավատացյալներին ուղղված իր նամակի միջոցով, որ այսօր ընթերցվեց Սրբազանի կողմից՝ որպես օրվա զիրք, որպես օրվա հոգևոր հաց, որպես օրվա խորհրդածություն:

Պողոս Առաքյալը, երկարորեն խոսելով և՛ մեղքի, և՛ արդարության մասին, մեր աչքերի առջև վեր է հանում նախ մեղքի ծնունդը, թե որտեղի՞ց եկավ այն, և այնուհետև բացատրում արդարության արդյունքը, ծագումն ու սկզբնա-վորումը: Երանելի Առաքյալն ասում է, թե մեղքի հետևանքը եղավ մահը, արդարության արդյունքը՝ կյանքը:

Հիմա, ո՛վ Հռոմի հավատացյալներ, այս երկուսի միջև ընտրություն կատարելու մեծ հնարավորություն ունեւ, որովհետև Հիսուս եկավ և այդ մեղքի վիճակի մեջ իր շնորհով արդարության հասնելու խոստումը տվեց մեզ: Պողոս Առաքյալն այստեղ մարմնավորում է և՛ մեղքը, և՛ արդարությունը: Կարծես խոսում է մարդկանց մասին, կարծես ներկայացնում է այդ երկուսը մարդկանց տեսքով: Եվ ասում է, որ ծառա կարող եմ դառնալ և՛ մեղքին, և՛ արդարությանը: Դուք եմ ձեր ցանկությամբ այն ընտրողը:

Ի՞նչ է նշանակում ծառայություն: Մառայել, նշանակում է կատարել մեկի բարեհաճ կամքը, կատարել մեկի բարեհաճությունը: Այսինքն՝ երբ ծառայում ես մեղքին, ստիպված ես լինում գործել այն օրենքներով, ինչ որ պարտադրում է մեղքը: Իսկ եթե ծառա ես արդարությանը, ուրեմն գործելու ես այն կանոններով և այն պատվիրաններով, ինչ որ թելադրում է արդարությունը: Մառա լինել կարելի է շատ բաների: Ումանք ծառա եմ իրենց զանազան կրքերին, ումանք ծառա եմ, ինչպես ասում է ճորից նույն Առաքյալը, իրենց ստամոքսին, ումանք ծառա եմ իրենց արտաքին փառքին, զարդերին ու զարդարանքին, ումանք ծառա եմ իրենց հպարտությանն ու ամբարտավանությանը: Բայց նաև ումանք ծառայում եմ արդարությանը, բարուն, խաղաղությանը, սիրուն: Այս երկուսի միջև պարզից էլ պարզ է, որ կույրը միայն կարող է ընտրել առաջինը: Բայց արի ու տես, որ մեր

ժամանակներում կարծես թե կույրերն ավելի են շատացել, որ մեր ժամանակներում Ավետարանի խոսքը նվազ է նվազում և վիճակի մեջ է դրվում, որում ասվում է, թե կույրերը բոլոր առաջնորդ լինեն կույրերին: Այս երկու հակադիր բեկումները, երկու հակադիր ճանապարհները՝ մեղքը և արդարությունը, մահը և կյանքը, իրար դեմ ընդհանրվում: Պողոս Առաքյալն ասում է իր եզրակացությունն է փոխանցում մեզ՝ նաև այսօրվա օպորտունիստ, որ դուք այնքան օրենքին կամ օրենքով հստակված մեղքին ծառա չեք, որովհետև Քրիստոս ինքն արդամբ գնաց ձեզ: Այսօրվա վերակազմը արդեն ամենավաղ արտահայտությունն է այստեղ, սիրելի՜ հավատացյալներ, մեր բալկանի՜ այս Սուրբ Պատարագի արարողությանը, Պատարագի Սուրբ խորհրդին ներկա լինելն է, որովհետև այս խորհրդի միջոցով ևս իր զոհագործության խորհուրդն է վեր բարձրացնում և այն որպես հաց պիտի բաժանվի մեզանից յուրաքանչյուրին: Այսինքն՝ սպասե՛ք ևս այդ արդարության գնման նախապայմանի մեջ ենք, շարունակվում է այդ ճանապարհը: Եվ մենք մեր ներկայությամբ, մեր մասնակցությամբ, մեր խորհրդով ու աղոթքներով, բայի գործերով և մտածությամբ գալիս ենք մասնակից լինելու այդ արդեն խորհրդին, գալիս ենք ասելու, որ արդարության համար գնվածներ ենք մենք, այլ ոչ թե մեղքին ծառայողներ:

Բայց, սիրելիներ, այս իսկ վստեղանքն անգամ, այս խոսքի անուշ բուրմունքի ներքո անգամ, այս աղոթքների առատության, խորհրդածության խորհրդի ներքո անգամ երբ մտնում ենք Տանար զանազան մտածումներով, միգուցե նաև մեզանից յուրաքանչյուրը մեր մտնում այդ կիզակիտային պահին դարձյալ մեղքին ծառայության կամա թե ակամա ներշնչումներ կամ մտքեր է արտացոլում, խորհուրդներ է փայփայում: Այս վայելքանքն իսկ սթափեցնող վայելքան է բոլորիս համար: Դժվար է մարդու համար չլինել մեղանշական, բայց այդ դժվարությունը երբեք էլ առիթ չի տալիս լինել մեղք գործող: Սուրբ Գրքին ասում է, թե ո՞վ է մարդը, որ պիտի օպորի ու մեղք չգործի: Այո՛, ո՞վ է այդ մարդը: Ոչ թե մեղք գործելն է կարևորն այստեղ, այլ՝ մեղք չգործելու ցանկությունը, ձգտումը, շարժումը դեպի մեղք չգործելը: Մեղքն ամենուր է՝ մեր մեջ կամ մեզանից դուրս: Ամենավաղ սխալն անգամ մեղք է: Բայց այն այնքան էլ սարսափելի չէ, որովհետև կտրելի է այն սխալը շտկել, կարելի է այդ մեղքը լուծել, վերաբժշկել: Կա այդպիսի ճանապարհ: Այդ ճանապարհը, ինչպես ասում է Պողոս Առաքյալը, Քրիստոսի արդեն դիմն է: Նա իր արդունը բաժնեց մեզ համար: Աստված լինելով՝ եկավ և արդունը թափեց մեզ համար: Այսօր մեզանից չպահանջվող արդեն փոխարեն պահանջվում է միայն վաղձիկ սխալ, մեղքի շտկումը կամ այն շտկելու ձգտումն ու ցանկությունը: Մենք, որ Աստծո մանուկներն ենք ու պատկերն ունենք, չենք կարող չանել այդ մեր բալկանության իսկ համար: Սակայն արդարությունը երբեք էլ եկամուտ չի կարող լինել, արդարությունը ձեռքբերովի չի լինում: Այն բանում չէ, որ կարողանաս մաքրամառիկակամ կամ հանրահաշվական հաշվներով դուրս բերել և ասել, «Այս բանում է համաձայն, ես կարող եմ արդար լինել»: Ո՛չ, արդարությունը մեր արդեն մեջ է, արդարությունը մեր մտքերում է, մեր սրտերում և, թող որ ասվի, արդարությունը նաև ձեռնդով է փոխանցվում:

Մի շատ հետաքրքիր դեպք կա, որ այս ամենի իրական պատկերն է տալիս, այսինքն՝ հաստատում է, թե արդարությունը իսկապես մալուխ ունի ձեռքով,

մարդով ի հայտ եկած, բայց նաև մարդու աշխատությամբ, չանցնելով և ցանկությամբ է հայտնվում: Պատմվում է, որ մի փոքրիկ գյուղում մի եկեղեցի կար, ուր գառամյալ տալիճով մեծ, սակայն ոչ մեծ կրթությամբ, համալսարանական կամ մեծ գիտական կրթություն չունեցող մի ֆահանգ էր ծառայում: Նա շատ սիրով էր ծառայում, և ողջ ժողովուրդը կապված էր եկեղեցու հետ: Օրերից մի օր եանկարծ հայտնվում է համալսարանական կրթությամբ, ժամանակակից ֆաղափարությամբ, գիտությամբ, իմաստությամբ հարող մի երիտասարդ և ֆահանային ասում. «Ես մի քանի օրից այս ողջ ժողովրդին պիտի դարձի բերեմ դեպի իմ իմացած գիտությունը՝ դեպի աստվածամեծություն և աթիկզմ»: Ժամանակ առ ժամանակ ֆահանգն բնականաբար թուլատրում է, և ժամանակ առ ժամանակ այս մարդը տեսնվում է ժողովրդի հետ, ֆարգում: Մի օր էլ Ջատկվա՝ Սուրբ Հարություն Պատարագին նաև պահանջում ֆահանայից կամ ստիպում, որպեսզի թույլ տա Սուրբ Խորանից խոսի ժողովրդի հետ: Եվ խոսում է այս մարդը, խոսում, քացատրում զանազան ծախքեր գիտության, իմաստության, իր իմացածով ցույց տալիս, որ Աստված գոյություն չունի, թե ի՞նչ է հոգու անմահությունը, արդարությունը և այլն: Ողջ ժողովուրդը աղաղակում է նրա հետ միասին՝ ասելով, թե «այո՛, նիշտ ես ասում, մե՞նք համամիտ ենք, համաձայն ենք»: Ֆահանգն սակայն գլխիկոր կանգնում է ի. Խորանի առջև և, դիմելով ներկաներին, ասում. «Մինչև հիմա դուք լսեցիք այս մարդուն: Հիմա էլ ինձ լսե՛ք՝ Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Եվ ողջ ժողովուրդը միաձայն պատասխանում է. «Օրհնյալ է Հարությունն Քրիստոսին»: Այսինքն՝ հալթանակող կողմում ֆահանգն էր: Որժան էլ ցանկացան արդարությունը խլել, բրան էլ ցանկացան ճշմարտությունը դուրս անել, արմատախիլ անել, այդուհանդերձ, այդ բնավորված, արյամբ եկող, սրտով և մտով եկող արդարությունը, Աստծու արդարությունը, Քրիստոսի արդարությունը չխաբխվեց:

Այսօր էլ նույն վիճակի առջև ենք կանգնած. ընտրության առջև ենք՝ մեղքը, թե արդարությունը: Այսօր մեր երկրում, մեր կյանքում, անհատական թե հավաքական, հասարակական կյանքում ինչո՞ւ են այս բազմաթիվ ինքնասպանությունները, ինչո՞ւ են այս բազմաթիվ հուսահատությունները, տեղատվությունները: Ինչո՞ւ: Որովհետև Ավետարանական պատումը անիրավ դատավորի մասին ճշմարտապես ներկայացնում է մեզ, որ մարդիկ Աստծուց չեն վախենում, և մարդիկ մարդկանցից չեն ամաչում: Այս պատճառով է ամբողջը: Ուրիշ տեղ փնտրելու իրավունքը մախ չունենք, երկրորդն էլ՝ ոչ մի փնտրում էլ կա մեզ համար: Չենք վախենում Աստծուց, չենք ամաչում մարդկանցից: Մեր բոլոր՝ տնտեսական, սոցիալական, երգևոր, մտավոր, բարոյական անկումներն այս մեկ բանաձևից են սկզբնավորվում: Եվ իրապես, Սուրբ Գիրքը դարձյալ տալիս է սրա պատասխանը՝ ասելով, որ կյանքի ճանապարհը, իմաստության ճանապարհը Տիրոջ երկյուղի մեջ է, արդարության ճանապարհը միայն կարելի է Տիրոջ երկյուղով ձեռք բերել. մնացած ֆարգությունները, մնացած գիտությունները, մնացած իմաստությունները գալիս են սրա վրա կառուցելու նախ Տիրոջ երկյուղը և երկրորդ՝ պատկառանքը մարդկանցից, ապա և մյուսները:

Այսօրվա խորհուրդը, Պողոս Առաքյալի կողմից մեր աչքերի առջև բարձրագրած, սիրելիներ, գալիս է մեզ ասելու, որ մենք դրված ենք ընտրության

առջև՝ մեղքի, սխալի, չարիքի և արդարության, նշմարտության, բարիքի։ Ամենաչար մարդն անգամ իր կյանքով կամ իր խոսքով վկայություն է տալիս բարիքի համար։ Հետևաբար, բարիքը վերացական, երկնքում գտնվող երևույթ չէ, այլ մեր մեջ է. մեր շուրջը, մեր մտքում, մեր սրտում։ Այն մարդը, որ գտնվում է բարիքը չընկալելու վիճակում, ասում է մտածողը, նաև գուրկ է այդ նշմարտությունը ընկալելու կարողությունից։ Ուստի այսօր, գտնվելով այս ընտրության առջև, ընտրեմք արդարը, ընտրենք արդարությունը և հպարտորեն ասենք Աստծուն, որ մենք ծառա ենք արդարությանը, բարիքին ենք ծառայում և Քո անվանն ենք ծառայում, Քո արյան գինը Քեզ փոխանցելով ենք ծառայում։

Թող Հայր Աստծո սերը, մեր Տիրոջ խաղաղության համբույրը և Սուրբ Հոգու անպարփակելի ուժը լինեն բոլորիս հետ, լինեն դեսի արդարության ճանապարհը ուղղողը մեզ, մեր ֆայլերը հավիտենական հանգրվանին, հավիտենական փրկությանը հասցնողը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՂՈԹՔՆ Ի ԴԵՄՍ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ

1

Ամենակալ անարատ Աստված՝ անսկիզբ Հայր՝ անտեսանելի, անքովանդակելի, անպատմելի, անպարագրելի, անփոփոխելի, անիմամալի, անհասունելի:

Որ միայն Դու՝ ամմատչելի լույսի մեջ բնակվածդ, ամմառություն ունես:

Որ Բո խոսքով ստեղծեցիր երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը և դրանց մեջ եղած բոլոր արարածներին, և Բո Հոգով գոյացան բոլոր ստեղծվածները:

Եվ մարդկային ազգի նկատմամբ Բո անչափելի սիրո պատճառով ուղարկեցիր Բո Միածին Որդուն՝ փրկելու մեզ Ադամի անեծքից:

Նա, որ երկնքից իջնելով, Սուրբ Հոգով մարմնացավ սուրբ և անարատ կույս Մարիամից, և մարդկային բոլոր կոքերը կրելով, բացի մեղքից, ազատեց մեզ մեղքի բեռից:

Եվ մեզ համար խաչի ու մահվան համբերելով, մեզ փրկեց սատանայի ծառայությունից և կոտորելի երկրպագությունից:

Եվ մեզ սովորեցրեց ամենասուրբ Երրորդությանդ զլուխ և ծունկ խոնարհել, աղոթք մատուցել և մեղքերի թողություն խնդրել:

Եվ հարությունից հետո զանազան ճշմաներով քառասուն օր երևաց Իր աշակերտներին՝ նրանց հետ հացով հաղորդվելով՝ կենսաբեր տնօրենության հավատքի հաստատության համար:

Եվ Իր հարության քառասուններորդ օրը երկինք վերանայիս, ձեռքը դրեց աշակերտների վրա և օրհնեց՝ նրանց տալով առաքիչության կատարյալ շնորհները:

Եվ նրանց միտքը բացեց՝ հասկանալու գրքերը, և նրանց պատվիրեց մնալ Երուսաղեմում, սպասել աստվածային խոստմանը և երկնավոր ու մարդասեր Հոր ավետիսին:

Դու, Տեր, Բո անբավ ողորմության շնորհները պարգևեցիր մարդկային ազգին:

Ուղարկեցիր Բո Էսկից ու փառակից Սուրբ Հոգուն մեծ կիրակի օրը՝ Փրկչի հարության հիսուներորդ օրվա լրանալուց՝ երրորդ ժամին, երբ նախահայր Ադամը Սուրբ Հոգով գոյացավ որպես կենդանի հոգի՝ աստվածային փշմամբ, ապա պառլի ճաշակումով կորստյան մատնվելով և մահանալով, այս ժամին վերստին է կենդանաւտեղծվում՝ Սուրբ Հոգու իշմամբ առաքյալների դասերի մեջ:

Որը հրեղեն լեզուներով երևալով, նստեց նրանց վրա և լցրեց նրանց ամենառատ շնորհով՝ խոսելու բոլոր լեզուներով, և լսողների մոտ միաձայն սպասավորելով Սուրբ Հոգու, որով և որպես առաջին ծնունդ ծնելով երեք հազարից՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, նրանք առաջինը երկրպագեցին սուրբ Երրորդությանդ:

Որոնց հետ և մենք այսօր խոնարհեցնում ենք մեր ծնկներն ու պարանոցները և աղաչում ենք Բո առաքյալների հետ. ընդունիր վերջիններիս հետ մեր և նրանց երկրպագությունը, ովքեր նույն արժանավորությամբ խորհրդաբար երկրպագել են Բեզ միմչև այժմ:

Լսիր մեզ մեծ Պենտեկոստեի այս օրը, երբ Սուրբ Հոգիդ ուղարկեցիր ստորիմների մեջ՝ Քո որդի Հիսուսի երկինք համբարձվելուց հետո, և նրբ հավատով դիմում ենք Քեզ:

Քո սրբության բարձունքներից մայրի Քո ժողովրդին, ովքեր կանգնած են Քո առջև և Քո մեծ ողորմության ակնկալությունն ունեն:

Ուղարկիր այսօր քարերար Սուրբ Հոգուդ Քո տաճարի և մրանում հավաքվածների մեջ, ինչպես այն ժամանակ ուղարկեցիր վերնատանը՝ առաքյալների մեջ:

Որովհետև այստեղ մույնպես Քո Միածին Որդին մշտապես պատարագվում է, ինչպես վերնատանը, որտեղ սուրբ խորհուրդն ավանդելով՝ աշակերտներին բաշխեց խորհրդավոր ըմթիռի ժամանակ և մրանց ոտքերը վրաց. և երևաց փակ դռներով վերնատանը հարության երեկոյան առաջին կիրակի օրը, և դարձյալ՝ ութերորդ օրը:

Եվ Պենտեկոստեի օրերի ավարտին Սուրբ Հոգիդ, հողմի փչումով իջնելով, այն ցրեց հրով՝ իր մեջ սուրբ միաբանվածներով համդերձ:

Որի համար փառավորում ենք Քեզ, բարերար Տեր, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հայր, և աղաչում ենք Քեզ ամբողջ սրտով, քաղցրությամբ մայրի մեզ, գթությամբ և ողորմությամբ հիշիր Քեզ ապավինածներին, տառապածներին ու դատապարտվածներին, շրջիր բանասերկուի կողմից բանտված մեր ոգիների գերությունը և կանգնեցրու ընկածներին ու կործանվածներին:

Աղաչում ենք Քեզ, մարդասեր Տեր, որովհետև թեպետ և մեղանչեցինք, սակայն ավագանի արգանդից դեպի Քեզ դարձանք, և Դու ես մեր Աստվածը. մեզ բաց մի թող Քո ձեռքից, որովհետև ունայնության մեջ նվազեցին մեր օրերը, մենք նախատվեցինք թշմամիներից և մեզ ատողների համար ծաղր ու ծանակի առարկա եղանք:

Այլ հուսալով Քո ողորմությանը, որ այս օրերին եղավ, հայցում ենք Քեզանից, մեր առջև բաց արա Քո ողորմության դուռը և սրբիր մեզ մեր մեղքերի գաղտնիքներից:

Տես Քո ծառաների խոնարհությունը և թողություն տուր մեր կամա և ակամա, գիտակցաբար ու անգիտակցաբար կատարած բոլոր հանցանքներին:

Քավություն շնորհիր Քո ժողովրդին և ամենքին մաքրիր Սուրբ Հոգուդ գործությամբ:

Փրկիր մեզ թշնամու բռնությունից և մեր կյանքն ամուր պահիր բանասերկուի չարահամար որոգայքների դեմ:

Խաղաղության հրեշտակին համձնիր մեզ, Դու, որ մախքան մեր հայցելը, պատրաստում ես մեր պետքերը:

Արժանացրու մեզ խոստովանությամբ ու ապաշխարությամբ դառնալ դեպի Քեզ՝ մախքան մեր վախճանը:

Սուրբ Հոգուդ ընդունելության տաճար դարձրու բոլորին՝ սուրբ առաքյալների հետ, և մեր անունները մրանց հետ միասին գրիր կյանքի գրքում:

Մեզ ամենքին ժողովիր Քո արքայության մեջ վերին Սիոնում՝ երկնային ու բարձրագույն վերնատանը: Որովհետև Քոնք է ողորմությունը, և Քեզ և Քո Միածին Որդուն և Սուրբ Հոգուդ ենք փառք վերառաքում այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս. որ Քո խաղաղությունը շնորհեցիր Քո առաքյալների՝ փչելով նրանց վրա, և սուրբ Հոգիդ այսօր հայտնապես պարգևեցիր նրանց: Որը գալով Հորից՝ բնակվեց նրանց մեջ. նրանց տրտմությունը փառատեց և հրեղեն լեզուներով նրանց լեզուների վրա հանգչելով, նրանց բերանները բացեց՝ խոսելու բոլոր լեզուներով:

Եվ բոլոր մարդկանց, որոնք աշտարակից բաժանվել էին բազմաստված մոլորություններով, միավորեց ճշմարիտ երեքանձնյա զորությանդ մեկ աստվածգիտությամբ. սովորեցրեց բոլոր լեզուներով մեկ Աստծո փառավորել՝ ողջ տիեզերքում ավետարանի քարոզությամբ, և ծուկն խոհարհեցնել միայն նույն Աստծուն, ինչպես այսօր մկրտությամբ նոր ծնված երեք հազարը:

Որոնց Ռետ և մեծը՝ նույն Հոգով լուսավորված, հավանով ծուկն ենք խոհարհում ամենասուրբ Երրորդությանդ առջև և աղաչում ենք՝ միաբան հավաքվածներս:

Նայիր ինձ՝ անարժանիս, որ ժողովրդի աղոթքը Քո սուրբ սեղանի առջև Քեզ եմ մատուցում:

Բաց արա, Տեր, իմ մեղավորի շուրթերը, ինչպես երանելի առաքյալներիդ, և լցրու մեզ Քո Սուրբ Հոգով՝ Քեզանից տրված բոլոր շնորհները հաղորդելու Քո ընտրյալների: Եվ իմ բազում մեղքերի պատճառով մի արգելիր Քո ողորմությունը մեզանից, որ հույսով կանգնած ենք Քո առջև և Քո անբավ գթությունից ենք հայցում:

Քո ծառաների՝ արժանի արա աստվածային պարգևներիդ, իմաստության ու հանճարի, խորհրդի ու զորության, գիտության ու աստվածապաշտության և Քո երկյուղի հոգով լցրու մեր մտքերը, և մեր մեջ սուրբ սիրտ, ուղիղ հոգի և մաքուր միտք նորոգիր, մարդասեր:

Դու, որ ճավահանգիստ ես ճավողների համար, Քո սուրբ Հոգով մեր ընթացքն ուղղիր անբիժ ճանապարհի մեջ՝ միշտ խորհելու Քո օրենքի վրա, պահելու Քո պատվիրանները, կատարելու Քո հրամանները և քարոզելու Քո խոսքերը: Մեր աղոթքներն ու խնդրանքները բարության մեջ ավարտիր:

Դու, որ մեր ախտահարված բնությունը միացրեցիր Քո անախտ աստվածությանը, և դրանով մեր կարիքներին հաղորդակից եղար և մեր քիստերը բժշկեցիր:

Լսիր մեզ, մեր փրկիչ Աստված, և խոհարհեցրու Քո ականջը դեպի Քո սուրբ եկեղեցում հավաքվածներին երկրպագությունը՝ սուրբ վերնատան Քո ընտրյալների մմանությամբ:

Սրբիդ մեզ մեղքերի բոլոր պղծություններից և սուրբ Հոգուդ ուղարկիր միաբան հավատացյալներին մոտ, որպեսզի բնակվի մեր մեջ, լուսավորի մեր մտքերը աստվածգիտության լույսով, առաջնորդի մեզ քո պատվիրաններն ամենայն ճշմարտությամբ պահելու և դարձնի աստվածային կտակարանների օրենսգետ, որը խոսեցին մարգարիները, առաքյալներն ու վարդապետները՝ Սուրբ Հոգու միջոցով, և որը մեզ սովորեցնելու ու զորացնելու է՝ ամեն ինչ կատարելու:

Աղաչում և պաղատում եմ Քեզ, որպեսզի հաշտությամբ նայես Քո ժողովրդին՝ ի զին Քո սուրբ արյան. իմ բազում հանցանքների պատճառով մի անուշախի սրանց հայցվածները, որովհետև Քո փրկածներն են և դեպի Քեզ են ձեռքերը բարձրացնում ու հաշտություն խնդրում:

Արդ, ընդունիր սրանց մաղթանքների ծնրադրումն ինչպես նոր լուսավորվածներիցը, և սրանց ձեռքերի համբարձումն ընդունիր որպես երեկոյան պատարագ, իսկ սրանց աղոթքները՝ որպես անուշաճոտ խունկ՝ Բո քարերար Տերության առջև, և Բո թևերի հովանու տակ ծածկիր սրանց՝ պահելով երևելի ու աներևույթ թշնամիներից:

Որպեսզի անառատ քրիստոնեությանը պարելով այս աշխարհում, Բո բոլոր սրբերի հետ արժանի լինե՞ք երկնային կյանքիդ, և զոհանալով փառավորե՞ք Քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ միասին, այժմ և միշտ և հավիտյանս հավիտեցից, ամեն:

3

Դու, որ զորությամբ Տեր ես, Աստված ճշմարիտ, լույսի և կյանքի աղբյուր՝ անքննելի կերպով բխելով Հորից, հրաշագործ Սուրբ Հոգի, որը սուրբ առաքյալներին խոստացավ մեր Աստված՝ Բրիստոս, Նա, որ մահվամբ մահվան կապանքները քանդեց և մեղքերի սկզբին անլուծանելի կապանքներով արգելափակեց անշեք հրի ու արտաքին խավարի մեջ՝ այնտեղ ամուր փակելով պիղծ վիշապին՝ իր ապստամբ զորության հետ միասին, և այնտեղ բացտարկված Ադամի որդիներին՝ ճնջեցյալներին, դուրս հանեց դժոխքից՝ իր հարությամբ:

Եվ մեր քնությանը հանդերձ բարձրանալով Հոր մոտ, բոլոր բարիքների ավարտին ու բոլոր խորհուրդների կատարման ժամանակ Քեզ՝ ճորտգող ու կենդանարար սուրբ Հոգուդ, տրտմածներին մխիթարիչ ուղարկեց:

Դու՝ Աստված, որ խոնարհվեցիր Հայր Աստծուց և եկար վերնատուն, Դու, որին երկինքը չէր կարող տանել, և անճանելի խնդությամբ ու շնորհներով լցրեցիր Բո ընտրյալներին, որոնց ուղարկեցիր ողջ աշխարհում կենաց խոսքը քարոզելու:

Որոնք ողջ տիեզերքը լցրեցին Բո զիտությամբ, Տեր, և մեկ Աստվածությունդ ճանաչել տվեցին ողջ աշխարհին՝ վերացնելով կոտորելի սնուռի պաշտամունքը:

Սուրբ ավագանով հեթանոսներին ծնեցին որպես երկնավոր Հորդ որդեգիրների, և բոլորին ամենասուրբ Երրորդությամդ երկրպագողներ դարձրեցին:

Բոլոր վայրերում դրեցին սուրբ եկեղեցու հիմքերը և հարդարեցին Բո փառքի սեղանը, որից անմահական խորհրդով կերակրեցին բոլոր Քեզ հավատացողներին:

Երկինք երկինք դարձնելով՝ երկրայիններին դասակից դարձրեցին երկնայիններին:

Եվ արդ, մեր Տեր Աստված՝ ողորմած և մարդասեր, լսիր մեր պաղատանքները, որ հայցում ենք Քեզանից, և երկնային հանգստի մեջ ընդունիր մեր ճնջեցյալների հոգիները, որոնք լուսավորվելով հոգևոր ծննդյամբ՝ քրիստոնյա անվան արժանացան, և հաղորդվելով աստվածային մարմնին ու արյանը, հավատով ու ուղիղ դավանությամբ հեռացան աշխարհից, որոնց և հիշատակը կատարեցինք այսօր փրկական պատարագի հույսով՝ Բո երևման մեծ օրը:

Ամենակալ Տեր, մահկանացուների ու անմահների Աստված՝ ամեն ինչի արարիչ և կյանքի ու մահվան Տեր, մարմնի խնամող, և հանդերձալու՜մ երկրի բոլոր ծագերի հույս, Դու, որ մեծ Պենտեկոստեի տոնի վերջին օրը՝ վերնատան մեջ Բո փառավոր գալստյամբ ուրախացրիր Բո անունով հավաքվածներին, լսիր և այժմ մեր աղաչանքի ձայնը և հիշիր նախկին ճնջեցյալներին՝ մեր հայրերին ու եղբայրներին, և հանգստացրու Բո սրբերի խորանում լույսի վայրում:

Հիշիր նրանց աղոթքներն ու պաղատանքները և խոստովանությունը՝ կյանքի ու վախճանի ժամանակ, և թողություն շնորհիր նրանց բոլոր համցանքներին, և բոլորին արժանացրու սպասելու ապագա բարիքի ու փառքի հատուցմանը, որը պատրաստեցիր Քո սիրելիների համար, և մաս նրանց հետ օրհնելու ամենասուրբ երրորդությանը:

Եվ մեզ՝ Քո անունով Քո սուրբ տաճարի մեջ հավաքվածներին՝ Քո ամենակեցուցիչ գալստյան օրը երկրպագողներին ու տոնողներին, շնորհիր երկմային խաղաղությունը և մեղքերի հեղությունից հոգիների ու մարմինների նորոգում՝ ապաշխարությամբ ու արտասուքներով վերստին ծնվելու, և բոլորին, սուրբ առաքյալների հետ, գորացրու զգաստությամբ ու արդարությամբ՝ Քո բնակության համար, որպեսզի մեր մեջ չարի համար տեղ և մուտք չլինի:

Հրեղեն լեզուներով սրբիր Քո ծառաների շուրթերն ու լեզուները, որպեսզի արժանի լինենք հոգևոր օրհնությամբ հոգեղենների հետ երգելու, սաղմոս ասելու և ամեն ժամ աղոթելու, սուրբ սրտով և խոնարհ հոգով բանավոր պաշտամունք մատուցելու Քեզ, և սրտի խորքից արտասվալից պաղատանքով Քեզանից քավություն խնդրելու:

Եվ մեր ողջ կյանքն ամրացրու ու Քո երկյուղով պարսպված պահիր չար խորհուրդներից, խոսքերից ու գործերից:

Եվ մեզ արժանացրու ի հաճույս Քեզ ապրելու, մեր ընթացքը Քո կամքի համաձայն ճշմարիտ խոստովանությամբ կատարելու, և ջերմեռանդ զոջումով, փրկական խորհրդի հաղորդությամբ, քահանայական մոտեցումով, մվերներով ու պատարագներով մշտապես Քո սուրբ սեղանի առջև հիշատակ կատարելու:

Եմկի գալով Քո առջև, աղաչում ենք, մարդասեր Սուրբ Հոգի, որպեսզի մաս մեր հոգիների ընթացքը մարմնական կենցաղի մեջ պահես, որպեսզի ամերկյուղ անցնենք և փրկվենք օղային ու պիղծ դևերից, և առաջնորդես դեպի ճշմարիտ երկիր՝ դեպի երանավետ կյանք ու արդարների օթևան, որտեղ սրբերի հոգիներն ուրախությամբ օրհնում են Քեզ, և հաջորդ նորոգմամբ՝ Քո Էակից Փրկչի գալստյան ժամանակ, արթնացնես բոլորին՝ հրեշտակապետի փողի ձայնով ու Աստծո խոսքով:

Իսկ Դու, մեր Աստված և Տեր, Սուրբ Հոգի, երբ հարությամբ ստանաս բոլոր մարդկանց և յուրաքանչյուրին հոգով նորոգես, փրկիր զենեմի սպառնալիքից ու անցներելի տանջանքներից և Քո սրբերի բանակին խառնիր Քո անունը սիրողների հետ՝ որպեսզի երկմքի արքայության ժառանգորդներ լինենք:

Եվ մենք՝ Քո բանավոր հոտը և Քեզ հավատացողները, օրհնելու և փառավորելու ենք ամենասուրբ երրորդությունը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Աշխարհաբարի վերածեց
ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱԶԱՊԱՀՅԱՆԸ

ՅՐԱՆՑԻՍԿՈՍ ԴԵ ՍԱԼԻ
(1567-1622)

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԿՅԱՆՔԻ

ՄԱՍ Գ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ
ՅՄՏՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ Ա

Առաքինությունների տեսակները

Սեղուների թագուհին բոչում է դեպի դաշտ՝ միայն շրջապատված իր վրդերիկ ժողովրդով: Քրիստոնեական սերը նույնպես մարդու սիրտը գրավելիս երբեք միայնակ մուտք չի գործում, այլ առաքինությունների մի մեծ շքախմբի ուղեկցությամբ, որոնց գործի է դնում անհրաժեշտության դեպքում, ինչպես գորավարը՝ իր գործի գորաքաժիկները: Նրանց բոլորին երբեք միասին չի ուղարկում, այլ հերթականությամբ, երբ որի կարիքը զգացվում է: «Արդարո՞ւ նման է ցրերի հոսանքի վրա տնկված ծառի, որն իր պտուղը ժամանակին կտա» (Սղմ. 1. 3).- ասում է սաղմոսերգուն, որովհետև սերը ոռոգում է մարդկանց հոգիները, և ժամանակին այնտեղ փթթում են առաքինության գործերը: «Հաճելի երաժշտությունը անտառների է դառնում սգի ժամանակ» (Սիր. 22. 6).- ասում է իմաստունը: Սխալվում են նրանք, ովքեր երբ սկսում են վարժվել որևէ առաքինության մեջ, աշխատում են այն կիրարկել անխտիր բոլոր գործերի և հանդիպումների ժամանակ: Նրանք նմանվում են հին ժամանակների այն իմաստուններին, ովքեր կամ անդադար լալիս էին, կամ անդադար ծիծաղում: Շատ ավելի վատ է, եթե նման մարդիկ քննադատում և վատաբանում են իրենց օրինակին չհետևողներին: «Ուրախացողների հետ ուրախացե՛ք, իսկ լացողների հետ՝ լացե՛ք» (Ղո. 12. 15).- ասում է Պողոս առաքյալը, նաև «Սերը համբերող է, քաղցրաբար, ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում» (Ա Կոր. 13. 4, 7):

Սակայն կան առաքինություններ, որոնք անհրաժեշտ են բոլորին և գործում են ոչ միայն ինքնըստիներյան, այլ ազդեցություն են թողնում մյուս բոլոր գործերի և առաքինությունների վրա: Այնպիսի հատկություններ, ինչպիսիք են վեհամծնությունը և մեծահոգությունը, այնքան էլ հաճախ չեն կիրառվում, այնինչ հեզությամբ, համբերությամբ, ազնվությամբ և խոնարհությամբ պիտի զարդարված լինեն մեր բոլոր գործերը:

Որոշ առաքինություններ մեզ ավելի հրապուրիչ են թվում, սակայն կյանքում այնքան էլ հաճախ չեն կիրարկվում: Ինչ խոսք, շաքարն աղից հաճելի է, սակայն աղն է ավելի կարևոր և օգտագործելի: Այդ իսկ պատճառով մենք պիտի հատուկ ուշադրություն դարձնենք այն բարեմասնություններին, որոնք մեզ միշտ են անհրաժեշտ: Մեզանից պահանջվում է կատարել մեր պարտականությունները, այլ ոչ նախասիրությունները: Սի աղջիկ չափից ավելի էր տրվել ճգնողական սխրանքներին, որովհետև դրանից բավարարվածություն էր զգում: Սակայն նա՞ ճիշտ չէր վարվում, քանի որ ամենից առաջ պետք է հետևեր իր առաջնորդի ցուցումներին:

երանելի Գերոնիմոսը¹ պարսավեց այդ աղջկան՝ իր ռասուցչի խորհուրդները անտեսելու և ինքնակամ ճգնողությամբ զբաղվելու համար:

Ստալյալները կոչված էին քարոզելու Բարի լուրը, այլ ոչ թե օգնելու աղքատներին, թեև գուցե դա ավելի հաճելի էր իրենց (Գործք. Յ. 2): Գասարակության մեջ տարբեր դիրք ունեցողների համար առաքինությունները նույնպես կարող են տարբեր նշանակություն ձեռք բերել: Եպիսկոպոսին պետք են այլ բարեմասնություններ, իսկ թագավորին կամ զինվորին՝ այլ: Որոշ առաքինություններ առանձնահատուկ նշանակություն ունեն այդի կնոջ համար, որոշները՝ ամուսնացած կնոջ: Թեև ամենքն էլ պետք է օժտված լինեն բոլոր առաքինություններով, բայց ոչ բոլորին է թելադրվում համաչափ գործածել դրանք, այլ յուրաքանչյուրին՝ իր կյանքի պայմաններից ելնելով:

Ամսիքականորեն մեր պարտականությունները կատարելուն նպաստող առաքինություններից մեկը պիտի գերադասենք ոչ թե առավել աչքի ընկնողները, այլ առավել կատարյալները: Գիսաստղերը մեզ աստղերից մեծ են թվում: Մեր տեսողական դաշտում նրանց շատ ավելի մեծ տեղ են գրավում, այնինչ իրականում նույնիսկ ամհամեմատելի են աստղերի հետ: Ճիշտ այդպես էլ, որոշ առաքինություններ կարծես ավելի մոտ են մեզ, շոշափելի, նյութական, և այդ պատճառով նրանց ավելի մեծ նշանակություն է վերագրվում: Այսպես, օր.՝ նյութական օգնությունը հոգևորից բարձր է գնահատվում: Պահքը, քուրծ կրելը, մարմնական այլ ճգնությունները ավելի բարձր են դասվում, քան այն ճգնությունները, որոնց մասնակից է մարդկային սիրտը. ինչպես օր.՝ համեստությունը, հեզությունը, բարությունը, որոնք իրականում առավել արժեքավոր են: Ուրեմն, բարեկամս, ընտրիր արժեքավոր առաքինություններ, և ոչ թե հարգանքները՝ չորոգները, կատարյալ՝ և ոչ թե գրավիչ թվացող: Մարդ պետք է իր առջև խնդիր դնի հատկապես կրթվելու առաքինության մի տեսակի մեջ՝ ոչ թե մնացածները թողնելու միտումով, այլ որպեսզի հոգին զբաղված լինի և նրա գործունեությունը՝ կարգավորված: Մի անգամ Ալեքսանդրիայի եպիսկոպոս Դովհաննեսը հանդիպեց հրաշագեղ, արևի պես փայլող մի օրիորդի, որ թագուհու պես զարդարված էր թանկագին քարերով, ձիթենու տերևներից պսակը զխին: Օրիորդն ասաց. «ես արքայի ավագ դուստրն եմ, եթե ուզում ես իմ ընկերը լինել, եկ միասին գնանք արքայի մոտ»: Դովհաննեսն իմացավ նրա անունը՝ «գթասրտություն աղքատների նկատմամբ»: Դրանից հետո նա ամբողջովին նվիրվեց այդ գործին և հայտնի դարձավ Դովհաննես Ողորմած անունով:

Ալեքսանդրիայից Եվդոքիոսը մեծ ցանկություն ուներ Աստծուն ծառայելու, սակայն ինարավորություն չունեցավ մեկին աշակերտելու կամ միայնակեցության տրվելու, և իր խնամքին վերցրեց մի անդամալույծի, որպեսզի այդ միջոցով կրթվի գթասրտության և անձնուրացման մեջ: Այդ գործը ինարավորին չափ լավ կատարելու համար նա ուխտեց պատվել և ծառայել անդամալույծին ինչպես իր տիրակալին: Երբ տարիներ հետո նրանք ենթարկվեցին փորձության և ցանկացան բաժանվել, Ամտոն Անձը՝ խորհուրդ տվեց նրանց. «Մի հեռացեք իրարից, դուք արդեն մոտ եք ձեր կյանքի ավարտին, եթե հրեշտակը ձեզ միասին չգտնի, կզոհվեք ձեր պսակներից»: Լյուդովիկոս արքան² միշտ այցելում էր

¹ Հերոնիմոս (342-420) - լատին եկեղեցական հայրերից, Աստվածաշնչի լատիներեն թարգմանության (Վուլգատա) հեղինակը: Մեծ ճշնավոր էր և մեծ գիտնական:

² Լյուդովիկոս Թ (1214-70) - Ֆրանսիայի արքա 1226-ից, հոր 12 տարեկան էր Հայտնի

հիվանդանոցներ և անձամբ սպասավորում հիվանդներին: Ֆրանցիսկոսը սիրում էր աղքատությունը, որին «Տիրուհի» էր կոչում: Գրիգոր Մեծը³ սիրում էր հյուրընկալել ճամփորդներին, ինչպես Աբրահամը, և վերջինիս նման հյուրընկալեց Փառքի թագավորին՝ ճամփորդի տեսքով: Տոբիթը կրթվում էր գթասրտության մեջ՝ թաղելով մեռելներին: Արքայադուստր Եղիսաբեթը վարժվում էր անձնուրացության մեջ: Եկատերինա Ջենովացին այրիանալուց հետո նվիրվեց հիվանդների խնամքին:

Սի աղջիկ, որ ծգտում էր համբերության առաքինություն ձեռք բերել, Ար. Աթանասի ցուցումով բնակեցրեց իր տանը մի աղքատ այրու՝ չարասիրտ, անբարյացակամ և անտանելի բնավորությամբ, որն անդադար կշտամբում էր բարեպաշտ աղջկան և դրանով իսկ փուլի հնարավորություն տալիս հմտանալու հեզության և մերողամտության մեջ:

Այսպիսով, Աստծուն ծառայելու փափագ ունեցող մարդիկ կատարում են բարեպաշտության զանազան գործեր: Ոմանք նվիրվում են հիվանդների խնամքին, ոմանք՝ աղքատներին օգնելուն, ոմանք՝ քրիստոնեական ուսմունքը երեխաների մեջ տարածելուն, ոմանք՝ մոլորվածներին և ընկածներին ձեռք են մեկնում, ոմանք եկեղեցիներ և խորաններ են զարդարում, ոմանք փորձում են մարդկանց մեջ խաղաղություն և համերաշխություն հաստատել: Այս բոլոր մարդիկ նման են ասեղնագործուհիների, որ տարբեր հենքերի վրա արծաթյա և ոսկյա, մետաքսե թելերի համադրությամբ հյուսում են բազում գեղեցիկ ծաղիկներ: Այս բարեպաշտ հոգիները ծրր սկսում են վարժվել որևէ առաքինության մեջ, օգտագործում են այն որպես հենք իրենց հոգևոր ասեղնագործության համար: Չետագայում այդ հենքը կգունավորվի մյուս բոլոր առաքինությունների գույներով: Սակայն ընդհանուր հենքի շնորհիվ այդ ասեղնագործությանը բնորոշ կլինի բարեկարգություն, մերողաշնակություն և միասնություն: Այնպես որ հոգին կնմանվի զարդարված ու պաճուճված ոսկեհուռ զգեստի (Աղմ. 44. 10):

Եթե որևէ արատ իշխում է մեզ վրա, անհրաժեշտ է, որքան հնարավոր է հաճախ կիրարկել նրան հակառակ առաքինությունը՝ միահյուսելով և մնացած բոլորը: Այս ճանապարհով մենք կհաղթենք մեր թշնամուն և կարգվենք, որ նա սողոսկի մեր հոգու մյուս ուղորտները:

Եթե ինձ տիրում է հպարտությունը կամ բարկությունը, ես ամեն ինչում պիտի հակվեմ խոնարհությանը և հեզությանը՝ օգտագործելով և այլ միջոցներ, ինչպես աղոթքը և խորհուրդները, խոկումը, հաստատականությունը և ժուժկալությունը: Առաքինասեր մարդը երբ ծգտում է որևէ առաքինություն կատարելության հասցնել, որն ավելի անհրաժեշտ է իրեն փորձությունից պաշտպանվելու, պետք է միաժամանակ հետամուտ լինի կատարելագործվելու նաև հարակից առաքինություններում: Չորք առավելապես վարժվում էր համբերության մեջ բազում փորձություններում և սրբացավ տարբեր բարեմասնությունների ձեռք բերելով: Ար. Գր. Նազիազանցին ասում է, որ մեկ

է խաչակրաց արշավանքների հանդեպ իր նախանձախնդրությամբ Այդ ամենից բացի հայտնի էր իր աղոթական անձնական կյանքով և եկեղեցու ու բարեգործական հաստատությունների նկատմամբ իր նվիրվածությամբ, որով միջնադարյան միապետի իդեալ էր նկատվում: Սրբերի շարքը դասվեց արդեն իսկ 1287-ին:

³ Գրիգոր Ա Մեծ (540-604) - Հռոմի Պապ 590-ից կաթոլիկ եկեղեցու լատին չորս մեծագույն վարդապետներից մեկը: Հայտնի էր ոչ միայն իր սրբակենցաղ վարքով, այլև որպես իմաստուն եկեղեցական ու քաղաքական գործիչ:

գործողություն, որը ներշնչված է այս կամ այն առաքինությամբ, կատարված ամենայն անբասիրությամբ և կատարելությամբ, մարդուն տալիս է հմարավորություն բազմաթիվ բարեմասնություններ ձեռք բերելու: Նա բերում է պոռնիկ Ռախաբի օրինակը, որն արժանացավ վերին փառքին միայն շնորհիվ իր հյուրասիրության, քանի որ արեց ամենայն ջանադրությամբ և մեծ սիրով (Յեսու Նավեի 2. 4., եբր. 11. 31, Դակ. 2. 25):

ԳԼՈՒԽ Բ

Առաքինությունների ընտրության մասին գրույցի շարունակություն

Երանելի Օգոստինոսը շատ լավ է խոսում այն մասին, որ բարեպաշտության ուղին ոտք դրած սկսնակները թույլ են տալիս սխալներ, որոնց ծանր եմ ըստ կատարելության օրենքի, սակայն երբեմն ի հայտ են բերում բարեհաճության դրսևորում, որը հետագայում կարող է համզեցնել բարեմասնության: Այսպես, օր.՝ սկսնակին համակող պարզունակ մախնական վախի այն զգացողությունը, որն առաջ է գալիս մեղքը նոր մերժած հոգու ավելորդ փափկամկատությունից, կարող է երաշխավորել հետագայում մաքուր խղճմտանք, սակայն ավելի փորձառուների համար բացասական է, որովհետև նրանց սրտերում արդեն պիտի թագավորի սերը, որը վտարում է ստրկական վախը: Ակզբնական շրջանում Բեռնարդը խստապահանք էր իրեն դիմողների հանդեպ: Նա պարտադրում էր, որ նրանք խապառ թողնեն բոլոր մարմնավոր բաները: Լսելով նրանց խոստովանությունները, չափազանց խիստ էր վերաբերվում նրանց թերություններին, որքան էլ չնչին լինեին: Նրա հոգածությունը իր աշակերտների կատարելությանը չափից ավելին էր. որքան շատ էր դրդում առաքինության, այնքան նրանք մահանջում էին, որովհետև կորցնում էին արիությունը, շնչահեղձ լինում, երբ իրենց ստիպում էին այդքան արագ բարձրանալ զառիվեր, բարձր լեռը: Դասկանո՞ւմ ես, բարեկամս, այն թխում էր սրբերի կատարյալ մաքրության համդեպ կրակոտ մախանձախնդրությունից: Ինքնընտիրքյան, մախանձախնդրությունը մեծ առաքինություն է, սակայն այս դեպքում՝ մախատինքի արժանի: Աստված Ինքն ուղղեց նրան տեսիլքի միջոցով, որից սրբի հոգին տոգորվեց հեզությամբ, սիրով, քնքշությամբ, և մա սկսեց մեղադրել ինքն իրեն, որ այդքան խստապահանք է եղել, և դարձավ զթասիրտ ու ներողամիտ յուրաքանչյուրի նկատմամբ, բոլորի հետ ամեն ինչ եղավ, որպեսզի թերևա բոլորին փրկի (Ա Կոր. 9. 22):

Եթե մարդը երկարատև հիվանդությունից հետո ոտքի է ելնում, և նրա ոտքերն այտուցվում են քայլելիս, այն կարող է լինել ապաքինման պահերից մեկը: Եթե մույնը պատահում է առողջ մարդուն, կարող է դիտվել որպես սկսվող հիվանդության նշան: Պետք է կրթվել առաքինություններում ոչ միայն ջանասիրությամբ, այլև խելամտորեն, այսինքն՝ չինքնվել սեփական դատողություններին և պատկերացումներին (Սեակ. 3. 5), այլ լսել Աստծուց մեզ ուղարկված առաջնորդներին: Կան բաներ, որ մարդիկ թյուրիմացաբար առաքինություն են համարում, օր.՝ էքստազները, հափշտակությունները, անզգայությունը և սրանց նման այլ «կատարելություններ», որոնց մասին խոսվում է որոշ գրքերում, որ խոստանում են վսեմացնել, ազնվացնել հոգին սոսկ մտահայեցողական ճանապարհով: Այս բոլորն ամենակին էլ առաքինություններ չեն: Երբեմն նման հոգեվիճակներ տրվում են որպես վարձ առաքինության դիմաց կամ ապագա կյանքի երաճության մախագագացում: Աստծուն սիրելու և ծառայելու համար այս ամենի անհրաժեշտությունը չկա: Իսկ մեր միակ նպատակը այս պիտի լինի: Այդ

հոգեվիճակները ձեռք չեն բերվում աշխատանքով և ջանասիրությամբ, քանի որ դրանք ավելի շուտ կրթեր են, այլ ոչ գործեր, մենք կարող ենք դրանք ստանալ, բայց ոչ դաստիարակել: Մենք չպիտի ծագենք մանավել սրբերին այդ առումով: Եթե Աստված կամենա, մա կարող է դարձնել մեզ հրեշտականման, բայց մեր խնդիրն այն է, որ պարզությամբ, համեստորեն և ջանադրաբար ձևավորենք մեր մեջ այն փոքր բարեմասնությունները, որոնց հաղթանակը Տերը համձնել է մեր հոգածությանը և ջանքերին, որոնք են՝ համբերությունը, սրտի մաքրագործումը, խոնարհությունը, հնազանդությունը, մաքրությունը, անընչաքաղցությունը, սերը մերձավորի նկատմամբ, սեփական թերություններին հանդուրժողականությունը, ժրջանությունը, սուրբ նկրտումները: Վեհ բաները թողնենք ավելի վսեմաշուք հոգիներին, մենք արժանի չենք ծառայելու Աստծուն այդքան բարձր տեղերում: Երջանիկ լինենք գործելու Նրա համար խոհանոցում, հացի փռում, որպես փոստատար կամ սպասավոր: Եթե Աստված կամենա, կմոտեցնի մեզ Իրեն: Այո՛, բարեկանս, փառքի Արքան վարձատրում է նրանց, ով ծառայում է Իրեն, կարևորելով ոչ թե կատարվող գործի բնույթը, այլ այն ջանասիրությունը, խոնարհությունը և սերը, որ դրսևորվում է ցանկացած գործի կատարման ընթացքում: Ավուղը վնտրում էր հոր ավանակներին և գտավ Իսրայելի թագավորությունը (Ա թագ. 9. 10): Ռեբեկան ջուր տվեց Աբրահամի ուղտերին և դարձավ նրա որդու կինը (ԾՆ. 24. 44): Հոռիք հասկ էր հավաքում Բոոսի արտում և ամուսնացավ նրա հետ: Երբ մարդը հավակնում է չափազանց վսեմ և բացառիկ երևույթների, անպայման միախառնվում է սուտը, ինքնախաբեությունը, պատրանքը: Ովքեր իրենց հրեշտակներ են համարում, հաճախ նույնիսկ լավ մարդիկ էլ չեն, գուցե և կա վեհություն նրանց ճառերում, բայց ոչ գործերում և զգացմունքներում: Ասկայն որևէ բան պետք չէ արհամարհել կամ խիստ քննադատել, այլ գոհանալով Աստծուց այլոց վեհության համար, մնա՞նք համեստորեն մեր ուղու վրա, թեկուզ ավելի ցածր, բայց և ավելի կայուն, ոչ այնքան հոյակապ, բայց ավելի համապատասխանող մեր անկատարությանը: Եթե մենք լինենք համեստ և հավատարիմ Աստծուն, Ինքն Աստված կբարձրացնի մեզ էլ ավելի բարձր:

ԳԼՈՒԽ Գ

Համբերության մասին

«Ձեզ համբերություն է պետք, որպեսզի Աստուծո կամքը կատարելով, հասնեք Նրա խոստմանը» (Եբ. 1. 36), - ասում է Պողոս առաքյալը: «Եւ ձեր համբերությամբ պիտի շահեք ձեր հոգիները», - կոչ է անում Տերը (Ղուկ. 21. 19):

Մեծ երջանկություն է մարդու համար, իմ աստվածասեր բարեկամ, տիրել սեփական հոգուն: Որքան որ կատարելագործվում է մեր համբերությունը, այնքան ավելի կատարյալ ենք տիրապետում մեր հոգիներին: Հիշիր, որ Տերը մեր համար փրկագործեց համբերելով և տառապելով, և մենք նույնպես պիտի հասնենք փրկությանը տառապանքների և մեղությունների միջով, որքան հնարավոր է պարզությամբ կրելով եւ անարգանք, եւ հակասություններ, եւ ամեն տեսակի տհաճություններ: Մի սահմանափակիր քո համբերությունը միայն որոշակի վիրավորանքներ և մեղություններ կրելով, այլ տարածիր այն ամեն բանի վրա, ինչ կուղարկի Աստված, և կամ թույլ կտա, որ պատահի քո կյանքում: Ոմանք համաձայն են կրելու միայն այն տառապանքները, որոնք պատիվ են բերում: Օր.՝ չարչարվել հանուն հավատի, վիրավորվել պատերազմի դաշտում, զրկվել ունեցվածքից, որն անարդարացիորեն են խլել իրենից: Իրականում այս

մարդիկ պատրաստ են ոչ թե կրելու տառապանքներ, այլ նրանց հետ կապված պատիվը: Նա, ով իսկապես համբերող է և ուզում է ծառայել Աստծուն, համբերությամբ կրում է թե՛ պատվաբեր, թե՛ անպատվաբեր տառապանքները: Կապիտան Էլ ծանր չէ կրել արհամարհանք և վիրավորանք օտար և չար Այնքան էլ ծանր չէ կրել արհամարհանք և վիրավորանք, ընկերների կամ հարազատ-մարդկանցից: Բայց արժանանալ լավ մարդկանց, ընկերների կամ հարազատ-մարդկանցին և վատ վերաբերմունքին, իսկապես, ծանր բան է: Կառլոս Ռոդրոմեն⁴ երկար ժամանակ լուռ տանում էր հայտնի քարոզչի՝ ամբիոնից հրապարակայնորեն իրեն հասցեագրված կշտամբանքները, և դա շատ ավելի մեծ արժանիք էր, քան մինչ այդ կրած բոլոր կշտամբանքներին դիմանալը:

Ինչպես մեղվի խայթոցն ավելի ցավոտ է, քան ճանճիճը, նույնպես և հարգարժան մարդկանց հարձակումներն ու նախատիքները շատ ավելի անտանելի են, քան մնացածներից: Պատահում է և այնպես, որ երկու լավ անձնավորություն, թե՛ բարի միտումներով, բայց տարբեր կարծիքներ ունենալու պատճառով, հակադրվում և փոխադարձաբար հետապնդում են իրար:

Համբերությամբ կրիր ոչ միայն մեծ անախորժությունները, այլև նրանց հարող մանր ու թեթև տհաճություններն ու պատահականությունները: Շատերը համաձայն են տանել այս կամ այն չարիքը, բայց որոշակի պայմաններ թելադրելով: «Ես դեմ չեմ աղքատանալուն, եթե հնարավորություն ունենամ օգնելու ընկերներիս, դաստիարակելու երեխաներիս և ապրել ազնիվ»: Մեկ ուրիշն ասաց. «Ես համաձայն եմ սնանկանալ, միայն թե կարծիք չստեղծվի, թե պատճառն իմ անկարողությունն էր»: Եվս մեկն այսպես արտահայտվեց. «Թող չարախոսն իմ անկարողությունն էր»: Եվս մեկն այսպես արտահայտվեց. «Թող չարախոսն իմ մասին, ինչքան ուզում են, միայն թե ինձ չարախոս չհամարեն»: Որոշ մարդիկ համաձայն են դիմանալ ինչ-ինչ անհարմարությունների, բայց ոչ ամեն տեսակի: Օր. նրանց կարող են հոժարությամբ կրել հիվանդությունը, բայց համաձայն չեն, որ հիվանդ ժամանակ նրանց շրջապատեն անցանկալի մարդիկ կամ դեղեր ձեռք բերելու միջոց չունենան: Բարեկամս, անհրեժեշտ է համակերպվել հենց այն հիվանդությանը, որն ուղարկված է Աստծուց, և տանել այն համբերությամբ և հանդուրժել շրջապատող մարդկանց, միջավայրը: Նույնը վերաբերում է և այլ ծախսողությունների: Եթե քեզ որևէ դժբախտություն է պատահել, դիմիր քեզ մատչելի և Աստծուն հաճելի միջոցների, որովհետև այդպես չվարվել, նշանակում է փորձել Տեր Աստծուն: Սակայն ամեն բան լիակատար հնազանդությամբ կատարելուց հետո, սպասիր, թե ինչ կկատարվի Աստծու կամքով: Եթե դեղերը մպաստեն առողջանալուն, խոնարհաբար գոհացիր Աստծուց, եթե ոչ՝ համբերությամբ զինված օրհնիր Նրան:

Այ. Գրիգորն ասում է. «Եթե քեզ արդարացիորեն նախատում են սխալներիդ համար, խոնարհվիր և ընդունիր, որ արժանի ես քեզ ներկայացվող մեղադրանքներին: Եթե մեղադրանքը սուտ է, հեզությամբ հերքիր, ներողություն խնդրելով, որպեսզի մերձավորիդ ակամայից ստախոսության մեջ չմեղադրես: Բայց եթե քեզ շարունակում են մեղադրել, մի տրտմիր և մի աշխատիր, որ քեզ հետ անպայման համաձայնեն: Ինչպես որ մինչ այդ տուրք մատուցեցիր արդարությանը, այնպես էլ հիմա մատուցիր խոնարհությանը: Այսպիսով, դու

⁴ Կառլոս Ռոդրոմեն (1638-84) - Միլանի արքեպիսկոպոս 22 տարեկանում դարձավ կարդինալ և Միլանի արքեպիսկոպոս Ակտիվ մասնակցություն ունեցավ Տրիդենտյան ժողովում և դարձավ բողոքականության դեմ պայքարի առաջամարտիկներից մեկը, առկալե բարեկարգեց իր թեմի Հոգևորական դասի կենցաղը և զարկ տվեց բարեգործական հաստատություններին, Հինգիսակի մեջբերումը վերաբերում է բողոքական քարոզչի արտահայտություններին իր դեմ:

հոգում ես բարի անունդ պահպանելուն և վկայում, որ ձգտում ես խաղաղության, սրտի հեզության և խոնարհության»։ Որքան կարող ես, քիչ զանգատվիր։ Սովորաբար զանգատվողը մեղք է գործում, որովհետև մեր ինքնասիրությունը միշտ դրդում է չափազանցել մեզ հասցրած վիրավորանքները։ Մանավանդ մի զանգատվիր նրանց, ովքեր ընդունակ են զայրանալու և վատ մտածելու։ Եթե դու, այնուամենայնիվ, պահանջ ես զգում որևէ մեկին դժգոհությունը պատմելու, գտնե խաղաղ և աստվածասեր հոգիներ ընտրիր, հակառակ դեպքում փոխանակ սիրտդ թեթևացնելու, էլ ավելի կվիրավորես, ծակող փշերից ազատվելու փոխարեն էլ ավելի խորը կխրես մարմնիդ մեջ։ Ոմանք, երբ հիվանդ են, վիրավորված կամ դժբախտ, իրենց տրտունջը ոչ մեկին չեն հայտնում, որովհետև, ըստ իրենց, այդպես երևան է գալիս մեծահոգության պակասը։ Բայց միևնույն ժամանակ շատ են ուզում, առիթ փնտրում, որ խղճան, ցավակցեն, նաև զնահատեն իրենց համբերությունն ու արիությունը։

Այո, համբերություն է, բայց կեղծ, որն իր խորքում հպարտության և սնափառության շատ նուրբ ու ծածուկ արտահայտություն է։ «Նրանք պարծենալու պատճառ ունեն, բայց ոչ Աստուծո առջև», - ասում է առաքյալը (ՊՁ. 4. 2)։ Իրականում, իսկապես, համբերողը ոչ միայն չի զանգատվում, այլ չի էլ ակնկալում, որ իրեն խղճան։

Եթե առաքինությունների մեջ կրթվելիս հակասությունների հանդիպես, իսկ առանց դրանց հնարավոր չէ, հիշիր Փոկչի ասածը. «Երբ կինը ծննդաբերում է, նրա համար տրտմություն է, բայց երբ մանկանը ծնի, այլևս չի հիշում նեղությունը»։ Ուրախության պատճառով, որ աշխարհում մի մարդ ծնվեց» (ՊՈՎ. 16. 21)։ Քո հոգում ծնվում է ամենահրաշալի մանուկը՝ Զիսուս Քրիստոս։ Դու չես կարող դժվարություն չկրել նախքան Նրա ծնվելը, քաջ եղիր, տառապանքը կանցնի, և դու կհամակվես հավիտենական ուրախությամբ։ Բայց Նա քո սրտում կծնվի միայն այն դեպքում, երբ քանաս մեծանվել Նրան։

Երբ հիվանդ ես, բոլոր ցավերդ ու նեղություններդ հանձնիր Տիրոջը և խնդրիր գումարել այն տառապանքներին, որ Նա կրել է քեզ համար։ Լսիր բժիշկներին, ընդունիր դեղերը հանուն Աստուծո սիրո, ինչպես Նա ճաշակեց լեղին հանուն քո սիրո, ցանկացիր առողջանալ, որպեսզի ծառայես իրեն, բայց հնազանդ լինելու համար մի հրաժարվիր տառապելուց և պատրաստ եղիր մեռնել Նրա փառքի համար։ Հիշիր, որ մեղուների սնունդը, երբ նրանք մեղր են պատրաստում, դառն է, ճիշտ նույնպես և մենք չենք կարողանա համբերություն և հեզություն ցուցաբերել, եթե չսնվենք դառնության հացով և չապրենք տառապալից կյանքով։ Եվ ինչպես դառն ու մանրածաղիկ բույսից ստացվում է ամենաքաղցր մեղրը, ճիշտ այդպես և վշտերով լի կյանքի ընթացքում քամահրանք և նվաստություն հաղթահարելու շնորհիվ ձևավորված առաքինությունը մյուսներից անհամեմատ կատարյալ է լինում։ Հաճախակի ուղղիր քո ներքին հայացքը խաչալ Քրիստոսին՝ խոշտանգված, ամոթահար, անարգված, զրպարտված, լքված բոլորից, կքած անտանելի բեռի ծանրության տակ, և կհամոզվես, որ քո բոլոր ցավերն անհամեմատելի են Նրա տառապանքների ուժգնությանը, որ դու դեռ ոչինչ չես կրել Նրա համար, մինչդեռ Նա այդքան տանջվել է քեզ համար։ Երբ նայես մարտիրոսների տանջանքներին, ուրիշների կրած շատ ավելի ծանր նեղություններին, կմտածես՝ իմ կրած չարչարանքներն ու տրտմությունը պարզապես մխիթարություն են այլ մարդկանց հետ համեմատած, որոնք այնքան մեծ նեղությունների են դիմանում առանց օգնության ակնկալիքի, կարեկցանքի, սփոփանքի, մշտապես մահվան հարևանությամբ, անհամեմատ ավելի ծանր բեռի տակ կռացած։

ԳԼՈՒԽ Դ ԽՈՆԱՐԻՈՒԹՅԱՆ մասին

Եղիսն մարգարեն ասաց խեղճ որբնայրուն. «Վերցրու դատարկ ամանները և յուղ լցրու նրաց մեջ» (Դ Թագ. 4. 3-4): Եթե ուզում ենք մեր սիրտը դարձնել Աստուծո փառքի կացարան, անհրաժեշտ է, որ այն դատարկ լինի՝ ազատ մեր սեփական փառքից: Գիշատիչ թռչուններին նկատելուն պես կաչաղակն սկսում է ճչալ և վախեցնում է նրանց: Այդ պատճառով աղավնին շատ է սիրում այդ թռչնակին և նրա կողքին իրեն պաշտպանված է զգում: Գիշտ նույն կերպ և խոնարհությունն է վանում սատանային և օգնում պահպանել Սուրբ Դոգու շնորհն ու պարգևները: Բոլոր սրբերի, ինչպես նաև Տիրոջ և Աստվածամոր կողմից ամենից բարձր այս առաքինությունն է զնահատվում մարդու մեջ: Ինչին էլ վերաբերի մարդու փառքը՝ մեզ պատկանող և չպատկանող, գովեստի արժանի կամ ոչ, սին և ունայն է: Ազնվագարմ ծագումը, հասարակական դիրքը մերը չեն, այլ մեր նախորդներինը: Եթե մեր հպարտության առարկան ունեցած զգեստն է, կամ գլխարկը, կամ զտադրուն ձին, պարզ չէ՝ արդյոք, որ պատիվը ծիղուն է, գլխարկինը, դերձակինը, այլ ոչ թե մերը: Ոմանք հպարտանում են նորածն սանրվածքով, պարելու, երգելու, նվագելու ունակությամբ: Մի՞թե խնեթություն չէ սեփական բարի անունը կախվածության մեջ դնել նման բաներից: Ոմանք էլ հպարտ են իրենց գիտելիքներով և հավակնություն ունեն ուսուցանելու, ոմանք՝ իրենց գեղեցկությամբ: Համաձայնվիր, որ այս փառքը ունայն է, անհեթեթ, թեթևամիտ: Կարելի է իմանալ, իրո՞ք այս անձն իմաստուն է, գիտուն և վեհամո՞ծ: Եթե այդ տվյալները նպաստում են խոնարհությանը, համեստությանը, Աստուծո կամքին հնազանդվելուն, իրենցից իսկապես բարիք են ներկայացնում: Իսկական չեն, եթե միայն տպավորություն են գործում: Քամու և աղմուկի մեջ գոյացած մարգարիտի արտաքինը խաբուսիկ է, ներսը՝ դատարկ: Նույնպես՝ եթե մարդու բարեմասնությունները և լավ հատկությունները սնունդ են ստանում հպարտությունից, թեթևամտությունից և սնապարծությունից, ընդամենը բարու տպավորություն են ստեղծում, չունեն ո՛չ արմատ, ո՛չ գործություն, ո՛չ ամրություն: Մեծարանքը, տիտղոսները, հասարակության մեջ զրաված դիրքը նման են զաֆրանին, որն ինչքան փաթթամանում է, այնքան շատ են ոտնակոխ անում: Քո գեղեցկությունը քեզ պատիվ չի բերի, եթե ինքդ ես հիանում նրանով: Քո գիտելիքները կորցնում են իրենց արժեքը, եթե մեծամիտ և տառակեր ես: Նվաստացուցիչ է պաշտոնով, կոչումով, ուսումով պարծենալը: Եթե պատիվն ու հարգանքը տրվում են առանց ճիգեր գործադրելու, իսկապես թանկ են, իսկ եթե համառորեն պահանջում ենք, փնտրում և կորզում՝ նողկալի են: Փասիանն իդ գեղեցիկ փետուրները տարածելիս միաժամանակ մերկացնում է մարմնի տգեղ մասերը: Դեռավից անցնելիս մանրագորի բուրմունքը հաճելի է, բայց մոտիկից և երկարատև շնչելիս առաջ է բերում քնկոտություն և հիվանդություն: Մեծարանքը՝ թեթևակի և հեռվից չիմելու դեպքում, թվում է ամոքիչ, սակայն արատի է վերածվում, եթե մշտապես այն վայելելու ձգտում է նկատվում:

Եթե մարդիկ սիրում և ձգտում են առաքինության, դառնում են առաքինի, իսկ եթե ձգտում են պատվի՝ արժանի են նախատիճքի: Ազնվագույն մտքերը չեն զվարճանում պաշտոններով, պարգևատրումներով, ողջույններով, նրանք շատ ուրիշ գործեր ունեն, այդ ամենը անբանների համար է: Մարգարիտ ունեցողը չի հրապուրվում խխունքներով, առաքինության ձգտողը պատիվ չի փնտրում: Բոլոր իրավիճակներում էլ կարելի է պահպանել խոնարհությունը: Պերուից մեկնողներն իրենց հետ ոսկուց և արծաթից բացի տանում են նաև կապիկներ և

թութակներ, քանի որ մրանք թանկ չեն և չեն ծանրաբեռնում մավը: Առաքինության ձգտող մարդիկ չեն հրաժարվում իրենց առաջարկվող պաշտոններից և պատվից, քանի որ այդ տեղի է ունենում առանց նախորդող վեճերի և հուզումների: Հասարակության մեջ բարձր պաշտոն գրավելիս շատ խելամիտ պետք է լինել և պարտականությունները կատարելիս չմոռանալ համեստության և սիրո մասին:

ԳՐՈՒՆ Ե

Ներքին խոնարհության վերաբերյալ

խոնարհության մասին խոսելիս պետք է ավելի խորամալ, որոպիեսե ալն, ինչի մասին խոսում էինք մինչ այժմ, ավելի վերաբերում էր համեստությանը, քան խոնարհությանը: Որոշ մարդիկ չեն համարձակվում խորությամբ քննել Աստուծո՝ անձամբ իրենց արած բարեարությունները, վախենալով ավելորդ հպարտությունից: Սակայն ուրիշներ (ինչպես մեծահամբավ Թովմա Աքվինացին) համարում էին, որ այդ է լավագույն միջոցն Աստուծո հանդեպ սիրով լցվելու, որոպիեսե անձամբ մեզ վերաբերող բաներն ավելի են հուզում, քան այն, ինչ վերաբերում է մարդկանց ընդհանրապես: Իսկապես, ոչինչ այնպես չի խոնարհեցնում Աստուծո գթասրտության առջև, ինչպես Նրա պարզևած բարիքների առատության գիտակցումը, և ոչինչ այնպես չի խոնարհեցնում մեզ Աստուծո արդարության առջև, ինչպես մեր մեծաթիւ թերությունների գիտակցումը: Մտածենք լրջորեն, թե ինչ է արել Նա մեզ համար, և ինչեր ենք գործել մենք Նրա կամքին հակառակ, լավ քննենք, նկատի ունենալով, որ ինչ լավ բան գտնենք մեր մեջ, մեզանից չէ: Տորին դժվարաշարժ և կեղտոտ կենդանի է և այդպիսին էլ կմնա, թեկուզ մրան բարձր ենք թագաժառանգին պատկանող թանկարժեք և անուշաբույր իրեր: Ի՞նչ լավ բան կա մեր մեջ, որ չենք ստացել: Ինչո՞վ կարող ենք պարծենալ այդ դեպքում (Ս Կոր. 4. 7): Ընդհակառակը, ինչպիսի՜ շնորհակալության զգացում է համակում մեզ, երբ լրջորեն մտածում ենք Աստուծո ողորմածության մասին: Եթե համկարծ զգանք, որ գլուխ է բարձրացնում սնապարծությունը, իսկույն անդրադառնանք մեր թերություններին, բացթողումներին, թուլություններին, և կտեսնենք, թե ով ենք մենք ըստ էության, երբ գործում ենք առանց Աստուծո և անշուշտ կհամոզվենք, որ միայն ու միայն Աստուծոց է բխում ամենայն բարիք: Աստվածամայրն ասաց. «Իմ ամըը փառավորում է Տիրոջը», «Ամենագոր Աստված մեծամեծ գործեր արեց ինձ համար» (Ղուկ. 1. 46, 49): Այդ բառերով մա իր խոնարհությունն է վկայում, նաև այն, որ ամեն վեհությունն Աստուծոց է: Մենք հաճախ ասում ենք մեր մասին, որ ոչինչ չենք ներկայացնում մեզանից, որ հող ու մոխիր ենք, բայց երբ տեղը գալիս է, ուզում ենք, որ մեզ նկատեն և զմահատեն: Մենք ձևացնում ենք, թե ուզում ենք վերջինը լինել և նստում ենք սեղանի ծայրին, սակայն այն հույսով, որ մեզ ավելի պատվավոր տեղ կառաջարկեն: Իսկական խոնարհությունը իրեն չի հրամցնում, ոչ միայն աշխատում է ծածկել, քողարկել մյուս բարեմասնությունները, մնալ ստվերում, այլ երբեմն մույմիսկ թաքնվում է բարկության կամ գոռոզության շղարշի տակ, որպեսզի չհայտնաբերվի: Ահա իմ կարծիքը, սիրելի՛ բարեկամս, չարտասանենք խոնարհ բառեր կամ ասելիս գոնե համապատասխան զգացողություն ունենանք, հայացքը ցած չուղղենք, եթե սրտում խոնարհություն չունենք, չձևացնենք, թե ուզում ենք վերջինը լինել, եթե սրտում մամն ցանկություն չունենք: Այս կամոնը ես համարում եմ այնքան ընդհանրական, որ բացառություն չի համդուրժում: Իսկապես, խոնարհ մարդը համաձայն է, որ մեկ

ուրիշն իրեն ոչնչություն համարի, հայտարարի, որ նա ոչինչ չարժեք և այլն: Նա չի հակաճառում կամ զայրանում, որովհետև ինքն էլ համոզված է, որ այդպես է: Սակայն կան մարդիկ, ովքեր հայտարարում են, որ ընդունակ չեն մտքի աղոթքի, քանի որ այն հատուկ է կատարյալներին, մյուսներն ասում են, որ արժանի չեն հաճախակի հաղորդվելու, ոմանք համարում են, որ արժանի չեն բարեպաշտ կյանք վարելու, որովհետև անհաստատակամ են, ոմանք էլ հրաժարվում են իրենց տաղանդը Աստծուն և մերձավորներին ծառայեցնելու այն պատրվակով, իբր կարող են հպարտանալ:

Այս ամենը արիեստական պատճառաբանություններ են և ոչ միայն կեղծ խոնարհության դրսևորում, այլև՝ նենգափոխում, որի ետևում թաքնված են ինքնասիրություն և ծուլություն:

Սարգսրեն դիմեց դժբախտ Աջազին. «խորխորատում լինի թե բարձունքում՝ քեզ համար նշան խնդրի քո Տեր Աստծուց»: Աջազը պատասխանեց. «Չեմ խնդրի և Տիրոջը չեմ փորձի» (Ես. 7. 11-12): Նա չար մարդ էր և ցանկանալով խոնարհության քողի տակ իր երկյուղածությունն արտահայտել Աստուծո նկատմամբ, հրաժարվեց Աստուծո առաջարկած շնորհից: Մի՞թե չհասկացավ, որ Աստուծո պարզևեղծ մերժել չի կարելի, և խոնարհությունը կայանում է ամենից առաջ հնազանդության մեջ: Կատարելով Աստուծո հրամանները՝ մենք միանում ենք իրեն (Մտք. 5. 48): Դալարտ մարդը վարանում է կատարել հաճմարարությունը, իսկ խոնարհն այնքան ավելի համարձակ է, որքան տեղյակ իր անզորությանը, որովհետև ամբողջ հույսը դնում է Աստուծո վրա, Որն իր գործությամբ գործում է մեր տկարության մեջ և տարածում իր գութը մեր աղքատության վրա: Պետք է խոնարհաբար և սրբությամբ ձեռնամուխ լինել այն ամենին, ինչ մեր առաջնորդները համարում են մեր առաջընթացին նպաստող: Կարծել, որ գիտես այն, ինչ չգիտես՝ մեծագույն հիմարություն է, իսկ ձգտում ցուցաբերել իմանալու այն, ինչ արդեն գիտես, անտանելի սնափառություն է: Ինչ վերաբերում է իմ անձին, չեմ ուզում իմն գիտունի տեղ դնել նույնիսկ այն բաներում, որ հաստատ գիտեմ, բայց միևնույն ժամանակ չեմ ուզում տգետ ձևանալ: Պետք է մերձավորի հետ վարվել հեզ և սիրալիք, որպեսզի ոչ միայն օգտակար լինես նրան սովորեցնելու, այլև մխիթարելու մեջ: Խոնարհությունը թաքցնում և սքողում է առաքինությունները՝ նրանց պահպանելու միտումով, թույլ է տալիս դրսևորվելու, երբ այդ պահանջում է Քրիստոսի սերը, ինչից նրանք առատանում և կատարելագործվում են: Սրանով այն նմանվում է Թիլոս կղզում աճող մի ծառի, որի գեղեցիկ հրամման ծաղիկները գիշերը փակվում են և արևածագին բացվում, այնպես որ այդ երկրի բնակիչները ասում են, թե գիշերը ծաղիկները քնում են: Խոնարհությունը նույնպես թաքցնում և քողարկում է մեր բոլոր առաքինությունները և կատարելությունները: Սերն ընդունակ է երևան հանելու նրանց, քանի որ սերը միայն մարդկային առաքինություն չէ, այլ երկնային, ոչ այնքան բարոյական, որքան աստվածային, նա արեգակն է թուր առաքինությունների և միշտ իշխողի դերում պետք է լինի: Իսկ այն խոնարհությունը, որ վնաս է հասցնում սիրուն, անկասկած կեղծ է:

Ես չեի ուզի իմն ներկայացնել ոչ որպես իմաստուն, ոչ էլ՝ հիմար: Եթե խոնարհությունից դրդված չեմ կարող իմն իմաստուն համարել, ուղղամտությունից և պարզությունից ելնելով՝ հիմար չեմ կարող ներկայանալ: Աստուծո որոշ ծառաներ խենթ էին ձևանում, որպեսզի արժանանան աշխարհի քամահրանքին: Կարելի է հիմալ նրանցով, բայց նմանվել՝ վտանգավոր է: Ոչ ոք չի կարող յուրացնել այն արտասովոր, յուրօրինակ պատճառները, որոնց

համաձայն նրանք անում էին այդ: Իսկ ինչ վերաբերում է Դավիթ արքային, որ պարում էր Տիրոջ տապանակի առջև (Բ Թագ. 6, 14-16), ամենևին չի նշանակում, որ նա խեղկատակություն էր անում, ուղղակի այդպես էր արտահայտում իր սիրտը ողորդող անսահման ուրախությունը: Երբ կինը՝ Սեղբորը, կշտամբեց նրան, նա չտրտմեց, այլ շարունակեց միամտորեն և ամնիջակամորեն արտահայտել իր ուրախությունը:

Եթե ձեզ նախատում են ճշմարիտ ու միամիտ բարեպաշտության համար, նվաստացումը միայն կուրախացնի ձեզ, ինչպես Դավիթը:

ԳԼՈՒԽ 2

Խոնարհությունը դրդում է մեզ սիրել նվաստացումը

Լատիներենում խոնարհություն և նվաստություն իմաստները նույն բառով են արտահայտում: Աստվածամայրը երգասացության մեջ ասում է. «...որովհետև Իր հայացքը դարձրեց իր աղախնի խոնարհության վրա, և ահա այսուհետև բոլոր սերունդներն ինձ երանի կտան» (Ղուկ. 1, 48): Նա ուզում է ասել, որ Տերը տեսավ իր հոժարակամ նվաստացումն ու նսեմացումը և պարզեց Իր ողորմությունները և առատ շնորհները: Սակայն խոնարհության և նվաստության առաքինությունները փոքր-ինչ տարբերվում են իրարից: Նվաստությունը չկանխամտածված նսեմությունն է: Խոնարհությունը սեփական ստորին վիճակը գիտակցաբար և հոժարությամբ ընդունելն է:

Խոնարհության գերագույն աստիճանն է ոչ միայն հոժարությամբ ընդունել սեփական անձի նվաստացումը, այլև սիրել այն, որը ոչ թե բավականաչափ արիության և վեհանձնության պակասից է, այլ Աստուծո սիրուց, մերձավորին սեփական անձից առավել գնահատելուց: Սիա թե ինչի նմ կոչ անում ձեզ: Այդ ավելի լավ հասկանալու համար պետք է նկատել, որ մեր բոլոր տառապանքները կարող են լինել եւ պատվաբեր, եւ արհամարհելի: Շատերը համակերպվում են պատվաբեր տառապանքներին, բայց ոչ ոք չի հանդուրժում արհամարհելիները: Ցնցոտիներ հագած, ցրտից դողացող բարեպաշտ միայնակյացը հարգանք է ներշնչում, բոլորը հարգում են նրա մաշված հագուստը և կարեկցում նրա տառապանքներին: Եթե աղքատ արիեստավորը, սնանկացած ազնվականը, միայնակ խեղճ օրիորդը երևան հասարակության մեջ նման հագուստով՝ արժանանում են արհամարհանքի և ծաղր ու ծանակի: Վանականն ուշադրությամբ կլսի վանահոր խիստ հանդիմանությունը, կամ երեխան՝ հոր, սակայն եթե ասպետը կամ ազնվագարմ տիկինը լսում են որևէ մեկի թեկուզ արդարացի և հանուն Աստուծո արված նկատողությունը՝ բոլորն այդ անվանում են վախկոտություն: Եթե թարախապալար է գոյացել մեկի ձեռքին՝ նրան ցավակցում են, իսկ եթե դեմքին՝ այն տիանություն է պատճառում շրջապատին, և նա ամաչում է իր հիվանդությունից: Սռաքինը տառապում է միայն ցավից, իսկ երկրորդը՝ նաև նվաստացումից: Հիվանդությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է համբերություն, իսկ նվաստացումը հաղթահարելու համար՝ խոնարհություն:

Սռաքինությունները նույնպես լինում են պատվավոր կամ ոչ: Աշխարհն արհամարհում է հետևյալ առաքինությունները՝ համբերատարությունը, հեզությունը, պարզությունը, խոնարհությունը, սակայն բարձր է գնահատում խելամտությունը, համարձակությունը, առատաձեռնությունը: Նույն առաքինությունից բխում են թե՛ հարգանքի, թե՛ արհամարհանքի արժանացող գործեր:

Ողորմություն տալ և ներել վիրավորանքները արդյունք են նույն սիրո առաքինության, սակայն աշխարհն առաջինը պատվաբեր է համարում, իսկ երկրորդը՝ արհամարհում: Այն երիտասարդներին կամ օրիորդներին, որոնք հրաժարվում են մասնակցել անվայել խրախճանքներին, որոշ հասարակություն պարսավում է և նրանց համեստությունը տարօրինակ նկատում: Սիրել՝ նշանակում է սիրել նվաստությունը: Երբ մենք այցելում ենք հիվանդների, և ինձ ուղարկում են ծայր աստիճան թշվառների խնամելու, աշխարհի աչքին նվաստացուցիչ է, բայց ես գոհ եմ, իսկ եթե ուղարկում են ավելի թեթև հիվանդների մոտ, արդեն ինձ համար է կարծես նվաստացուցիչ, բայց ես դրանից էլ պիտի գոհ լինեմ: Երբ վայր ես ընկնում փողոցում, ոչ միայն ցավ, այլ նաև ամոթ ես զգում, պետք է սիրել եւ այդ նվաստացումը: Խոնարհությունը չի թելադրում կանխամտածված արարք, սակայն պատահելիս հորդորում է չշփոթվել: Նույնը վերաբերում է և բոլոր վրիպումների, անհարմար անախորժ վիճակների, անքաղաքավարության հանդիպելիս, որոնցից, իհարկե, պետք է խուսափել, բայց եթե արդեն պատահել է, հաշտվել հետևանքներից բխող նվաստացման հետ և ընդունել խոնարհությամբ, դեռ ավելի՞ն՝ եթե ես զայրացած պահին վիրավորանք եմ հասցրել Աստծուն կամ մերձավորին և իսկույն զղջացել, ջանացել, որքանով հնարավոր է, ուղղել արածս, պիտի համակերպվեմ դրա հետ կապված նվաստացմանը և արհամարհանքին: Միշտ պետք է ջանալ օրինավոր ձևով ուղղել գործած չարիքը և նրա հետևանքները: Երբեմն հարկ է լինում մերձավորի շահի համար չզգացնել նվաստացման պահը, բայց պահպանել այն ներսում: Մեզ համար ամենաօգտակարը նվաստանալու այն իրավիճակներն են, որոնք ոչ թե մենք ենք նախընտրում, այլ կատարվում են Աստուծո կամքով: Իսկ Նրա ընտրութիւնը միշտ ավելի ճիշտ է, քան մերը: Դաճախ ամենաօգտակարը մեզ համար ամենացնցող, մեր հակումներին հակասող պատահարներն են: Մեր սեփական ընտրությունը փչացնում է համարյա բոլոր առաքինությունները: Միշտ, եթե մենք սաղմոսեզոտի պես կարողանայինք ասել, «ես նախընտրեցի ընկեցիկ լինել Աստուծո տան մեջ, քան մեղավորների հարկի տակ բնակվել» (Սղմ. 83, 11): Ոչ ոք չի կարող ավելի լավ այդ անել, քան Նա, ով ապրեց, տառապեց և մեռավ մարդկանցից արհամարհված: Իմ ասածի մեծ մասը կարող է չափազանց խիստ հնչել ձեր ականջին, բայց հավատացեք ինձ, երբ սկսեք կատարել այդ ամենը, մեղդից քաղոք կթվա:

ԳԼՈՒԽ Է

Ինչպես պահել բարի անվան համբավը խոնարհ կյանքով ապրելով

Գովասանքը, պատիվն ու փառքը ձեռք են բերվում միայն կատարյալ առաքինությամբ: Երբ ուզում ենք հարգանք ներշնչել մեկի նկատմամբ, գովաբանում ենք նրան, և բազմաթիվ գովասանքներից ծնվում է բարի համբավը: Գովեստներն ու պատիվները մեզն են՝ թանկագին քարերի, որոնց կուտակումից առաջանում է փառքը (Սղմ. 20, 6-7): Խոնարհությունը թույլ չի տալիս մեզ գովեստներ ակնկալել կամ ձգտել, որ մեզ ուրիշներից գերադասեն, սակայն մա համածայն է «հոգալ բարի անուն ունենալու մասին», որովհետև բարի անունը ամենևին չի ենթադրում ինքնամեծարում, այլ պարզություն, սովորական ազնվություն և անկաշառություն: Խոնարհությունը բնավ չի արգելում, որ մենք ընդունենք մեր մեջ իր առկայությունը և ցանկանանք, որ ուրիշները նույնպես ընդունեն: Խոնարհությունն այդ էլ կարհամարհեր, եթե այն անհրաժեշտ չլիներ սիրուն: Բայց քանի որ բարի անունը մարդկային

հասարակության հիմքերից մեկն է, և առանց դրա մենք ոչ միայն պիտանի չենք հասարակությանը, այլ նույնիսկ վնասակար, սերը պահանջում է, և խոնարհությունը՝ համաձայնվում, որ մենք ձգտենք բարի անուն ունենալու և փութաջանորեն պահենք այն:

Բացի այդ, ինչպես ծառի տերևները պիտի պաշտպանեն ոչ միայն ծառը, այլև պտուղները, քանի դեռ նրանք նուրբ և քնքուշ են, այնպես էլ բարի անունը, թեև ինքնըստինքյան չպիտի լինի մեր բաղձանքի առարկան, ոչ միայն օգտակար է մեր կյանքը զարդարելուն, այլև նպաստում է առաքինությունները պահպանելուն, մանավանդ երբ դեռ թույլ են և նուրբ: Բարի համբավը պահպանելու անհրաժեշտությունը մեզ ուժ և եռանդ է ներշնչում: Հոգ տանենք պահպանելու մեր բարեմասնությունները, քանի որ նրանք հաճելի են Աստծուն՝ մեր գործունեության գերագույն դատավորին: Ովքեր ուզում են երկարատև պահել միրգը, ոչ միայն պահածոներ են պատրաստում, այլ նաև տեղավորում այն հատուկ ամաններում, նույնը և այս դեպքում՝ թեև մեր առաքինությունների գլխավոր պահապանը աստվածային սերն է, մենք կարող ենք օգտագործել նաև մեր բարի անունը նույն նպատակի համար:

Սակայն պետք չէ չափազանց ջերմեռանդ և բժախնդիր լինել այս հարցում, որովհետև ով շատ նրբանկատություն է ցուցաբերում իր անվան հանդեպ, նման է նրանց, ովքեր իսկույն դեղեր են խմում ամենաթեթև տկարության դեպքում և փոխանակ օգնելու, միայն վնաս են հասցնում իրենց առողջությանը: Իրենց համբավն ապահովելու համար չափազանց ջանք թափողները կարող են վերջնականապես խաթարել այն: Շատ ավելի գերադասելի է վիրավորանքները և չարախոսություններն անտեսելն ու արհամարհելը, քան հիշաչարությունը, վիճարկումները և վրիժառությունը: Արհամարհանքը ստիպում է նրանց վերանայլ, իսկ եթե տրվում են բարկության, տպավորություն է ստեղծվում, թե ընդունում են ասածները: Կոկորդիլոսները հարձակվում են միայն իրենցից վախեցողների վրա, իսկ չար ասեկոսները՝ ուշադրություն դարձնողների: Բարի անունը կորցնելու ընդգծված վախը վկայում է, որ հիմքը, այսինքն բարի կյանքի ճշմարտացիությունը խաբխրվել է: Մեծ գետերի վրա փայտե կամուրջներ ունեցող քաղաքների բնակիչները ապրում են ջրի հորդանալու մշտական վախով, իսկ քարե կամուրջների դեպքում վախենում են միայն սաստիկ ջրհեղեղներից: Քրիստոնեական ամուր հոգիներ ունեցողներին չեն անհանգստացնում չարախոսությունների հեղեղումները, բայց հոգով անհաստատ մարդիկ անհանգստանում են ամեն թեթև առիթով: Ուն հիմնական անհանգստությունը իր բարի համբավն է, կորցնում է այն բավական շուտ:

Բարի համբավը ցուցափեղկ է, որի ետևում պատսպարված է առաքինությունը, բայց միշտ գերադասելի է առաքինության գործությունը: Եթե ասում են. «Չեք բարեպաշտության ձգտումը կեղծ է», եթե վախկոտ են համարում, որովհետև ձեզ բնորոշ է ներել վիրավորանքները՝ մնում է ծիծաղել, որովհետև նման ձևով մտածում են միայն փուչ ու հիմար մարդիկ: Թողնել առաքինասեր վարքը լավ համարում ձեռք բերելու համար, նշանակում է գերադասել տերևները պտուղներից, ներքին հոգևոր բարիքները՝ արտաքին բարիքներից: Բարի անունը չի կարելի կուռք դարձնել: Ինչպես պետք չէ անարգել բարիներին, այնպես էլ պետք չէ բավարարություն պատճառել չարերին: Մորուքը զարդարում է տղամարդուն, իսկ մագերը՝ կնոջը: Եթե արմատախիլ արվի մագածածկույթը, այն այլևս չի աճի, իսկ եթե ածիլվի կամ կտրվի, աճը կարագանա: Նույնը կարելի է ասել և բարի անվան մասին, եթե այն կտրած կամ ածիլած է չար լեզուների ջանքերով, անհանգստանալու կարիք չկա, այն

կվերադառնա և դեռ ավելի հաստատուն կլինի: Բայց եթե մենք վարկաբեկել ենք մեզ մեր արտադրող և ցուփ կյանքով, բարի անվան վերականգնումը քիչ հավանական է, որովհետև ոչնչացել են արմատները: Բարի անվան արմատն ազնվությունն է և բարությանը: Քանի դեռ նրանք առկա են մեր կյանքում, սիշտ էլ կարող ենք մոտից շահել շրջապատի հարգանքը:

Այո, մառի համբավը պահպանելու համար, պետք է թողնել վրուչ խոսակցությունները, անօգուտ, անիմաստ զբաղմունքները, թեթևամիտ ընկերակցությունները, որովհետև այն շատ ավելի կարևոր է դատարկ բաներից: Բայց եթե խոսքը վերաբերում է բարեպաշտության մեջ վարժվելուն, դեպի բարին ու հավիտենականը ընթանալուն, ոչ մի ուշադրություն մի դարձրեք ասեկոսեներին, փոփոխություններին, զրպարտություններին: Եթե նրանք նույնիսկ կարող են վնասելու ձեր բարի անունը, հոգ չէ, չարախոսության ածելին ծառայելու է ձեր պատվին, ինչպես մանգաղը խաղողի այգում, որից հետո թափաքատվում և առատանում են պտուղները:

Միշտ մեր աչքի առաջ ունենանք խաչյալ Քրիստոսին, ծառայենք Նորան պարզությամբ և վստահությամբ, բայց և իմաստությամբ ու համեստությամբ: Նա ինքը կհաստատի մեր բարի անունը: Եթե թույլ է տալիս, որ զրկվենք, կվերադարձնի էլ ավելի պատվավորը: Աստված անում է այդ մի նպատակով, որ ձեռք բերենք սուրբ խոնարհություն:

Եթե մեզ անարդարացի են մեղադրում, ճշմարտությունը սառնասրտորեն հակադրենք կեղծիքին: Եթե մեղադրանքները չեն դադարում, շարունակենք խոնարհվել մեր բարի անունը և մեր հոգին հանձնելով Աստծուն: Ծառայենք Աստծուն եւ լավ, եւ վատ համբավ ունենալով: Պողոս առաքյալից օրինակ վերցնենք (Բ Կոր. 6. 8), որպեսզի կարողանանք Դավթի հետ ասել. «Թեզ համար նախատիք հանդուրժեցի. և ամոթը ծածկեց երեսն իմ» (Սղ. 68. 8):

Լինում են սակայն այնքան դաժան և պիղծ մեղադրանքներ, որ եթե հնարավոր է ազատվել նրանցից, պետք չէ հանդուրժել:

Ռուսերենից թարգմանեց
ՍՐԺԻՆԵ ՊԱՊՅԱՆԸ

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵՍ

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՅՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ
ԸՍՏ ԱԳԱՐԱՆԳԵՂՈՒՄԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

Ազաթանգեղոսի «Հայոց պատմութիւնը» վաղուց ի վեր եղել է, և այժմ էլ է, քրիստոնեայ Հայաստանի ծննդեան պատկանելի վկայականը: Սա է Հայոց դարձի պատմութեան, դրան նախորդող եւ յարակից պատմական անցուդարձերի ամենամանրամասն սկզբնաղբիւրը: Իր համաքրիստոնեական բացառիկ նշանակութեան շնորհիւ, դեռեւս վաղ միջնադարում այն թարգմանուել է բազում լեզուներով: Այսօր յայտնի են Ազաթանգեղոսի պատմութեան բազմաթիւ տարբերակներ 9 լեզուներով. հայերէն, յունարէն, լատիներէն, ասորերէն, արաբերէն, եթովպերէն, վրացերէն, ղպտերէն և սլավոներէն (որոշները՝ հատուածաբար)¹: Միեւնոյն ժամանակ, այս պատմութիւնը անգնահատելի տուեալներ է պարունակում Հայոց նախաքրիստոնեական կրօնի, երրորդ դարի վերջերում Հայաստանում պաշտօնող աստուածների, դրանց մեհեանների եւ այլ առնչակից երեւոյթների մասին: Սակայն, բնականաբար, այս վաղագոյն սկզբնաղբիւրի արժանիքները այսքանով չեն սահմանափակուի:

Զանց առնելով Ազաթանգեղոսի պատմութեան մասին ընդհանուր առումով խօսելը, այստեղ փորձենք ի մի բերել եւ վերլուծել այն, ինչ այս գրքով մեզ է աւանդուել Հայոց հնագոյն օրացուցային պատկերացումների մասին: Այս պատմագրիքը պարունակում է Հայոց դարձին առնչուող դէպքերին վերաբերող մանրամասն օրացուցային տուեալներ. որոշ դէպքերի ամիսամսաթուերը, որոշ գոյգ դէպքերի միջեւ ընկած ժամանակամիջոցը օրերով, կամ ամիսներով եւ այլն: Ցաւօք, այս տուեալները լրիւ չեն. այսինքն՝ տրուած են Ազաթանգեղոսի նկարագրած դէպքերից ոչ բոլորի ամսաթուերը կամ ժամանակային հեռաւորութիւններն իրարից: Այդուհանդերձ, Ազաթանգեղոսի աւանդած այդ սուղ տուեալներն անգամ բաւարար են, որոշակի գաղափար կազմելու համար Հայկական օրացուցային այն պատկերացումների մասին, որոնք եղել են Հայոց դարձի ժամանակներում:

Նախ համապատասխան վկայակոչումներով թուարկենք մեզ հետաքրքրող օրացուցային տուեալները Ազաթանգեղոսի գրքից:

Ա. Սուրբ Զոհիսիմի նահատակութիւնը 32² ընկերներով եղել է Զոռի ամսի 26-ին. «Արդ՝ ի քսան և վեց ամսոյն հոռի կատարեցաւ սուրբն Զոհիսիմն ղպստուն սրբով, երեսուն և երեք նահատակակից ընկերօքն հանդերձ...»³:

¹ Այս մասին աւելի մանրամասն տես Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը՝ Գ. Տէր-Մկրտչեանի և Ա. Կանայեանի, աշխարհաբար թարգմանութիւնը և ժամօրագրութիւնները՝ Արամ Տէր-Ղեւոնդեանի, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1983 (այսուհետեւ՝ Ազաթանգեղոս), էջ 503:

² Ա. Զոհիսիմի նահատակակից ընկերների թիւը մի տեղ 32 է, մի այլ տեղ՝ 33. «Իսկ էին և այլ սուրբք, արք և կանայք, որ ընդ ճոսա եկեալ էին, աւելի քան զծաթնասուն մարդ, այլ որ ի ժամուն անդ հասին ի տեղին յայն ի նոցանէն, որ խնդրէին ամփոփել և թաղել զմարմինս նոցա, յորոց վերայ սուր եղեալ կոտորեցին իբրև երեսուն և երկու ոգիս» (Ազաթանգեղոս, 199, էջ 114): Իսկ ըստ յաջորդ մէջբերման, նրանք եղել են 33 հոգի (տես Ազաթանգեղոս, 210, էջ 120): Նահատակների գերեզմանների տեղերը փորելու մասին պատմելիս էլ, Ազաթանգեղոսը Զոհիսիմի նահատակակից ընկերների թիւը էլի տալիս է 32 (Ազաթ., 766, էջ 430): Ըստ երևույթին, այս շփոթութիւնը ծագել է նրանից, որ մի դէպքում հաշուել են *բոլոր* նահատակների

ք. Ա. Գալիանիի նահատակությունը 2 ընկերներով եղել է Գոռի ամսի 27-ին. «...և ի քսան և եօթն ամսոյն հոռի՝ սուրբն Գալիանէ երկու իւրովք ընկերօքն, որք ընդ մա պատերազմեալք պսակեցան և առին զպսակն յաղթութեան»⁴:

գ. Սուրբ Գրիգորի՝ վիրապից ելնելը եղել է դրանից 9 օր անց. «Իսկ նա (ս. Գրիգոր-Գ.Բ.) ընթացեալ ժողովեալ և ամփոփեալ զմարմինս նոցա (նահատակաց - Գ.Բ.) ի սպանման տեղեացն, զի կային անդէն: Եւ տեսին զի զօրութեանն Աստուծոյ պահեալ էր զմարմինս նոցա. զի այն ինն տիւ էր և ինն գիշեր, զի արտաքոյ ընկեցեալ կային մարմինք նոցա...»⁵:

դ. Սոա հետեւեալ օրը սկսում է ս. Գրիգորի քարոզությունը. «Եւ ի վաղիս անդոթ թագաւորն և նախարարքն և մեծամեծ աւագանին ...ասէին. «Թող մեզ զամենայն յանցումն չարեացն, զոր մեք ընդ քեզ արարաք. և խնդրեա՛ դու վասն մեր յԱստուծոյ քումմէ, զի մի՛ կորիցուք»:

Իսկ կապեալն Գրիգորիոս անդէն խօսել սկսաւ և ասէ...»⁶:

ե. Ազաթանգեղոսի գրքում սրանից յետոյ դրուած է ս. Գրիգորի վարդապետությունը: Սա բաւական ծաւալուն շարադրանք է, որ իր ծաւալով Ազաթանգեղոսի երկի 53 տոկոսն է, այսինքն՝ գրքի կեսից աւելին է: Դատելով ըստ այս պատկանելի ծաւալի, բնական է մտածել, որ անկարելի էր այդ ամբողջ վարդապետությունը քարոզել - ժողովրդին մատուցել մէկ օրուայ, կամ շաբաթուայ, կամ նոյնիսկ՝ աւելի մեծ ժամանակի ընթացքում: Այնպես որ, ժամանակային առումով այստեղ ունենք մեծ ամորոշություն: Վարդապետութեան մատուցումը կարող էր տեւել նոյնիսկ ամիս կամ ամիսներ⁷:

Այստեղ կայ մի դժուարություն: Բանն այն է, որ ըստ Ազաթանգեղոսի պատմութեան, սուրբ նահատակների մարմինները թաղուել են այդ ամենից յետոյ: Դժուար է պատկերացնել, որ սրբերի մարմինները այդքան ժամանակ մնացել են անթաղ: Սակայն, այս դժուարությունը յաղթահարելուն օգնում է հեղինակի յաջորդ տեղեկությունը, որ նահատակաց մարմինների թաղմանը նախորդել է նաեւ 66-օրեայ ապաշխարութեան շրջանը (տես ստորեւ): Այնպես որ, եթէ թաղումը հնարաւոր էր հետաձգել 66 օր, ուրեմն հնարաւոր պիտի լինէր այն հետաձգել եւ դրանից աւելի:

զ. Այնուհետեւ պատմում է, որ թագաւորն ու երկրի մեծամեծները 66 օր քուրձ են հագել, մոխրի վրայ նստել եւ պաս պահել. «Եւ զայս ասացեալ արծակեաց զամբոխն. քայց թագաւորն և մեծամեծքն ոչ երբեք մեկնէին ի նմանէ, զի հարուածեալք էին և ահաբեկեալք. և զգայգ և զցերեկ կային առ նմա, և օթեվանք նոցա առ նմա լինէին ի մէջ այգւոյն, առ դուրս հնծանին. զգեցեալ քուրձ և նստեալ ի վերայ մոխրոյ, և պահեալ լինէին պահս աւուրս վաթսուն և վեց: Եւ այսպես երանելին Գրիգորիոս անհամգիստ և անդադար զգայգ և զցերեկ ոչ դադարէր երբեք աւուրս վաթսուն և հինգ, խօսել, խրատել և ուսուցանել և հաստատել»⁸: Այս նոյնը 66-օրեայ պահոց մասին կրկնում է եւ քիչ ստորեւ. «Արդ՝ ի լնուլ վաթսներորդի վեցերորդի աւուրն, ընդ այգուն առաւօտանալն, մատուցեալ իշխանքն թագաւորան և նախարարօքն և

թիւր (33), միս դեպքում ս. Գրիգորի մի նահատակակիցներիին միայն, որ քնակաճաքար պիտի լինի նախորդից մէկով պակաս, այսինքն՝ 32:

³ Ազաթանգեղոս, 210, էջ 120:

⁴ Նոյն տեղում:

⁵ Ազաթանգեղոս, 223, էջ 126:

⁶ Ազաթանգեղոս, 225 - 226 ԻԱ, էջ 126:

⁷ Այս մասին տես նաեւ Ժամօք. 22:

⁸ Ազաթանգեղոս, 722 Գ, էջ 408:

խառնիճադանճ ամբոխիւն հանդերձ, նաև կանանւոյն ժողովեալ մատաղ մանկտովն ամմեղօք, երամ երամ և դասդասեալք անկանէին առաջի սրբոյն Գրիգորի, ...»⁹:

է. Այդ օրուայ՝ ապաշխարութեան 66-րդ օրուայ գիշերն էլ լինում է Լուսաւորչի նշանաւոր տեսիլքը, ուր, փաստօրէն, Քրիստոս ինքը գալիս եւ բերում է Դայոց աշխարհի փրկութիւնը, ոսկի ուռով կոտմ, կառուցում է Դայաստանեայց եկեղեցու հիմերը: Փաստօրէն, դա է էջմիածնի բուն օրը: «Այդ՝ եկալ՞ք պատմեսցուք ձեզ, եղբարք, զցուցական սիրոյն արարչութեան առ ձեզ, որ ինձ երեսեցաւ ահաւորութիւն տեսլեանն, Ստուռածութեանն խոնարհեալ առ սուրբ վկայս իւր, ...»¹⁰:

ը. Լուսաւորչի տեսիլքը եղել է գիշերուայ երկրորդ կէսին, առաւօտուայ կողմ, քանի որ աւարտուել է լուսանալու ժամանակ. «Եւ զայս ասացեալ՝ շարժումն եղեալ, ընդ առաւօտանալն ծածկեցաւ տեսիլն»¹¹:

թ. Սրա յաջորդ օրը թագաւորը 7 օրով ճանապարհ է ընկնում դէպի Մասիս լեռը. «Եւ եկն թագաւորն, խնդրեաց հրաժեշտ ի սրբոյն Գրիգորէ եօթնօրեայ ճանապարհ կալեալ ի վեր ի բարձր լեռան ի Մասիս: Եւ անտի ի գլխոյ լեռնէն առեալ վէմս արաստոյս, անտաշս, անկոփս յաղթս, ծանուես, երկայնս, ստուարս և մեծամեծս, ... արդ՝ առեալ սկայազօրն հայկաբար զուր արձանսն»¹²:

ձ. Սրան հետեւում է ս. Գրիգորի մեկնումը Կեսարիա եւ վերադարձը՝ իբրեւ Դայոց առաջին օժեպ հայրապետ: Կեսարիայից ս. Գրիգորը գալիս է եւ ամմիջապէս՝ հենց Եփրատի ափից սկսում մատուռներ շինել ու եկեղեցիներ հիմնել և մկրտում է իր հետ Կեսարիա գնացած ու վերադարձած նախարարներին¹³:

ժա. Ապա 20 օր իջեւանում է այնտեղ. «Աուրս քսան երեկօքս առներ, և մկրտէր անդ աւելի քան զինն և տասն բիւր մարդկան»¹⁴:

ժբ. Այնուհետեւ հիմնում է Յովհաննէս Մկրտչի և Աթանագիոնէս վկայի տօնը Սահմի ամսի 7-ին. «Եւ հրամայեաց կատարել անդ ամ յամէ, ի նմին տեղւոջ ժողովեալ ամենեցուն, զիշատակ սրբոցն, որ օր եօթն էր ամսոյն սահմի, զի խնդութեամբ ժողովեալ՝ զօր տօնին խմբեսցեն. զի նախ անտի սկիզբն արար շինելոյ զեկեղեցիս»¹⁵: Այսինքն, Սահմի ամսի 7-ին ս. Գրիգորի սահմանած առաջին տօնի օրն է, որ եղել է Կեսարիայից նրա վերադառնալուց և 20-օրեայ ժամանակ անցնելուց յետոյ:

ժգ. Սրան հետեւում է մի ամբողջ ժամանակահատուած, որից յետոյ Տրդատ թագաւորը իմանում է ս. Գրիգորի վերադարձի մասին:

ժդ. Ապա, երբ թագաւորը առնում է Գրիգորի դարձի լուրը, «Առ զզօրս իւր և զվշխէն տիկին և զքոյրն իւր զխոսրովիդուխտ, և չու արարեալ յկարարաւեան գաւառէն, ի Վաղարշապատ քաղաքէ, ընդ առաջ Գրիգորի, գայր

⁹ Ագաթանգեղոս, 728, ԾԱ, էջ 410:

¹⁰ Ագաթանգեղոս, 731, ԾԲ, էջ 412:

¹¹ Ագաթանգեղոս, 755, էջ 424:

¹² Ագաթանգեղոս, 787, էջ 430:

¹³ Տե՛ս Ագաթանգեղոս, 805 - 814, էջ 452 - 457:

¹⁴ Ագաթանգեղոս, 814, էջ 456:

¹⁵ Ագաթանգեղոս, 815, էջ 456:

հասաներ ի քաղաքագետն Բագաւան, որ անուանեալ կոչի ի պարթեւարն լեզուն՝ Դիցաւան. և անդ սպասեալ մնայր մնա ամսօրեայ ժամանակս»¹⁶։ Արքայն, փաստօրէն, Բագաւանում 1 ամիս սպասում է Գրիգորի գալստեանը։ Սուրբ Գրիգորն էլ գալով, «Եւ նորա տունեալ արքայսգունդ բանակացն՝ ամսօրեայ ժամանակաւ ի պահս և յաղօթս յամենալ»¹⁷։ Ուրեմն, ս. Գրիգորն էլ կարգադրում է 1 ամիս պահք պահել և աղօթել։

Ճշ. Սրանից անմիջապէս յետոյ տեղի է ունենում թագաւորի, նրա ընտանիքի, արքունիքի և զօրքի մկրտութիւնը Եփրատի (Արածանու) ջրերում. «Իսկ ի լնուլ կիտին եղելոյ պահիցն կատարելոյ, առեալ երանելոյն Գրիգորի զայնարհաբանակ զօրացն, և զինքնին զթագաւորն, և զկին նորա Աշխէն, և զմեծ օրիորդն Խոսրովիդուխտ, և զմեծամեծսն ամենայն, և ամենայն մարդկաւ բանակին հանդերձ՝ ընդ այզն ի լուսանալ առաւօտուն յափն Եփրատ գետոյն մատուցաներ, և անդէն մկրտել առ հասարակ զամենեւեան յանուն Դօր և Որդոյ և Դուոյն սրբոյ»¹⁸։

Ճշ. Այսուհետեւ՝ «Եւ դադարեաց անդ յետ այսորիկ աւուրս եօթն վասն հոգեւոր մխիթարութեան։ Եւ յայնմ աւուրս եօթանս որ մկրտեցան յարքունական բանակէ անտի՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ աւելի քան զչորեքարիւր բիւր»¹⁹։ Այսինքն, Տրդատի եւ արքունիքի մկրտութիւնից յետոյ մոյն տեղում մնացել են եւս 7 օր, եւ այդ 7 օրերի ընթացքում էլ մկրտուել են աւելի քան 400 բիւր (= 4 միլիոն) հոգի։

Ճշ. Յաջորդ պարթեւութեան մէջ էլ յայտնուում է, որ դա եղել է Նաւասարդի տօնի օրը. «Եւ զյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հռչակել, սնուտացն պաշտաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, Դիւրնկալ դիցն Վանատի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղուց պաշտէին յուրախութեան Նաւասարդ աւուր»²⁰։

Այսպիսով, երբ իրար ետեւից դասաւորում ենք վերոնշեալ իրադարձութիւններն ու դրանց հետ կապուած ժամանակային տուեալները, ստանում ենք հետեւեալ պատկերը։ Այստեղ յարմարութեան համար զուգահեռ տալիս են մաեւ հայկական շարժական ամսաթուերին համապատասխանող հռոմէական Յուլեան կայուն ամսաթուերը Փրկչ. 300 թուականի դրութեամբ²¹։

ս. Գրիգորի միապատկերումը	Յուլի 26	Նոյեմբերի 6
ս. Գայիանի միապատկերումը	Յուլի 27	Նոյեմբերի 7

¹⁶ Ագաթանգեղոս, 817, ճժԶ, էջ 456։

¹⁷ Ագաթանգեղոս, 828, էջ 462։

¹⁸ Ագաթանգեղոս, 832, ճժԸ, էջ 464։

¹⁹ Ագաթանգեղոս, 835, ճժԹ, էջ 464։

²⁰ Ագաթանգեղոս, 836, էջ. 464 - 466։ Ինչպէս ժամանակին ցոյց է տրուել, Դայոց Նաւասարդի տօնը հնում անկախ է եղել Նաւասարդ կոչուող ամսից եւ ունեցել է իր կայուն տեղը արեւադարձային տարրուայ մէջ։ Այդ տօնը ամեն տարի տօնուել է ամառամանուտի շրջանում։ Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Դայոց տոմարի որոշ հարցերի մասին. Դայոց Բուն թուական, «Էջմիածին», լլ. էջ 51 - 57, և Բ. - Գ. էջ 72 - 80, 1985։ Այս մասին աւելի մանրամասն տե՛ս ստորեւ։

²¹ Փրկչ. 300 թուականը պայմանականօրէն համարում ենք այդ իրադարձութիւնների ժամանակը, թելաւոր Դայոց դարձի ժամանակի հարցը տակաւին միանշանակ լուծուած չէ։ Այդուհանդերձ, անկասկած է, որ դա տեղի է ունեցել երրորդ - չորրորդ դարերի սահմանին, Փ. 300 թուի մօտակայքում։ Իսկ Դայոց դարձի ստույգ թուականի մասին՝ այլ աղբիւր։

ս. Գրիգորի ելն ի վերապէն	Սահմի 6	Նոյեմբերի 16
ս. Գրիգորի վարդապետութիւնը	անորոշ ²²	
66-օրեայ ապաշխարութիւնը	տեսիլքին նախորդած 66 օրերը	
ս. Գրիգորի տեսիլքը	ապաշխարութեան 66-րդ գիշերը	
Տրդատի Սասիս գնալը 7 օր	տեսիլքից անմիջապէս յետոյ	
ս. Գրիգորի վերադարձը Կեսարիայից և նախարարների մկրտութիւնը	Չոռի 17 (տօնների հիմնումից 20 օր առաջ)	Չոկտեմբերի 28
սրբերի տօների հիմնումը	Սահմի 7	Նոյեմբերի 17
ս. Գրիգորի վերադարձից մինչ Տրդատի Բագաւան հասնելը	անորոշ	
Տրդատի գալուստը Բագաւան և Գրիգորին սպասելը 1 ամիս	(Գրիգորի Բագաւան գալուց 1 ամիս առաջ)	
Գրիգորի գալը Բագաւան և պահքը 1 ամիս	(Նաւասարդի տօնից 1 ամիս առաջ)	
Տրդատի և արքունիքի մկրտութիւնը	Նաւասարդի տօնի օրը	
մկրտութիւնների աւարտը	7 օր անց	

Մի հայեացք նետելով վերի աղիւսակին, անմիջապէս նկատում ենք, որ այստեղ ունենք ամսաթուերի և ժամանակային միջակայքերի յաջորդականութիւնների երկու խումբ՝ երկու շարք։ Մէկը Չոռիփսիմեան կոյսերի նահատակութիւնից սկսուելով, հասնում է մինչեւ Տրդատի Սասիսից վերադառնալը։ Երկրորդը սկսւում է ս. Գրիգորի Կեսարիայից վերադառնալով եւ հասնում մինչեւ Չայոց համազգային մկրտութեան աւարտը։ Ուշագրաւ է, որ ժամանակային այս երկու շարքերի կառուցուածքում կան խիստ որոշակի ընդհանրութիւններ։ Առաւօժը ակնառու դարձնելու համար ստորեւ տանք այդ երկու շարքերը իրար կից։

ս. Չոռիփսիմէի նահատակութիւնը	Չոռի 26 Նոյեմբերի 6	Չոռի 17 Չոկտեմբերի 28	ս. Գրիգորի վերադարձը Կեսարիայից
ս. Գայիանէի նահատակութիւնը	Չոռի 27 Նոյեմբերի 7		

²² Այս անորոշ ժամանակամիջոցի մասին նկատենք, որ եթէ այս անորաշուքեան շրջանը զանց առնենք, ապա դրանից վերեւ ու ներքեւ եղած ամսաթուերն ու օրերի քանակներն իրար գումարելով, կը ստացուի, որ Տրդատը պիտի Սասիս լեռը բարձրացած լինի Յունուարի 22-ից 28-ը (Քաղոց 13-ից 19-ը)։ Սա անհիմաստ է եթէ նկատի ունենանք, որ դա ծանոթ այնքանազոր տառուածն է և անկարելի է այդ ընթացքում Սասիս բարձրանալը, առաւել եւս՝ այնտեղ զինների ու սառոյցի տակ ծածկուած քարեր գտնել-բերելը։

ս. Գրիգորի ելմ ի սիրապատիվ	Սահմի 6 Երեմյան 16	Սահմի 7 Երեմյան 17	սրբոց տոների հիմնումը
Ս. Գրիգորի վարդապետությունը	անորոշության շրջան	անորոշության շրջան	մինչ Տրդատի Բագաւան գալը
66 օր ապաշխարութիւն			2 ամիս սպասելը, որից 1 ամիսը պահով
Միածնի իջման տեսիլքը		Նաւասարդի տօնի օրը	Տրդատի մկրտութիւնը և հրաշքը
Տրդատի Սասիս գնալը	7 օր	7 օր	համազգային մկրտութիւնը

Ի՞նչն է ընդհանուր ժամանակային այս երկու շարքերում: Թուարկենք ըստ հերթականության:

Ա. Երկու շարքերի էլ սկիզբը Գոռի ամսին է. սկիզբների տարբերությունը միայն 9 - 10 օր է:

Բ. Երկուսում էլ ստորգ ամսաթուով տրուած օրերից յետոյ գալիս է ժամանակային անորոշութեան մի շրջան. մէկում՝ ս. Գրիգորի վարդապետութեան շրջանը, միւսում՝ ս. Գրիգորի Կեսարիայից վերադարձից մինչև արքայի ու զօրքի Բագաւան հասնելը:

Գ. Երկուսում էլ ժամանակային անորոշութեան շրջանին հետեւում է շուրջ երկամսեայ յայտնի մի շրջան: Ընդ որում, այդ երկամսեայ շրջանը հիմնականում ապաշխարութեան շրջան է: Առաջին (ծախ) շարքում դա ս. Գրիգորի վարդապետութեանը հետեւող 66-օրեայ ապաշխարութիւնն է, երկրորդ (աջ) շարքում դա Տրդատի 1-ամսեայ սպասումն է ս. Գրիգորին Բագաւանում և որան անմիջապէս յաջորդած 1-ամսեայ պահքը՝ Գրիգորի Բագաւան գալուց յետոյ:

Դ. Երկու շարքերում էլ նայդ երկամսեայ պահոց շրջանին յաջորդում է յոյժ կարեւոր առանցքային իրադարձութիւն: Առաջին դէպքում դա քոչկութիւններն են և ամենակարեւորը՝ Միածնի իջման տեսիլքը՝ էքմիածինը, որ է Քրիստոսի էջքը, գալուստը և, փաստօրէն, նրա կողմից Գայաստան աշխարհի լուսաւորումը, փրկութիւնը: Երկրորդ դէպքում դա Գայոց արքայի, թագուհու, արքունիքի, զօրքի և ընդհանրապէս՝ ժողովրդի մկրտութիւնն է Արածանու ջրերում, որ, փաստօրէն, Գայոց դարձի լրումն է: Ընդ որում, երկրորդ դէպքում այդ յոյժ կարեւոր իրադարձութիւնը զուգակցւում է մեծ հրաշքին. մկրտութեան ժամանակ գետի ջրերը կանգ են առնում, ետ դառնում, ջրերի վրայ լոյս է իջնում, և երեւում է տէրունական խաչի նշանը, և օծութեան իւղն էլ, որ Գրիգորը թափում էր մարդկանց վրայ, չէր հոսում-գնում, այլ շրջան կատարելով պտտւում էր մարդկանց շուրջը²³:

Ե. Երկու շարքերում էլ այդ ամենակարեւոր իրադարձութիւններին յաջորդում է 7-օրեայ մի շրջան: Առաջինում դա Տրդատ արքայի 7-օրեայ երթն է դէպի Մասիս, որտեղից նա բերում է ութ հսկայ վէմեր, որոնցից չորսը կանգնեցնում է նորակառոյց վկայարանների շենքերին: Երկրորդ դէպքում, դա Տրդատ արքայի և Աշխեն թագուհու մկրտութեանը յաջորդող 7 օրերն են, որոնց ընթացքում ս. Գրիգորը մկրտում է 400 բիւր (4 000 000) այդ ու կին:

Կան այլ ընդհանրութիւններ եւս, որոնց կ'անդրադառնանք առանձին:

Արդ, փորձենք հասկանալ, թէ ինչ են նշանակում այս ընդհանրութիւնները:

²³ Այս հրաշքի մանրամասն մկարագրութիւնը տես Ազաթամզեղոս, 833, էջ 464 - 465:

Նախ, այս ընդհանրությունները խօսում են այն մասին, որ Ազաթանգեղոսի պատմության ժամանակային տուեալները դասաւորուած են որոշակի օրինաչափութեամբ, ենթարկում են որոշակի օրինաչափութեան:

Կարելի է, թերեւ, փորձել այս ընդհանրությունները բացատրել, ենթադրելով, թէ սոյն երկի հեղինակը իր պատմութիւնը «կառուցել» է, հիմքում դնելով որոշակի օրինաչափութիւններ: Սակայն սա կը նշանակի Ազաթանգեղոսի երկը համարել գոնէ որոշ (օրացուցային) առումով մտացածին յօրինուածք: Այս «բացատրութիւնը» եւ խորին է, եւ էլ քիչ հաւանական,²⁴ որով եւ այն ընդունելի լինել չի կարող:

Ըստ իս, առկայ ընդհանրութիւնների, որով եւ դրանց հիմքում եղած օրինաչափութեան ամենապարզ ու բնական բացատրութիւնն այն է, որ Ազաթանգեղոսի երկում առկայ ժամանակային բոլոր տուեալների հիմքում ընկած են օրացուցային միեւնոյն պատկերացումները, այն օրացուցային պատկերացումները, որոնք Յայաստանում եղել են Յայոց դարձին նախորդող ժամանակաշրջանում: Եւ, քանի որ մեր ժամանակային երկու շարքերը ընդգրկում են երկու տարուայ ժամանակամիջոց, բնականաբար և պիտի պարունակէին օրացուցային երկու մեծ պարբերութիւն, որով եւ՝ դասաւորուած լինէին միեւնոյն օրինաչափութեամբ:

Ընդունելով այս բացատրութիւնը, կարող ենք փորձել լուծել հակադարձ խնդիրը. մեր ունեցած օրացուցային տուեալների բաշխման օրինաչափութեան հիման վրայ ըստ կարելւոյն վերականգնել խնդրոյ առարկայ ժամանակաշրջանի հայկական օրացուցային պատկերացումները:

Նախ եւ առաջ հարկ է ընդունել, որ ժամանակային երկու շարքերի միջեւ առկայ սկզբունքային ընդհանրութիւնները թելադրում են, որ ս. Գրիգորի տեսիլքն էլ պիտի եղած լինի տարուայ նոյն ժամանակում, ինչ եւ Տրդատի մկրտութիւնն ու դրան ուղեկցող հրաշքը՝ այսինքն՝ Նաւասարդի տօնին (վերեւի աղիւսակում այդ իրադարձութիւններն իրար դիմաց են ընկած, ուրեմն եւ ժամանակային նոյն դիրքն ունեն): Ստորեւ կը տեսնենք, որ այս տրամաբանական ընդունելութիւնը անելի քան արդարացուած է:

Աղիւսակից երեւում է, որ մի դէպքում (ծախ կողմում) Միածնի իջման տեսիլքին (այսինքն՝ Նաւասարդի տօնին) նախորդում է 66-օրեայ ապաշխարութեան շրջանը, միւս դէպքում (աջ կողմում) Տրդատ արքայի, արքունիքի եւ զօրքի երկամսեայ սպասումը Բազաւանում. ընդ որում, այդ երկու ամիսներից երկրորդը վստահաբար անց է կացուել պահեցողութեամբ՝ ըստ ս. Գրիգորի կարգադրութեան: Այսինքն, երեւում է, որ այդ ժամանակներում հեթանոս Յայոց Նաւասարդի տօնին նախորդել է մօտ երկամսեայ (60 - 66 օր) մի իւրայատուկ ժամանակաշրջան:

Աղիւսակիս ստորին տողն էլ ցոյց է տալիս, որ Նաւասարդի տօնին (տօնի բուն օրուան) յաջորդել է 7 օրերի մի շրջան (մի դէպքում՝ Տրդատի ուղեւորութիւնը դէպի Մասիս, որ կարելի է դիտել, իբր ուխտագնացութեան պէս ծիսական սրբազան խորհուրդ կրող մի բան, միւս դէպքում՝ 400 բիւր հայերի մկրտութիւնը 7 օրերի ընթացքում, թագաւորի եւ արքունիքի մկրտութիւնից անմիջապէս յետոյ):

Իրար բերելով այս ընդհանրացումների արդիւնքները, ստանում ենք այսպիսի պատկեր.

²⁴ Բացի այդ, Ազաթանգեղոսի պատմութեան այդպիսի «գնահատականը» էապէս հակասում է մի շարք այլ հայ պատմագիրների հաղորդած թագմաթիւ տուեալների: Այստեղ այդ ամենին չենք անդրադառնալ, քանի որ դա մեր խնդրին չի վերաբերում:

Ա. Նշուած ժամանակներում Հայոց Նաւասարդի տօնին նախորդել է մօտ երկամսեայ (60, կամ 66 օր) մի ժամանակաշրջան, որ ունեցել է պաշտամունքային յատուկ նշանակութիւն:

Բ. Նաւասարդի տօնին էլ յաջորդել է 7-օրեայ մի շրջան, որ եւս եղել է յատուկ ծիսական-պաշտամունքային նշանակութեամբ:

Այս պատկերը սկսւում քօղէն համընկնում է Հայոց Նաւասարդի տօնին եւ դրան առնչուող օրացուցային իրողութիւնների վերաբերեալ ժամանակին ստացուած պատկերին²⁵: Տարիներ առաջ աստղագիտական, տոմարագիտական, ազգագրագիտական եւ որոշ այլ տունալների քննութեամբ Հայոց Նաւասարդի տօնի համար ստացուել էր հետեւեալ պատկերը: Նաւասարդը հնում տօնուել է ամառնամուտի շրջանում, սրբադարձից 8 (կամ 7) օր առաջ: Բուն տօնին նախորդել է 65 - 70-օրեայ մի շրջան, որ կապուած է եղել Անդրաշխարհին վերաբերող պաշտամունքի հետ (եղել է սգոյ շրջանի պէս մի բան): Այդ ընթացքում եղել են Անդրաշխարհի պաշտամունքներին աղերսուող տարբեր արգելքներ. մասնաւորապէս արգելուած է եղել ամուսնութիւնը: Տօնն հնքն էլ տեւել է 7 օր, մինչեւ արեւադարձ: Պարգուած էր նաեւ, որ այս տօնաշարքը նախահայկեան շրջանում տաքնամսեայ օրացոյցի պայմաններում կապուած է եղել օրացուցային ամիս-ամսաթուերին, իսկ հետագայում անկախացել է ամիս-ամսաթուերից եւ տարուայ մէջ դրա դիրքը որոշուել է միայն Հայկն համաստեղութեան գլխաւոր աստղի (Հայկի աջ ձեռքի) առաջին առաւօտեան ծագման դիտումներով²⁶: Վերն արուած քննութեան արդիւնքները լիովին ներդաշնակ են այս պատկերին:

Ազաթանգեղոսի տունալների քննութիւնից էլ ստացուում է, որ Նաւասարդի տօնին նախորդող արգելքների շրջանը տեւել է 66 օր²⁷: Եւ բուն տօնն էլ այսինքն տօնի ամենամուտիական, մեծախորհուրդ մասը եղել է այդ շրջանի վերջին գիշերը, յատկապէս՝ գիշերուայ վերջը, քանի որ այստեղ է ս. Գրիգորի տեսիլը, որ ըստ Ազաթանգեղոսի յայտնածի, տեւել է մինչեւ լուսաբաց²⁸: Սա էլ ներդաշնակ է Նաւասարդի տօնին սրբազան խորհրդաւոր գիշերուայ Առաւօտ ժամին (գիշերուայ 10-րդ ժամին) պաշտուող աստղի ծագումը դիտելուն²⁹:

Այստեղ կայ նաեւ շատ աւելի մեծ (ոչ օրացուցային) ընդհանրութիւն: Ըստ Հայոց հնագոյն պատկերացումների, Նաւասարդի տօնի գիշերը արեւածագից առաջ պաշտուել է Հայկի (իմա՝ աստուածների Դօր) աստղի ծագումը դրա չերեւալու 70-օրեայ շրջանից յետոյ: Իսկ Ազաթանգեղոսի պատմութեան մէջ այդ նոյն օրը (գիշերը) ըստ ս. Գրիգորի տեսիլքի, Հայոց աշխարհի կենտրոնում իջնում է Քրիստոս՝ Միածին Որդին Աստուծոյ եւ քերում է Հայոց աշխարհի փրկութիւնը: Այսինքն, Հայոց աշխարհում ծագում է Քրիստոս ինքը,

²⁵ Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Գին Հայոց գլխաւոր Տօնը, «Եմիածին», ԺԺԶ, 1995, էջ 130 - 153: Տե՛ս նաեւ՝ Գրիգոր Բրուտեան, Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Եմիածին, 1997, էջ 261 - 362:

²⁶ Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Նախահայկեան օրացոյցի կառուցումը, «Եմիածին», ԺԶ, 1996, էջ 135 - 164: Նաեւ՝ նոյնի Օրացոյց Հայոց, էջ 385 - 429:

²⁷ Ի դէպ, այս 66 թիւը լրիւ ներդաշնակ է Յովհաննու Յայտնութեան մէջ հակաքրիստոսին տրուած քուային համարժեքին, որ է 666. Յայտն., ԺԳ, 18:

²⁸ Ազաթանգեղոս, 755, էջ 424, 425:

²⁹ Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Գրիգոր Ազգիստոսի տոմարական համեմուկն ու Արտաշեսեան վէպի ծաւալումը, «Եմիածին», Դ - Ե, 1992, էջ 95 - 118:

որով՝ մարդկանց գիտակցութեան մէջ հին պաշտամունքին ու դրա խորհուրդներին ըստ ամենայնի փոխարինում է նոր հաւատի համապատասխան համարժէք խորհուրդը³⁰:

Այս ընդհանրութիւնների գոյութիւնը կարող է բնական նկատուել, եթէ ընդունենք, որ դէպքերը նկարագրուած են այնպէս, ինչպէս դրանք եղել են, այսինքն, որ Ագաթանգեղոսի պատմութիւնը կեղծիք չէ, այլ իրօք, դէպքերին ժամանակակից սկզբնաղբիւր է: Իրօք, բնական է սպասել, որ Հայոց դարձի շրջանում բոլոր «գործող անձիք»՝ եւ թագաւորը, եւ էլ էլ ս. Գրիգորը, եւ էլ ժողովուրդը պիտի գործէին իրենց օրացուցային պատկերացումներին համեմատ: Այդ դէպքում ժամանակի օրացուցային պատկերացումները ականայ կ'ամրագրուէին իրադարձութիւնների պատմութեան մէջ: Հէնց այդպիսի պատկեր էլ մենք պարզեցինք վերն արուած ջննութեամբ:

Այսպիսով, ի մի բերելով այս ջննութեան արդիւնքները, ստանում ենք, որ Ագաթանգեղոսի պատմութեան մէջ պահպանուած օրացուցային տեղեկութիւնները հնարաւորութիւն են տալիս վերականգնել օրացուցային մի պատկեր, որ անելի քան ներդաշնակ է այլ անկախ տուեալների հիման վրայ այլ եղանակներով ստացուած՝ Հայոց նախաքրիստոնէական օրացոյցի պատկերին: Սա էլ, իր հերթին, կողմնակիօրէն վկայում է այդ պատմագիրքում նկարագրուած դէպքերի հարազատութեան մասին:



³⁰ Այստեղ նկատենք մի եւական համաձայնութիւն: Այն փաստը, որ Ագաթանգեղոսի պատմութեան մէջ պահպանուած ժամանակային տուեալները տալիս են Հայոց դարձի ժամանակաշրջանի համար օրացուցային այնպիսի պատկերացումներ, ինչպիսին նախաքրիստոնէական Հայաստանի համար ստացուել էին տոմարական եւ այլ տուեալների ջննութեամբ, ահա այս փաստը վկայում է յօգուտ Ագաթանգեղոսի երկի հարազատութեան, դրա հեղինակի՝ իր նկարագրած դէպքերին ժամանակակից լինելուն: Իրօք, բնական է սպասել, որ Հայոց դարձի հետ կապուած դէպքերը տեղի ունենային համաձայն օրացուցային այն պատկերացումներին, որոնց Հայաստանում եղել են այդ ժամանակներում, եւ Հայոց դարձի պատմութեան ականատես հեղինակն էլ, հարազատ մնալով պատմական անցուդարձին, պիտի տար այդ նոյն օրացուցային պատկերը: Եթէ այդ պատմութիւնը յօրինուել նկարագրուած դէպքերից, ասենք՝ մի դար անց, պէտք էր ակնկալել, որ օրացուցային շատ իրողութիւններ աղաւաղուէին, քանի որ դժուար է պատկերացնել, թէ 100 տարի առաջ քրիստոնէայ դարձած երկրում օրերի ճշդութեամբ պահպանուած լինէին հեթանոսական տօներին վերաբերող օրացուցային տուեալները: Այսինքն, պէտք է մտածել, որ սոյն պատմութեան հեղինակի ինքնաներկայացումը, իբր իր նկարագրած դէպքերին ականատես, այնքան էլ անհիմն չէ: Կայ անուղղակի վկայութիւն յօգուտ այն բանի, որ այս գրքում նկարագրուած դէպքերը շարադրուել են իրօք ժամանակակից կողմից:

ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խ. Արուստյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտի
հայոց լեզվի ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ

ՂԵՎՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ԲԱՌԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղևոնդ Վարդապետը (Ղևոնդ Պատմիչ կամ Ղևոնդ Մեծ) ապրել ու ստեղծագործել է 8-րդ դարում և խոր հետք թողել հայ եոգևոր-մշակութային կյանքում՝ սերունդներին իբրև ժառանգություն ավանդելով «Պատմութիւն» (կամ «Ժամանակագրութիւն») երկը¹:

Այն 8-րդ դարի հայ եոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի հայելին լինելով՝ միաժամանակ խոր հետք է թողել եին հայերենի զարգացման ընթացքի վրա՝ ժամանակի լեզուն հարստացնելով նոր բառերով ու փոխառություններով, լեզվական բազմազան ոններով, քառերի նոր իմաստներով ու նշանակությամբներով:

Սույն հոդվածի շրջանակներում մենք կփորձենք ֆենել քառային այն փոխառությունները, որոնք հայ մատենագրության մեջ առաջինը գործածել է Ղևոնդը:

Փոխառությունը լեզվի քառային կազմի զարգացման արտաքին ուղյակ է: Այն անմիջական, միջնորդական, բանավոր, գրեկյան թե գրական տեսակներով, ուղեկցում է ցանկացած լեզվի՝ նրա զարգացման տարբեր գույքից ակնհայտ: Դա լեզվական այս կամ այն տարրի (հիմնականում՝ բառի) անցումն է մի լեզվից մյուսին՝ այդ լեզուների շփման, փոխազդեցության հետևանքով (կատարվում է նոր հասկացություններ, իմաստներ կամ եղանակների տարբերակումներ արտահայտելու նպատակով)²:

Հին հայերենը հարուստ է քառային փոխառություններով³, որոնք համդիպում են նաև Ղևոնդի երկում: Ղևոնդի երկի քառային փոխառությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ եին և նոր:

1) Հին փոխառությունները 5-րդ դարից սկսած հայ մատենագրության մեջ լայն գործածություն են ունեցել: Այդ քառերը, ըստ իմաստագործառական ակտիվության աստիճանի, բաժանվում են երկու խմբի:

Ա. Փոխառություններ, որոնք վաղուց ի վեր հին հայերենում «քաղաքացիություն» են ստացել և ծառայում են կյանքի ամենատարբեր ոլորտների հասկացություններ արտահայտելուն, ինչպես՝ *ալփաբետ*, *եպիսկոպոս*, *կաթողիկոս*, *կոմս*, *դոմդակ*, *դոռնք*, *հրաժեշտ*, *հրաման*, *հրապարակ*, *հրեշտակ*, *հրովարտակ*, *պատարագ*, *պատասխան*, *պարիսպ*, *պարկեշտ*, *քերովրն* և այլն:

¹ Ղևոնդեայ Վարդապետի Պատմութիւն, Ե. Պետրոսյան, 1887:

² Հ. Պետրոսյան, Հայերենագիտական քառեր, Ե., 1987, էջ 613:

³ Հր. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, Ե. 1-2, Ե., 1940, 1951: Գ. Զահրայան, Հայոց լեզվի պատմություն. ճախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Այս կարգի փոխառությունները (պաելավերեն, հունարեն, եբրայերեն և այլն) կրոնական ու վարչական թեմատիկ խմբերի են պատկանում, իրենց իմաստով ընդհանրացած բառեր են և ժամանակի ընթացքում տարրալուծվել են հին հայերենի բառային կազմում:

Բ. Փոխառություններ, որոնք լեզվի հին շրջաններում են անցել հին հայերենի բառային կազմից, սակայն գործառական մեղ ուրտ ունեն:

Քննության հեթանոսական համոզմունքներում են հետևյալ բառերը⁴:

Եղբարիստե (հուն.) - «Գոհանամ», կիրառական (հուն.) - «արքունի հազարապետ. պարետ», կղերիկոս (հուն.) - «եկեղեցու ուխտ, եկեղեցական կարգում» վինակ, ժառանգություն. վլեակավոր, եկեղեցական», միտիմես (հուն.) - «ձկան անուն», մոնոզոն (հուն.) - «մենակյաց, կրոնավոր, մզնավոր», պառակղիտոս (հուն.) - «մխիթարիչ», պապա (եբր.) - «զատիկ, կրոնական ծես. ազատություն», պատագրոս (հուն.) - «ոտքերի հողացավով» կաթվածով տառապող», սինկղիտոս (հուն.) - «Հին Հռոմի սենատը. ծերակույտ», փշտիպան (պիլ.) - «թիկնապահ զինվոր. օգնական, միգակակյց»:

Ինչպես երևում է, այս կարգի փոխառությունները հիմնականում կատարվել են հունարենից, պաելավերենից և եբրայերենից. մի իրողություն, որի ակունքները տանում են միջին լեզվի զարգացման նախագրային ժամանակաշրջան:

Ինչպես նկատեցինք, այս կարգի բառերը գրաբարի ընդհանուր բառային կազմի հետ փոխանցվել են լեզվի հաջորդ գոյավիճակներին և գործածվել պատմիչների ու կրոնի սպասավորների աշխատություններում:

2) Նոր փոխառություններ: Ղևոնդի երկում համոզմունքներ են ոչ սակավ բառային մոր վկայություններ, որոնց գործածության ժամանակագրությունը, պատմական բառագիտության առումով, պետք է համարել 8-րդ դարը: Ուստի դրանք ոչ միայն Ղևոնդի պատմության շրջանակներում, այլև հին հայերենի ընդհանուր համայնապատկերի վրա կարելի է դիտել իբրև մոր բառեր:

Այդ մոր բառերը մասամբ պաելավական կամ հունական, հիմնականում արաբական փոխառություններ են:

Վարդ - ՆՀԲ և ԱԲ բառարաններն այն մեկնում են որպես «բարսմունք, գառազան, ցուպ, վարդ» (ՆՀԲ, 2, 793): Հր. Անադյանն այն համարում է պիլ. փոխառություն՝ վարդ ձևից՝ «կուռի մի տեսակ զեմք. ծալքը գունտ գլխով. լախտ» իմաստներով (ՀԱԲ, 4, 320-321):

Հմատ. Եւ բարկացեալ զաւրավարին ի վերայ իշխանին՝ ձգէր զվարդն որ ի ձեռին գիտն մորա (8):

Նոյնը//պապան - հունական փոխառություններ են՝ «բահանայ, երեց, տեր հայր, տերտեր» իմաստներով (տե՛ս ՆՀԲ, 2, 1051, 600, ՀԱԲ, 1, 32, 4, 26):

⁴ Ղևոնդի երկում նաև մոր լեզվական միավորներ, որոնք առաջին հայացից են փոխառություն թվում. ստուգաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք սխալ գրության հետևանք են, ինչպիսի՝ պեկիլ, փիկ, պեկիլ (ստե՛ս, ստե՛ս, ՀԱԲ*, 4, 77), պեկիլիս, փիկի՝ կիպարիս (ՀԱԲ, 2, 592), տաքիլ, փիկի՝ տաքիլոն («գահավանդ, բարձունք», ՀԱԲ 4, 355) և այլն:

* Հոգվածում բերված համառոտագրություններն են՝

ԱԲ - Առձեռն բառարան Հայկազնի լեզուի, Վենետիկ, 1865:

ՀԱԲ - Հր. Անադյան, Հայերեն արմատական բառարան, հ.հ. Ա-Դ, Ե., 1971-79:

ՀԲԲ - Մ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ.հ. 1-4, Ե., 1944-45:

ՆՀԲ - Նոր բառգիրք Հայկազնի լեզուի, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-37:

Հմտ. Տեսանէին լուիւտուս և պապասս տետարաճաւ և մոմեղիմաւ և խնկաւ առաջի ճոցա երթալով՝ գաւրացացանէին զնոսա (150):

Ղևոնդի երկում կան որոշ բառեր էլ, որոնք արաբական փոխառութիւններ են: Եթէ նկատի առնենք Ղևոնդի ապրած ու ստեղծագործած ժամանակաշրջանը, նրա «Պատմութեան» ընդգրկած նյութն ու շրջանակները, ապա կարող ենք ասել, որ նրա արաբերենի ազդեցութիւնից, մի հանգամանք, որ երևում է 7-9-րդ դարերի պատմիչների աշխատութիւններում՝ թե՛ ոճի և թե՛ բառային կազմի առումներով:

Հր. Անադյանը պնդում է, որ թեև ժողովրդական լեզվով գրվածքների քաջակալության պատճառով դժվար է ցույց տալ, թե ժողովրդական լեզուն որչափով է ազդվել արաբերենից, այնուամենայնիվ գրական լեզվի վրա այդ ազդեցությունը չափազանց աննշան է⁵: Նա վկայում է Հյուբշմանի տեսակետն արաբական փոխառությունների վերաբերյալ. «Սերետսը ոչ մի արաբերեն բառ չունի՝ բացի անուններից: Ղևոնդ Պատմիչը, բացի անուններից և տիտղոսներից (ամիրալմուսինի), միայն երկու բառ ունի՝ Կուտայք (կուրան ընթերցող) և Փուրկան (կուրան), երկուսն էլ արաբական կյանքի բառեր: Սակավաթիվ բառեր ունեն նաև Թ-ժԱ դարերի մատենագիրները»⁶:

Միանգամայն քնական է, որ արաբների տիրապետության շրջանում արաբական փոխառությունները նախապես պարարտ հող են գտել ժողովրդախոսակցական լեզվում, որտեղից էլ երբեմն թափանցել են գրական լեզու, հաճախ էլ գրավոր եկեղեցականության չարժանաչալով՝ իսպառ ծածկվել են ժամանակի մշուշի տակ:

Այդպես ժողովրդախոսակցական շերտում գործառնող որոշ փոխառություններ իր երկում գործածել է Ղևոնդը:

Այդ բառերն են՝ զուզայ, զուզէ, խաճիթայ, ճալալ, մղղակ, ռոքուն, որոնք արտահայտում են կրոնի, պատերազմի և հարկահանության հետ կապված հասկացություններ:

Զուզայ/զուզէ - ՆՀԲ-ն այն մեկնում է իբրև «անուն և չափ դրամոյ իրիֆ» (2, 1052), ԱԲ-Ո՝ «ստրկի անուն և չափ»: ՆՀԲ-ն փորձում է այդ բառերը դուրս բերել ուզայ/ուզէ ձևերի հայցականից, երբ հայտնի չէ այդ ձևերի ծագումն անգամ: Հր. Անադյանն այն քաջատրում է իբրև «մի տեսակ արծաթ դրամ» և րիսցնում ասոր. ZŪZA ձևից՝ «դրամի անուն» (ՀԱԲ, 2, 107), Ստ. Մալխասյանցը՝ «ծանրութեան չափ, իբրև կէս սիկլ և դրամի անուն» (ՀԲԲ, 2, 37):

Մենք հավաստի ենք համարում Հր. Անադյանի ստուգաբանությունը և ավելացնում, որ այդ բառը հայ մատենագրության մեջ թափանցել է միջնորդ լեզվի՝ արաբերենի միջոցով:

Հմտ. Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բոնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուզէս արծաթոյ (127): Եւ առ մի կնիֆ պահանջէր բազում զուզայս, մինչև հասանել մարդկան ի յետին տնանկութիւն յանամբեր ճեղութեանցն առ ի չարաշուր դահնէն (167):

Հավանական է, որ այդ բառը հայերենում հեռացել է փոխառու լեզվի ստուգաբանական իմաստ(ներ)ից և ձեռք բերել «հարկահանության չափի միավոր՝ արծաթով» նշանակություն: Բառիս «արծաթ» նշանակությունը երևում է առնուլ բազում զուզէս արծաթոյ կառույցից, որտեղ արծաթոյ բառովն ընկալվում է իբրև սեռականով (հոմանշային) ավելադրություն: Եթե զուզայ բառը չունենար

⁵ Հր. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, Ե. 2, էջ 173:

⁶ Անդ:

«արծաթ» իմաստը, հեղինակն այն չէր գործածի մահ միայնակ՝ առանց ավելագործության (պահանջէր քաղում գուգայս):

Խաճիթայ - ՆՀԲ-ն այն համարում է արաբական փոխառություն՝ «ռոնիկ, բոշակ, մանաւանդ եռամսնայ» (2, 1054) նշանակություններով: Հր. Անառյանն ընդունում է ՆՀԲ-ի թե՛ ստուգաբանությունը, թե՛ իմաստային քաջատրությունը՝ սակայն առանց «եռամսայ» ժամանակային սահմանափակման (ՀԱԲ, 2, 318)⁷:

Հմմտ. Զի յերից ամաց և անդր արգելեալ էր (ոստիկանն) զնախարարացն Հայոց և նոցին հեծելոցն զխաճիթայսն (113):

Կոռայ/ը/ - գործածված է միայն հոգնակի թվով: ՆՀԲ-ն մեկնում է իբրև «ընթերցողի կամ կարդացողի կուրանի այլազգեաց»՝ համարելով արաբական փոխառություն (1, 1123): Հր. Անառյանն այն քիչեցնում է արաբ. *ḡarī* («դուրան կարդացող») բառի անկանոն հոգնակիից և տալիս իմաստային հավելյալ քացատրություն՝ «արաբ կարդացող, դուրան կարդացող, հոգևորական» (ՀԱԲ, 2, 663):

Հմմտ. Հարցին ցհաւատարիմս հաւատոյն իւրեանց, որ անուանին ի նոցունց կոռայջ և ըստ հրամանին զոր ընկալան ի կոռայիցն՝ մտեալ յարժունական սպարանս՝ գտին զնա թմբեալ գինեզելխութեամբ և սպանին զնա սրով (115):

Հալալ - ՆՀԲ և ԱԲ բառարաններում այն վկայված չէ: Ստ. Մալխասյանցն այն դիտում է իբրև արաբական փոխառություն՝ «արդար, անխարդախ» իմաստներով (ՀԲԲ, 3, 10):

Ղևոնդն այն գործածել է հալալ աղդիոնջ («արդար ունեցվածք») կապակցության մեջ:

Հմմտ. Որ և ցանկացաւ եղեալ սորին տէր Համագասպ ի պատուաւոր ազգէն Մամիկոնեանց՝ ի հալալ արդանց ետ հրաման ծրել փծուն գրչիս Սարգսի (170):

Մղդակ - ՆՀԲ-ն և ԱԲ-ն այն մեկնում են որպես «նպատակ, նշանակ» (2, 286) և համարում արաբական փոխառություն: Հր. Անառյանը, ընդունելով նրա արաբական փոխառություն լինելը, ավելացնում է՝ «նեոթի նպատակ, նշան առնելու տեղ» (ՀԱԲ, 3, 332)⁸:

Ղևոնդի երկում այն ունի ավելի շուտ «թիրախ» նշանակությունը.

Ի գրասանել իւրում ի խաղս անաթման բարուցն՝ զմարդիկ կանգնէր փոխանակ մղդակի՝ նետածիգս առնել ի նոսա ի վարժումն անձին իւրոյ (161):

Ռոքուն - ՆՀԲ և ԱԲ բառարաններն այս բառը չեն վկայում: Հր. Անառյանն այն քաջատրում է որպես «մահմետականների համար սրբազան մի ֆար» և համարում արաբական փոխառություն (շուքո)՝ «ֆար անկեան» (ՀԱԲ, 4, 419), «Սուրբ ֆար» («Հայոց լեզվի պատմություն», 2, 203): Ստ. Մալխասյանցը, ընդունելով Հր. Անառյանի ստուգաբանությունը, այն համարում է կրոնական ոլորտի բառ՝ «Մահմետականների սրբազան ֆարը Մեկկայի մզկիթում, որին երկրպագում են, իբրև երկնից իջած ֆարի» (ՀԲԲ, 4, 165):

Այս բառը հայ մատենագրության մեջ գործածվել է մեկ անգամ.

Կամ ֆարին գոր ռոքունն կոչեցիր, գորմէ ոչ գիտես, եթէ ընդէր երկրպագեալ համբուրես (92):

⁷ Հր. Անառյանը թեև ՀԱԲ-ում ընդունում է բառիս արաբական փոխառություն լինելը, այնուամենայնիվ «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ արաբական փոխառությունների ցանկում այն չի վկայում (Հ. 2, 189-207):

⁸ «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ արաբական փոխառությունների ցանկում այս բառը չի վկայում (2, 189-207):

Այսպիսով, ինչ բնորոշ գծեր են ի հայտ բերում Ղևոնդի երկուս գործածված բառային փոխառությունները:

1. Ղևոնդի գործածած բառային փոխառությունները ժամանակագրորեն կարելի է բաժանել երկու շերտի՝ հին և նոր:

2. Հին փոխառությունները հայերենի բառային կազմ են թափանցել լեզվի զարգացման նախորդ գոյավիճակներում և հայ մատենագրության մեջ գործածվել տարբեր հանախակությամբ:

3. Նոր փոխառությունները հայերենին են անցել մուլնպես տարբեր ժամանակներում, սակայն հայ մատենագրության մեջ առաջինը հանդիպում են Ղևոնդի երկուս:

4. Ղևոնդի գործածած բառային փոխառությունները հին հայերենի բառային կազմի անփակտելի մասն են կազմում: Դրանց իմաստային դաշտի վերհանումը պատմական բառագիտության խնդիրն է, որ այդպիսով կարող է բացահայտել ազգամիջյան շփումների (մշակութային, կրոնական, ռազմական...) այն շրջանակներն ու գործոնները, որոնց հետևանքով ու ազդեցությամբ կատարվել են փոխառությունները:

ԺԱՆ-ՄԱՐԻ ՄԱՐՏԻՆ

Փարիզի Գիտական

Ուսումնասիրությունների

Ազգային Կենտրոնի (C.N.R.S.) -

Հոմերի Փրանսիական Դպրոցի պրոֆեսոր

**ԱՐԵՎԵԼՑԻՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ
(ՄԻՆՉ ԺԱ ԴԱՐԸ)***

Նախնական եզրակացություն. ոչ շատ առաջ մի Հայ քաջանա եկեղեցի է կառուցել Բարիում (այս շրջանում, ինչպես գրեթե ողջ Հարավային Իտալիայում, դեռևս լայնորեն տիրապետում է մասնավոր եկեղեցին): Բացի այդ, տունը Eustrati-ի հորը և հորեղբորն է վաճառել Petrosi f. Muscellica անունը կրող մի անձնավորություն, որի ազգությունը ճշտված չէ, թեպետ նրա անունը և Հայրանունը՝ Petros և Mushel կամ Mushelik, կարող են Հայկական լինել: Միաժամանակ Petrosi անվան յ վերջավորությունը թույլ է տալիս մտածել այդ անվան վրացական ձևի մասին: Նա (Eustrati-ն) ունեցել է Աննա անունով մի մայր, որը Հնարավոր է, արեելյան ծագում ունենար, սակայն ամուսնացել էր Հռոմեական անուն ունեցող ում Iemina -ի (Gemma) Հետ: Ծնդրտված չէ դեռևս նաև Amatus f. Muscellii -ի ազգությունը, որի Հայրը թվում է, թե կրել է Հայկական անուն: Սակայն, ներկա դեպքում, պետք է ուշադրություն դարձնել այն Հանդամանքին, որ այս մարդը իր որդուն տվել է մաքուր լատինական անուն: Այն դեպքում, երբ Amatus -ի թոռները կրում են առօրյա, նույնիսկ ոչ քրիստոնեական, Հռոմեական անուններ: Ուրեմն Հաստատորեն կարելի է ենթադրել, որ Բարի-Ջեյլիի Հայերը, անկասկած իրենց վերաբնակեցումից քառասուն-հիսուն տարի անց, ընտրել են մշակույթը փոխելու ճանապարհը: Ընդգծենք վերջապես, որ ազգության Հիշատակումը վերապահված է միայն եկեղեցին կառուցած քաջանայի Համար:

Երրորդ վավերագիրը գրվել է Բարիում 1010 թ. հոկտեմբերին¹: Դրա Հեղինակը Archontissa f. Armodocti անունով մի կին է, որը սերում է Տարբենտից և այրին է Moses f. Crista[...] անունով մի Հայ քաջանայի, որը կառուցել է արդեն Հիշատակված Ս. Գևորգ եկեղեցին: Իր Հարազատ Միլվեստրի և իր եղբայր Լեոնի (որի առկայությունը պարտադիր է լանդորարդական իրավունքով) ejk prosw' pou (ներկայությամբ), այլի երեցկինը կնքում է մի Համաձայնագիր (convenientia) իր խորթ որդի (ամուսնու առաջին ամուսնությունից ծնված) Անդրեի Հետ: Գործարքին ներկա է նաև ավագերեց Madelmus-ը (քանի որ խոսքը քաջանայի ժառանգության մասին է): Այս Համաձայնագրով վերջ է դրվում Հովսեփ քաջանայի ունեցվածքի քառորդ մասի շուրջ ծայր առած մի վեճի, որով պետք է վերադարձվեր քաջանայի այրուն mordencaph-ի ("Morgengabe" = Հարսանիքի առավոտյան Հարսնացուին մատուցած փեսացուի նվեր-Ա.Բ.) իրավունքը, որը քաջանան տվել էր իր կնոջը

* Այնպես, «էջմիածին» ամսագիր թիվ 5:

¹ Նույն տեղում, Դ՝ 11.

«Ըստ Լանգոբարդների իրավունքի», բացի այդ խոսք է գնում նաև 12 սու ափ գումարի չուրջ. որը Archontissa -ն ստացել էր իր ամուսնուց տասնյոթ տարի առաջ, և որը նրա խորթ որդին ետ էր պահանջում, չնայած այդին պատրաստ էր, ըստ secundum legem Langobardorum -ի, Հաստատել գործարքի օրինականությունը: Ըստ կնքված պայմանագրի, այդին նրան վերադարձնում է 12 սու պարտքը այն պայմանով, որ վերջինս իրեն թողնի ոչ միայն իր ամուսնու թողած և «Morgengabe» անունը ստացած ունեցվածքի քառորդ մասը, այլ նաև իր հարազատ մոր՝ Մովսեսի առաջին կնոջ քառորդ բաժինը: Այնուհետև թվարկվում է մահացած քահանայի ունեցվածքը. Բարիի Ս. Գևորգ եկեղեցու մոտ՝ մի կտոր հող palearium (Հյուղա՝կ) ու, որը Archontissa -ն բնորոշում է իբրև ecclesia nostra (մեր եկեղեցի-Ա.Բ.), ինչպես նաև Amatus f. Musceli -ի թոռների ինչքը. խաղողի այգի իր հնձանով, ձիթապտղի այգի և ուրիշ այլ ունեցվածքներ, որոնց մեջ Զեյլիում գտնվող մի curtil, վեճի առարկա է նաև Ս. Գևորգի եկեղեցին, մի շինություն, որը մոտ է խաղողի այգիներին: Վեճների շարքում Հիշատակվում է նաև ոմն Amatus, որը ստորագրել է հունարեն:

Այս վավերագրի ամենակարևոր արժանիքն այն է, որ հստակ կապ է հաստատում Բարիի և Զեյլիի միջև: Վավերագիրը Հատկապես ապացուցում է, որ Հայ քահանա Մովսեսը, Ս. Գևորգ եկեղեցու (որի քառորդ մասն անցել է իր այրուն) Հիմնադիրը և սեփականատերը, ըստ Բարիում տիրապետող լանգոբարդական իրավունքի, Հաջորդաբար ամուսնացել է երկու կանանց (երկրորդը Տարենտից է) Հետ: Ընթերցելով վերջին երկու վավերագրերը, այն տպավորությունն ենք ստանում, որ Զեյլիի և Բարիի փոքրիկ Հայկական գաղութը այնքան աննշան էր, որ գրեթե կես դար Հետո չէր կարողացել պահպանել սեփական ինքնությունը, Հատկապես ամուսնությունների ճանապարհով ձուլվել էր լանգոբարդ բնակչության մեջ, քանի որ սկսել էր օգտագործել նրանց լեզուն, կիրառել իրավունքը և սեփականել նրանց անձնանունները: Հավանաբար նրանք պահել էին իրենց եկեղեցական ծեսը, բայց մենք դրանում վստահ չենք, քանի որ չգիտենք, թե ո՞վ էր պաշտոնավարում քահանա (իրեն որոշակիորեն Հայ կոչող) Մովսեսի Հիմնած եկեղեցում: Անկասկած այս եկեղեցին շարունակում էր գործել, անշուշտ այն է 1210 թ. անվանվում Armenis Ա. Գևորգ²: Նման անվանակոչումն արդյո՞ք կարելի է բացատրել միայն Հատուկ ծեսի պահպանումով, կամ միայն եկեղեցու ծագմամբ: Զիշտ է, դեռևս 1045 թ. Հանդիպում ենք Armenus որակված մի սեփականատիրոջ: Իսկ Բարիում ԺԲ դարի սկզբին Նիկեփորի կողմից Ս. Նիկողայոսի մասունքների տեղափոխումը ոգեկոչում է երկու հրաշք, որոնք կապ ունեն քաղաքի և շրջակայքի Հայերի Հետ³:

Ավելի պակաս ստույգ է միաբնակներին, գուցե Հայերին, վերաբերող Հավանական ակնարկը, որ գտնում ենք Վիլհելմ Գուիլյաուս Geste de Robert Guiscard երկի Միջայել Դոկեանոսի Միցիլիա կատարած ռազմարշավի (1048) մասին պատմող

² G.B. Nitto de Rossi et F. Nitto, *La pergamene del Duomo di Bari (952-1264)*, Bari, 1897, վերահրատ. Trani, 1964 (*Codice diplomatico Barese*, I), n° 77.

³ F. Nitto, *La traslazione delle reliquie di S. Nicola, ab's Japigia*, n.s. 8, 1937, էջ 295-411, Հատկապես էջ 350 և 351.

կարճ հատվածում⁴: Վարանման տեղ է տալիս Թորենցայի (Համայնք Պոտենցա մարզում) տարածք Հանդիսացող Բասիլիկատում Ս. Մարիամ Armenis-ի մասին տեղեկությունը. մի հեռավոր շրջան, ուր Հայերի ներկայությունը երբեք չի վկայվել: Հակոբ Տրիկարիկո կոմսի օգնությամբ ԺԳ դարի սկզբում Հարստանալով, այս եկեղեցին որպես patronus և gubernator ունեւր դատավոր Demeirius-ին: Ա. Մարիամի եկեղեցին 1209 թ. սկզբում նվիրվել է Մոնտեվերջինայի լատին վանքին, որի մասին էլ վկայություն է պահպանել արխիվներում⁵: Այս շարքում պետք է նաև հիշատակել Տարենտի Ս. Անդրե de Armenis-ի ԺԴ դարի եկեղեցին և, ավելի ուշ վկայված, Ս. Մարիա de Armenis եկեղեցին՝ Մատերայի «Sasso Caveoso»-ի Հյուսիս արևմուտքում⁶:

Մյուս կողմից, ինչպես հունական, այնպես էլ Հայկական օնոմաստիկան իրենց հետքն են թողել Պուլիխայում Ժ դարի վերջին և ԺԱ դարի առաջին կեսին Հանդիպում ենք Garzianitus – Charzianiti անվանը⁷, 1033 թ. Բարիում գրված մի վավերագիր մեզ հիշեցնում է Petrus sutor⁸ f. Sambati մասին⁸: Վերջապես Criconus անվանաձևը, որը կարծես թե վկայված է 976 թվականից, ԺԲ դարում շարունակում է օգտագործվել⁹: Անձնանվանադրման (onomastique) նման պրակտիկա, ինչպես արդեն տեսանք, վկայված է Բարի-Չելլիի փոքրիկ Հայկական դաղուկթում: Դրանք, ամենայն հավանականությամբ, արտահայտում են Հայերի մշակութային ազդեցությունը, ինչպես որ մեզ հասած մյուս անունները կրկնում են արևելքի Հույների անվանադրման ավանդները: Սակայն թե՛ մեկը, թե՛ մյուսները Հանդես են գալիս տեղական, բավական բազմերանգ ժառանգության կողքին¹⁰: Նմանօրինակ մշակութային կապեր նկատել են Հելլենիստոս Սալենտոյում, ուր Ժ-ԺԱ դարերում վկայված է Arsakès, իսկ ԺԲ դարում Kourkouas և Ashot անձնանունները¹¹:

Անցնենք մի առանձին Հարցի քննարկման, որը վերաբերում է Հարավային Իտալիայում բյուզանդական տիրապետության անկումից հետո ընկած ժամանակաշրջանին, սակայն ընդգծենք, որ խոսքը վերաբերում է մի տարածաշրջանի, որը բյուզանդական չի եղել: 1080 թ. Գրիգոր է Պապը նամակ է

⁴ Guillaume de Pouille, *La geste de Robert Guiscard*, éd. M. Mathieu, Palerme, 1961 (*Istituto Siciliano di Studi bizantini e neoellenici. Testi e Monumenti. Testi*, 4), I, v. 334-339; տե՛ս p. 117 n. 2 և p. 271.

⁵ G. Mongelli, *Abbazia di Montevergine. Regesto delle pergamene, II (1200-1249)*, Rome, 1957 (*Pubblicazioni degli Archivi di Stato*, 27), n° 1171 և 1181. J.-M. Martin, *Le Goleto et Montevergine en Pouille et en Basilicate*, տե՛ս *Atti del secondo Convegno internazionale La società meridionale nelle pergamene di Montevergine: I Normanni chiamano gli Svevi* (Montevergine, 1987), Montevergine, 1989, էջ 101-128, հատկապես՝ էջ 119.

⁶ C. D. Fonseca, *Tra gli Armeni*, տե՛ս վերևում, ծան. 17, էջ 186-187:

⁷ G. Coniglio, *Le pergamene di Conversano. II (901-1265)*, Bari, 1995 (*Codice diplomatico Pugliese*, XX), n° 20 (969). Nitti, *Le pergamene*, տե՛ս վերևում, ծան. 21, n° 27 (1039).

* [Sutor լատիներեն տերմինը նշանակում է կոշկակար – Ա.Բ.]:

⁸ Nitti, *Le pergamene*, տե՛ս վերևում, ծան. 21, n° 22.

⁹ Martin, *La Pouille*, տե՛ս վերևում, ծան. 7, էջ 519, ծան. 189.

¹⁰ Martin, *Antroponymie et onomastique*, տե՛ս վերևում, ծան. 5, էջ 697.

¹¹ A. Jakob, *Vaste en Terre d'Otrante et ses inscriptions*, տե՛ս *Aevum*, 71, 1997, էջ 243-271, հատկապես էջ 252.

ստացել մի «Հայ արքեպիսկոպոսից», որին նույնացնում են Գրիգոր Բ՝ Վկայասերի հետ, որը 1065 թ. կաթողիկոսարանի վերահաստատումից հետո (մինչ այդ բյուզանդական իշխանությունները խոչընդոտում էին նրա գործունեությունը) նստում էր կապադովկյան Սեբաստիայում¹²: Հուլիանոսն երեցի բերած կաթողիկոսի նամակը չի պահպանվել, բայց մի կողմից պահպանվել է Պապի պատասխանը (որը գտնվում է իր թղթակցին լատինական ձեռքի մի շարք ավանդույթներին հետևելու համար), մյուս կողմից՝ Պապի գրած նամակը Բենեդեկտի արքեպիսկոպոսին մի խնդրանքի առիթով, որը կաթողիկոսի անունից ներկայացրել էր Հուլիանոսն երեցը¹³: Կաթողիկոսն իրականում իր թղթատարի (որը Պապին ուղղափառ է թվում) միջոցով տեղեկացրել է, որ Հայերի մեջ գլուխ բարձրացրած մի Հերձվածող գտնվում է այժմ լատինների միջավայրում. նրան անվանում են Macharus և որ նա բնակվում է Ֆրիջիանոյում (համայնք Ավելինո մարզում): Պապը նաև գրում է Բենեդեկտի արքեպիսկոպոս Ռոֆերդին (1076-1107), քանի որ նրան էր ենթարկվում Ֆրիջիանոյի եպիսկոպոսը, պատասխանատվության կանչել այդ մարզուն իրեն ենթակա եպիսկոպոսների և Մոնտե Կասինոյի վանահոր հետ միասին (որն այն ժամանակ Desiderius-ն էր): Պապը պահանջում է, որ նրան (Macharus-ին - Ա.Բ.) արգելեն օրտու (լատինական¹⁴) կրել և աղքատներին չբաժանեն այն դրամը, որը նա ձեռք է բերել անագնիվ ճանապարհով: Ընդհանուր եզրակացության հանգելու համար, այս վկայություններին անկասկած քիչ բան է ճշտվում: Ամեն դեպքում դրանք ցույց են տալիս, որ բացի Պապի և կաթողիկոսի միջև հաստատված ուղղակի փոխհարաբերություններից, նաև կային մարդիկ, որոնք շարունակում էին ճանապարհորդել Հայկական Հողերի և Հարավային Իտալիայի միջև:

Իրոք, բյուզանդական տիրապետության անկումով, Արևելյան Միջերկրականի հետ կապերը չդադարեցին. օրինակ՝ Հայտնի է Բարիի նավագնացների առևտրական արշավը դեպի Անտիոք, որից վերադառնալիս Լիկիայի Միոս¹⁵ քաղաքից Հափշտակվեցին Սուրբ Նիկողայոսի մասունքները: Մանավանդ ժԲ և ժԳ դարերում, Պուլիխան (Հատկապես Բուինդիսին և Բաուխտան) և Սիցիլիան Հենակետ են ծառայում արևելք եկած կրոնավոր ֆրանկների համար: Ավելացնենք, որ ժԲ դարի վերջում Սիցիլիայի Թագավոր Հենրիխ 2 կայսրը տեսականորեն գերական էր կիպրոսի և Փոքր Հայաստանի Թագավորության¹⁶, որը հաստատուն կապեր ուներ, և ոչ միշտ բարեկամական, Իտալիայի նորմանների կողմից հիմնված Անտիոքի իշխանության հետ, որը, սակայն, թվում է, թե սերտ հարաբերություններ չէր պահպանում Սիցիլիայի Թագավորության հետ: Գիտենք նաև, որ 1272 թ.

* Ժ-Մ.Մարտինը սխալմամբ կաթողիկոսին անվանում է Գրիգոր Գ - Ա.Բ.

¹² Dedeyan, *Les Arménians*, տե՛ս վերևում, ծան. 25, էջ 91.

¹³ *Das Register Gregors VII.*, éd. E.Caspar, 3^e éd., Berlin-Dublin-Zürich, 1967, 2 vol.(MGH, *Epistolae selectae in usum scholarium*, II, 1-2), VIII, 1 & VII, 28.

¹⁴ Գտնվում է Փոքր Ասիայի արևմուտքում - Ա.Բ.

¹⁵ Լիզոնկեր, ինչպես ընդունված է արևմտափրոպական պատմագրական ավանդույթում, Կիլիկիայի Հայաստանի պետությունն (1080-1375 թթ.) անվանում է Փոքր Հայաստան, ինչը հաճախ է նաև միջնադարյան նվիրական պատմագրությանը - Ա.Բ.

Թագավորութիւնում կային մի խումբ Հայեր, որոնց առաջնորդն էր Հովհաննես Եպիսկոպոսը¹⁴:

Վերադառնալու մեր խնդրին և Համակողմանիորեն քննարկենք Նեապոլի դեպքը: Թվում է, թե Հենց ԺԶ դարում է, որ Ս. Գրիգոր Լուսավորչի գանգը Նարդոյից տեղափոխվեց Նեապոլ, ուր այն դրվեց մի վանքում, որն այնուհետև անվանվեց S.Gregorio Armeno (կամ S.Liguorio՝ Գրիգորի անվան Նեապոլիտանական ձևը)¹⁵: Ամեն դեպքում, այս սուրբը շատ ավելի Հին ժամանակներից է պաշտամունքի առարկա եղել Նեապոլում: Նա երիցս Հիշատակվում է Թ դարի Նեապոլիտանական մարմարե օրացույցում, ուր Հիշատակված են Նաև Հոփսոսիմն և Գայանն կույսերը: Իրոք, այս Հուշարձանի վրա սեպտեմբերի 28-ի տակ կարդում ենք. PA(ssio) S(anctarum) Ripsimi (et) GAINI (այսպէս), սեպտեմբերի 30-ի տակ՝ S(ancti) GREGOR(ii) EP(iscop)I DE ARMENI(a), դեկտեմբերի 2-ի տակ՝ P(assio) GREGORI DE ARME(nia)¹⁶:

Նեապոլիտանական օրացույցում Հայերի այս քառապատիկ ներկայութան վերաբերյալ Հայր Պետրոսը մի երկար Հոդված է նվիրել¹⁷: Առաջին Հերթին Նա մատնանշում է, որ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը ԺԶ դարից առաջ, Արևմուտքում վկայված է միայն Նեապոլում և ընդգծում, որ Նեապոլյան վկայութիւնը ավելի ուշ չէ, քան այդ անվան մուտքը Կոստանդնուպոլսի եկեղեցու պաշտոնական բնագրեր: Տոնի ամսաթվի երկատումը Նա բացատրում է երկու Հաստատուն Համարժեքների տարբերությամբ՝ Հայկական և Հռոմեական օրացույցների Հաջորդական ընդունման փաստով. մեկը չրջանառության մեջ է գրվել շուրջ 500 թ., իսկ մյուսը՝ Ը դարի կեսերին: Այս վերջինը, որը տոնը դնում է սեպտեմբերի 30-ին, պաշտոնապես ընդունվել է Կոստանդնուպոլսի եկեղեցու կողմից, իսկ մյուսը (դեկտեմբերի 2-3) ենթադրում են, որ Հաստատել է քաղաքում [Նեապոլում - Ա.Բ.] բնակվող Հայկական գաղութը՝ պահպանելով Հին ավանդույթը:

[Հայերի - Ա.Բ.] նման ներկայութիւն անհավանական է. Հայտնի է էկզարքական Իտալիայում 639-ից մոտ 700-ական թթ. numerus Arminiorum - ի (ճիշտն ասած, արդեն բավական լատինականացված) ներկայութիւնը, բացի դրանից 565 թ. Ալեքսեյայում կամ 591 թ. Ռավենայում անվանապես Հիշատակվում են մի շարք Հայեր (օրինակ՝ կոմս և տրիբուն Յիտասը)¹⁸, եթե անդամ չխոսենք 685 թ. Սիցիլիայի ինքնակոչ Mizézius (Մժե՞ժ - Ա.Բ.) մասին¹⁹: Այնուամենայնիվ,

¹⁴ Կավայի (Cava) Ս. Երրորդութիւն տրբայության արխիվ, LVI, 75.

¹⁵ Gregorio Illuminatore, տե՛ս Bibliotheca Sanctorum (P.Anonian).

¹⁶ H. Delehay, *Hagiographie napolitaine*, տե՛ս *Anal.Boll.*, 57, 1939, p. 64. Հմմտ. D.Mallardo, *Il calendario marnoreo di Napoli*, Rome, 1947 (*Biblioteca "Ephemerides Liturgicae"*, 18).

¹⁷ P.Peeters, *S.Grégoire l'Illuminateur dans le calendrier lapidaire de Naples*, տե՛ս *Anal. Boll.*, 60, 1942, p. 91 - 130. Հմմտ. Ե. Ալիքնեան, Ս. Գրիգոր Լուսավորչի տոները Նեապոլսի մարմարեայ անաղոյին վրայ, տե՛ս Ե. Ալիքնեան, Մատենագրական Հետազոտութիւններ, Հտ. Ե, Վիեննա 1953, էջ 21-45 - Ա.Բ.:

¹⁸ T.S.Brown, *Gentlemen and Officers. Imperial Administration and Aristocratic Power in Byzantine Italy, A.D. 554-800*, Rome (British School), 1984, p. 61-62, 66, 75, 85, 90, 104.

¹⁹ Peeters, S.Grégoire, տե՛ս վերևում, Եան. 46, էջ 128:

Նեապոլում Հայկական որևէ գաղութի ուղղակի վկայություն չունենք, թեպես մինչև ժ դարը արխիվներում պահպանվել են բազմաթիվ վավերագրեր:

Ինչ վերաբերում է վանքին, ապա այնտեղ ավելի ուշ ենք հանդիպում Ս. Գրիգոր Լուսավորչի վկայությանը, մենաստանը վավերագրերում վկայված է 921 թվականից, ըստ որոնց այն նվիրված է եղել Ս. Սեբաստիանին և Գրիգորին: ԺԱ դարի սկզբում նրան են միացրել Փրկչի և Ս. Պանտալեոնի Հարեան վանքը և վերջապես վերանվանել՝ Ս. Փրկչի, Սրբեր Պանտալեոնի, Սեբաստիանի և Գրիգոր «Maior»-ի վանք: Ամեն դեպքում, վանքը բնակեցված է եղել տեղական բարձրագույն ազնվականությունից Հավաքագրված բենեդիկտյան կուլյսերով, որոնք ապրել են Ս. Բենեդիկտոսի վանական կանոնադրությամբ: Սակայն Գրիգորը, որն արդեն Հիշատակվում է վանքի Հիմնադրման օրվանից, ինչպես կտեսնենք, արդեն ժԱ դարում նույնացվում էր Հայազգի սրբի Հետ:

Այս սրբի միակ լատիներեն վարքը²⁰, կարծում ենք, մեզ է ավանդվել Վատիկանի գրադարանի Barber. Lat. 583 հոգևի ձեռագրով (էջ 21r-41v): Այն իրենից ներկայացնում է մի վարքագրական մատյան, գրված ուշ բենեդիկտերենով (անկասկած ժ Գ դարում), որից ընկած են մի շարք թերթեր (ի Հարկն ոչ Գրիգորի վարքից), և որն ավարտվում է վերջում ազդ պարունակող մի տետրով: Արդեն ցույց է տրվել²¹, որ այդ մատյանի պարզ ընդօրինակությունն է Նեապոլի ազգային գրադարանի VIII B 8 ձեռագիրը: Հոռմի ձեռագիրն իր այսօրվա վիճակով մեծ չափի (448 x 312 մմ) կաշեկազմ մատյան է, որը պարունակում է մադաղաթյա 56 թերթ (Համարակալված՝ 4-59), որոնցից ամեն մեկի դիմացի (recto) ու ետևի (verso) երեսներին (գրչով գծված) 27 տող ունեցող երկայուն դաշտ է: Այստեղ Հաջորդաբար գտնում ենք²² (յուրաքանչյուր բնագիր սկսվում է Համեստ վերնագրով), Եփսոսատիոսի և իր ընկերների վկայաբանությունը, որը Հունարենից թարգմանել է Guarimpotus - ը²³, Նեապոլի եպիսկոպոս Աթանաս Բ-ի (876 - 898) խնդրանքով (BHL 2778, վերջում՝ Ս. Անդրեի տոնին նվիրված քարոզ), Գրիգորի վկայաբանությունը, որին կանգրադառնալով Հետագայում, այնուհետև Ս. Բարբարայի վկայաբանությունը (BHL 913), Ս. Նիկողայոսի վարքը, որի Հեղինակն է Նեապոլիտանական սարկավազ Հովհաննեսը (գրված՝ վերոհիշյալ Աթանաս եպիսկոպոսի խնդրանքով, տե՛ս BHL 6104-6106, 6150-6156, 6160, 6161, 6163-6165) և Ս. Ամբրուասի վարքը (BHL 377), որից մնացել է միայն նախաբանը: Նեապոլում պահպանվող մասում պահպանվել են մասնավորապես Ս. Euplus-ի

* [Գրիգոր «Maior»-ը կարող էր լատինական աշխարհում նույնացվել նաև Գրիգոր Մեծ Պապի (590-604) պաշտամունքի Հետ - Ա.Բ.]

²⁰ AA. SS., Sept. VIII, p. 402-413 (BHL 3664).

²¹ V. Brown, *Boccaccio in Naples: the Beneventan liturgical palimpsest of the Laurentian autographs (mss. 29.8 and 33.31)*, տե՛ս *Italia Medioevale e Umanistica*, 34, 1991, p. 41-126, Հատկապես՝ p. 70 n.59. Նույնի, *A second new list of Beneventan manuscripts (III)*, տե՛ս *Mediaeval Studies*, 56, 1994, p. 299-350, Հատկապես՝ p. 348.

²² տե՛ս Poncelet, *Catalogus codicum hagiographicorum Latinorum Bibliothecae Vaticanae*, Bruxelles, 1910 (*Subsidia Hagiographica*, 11), p. 458.

²³ Տե՛ս P. Devos, *L'œuvre de Guarimpotus, hagiographe napolitain*, *Anal. Boll.*, 76, 1958, p. 151-187, Հատկապես՝ p. 153-157.

Հրաշագործությունները²⁴: Անկասկած է, որ միասին ընդօրինակված այս բնագրերի Հեղինակները նեապոլցիներ են, որոնց Loew-ը²⁵ նեապոլիտանական ծագում է վերագրում՝ Հիմնվելով նեապոլում պահպանված պարզ ձեռագրի վրա, ինչը մեզ այնքան էլ ակնհայտ չի թվում, սակայն Հադիվ թե դա այս խնդրում կարևորություն ունենա:

Գրիգորի վկայաբանությունը սկսվում է մուտքով²⁶, ուր անանուն Հեղինակը բացատրում է, որ ինքը բարեհնչուն է դարձրել «անհասկանալի և պարզ» ոճով գրված մի Հին բնագիր: Այդ փորձը նա կատարել է Gayla վանամոր խնդրանքով, որը կառավարում էր նեապոլ քաղաքի Ս. Գրիգորի կանանց մենաստանը²⁷: Այժմ Հայտնի է, որ Gayla կամ Gallegrima վանամայրը ղեկավարել է վանքը 1150-1159 թթ. (նախորդ վանամայրը վկայված է 1139 թ., իսկ Հաջորդը՝ 1173 թ.²⁸: Ուրեմն, Հենց 1150-ական թթ. նեապոլի կարելի է վերագրել Ս. Գրիգոր Լուսավորչի լատիներեն վկայաբանության բնագիրը: Վերևում բերված մուտքից (ծան. 56) Հայտնի է դառնում, որ արդեն այս դարաշրջանում, կամ նույնիսկ ավելի վաղ, նեապոլի խնդրո առարկա վանքը նվիրված է եղել Հայագրի սուրբ Gregorius maior-ին: Մինչ այդ, նեապոլում շրջանառության մեջ է եղել վարքի նախորդ տարբերակը, որը, ինչպես կարելի է ենթադրել, թարգմանված է եղել Հունարենից և ունեցել է, Հավանաբար, անհասկանալի և ծանր ոճ, ինչն էլ լավ թարգմանության Հատկանիշ է: Թվում է, թե այն չի կարելի վերագրել Թ դարի նեապոլյան մեծ թարգմանիչներից որևէ մեկին, որոնց երկերը կարիք չունեին նորոգման և ժգ դարում կրկին ընդօրինակվել են: Ինչ էլ որ լինի, Գրիգորի պաշտամունքը նեապոլում ստուգապես ավանդված է մի կողմից Թ դարում, մյուս կողմից՝ ԺԱ դարում, և կարելի է տրամաբանորեն կապ տեսնել այս երկու դարաշրջանների միջև: Այնուհանդերձ քիչ Հավանական է Հայկական (բացարձակորեն չհիշատակվող) գաղութի առկայությունը ԺԱ դարի նեապոլում. Հարկ է Հիշեցնել, որ Ս. Գրիգորին նվիրված վանքը Հայկական էր միայն անունով, և որ ԺԱ դարում խմբագրված վկայաբանությունը Հիմնված էր լատներեն բնագրի վրա: Այդ իսկ պատճառով Հարց է, թե արդյոք այնտեղ այնչի վաղ կա՞ր նման գաղութ, ինչպես ենթադրում է Հայր Պետերսը: Դա անհնար չէ, սակայն վկայված չէ: Ավելի շուտ պետք է ենթադրել, որ Ս. Գրիգորի պաշտամունքը նեապոլ է անցել

²⁴ St'a A.Vuolo, *I Libri miracolorum tra religiosità e politica* (Napoli. sec. IX - XI), Naples, 1990 (Parva hagiographica, 1) (չեմ ոգտվել):

²⁵ E.A.Loew, *The Beneventan Script. A History of the South Italian Minuscule*², par V.Brown, Rome, 1980, 2 vol. (Sussidi Erudiri, 33-34), I, p. 73.

²⁶ Cod. Barber. Lat. 583, f.21 r: Incipit prologus sancti Gregorii Arminensis episcopi et martyris.

²⁷ Նույն տեղում, f 22': Hoc mecum considerance et super talento mihi ad duplicandum credito permiscens, passione[m] sancti Gregorii Armenensis, quem olim satis in occulto et rusticano stilo fuerat exarata, tum ipsius sancti, tum precibus et suggestione domne Gaye venerabilis abbatisse que intra Parthenopensem urbem monasterium puellarum Dei suo nomini dedicatum religiose et sapientissime regit, verbis orationibus aggredior decorare, ut et pie postulationi videar satisfacere, et apud Deum martiris interuentu misericordie locum merear in venire.

²⁸ St'a Հատկապես R.Pilone, *Le pergamene di San Gregorio Armeno* (1141-1198), Salerno, 1966, n° 4,5,9,11.

Կոստանդնուպոլսից (մարմարյա օրացույցը պահպան հին է, քան հեթադրում է Հայր Պետրոսը), և որ Գրիգոր Լուսավորիչը Նեապոլում Հարգանքի է արժանացել իբրև Տիեզերական Եկեղեցու սուրբ, միևնույն լուսապսակով, ինչ մյուս արևելյան սրբերը:

Ինչ վերաբերում է Նարգոյի կաթողիկոսին, որը պահպանել է Գրիգորի ձեռքը²⁹, իսկ Հետագայում ձեռք է բերել Նրա գլուխը, ապա պետք է նշել, որ այդ մասունքները բերվել են բավական ուշ. իրոք, այդ կաթողիկոսն եղել է մի սովորական բենեդիկտյան վանք, որը Հիմնադրվել է ԺԱ դարում մի նորման կոմսի կողմից և նվիրվել Աստվածամորը: ԺԱ դարի վերջում այն հակադրվել է Գալիպոլիի Հունական եպիսկոպոսությանը, որը Պուլիայում միակն էր³⁰: Ինչպես 1387-1401 թթ., այնպես էլ, կրկին, 1413 թ. վանքը դարձել է եպիսկոպոսական Աթոռ³¹: Ակնհայտ է, որ նրա սկզբնավորության մեջ որևէ արևելյան բան չկա, ավելի շուտ՝ ընդհակառակը:

Վերջում ավելացնենք, որ, ըստ մեր տեսակետի, պետք է մեծ կարևորություն տալ Գահետի 937-1050 թթ. վավերագրերում առկա Armenia տեղանվանը³², որով ճշտվում է մի ջրաղացի տեղագրություն: Այս շրջանում կարելի է գտնել նաև Կիրիկիա տեղանուն, սակայն դրա սկզբնական ձևը Հավանաբար Cedicia-ն (տեղական նշանակության յուրահատուկ տեղանուն)³³ է: Համենայն դեպս, ըստ մեր իմացածի, այս դոտում չի արժանագրված Հայերի ներկայության որևէ դեպք:

Սահմանափակվելով խնդրո առարկա ժամանակաշրջանի սահմաններում, այս Հազվագյուտ վկայություններից կարող ենք կատարել որոշ եզրակացություններ: Այսպես, Բյուզանդիայի սահմաններում, երբ կայսրությունը փոքրում էր մի կողմից ընդարձակել իր տարածքը Իտալիայում, իսկ մյուս կողմից՝ Հաստատվել Փոքր Ասիայում, Հավաքելով Հայերին Կապադովկիայում, որոշ Հայկական ընտանիքներ Հավանաբար դադարել են Բարիի շրջան: Այդ դադարի անշանությունը անակնկալ է, եթե ընդունում ենք, որ Իտալո-Հունական բնակչության մեծ մասը Իտալիայում և Միջերկրայում է Հաստատվել դեռևս անտիկ դարաշրջանում: Դրանից Հանգում ենք այն մտքին, որ բնակչության տեղափոխության միտումները կենտրոնի կամ կայսրության արևելքի ու Բյուզանդիային պատկանող Հարավային Իտալիայի միջև շատ թույլ էին: Այլ բան է դիպվածային ներկայությունը. պաշտոնյաների մեջ Հնարավոր էին Հայկական ծագում ունեցող որոշ բյուզանդական ազնվականներ, որոնք բավական վաղ էին Հեղինացել:

Միակ փոքրիկ Հայկական դադար, որի մասին կարելի է խոսել, եղել է Բարի-Չեյլիում: Այս տարածք գալով, Հավանաբար 960-970-ական թթ., Հայերն այնպես են ձուլվել թվաքանակով իրենց դերակշռող լատիներադներին Հետ, որ նրանցից շատերը գրեթե կես դարի ընթացքում կորցրել են սեփական լեզուն և օրենքները: Նրանք Հավանաբար ավելի երկար են պահպանել իրենց ծիսական

²⁹ [Արդյո՞ք Ժ.-Մ.Մարտինը Նկատի ունի Լուսավորչի այդ - Ա.Ա.]

³⁰ Martin, *La Pouille*, տե՛ս վերևում, ծան. 7, էջ 581.

³¹ P.P.Kehr, *Regesta pontificum Romanorum. Italia pontificia. IX. Samnium-Apulia-Lucania*, par W.Holtzmann, Berlin, 1962, էջ 414.

³² *Codex diplomaticus Cajetanus*, I, Monte-Casin, 1887, վերահրատ. Նույնությամբ 1969 (*Tabularium Casinense*, I), n° 40(937), 132(1016), 162(1032), 190(1050).

³³ Նույն տեղում, n°52(954), 61(962), 110(1004).

ինքնատիպությունը: Այս էմիգրանտները, ինչպես և անկասկած մյուսները, որոնց հետքերը չեն պահպանվել, կրել են մշակութային ազդեցություն, որն արտահայտվում է Հայկական ծագման անունների (սահմանափակ) տարածմամբ: Նման մի էվոլյուցիա նկատվել է ԺԱ դարի սկզբում Գարգանոյում հաստատված սլավոնների համայնքում, որոնք, ի տարբերություն Հայերի, առավելություն են ունեցել տնօրինելու մի փոքրիկ տարածք, սակայն չեն պահպանել որևէ ծիսական ինքնատիպություն³⁴:

Չնայած Թ-ԺԱ դարերում Պուլիան մտնում էր կայսրության մեջ, սակայն իր անցյալով կապված էր արևմուտքի հետ: Ազգային ինքնագիտակցությունը (որը չի բացառում նաև որոշ կայսերական Հայրենասիրություն) այստեղ ուժեղ էր. երկիրը դրավված էր Լանգոթարգների կողմից: Միաժամանակ, եկվորներին ազգային փոքրամասնություն անվանելով, հետևում է, թե որոշակիորեն գիտենք, որ այս վերջինները սեփական տարածք չունեին և տիրապետող ժողովրդի կողմից ձուլման էին դատապարտված: Այսպես, Հայերի սերունդների մեծ մասը Ժ դարից սկսած բավական որոշակիորեն լանգոթարգ է դարձել: Այլ երևույթ է Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի ավելի վաղ մուտքը Նեապոլ, որը թվում է, կարող ենք գիտել ավելի լայն կոտնտեքստում՝ բազմաթիվ արևելյան սրբերի նեապոլիտանական հարգանքում: Ամեն դեպքում, այս շրջանակներում կարելի է բացատրել Վատիկանի ձեռագրի գոյությունը, որը պահպանել է սրբի լատիներեն վարքը:

Ֆրանսերենից թարգմանեց
պատմական գիտությունների
դոկտոր Ազատ Բոգոյանը

³⁴ Martin, *La Pouille*, տե՛ս վերևում, ծան. 7, p. 504-509.

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց եկեղեցու Գուգարքի թեմի տարածքը Մեծ Հայքի պատմական Գուգարաց աշխարհի մի մասն է կազմում: Այժմյան թեմն իրավամբ Հաղթատի նշանավոր եպիսկոպոսական Աթոռի¹ հաջորդն է, սակայն բնական է, որ այս երկրամասում եկեղեցական վարչատարածք, եպիսկոպոսական վիճակ է եղել շատ ավելի վաղ ժամանակաշրջանում:

Առկա մատենագրական և վիժագրական նյութերի օգնությամբ ստորև կփորձենք ուրվագծել Գուգարաց աշխարհում հաստատված եկեղեցական իշխանության՝ եպիսկոպոսական Աթոռի անցած ուղին՝ սկզբից մինչև մեր օրերը, անդրադառնալով այստեղ աթոռակալած եպիսկոպոսներին և ամբողջացնալով նրանց գավազանագիրքը:

Գուգարքը Արշակունյաց օրոք Հայաստանի կողմնապահ չորս բղջիխություններից մեկն էր, բղջիխի նստավայրը՝ Ցուրտավը (Գաջենք), որը մաս եպիսկոպոսական աթոռաճիստ էր: Ջ դարի վերջին և Է դարի սկզբին հայ-վրացական եկեղեցական քաժանման մախընթաց շրջանում նամակագրություն է եղել Ցուրտավի Մովսես եպիսկոպոսի և հայոց կաթողիկոսական տեղապահ Վրթանես Քերթոզի միջև: Գիրք թղթոցը պահպանել է Մովսեսի 605-608 թթ. գրված 6 նամակ (Գիրք թղթոց, ԾԳ, ԾԵ, ԾԺ, ԿԳ, ԿԺ, ՀԵ): Ցուրտավում է եղել խոշոր արքավայր՝ Սուրբ Օուշանիկի վկայարանը, ոտեղից արքի տապանը հետագայում տեղափոխվել է Տփղիս (Պ. Մուրադյան, Սուրբ Օուշանիկի վկայարանությունը, Երևան, 1996, էջ 65):

Վրաց Կյուրիոն Կաթողիկոսը Աբրահամ Ա Աղբաթանեցի (607-615) Կաթողիկոսին հղած թղթում կարևոր տեղեկություններ է հաղորդում Ցուրտավի եպիսկոպոսական Աթոռի վերաբերյալ, մասնավորապես մասնավորելով Մովսեսին նախորդած եպիսկոպոսներին, որոնք մեծ մասամբ հայեր, մի քանիսն էլ Հայաստանում ուսանած վրացիներ էին: Նա գրում է. «Եւ յառաջ քան զդա (Մովսեսը, Կ. Մ.) եպիսկոպոսունք, որ ի Ցուրտաւ լեալ են, ի սրբոյն Օուշանկանէ եւ այսր՝ Ափոց, Գառնիկ, Սահակ, Եղիշայ, Յակովբ, Յոհան, Ստեփանոս, Եսայի, Սամուէլ, միւս Ստեփանոս, Յոհանէս և այլ եպիսկոպոսունք ի հայոց եւ ոմանք ի վրաց էին, ի Հայս ուսեալք, գիտունք եւ վարդապետք...» (Գիրք թղթոց, երկրորդ հրատ., Երուսաղեմ, 1994, էջ 337): Այս թվարկման շնորհիվ, փաստորեն, հայտնի է դառնում Սուրբ Օուշանիկի ժամանակից (նահատակվել է մոտ 475 թ.) մինչև Է դարի սկիզբը Ցուրտավում աթոռակալած եպիսկոպոսների ցանկը: Այստեղ առաջինը նշված Ափոց եպիսկոպոսը Օուշանիկի ժամանակակիցն էր և հիշվում է նրա վկայաբանության մեջ (Սուրբ Օուշանիկի վկայաբանությունը, էջ 21):

Ցուրտավն ավերվել է արաբական արշավանքների շրջանում, բայց մինչ այդ կորցրել է իր նախկին դերը հայ-վրացական եկեղեցական պառակտման հետևանքով: Ցուրտավի թեմի տարածքը (հիմնական մասը) հետագայում դարձել է Հաղթատի եպիսկոպոսության տարածք, որի մասին ուշագրավ վկայություն

ունի Ստեփանոս Օրբելյանը. «Բայց աղանդ սորա (Կյուրոմի, Կ. Մ.) յայտնեցաւ ի Մովսիսէ՝ Յուրտաւայ եպիսկոպոսէ, որ է Գաշեանք, զորոյ գթեմն այժմ ունի Հախպատ» (Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն մահաճգին Սիսական, Տիգրիս, 1910, էջ 105):

Արաբական տիրապետության շրջանում Գուգարքում առկա եկեղեցական իշխանության մասին որոշակի տեղեկություններ հայտնի չեն:

Բագրատունիների կողմից պետականության վերականգնումից հետո Գուգարքի եկեղեցական կյանքը մոր շունչ է ստացել հատկապես Սամահինի (967) և Հաղբատի (977) թագավորաշեն վանքերի հիմնադրությամբ: 1004 թ. իր Պատմության շարադրանքն ավարտած Ստեփանոս Տարոնացի Ասողիկը ուշագրավ տեղեկություն է հաղորդում այս վանքերի միաբանների թվի վերաբերյալ, որն ըստ մրա եղել է 500 մարդ (Ստեփանոսի Տարոնցւոյ Պատմութիւն, ՍՊԲ, 1885, էջ 181):

Բագրատունիների ժամանակ Գուգարքի եկեղեցական իշխանությունը հաստատվել է Տաշիր գավառում: 972 թ. նորահիմն Սամահինում գրված հիշատակարանում Սիմեոն կրոնավորը նշում է, որ մատյանը գրել է «...եպիսկոպոսութեան մերումս նահանգի գաւառիս Տաշիր՝ Գրիգորի, արժանաւոր հաւտապետի...» (Ե-ժԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 60):

Մերատ Բագրատունի թագավորը 979 թ. գալով Սամահին հատուկ կոնդակով այս վանքը հաստատել է որպես Տաշիրի եպիսկոպոսի նստավայր. վանահայր Եսայուն ձեռնադրել տվել եպիսկոպոս, հաստատել եպիսկոպոսության ենթակա տարածքը՝ Վրաստանի սահմանից սկսած մինչև Նիգ և Օիրակ գավառները: Մերատի հրովարտակի ընդօրինակությունը պահպանվել է Սամահինի «Քրթուկ» կոչվող մատյանում: Այստեղ մասնավորապես ասվում է. «...ես Մերատ Բագրատունի թագաւոր Հայոց... եկի ի տեսութիւն սուրբ ուխտիս Սամահինս, զոր շինեալ էր թագաւորն Աշոտ և խոսրովանոյշ թագուհի՝ հայրն և մայրն իմ, և տեսի զի աստուածաշէն և թագաւորաշէն էր, վասն որոյ և սիրեցի, և սիրոյ մշան արարեալ հաստատեցի զսա Աթոռ եպիսկոպոսութեան, և սահմանեցի զվիճակ Սուրբ Աստուածածնիս և սուրբ հայրս վանանց զԵսայի ետու առնել եպիսկոպոս մեծի հայրապետին Հայոց խաչկայ և անդառնալի հրամանաւ մերով և գրով ետու վիճակ և երկիրս զայս Սամահինս. զամենայն երկիրն Տաշրաց՝ զՎերին և զՆերքին, մինչ ի լեռն՝ թագում յայս կոյս և յայն կոյս, մինչ ի սահմանս Գուգարաց աշխարհին և մինչ ի սահմանս Տրփիս(ե)ւաց և Վրաց, և ի սահմանս Նիգ գաւառի, և մինչ ի սահմանս Կայեանոյ, և զսահմանս Ծաղկոցած, մինչ ի սահմանս տան Օիրակայ...» (Ղաֆաղարյան Կ., Սամահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 190):

Ինչպես տեսնում ենք, թագավորը համգամանորեն մշում է եպիսկոպոսության ենթակա տարածքը²: Սամահինի առաջին առաջնորդ Եսայի եպիսկոպոսի մասին Կ. Ղաֆաղարյանը գրում է, որ «նա 32 տարուց ավելի ղեկավարել է Տաշիրքի եպիսկոպոսական վիճակն ու Սամահինի վանքը» (Ղաֆաղարյան, Սամահին, էջ 41):

Սամահինի պատմությանը հայտնի հաջորդ առաջնորդը Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի ժամանակ, 1037 թ., մեկ տարի երկու ամիս կաթողիկոսական Աթոռի վրա նրան փոխարինած մշանավոր Դեոսկորոս (Դիոսկորոս) Սամահեցին է: Թեև սկզբնաղբյուրները սովորաբար նրան կոչում են Սամահինի վանահայր՝ «Դեոսկորոս զհայր վանիցն» (Մատթեոս Ուռհայեցի), «Դեոսկորոս ոմն առաջնորդ սուրբ ուխտին, որ կոչի Սամահին» (Կիրակոս Գանձակեցի), բայց մա

պետք է ոչ միայն մեծ ղեկավարություն, այլև եպիսկոպոսական աստիճան ունենար, այլապես կաթողիկոս չէր ձեռնադրվի: Դեռսկորոսը ընտրվեց Հովհաննես Սմբատի ցանկությամբ. նրա կողմից Ամիրում գումարված եկեղեցական ժողովում, ուր աթոռանկ հռչակվեց Պետրոսը: Սակայն հայ ավանդապահ հոգևորականությունը չհամարձեց աշխարհիկ իշխանության նմանօրինակ միջամտությունը Եկեղեցու գործերին, ըմբոստացավ, և արքունիքը ստիպված էր տեղի տալ: Ամիրում գումարված մեկ այլ ժողովով Դեռսկորոսն աթոռանկ արվեց և վերադարձավ Սամահին, իսկ կաթողիկոսական Աթոռին 1038 թ. վերջերին վերականգնվեց Պետրոս Գետադարձը:

Հայ պատմիչները թեև դատապարտում են Դեռսկորոսի կաթողիկոս դառնալը՝ օձյալ Հայրապետի կենդանության օրոք, բայց նրա անձի մասին որովատանքով են խոսում. Մատթեոս Ուռնայեցին նրան կոչում է «մեծ հոռտոր», վարդան Արենյեցին՝ «այր սուրբ և առաքիճի», իսկ Անանիա Սամահեցին՝ «Երկրորդ Լուսավորիչ» անվանելով: Հետաքրքիր է, որ Դեռսկորոսը մեծարում է՝ «երկրորդ Լուսավորիչ» անվանելով: Հետաքրքիր է, որ Դեռսկորոսը ամենի երկար ապրեց երկարակյաց Պետրոս Գետադարձից (մահ. 1057 կամ 1058 թ.), ընդ որում Գետադարձը մահացավ Մեծ Հայքից տարագրված՝ Սեբաստիայում, իսկ նրա հաջորդը՝ Նաչիկ Անեցին, բյուզանդացիների պարտադրանքով ամենի հետո գտնվող աթոռանիստ ունեցավ (Թավրիզը՝ Փոքր Հայքում): Այս պայմաններում Սամահիում Կյուրիկյան թագավորների հովանավորության մեջ գտնվող ձերբանազարդ Դեռսկորոսը տեղի արձանագրություններում հիշատակվում է կաթողիկոսական աստիճանին բնորոշ ձևակերպումներով: Օրինակ, Պահլավունի Շապուհիկ իշխանի 1061 թ. մկիրատվական արձանագրությունը, ուր ի միջի այլոց Սամահից որպես եպիսկոպոսանիստ, կոչվում է «մայր քաղաք», սկսվում է հետևյալ կերպ՝ «ի թագաւորութեանն Կիրիկէի..., ի հայրապետութեանն տեառն Դիոսկորոսի...» (*Ղաֆադարյան, Սամահին, էջ 147*), կամ՝ Հրանուշ թագուհու՝ Սամահիցի գրատան և Ս. Գրիգոր եկեղեցու կառուցման մասին վկայող 1063 թ. արձանագրության սկիզբը՝ «...ի հայրապետութեանն տեառն Դեռսկորոսի, ի թագաւորութեանն Կիրիկէի եւ Սմբատայ» (*Ղաֆադարյան, Սամահին, էջ 187*): Սա Դեռսկորոսի մասին վերջին հիշատակությունն է, իսկ թե Սամահիում ամմիջապես նրանից հետո ով է առաջնորդ եղել, հայտնի չէ:

Վիժապրեում հիշատակվող հաջորդ առաջնորդը Հովհաննեսն է, որի անունը պահպանվել է 1178 և 1181 թվականների արձանագրություններում: Նկատենք, որ Սամահիում 1063 թ. մեր նշած արձանագրությունից հետո պահպանված հաջորդ թվակիր արձանագրությունը 1139 թվականից է (*Ղաֆադարյան, Սամահին, էջ 198*): Այսինքն, ԺԱ դարի 80-ական թվականների վերջերից Սամահից հայտնվել է ստվերում, բայց մյուս կողմից, նույն այդ ժամանակ վերելք է ապրել ոչ հետո գտնվող Հաղբատը. որտեղ էլ շուտով հաստատվեց եպիսկոպոսական Աթոռը:

Հաղբատի եպիսկոպոսությունը հիմնադրվել է 1081 թ. Հաղբատում Բարսեղ Ա Անեցու կաթողիկոսական ձեռնադրությունից ամմիջապես հետո: Ինչպես գրում է Մատթեոս Ուռնայեցին, «...ժողովեալ թագաւորն Կիրիկէ գեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին, եւ բերեալ զտէր Ստեփանոս Կաթողիկոսն Աղուանից ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զտէր Բարսեղ Կաթողիկոս յԱթոռ Սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին Հայոց» (*Մատթեոս Ուռնայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991, էջ 238-239*): Դրանից հետո Կյուրիկեն իր արքունի երեցին ձեռնադրել է տալիս Հաղբատի եպիսկոպոս: Կիրակոս Գանձակեցին գրում է. «Կիրիկէ... ետ ձեռնադրել զտէր Բարսեղ Կաթողիկոս Հայոց. և զՍարգիս ոսմ դրան երէց Կիրիկէի՝ ձեռնադրեմ եպիսկոպոս

Հաղբատայ. և յայնմձեռն եղև Աթոռ եպիսկոպոսի» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 98): Ստույգ հայտնի չէ, թե ինչու է կատարվել եպիսկոպոսամիստ վարի փոխադրությունը Սանահինից Հաղբատ³:

Եթե մինչև Հաղբատում հաստատվելը Գուգարքի, ապա Տաշիրի և Սանահինի եպիսկոպոսական Աթոռների մասին առկա տեղեկությունները հաճախ հստակ ու շարունակական չեն, ապա այստեղ միանգամայն այլ պատկեր ենք տեսնում: Մատենագրական վկայությունների, բազմաթիվ վիմագրերի ու հիշատակարանների հիման վրա հնարավոր է ամբողջական պատկերացում կազմել այն Աթոռի ընդարձակ, բազմաճյուղ գործունեության, միջոցների ու հնարավորությունների, առաջնորդների, հոգևորականների, հովանավորների և շատ այլ պատմական հարցերի վերաբերյալ: Հարցի մեան համապարփակ քննությունը թողնելով մեկ այլ ժամանակի, ստորև կամողրադառնանք Հաղբատի առաջնորդների գալազամագրքին:

Եպիսկոպոսության աթոռամիստ Հաղբատի վանքի մասին բավական հարուստ գրականություն է հրատարակված, որի մեջ կարևորագույն տեղ են գրավում Հովհաննես Ղրիմեցու 1828 թ. գրած պատմությունը, որը լույս է տեսել 1965-ին (Յովհաննու Ղրիմեցույ Պատմություն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, Վիեննա, 1965), և Կ. Ղաֆադարյանի աշխատությունը, ուր ճարտարապետությունից ու վիմագրերից բացի ներկայացված է վանքի վաղ շրջանի պատմությունը և Հաղբատի վանահայրերի ու առաջնորդների ցանկը (Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, ճարտարապետական կառուցվածքը և վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 275-277): Հեղինակը թեև օգտագործել է վիմագրական և մատենագրական հարուստ նյութ, այնուհանդերձ ցանկը համարում է «խիստ թերի» (Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 275): Նա եպիսկոպոսների անվան հիշատակությունից հետո մի քանի համառոտ տեղեկություններ է տալիս, նշում համապատասխան վիմագրերը: Այդ ցանկը որպես հիմք ունենալով, ստորև ներկայացնում ենք Հովհաննես Ղրիմեցու և մի շարք հիշատակարանների միջոցով մեր լրացրած, խմբագրած գալազամագիրքը՝ նշելով յուրաքանչյուր եպիսկոպոսի հիշատակման թվերը, աղբյուրը և սահմանելով նույնամանի եպիսկոպոսների հերթակարգը, միաժամանակ, ըստ ամրաժեշտության կատարելով ծանոթագրություններ:

ՀԱՂԲԱՏԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐԳ

ՍԱՐԳԻՍ Ա. - ձեռնադրվել է 1081 թ., վերջին անգամ հիշվում է Հաղբատի 1089 թ. արձանագրության մեջ:

ԳԵՈՐԳ Ա. - Հիշատակում է Գանձակեցի⁴, 1158-ին թուղթ է ուղարկել Ներսես Օմորհալուն:

ԱՍՐՍԵՂ Ա. - (Ուքամյան տոհմ), Առաջին անգամ հիշվում է 1173 թ. հիշատակարանում, ապա՝ 1180⁵, 1185 և 1189 թթ. արձանագրություններում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա. - (Նաչեցցի) 1195 թ. (հիշատակարան), 1198 թ. (արձանագրություն):

ԳՐԻԳՈՐԻՍ (Դոփյան) - Զաքարե և Իվան Զաքարյանների քրոջորդին, 1198-1205 թթ.⁶:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա. - (Նաչեցցի) Երկրորդ անգամ Հաղբատ գալով հիշվում է 1207 թ. հիշատակարանում, ապա բազմաթիվ հիշատակարաններում և վիմագրերում, մինչև 1221 թ.:

- ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ - 1233 թ. (արձանագրություն), Զաքարե և իվանե Զաքարյան-
ների քրոջորդի և Գանձակեցու խոսքերով՝ «եղբորորդի առաջնոյ
Յովհաննիսին»:
- ՀՈՎՀԱՆՆԵՍ Գ - (Մաճմաքերդի Բագրատունիներից), ձեռնադրվել է Աղվանից
Ներսես Գ Կաթողիկոսի (1235-1263) ձեռքով:
- ՀԱՄԱԶԱՍՊ - (Ամեցի), Ռիշվում է 1242-1257 թթ. վիմագրերում, Ռայտնի է
շինարարական ձեռնարկներով:
- ՀՈՎՀԱՆՆԵՍ Դ - (Արմանեցի) 1258, 1261, 1262, 1267, 1268, 1273, 1274 թթ.
(արձանագրություն)⁷:
- ՀՈՎՀԱՆՆԵՍ Ե - 1278, 1279, 1280, 1288, 1295 թթ. (արձանագրություններ), 1297
թ. (ստորագրել է Գրիգոր Անավարզեցուն ուղարկված նամակը):
- ՀՈՎՀԱՆՆԵՍ Զ - 1395 (պառպամովել է տապանաքարը):
- ԶԱՔԱՐԵ - 1417, 1437, 1438 թթ. (Ռիշատակարաններ):
- ՄԱՐՏԻՐՈՍ - 1441 թ. Էջմիածնի եկեղեցական ժողովի մասնակից⁸:
- ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ Ա - 1455, 1458 թթ. (Ռիշատակարաններ) և ամբլակամ
արձանագրություն, ուր Ռիշվում է Ղուկաս աթոռակցի Ռեո (Կ. Ղաֆադարյան,
Հաղթատ, էջ 172):
- ՂՈՒԿԱՍ - 1462, 1463 թթ. (Ռիշատակարաններ)⁹:
- ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ Բ - 1469 թ. (Ռիշատակարան)¹⁰:
- ՊԵՏՐՈՍ - 1491 թ. (տապանագիր):
- ՍԱՐԳԻՍ Բ - 1568 թ. (արձանագրություն):
- ՓԻԼԻՊՈՍ - արքեպիսկոպոս Առնչեցի (տապանագիր) 16-րդ դ.¹¹:
- ՄԱՏԹԵՈՍ - 1586 թ. (արձանագրություն):
- ԿԻՐԱԿՈՍ - 1624 թ. (Ռիշատակարան), 1629 թ. (տապանագիր)¹²:
- ԲԱՐՍԵՂ Բ - (Թումանի որդի) 1641 թ., 1648 թ. (Ռիշատակարան), 1655 թ.
աթոռակից Ավետիսի (արձանագրություն)¹³:
- ԱՎԵՏԻՍ - 1651 թ., 1676 թ. (արձանագրություն), 1657 (Ռիշատակարան), 1655 թ.
աթոռակից Բարսեղ Բ-ի, 1677 թ. (տապանագիր):
- ԲԱՐՍԵՂ Գ - 1677-1703 թթ. («լազգե Թումանենց Մամիկոնեան»), (տապանա-
գիր):
- ԹՈՎՄԱ - 1704-1716 թթ. («Թոմայ, լազգե Թումանենց»):
- ԳՐԻԳՈՐ - 1716-1751 թթ. (Տփլիսեցի Սուրկունյան):
- ԶԱՔԱՐԻԱ Ա - 1752-1770 թթ. (Պաթիմյան, Տփլիսեցի):
- ՌԵԹԵՈՍ - 1771-1776 թթ. (Գոլոշեանց, Աշտարակեցի):
- ԱԲՐԱՀԱՄ - 1777-1780 թթ. (Թեքերտաղցի):
- ԻՍՐԱԵԵԼ - 1780-1784 թթ. (Զալալեանց, Արցախեցի):
- ԴԱՎԻԹ - 1784-1796 թթ. (Թավելգարով):
- ՍԱՐԳԻՍ Գ - 1797-1808 թթ. (Զալալեան):
- ՀՈՎՀԱՆՆԵՍ Է - 1808-1812 թթ. (Ակմեցի, Վիրաֆաղոց առաջնորդ):
- ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ Գ - 1812-1814 թթ. (Արցախեցի, մաթ. 1827 թ.):
- ՆԵՐՍԵՍ - 1814թ. (Կամսարական):
- ԶԱՔԱՐԻԱ Բ - մինչև 1836 թ.:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց Ռեո, 1836 թ.,
կանոնադրությամբ (պալոժեմին) կայսրության տարածքում բնակվող հայության
համար հաստատվեց եկեղեցական 6 թեմ՝ Երևանի, Ղարաբաղի, Վրաստանի,
Շիրվանի, Աստրախանի, Բեսարաբիայի և Նոր Նախիչևանի: Ըստ այդմ 1836-ին
Հաղթատի առաջնորդական Աթոռը վերացվեց: Հաղթատը շարունակեց գործել

որպես վանք: Զաքարիա Բ-ից հետո հիշվում են ևս 10 վանահայրեր (Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 277):

Նորահաստատ Երևանի թեմն ընդգրկում էր այժմյան Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը, ներառյալ նաև Նախիջևանի ու Սուրմալուի գավառները: Թեմի առաջնորդամիստը Երևանն էր, սակայն այն ուներ նաև առաջնորդական փոխանորդների կողմից կառավարվող վարչատարածքային միավորներ (վիճակներ) Ալեքսանդրապոլում, Նախիջևանում (Հիմ Նախիջևան), Տաթևում, ավելի ուշ՝ Կարսում: Ռուսական կայսրության կործանումից և Հայաստանի առաջին համապետության կարճատև գոյությունից հետո (1918-20թթ.) խորհրդային առաջին տարիներին Հայ եկեղեցին ծանր հարված կրեց, փաստորեն նրանցից խլվեցին բոլոր եկեղեցիները, հոգևորականությունը իրավաբանորեն անգործ դրվեց: Հաղբատի և Սանահինի մասն պատմական փառավոր անցյալ ունեցող վանքերը ամայացան, զրկվեցին հոգևորականներից, իսկ վանական համալիրները համարվեցին սոսկ «ճարտարապետական հուշարձաններ»: Այնուամենայնիվ «հուշարձան» քնորոշումը առաջին շրջանում եկեղեցիները փրկեց կործանումից, իսկ հետագա տասնամյակներին առիթ տվեց վանքերում որոշ նորոգչական, բարեկարգման աշխատանքներ տանելու համար:

1990 թ. Գերագույն Հոգևոր խորհուրդը որոշում կայացրեց Գուգարաց թեմի ստեղծման մասին և մախապատրաստական գործերի վերաբերյալ հանձնարարություն տրվեց Արսեն արքեպս. Բերբերյանին, իսկ 1992-ի վազգեն Ա Կաթողիկոսի կոնդակով հաստատվեց Գուգարաց թեմը՝ ընդգրկելով Հայաստանի հյուսիսային շրջանը: Թեմակալ առաջնորդ նշանակվեց Արսեն արքեպս. Բերբերյանը, որը հաստատվել էր Դիլիջանում:

Հայաստանի անկախացումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինը 1996 թ. մայիսի 30-ի պաշտոնագրով վերափոխեց Հայաստանի ներքին թեմական կառուցվածքը, այն համապատասխանեցնելով երկրի նոր վարչական (մարզային) բաժանմանը և ելնելով պատմական մախաղոյալներից նախկին չորսի փոխարեն ստեղծվեց 8 թեմ, որոնցից մեկն էլ Գուգարաց թեմը՝ ներառնելով ՀՀ Լոռիի և Տավուշի մարզերը: Թեմի առաջնորդ է նշանակվում Սեպուհ վրդ. Չուլջյանը, որը մեկ տարի անց՝ 1997-ի հունիսի 15-ին, Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվում է եպիսկոպոս: Թեմի այժմյան առաջնորդարանը գտնվում է Վանաձոր քաղաքում՝ Ս. Աստվածածին եկեղեցու հարևանությամբ:

Գործունեության համեմատաբար կարճ ժամկետում Գուգարաց թեմն արձանագրել է զգալի ձեռքբերումներ: Այժմ թեմի տարածքում գործում է հինգ եկեղեցի՝ Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ, Իջևան, Նոյեմբերյան քաղաքներում, մեկ վանք՝ Հաղարծինը (թեմի գործունեության մասին հանգամանորեն տե՛ս Ամփոփ տեղեկագիր Գուգարաց թեմի գործունեության, Վանաձոր, 1997): Առաջիկայում գործող կղառման և մի քանի եկեղեցի, ինչպես նաև թեմի մախկին՝ ավանդական և փառավոր կենտրոնը՝ Հաղբատի վանքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաղբատի եպիսկոպոսությունը Սյունիքի, Բջնիի և Արտազի եպիսկոպոսական Աթոռների հետ միջնադարում առանձնահատուկ դեր է ունեցել, քանի որ առանց նրանցից մեկի համաձայնության անհնար էր Ամենայն Հայոց Կաթողիկոսների ընտրությունը (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Պետրոս, 1997):

1959, էջ 1354, Լ. Խաչիկյան, Արտագի հայկական իշխանությունը և Մործորի դպրոցը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 11, 1973, էջ 136):

Միջնադարում Հաղբատի վանքի կառարած դերի և վայելած մեծ հեղինակության մասին տե՛ս Աս. Մնացականյան, Սանահին և Հաղպատ մենաստանների մշակութային կյանքի պատմությունից, «Էջմիածին», 1968, 1968, 2, էջ 21-30, Կ.Ղաֆադարյան, Հաղբատ, ճարտարապետական կառուցվածքը և փխական արձանագրությունները, Երևան, 1963, Ա. Մաթևոսյան, Հաղբատի գրչության կենտրոնը, «Էջմիածին», 1971, Ե, էջ 44-49, և այլն:

2. Հրովարտական մշված տարածքները Սմբատը Սանահինի եպիսկոպոսությանն է հանձնել եկեղեցական վերահսկողության և ամփջական Ռոգևոր ենթակայության առումով և ոչ որպես սեփականություն՝ «հայրենիք», ինչպես կարծել են ոմանք: Այս տեսակետն իրավացիորեն մերժելով Ռ. Մաթևոսյանը հրովարտակի առնչությամբ գուգահեռ է անցկացնում եվրոպական իրականության հետ «մասնավոր եկեղեցիների իմստիտուտի», «աշխարհական վերատեսուչների» առնչությամբ, որ մեզ համոզիչ չի թվում (Ռ. Մաթևոսյան, Տաշիր-Ձորագետ, Երևան, 1982, էջ 124-126):

Սմբատի հրովարտակի առնչությամբ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել նաև Գ. Հովսեփյանի մշումը՝ «Վառնականությունը ստուգելի» (Գ. Հովսեփյան, Յիշատակարանը ձեռագրաց, Բ. Ա. Ամթոյիս, 1951, էջ 138):

3. Մինչև Կյուրիկե Ա, այս թագավորության գահակալները (Գուրգենն ու Դավիթ Ամհողիները) թաղվել են Սանահինում, իսկ Կյուրիկեից սկսած՝ Հաղբատում: Պատմության մեջ այս երկու վանքերը սովորաբար ոչ միայն խաղաղ գոյակցել, այլև սերտորեն գործակցել են: Հաղբատի առաջին վանահայր Սիմեոնը Սանահինի միաբան էր: Սանահինում քիչ չեն հաղբատեցի Ռոգևորական վկիրատուների, Հաղբատում՝ սանահինեցիների հիշատակությունները: Միակ հայտնի գծությունն առաջացել է Հաղբատի Հովհաննես Բ վանահոր կողմից Սանահինի և Հաղբատի միջև գտնվող բարձունքի վրա բերդի կառուցման պատճառով, որ սանահինեցիներն իրենց հողն են համարել, հաղբատեցիներն՝ իրենցը: Ի վերջո բերդի պարիսպներն ավերվել են (Գանձակեցի, էջ 99):

4. Կ. Գանձակեցին Հաղբատի առաջին եպիսկոպոս Սարգսի ձեռնադրության մասին գրելուց հետո ավելացնում է. «Եւ յետ Սարգսի եղև եպիսկոպոս Գեորգ, և յետ մորա Բարսեղն» (Գանձակեցի, էջ 98): Քանի որ Գեորգի անունը հիշվում է նաև 1158-ին, (իսկ Սարգսից մինչև Բարսեղ այլ եպիսկոպոս չի մշվում), մնում է ենթադրել, որ նա շատ երկարակյաց է եղել:

5. Ուշագրավ է, որ Բարսեղ Ա եպիսկոպոսը արձանագրության մեջ համարվում է «առաջնորդ տանս Հաղբատայ» (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 143): Այսինքն եպիսկոպոսական Աթոռն ունեցել է քաղաքական կառույցին հատուկ անվանում (տոմ), հմտ. «...ժառանգորդաց տանս Հաղբատայ» (Ե-ԺԲ, 287):

Բարսեղի մասին Գանձակեցին գրում է. «Սա էր այդ գեղեցիկ տեսլեամբ, գսա տեսեալ թագուհին Վրաց Թամարն, մեծապես պատուեց գնա վասն վայելչութեան գեղոյ մորա, զի և եղբարք մորա գործակալք էին տանն արքունի» (Գանձակեցի, 1961, 98): Բարսեղի և մորա օրոք Հաղբատի ծաղկման մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Սարգիս գրիչը 1173 թ. հիշատակարանում (Ե-ԺԲ, 207):

6. Հաղբատի Գրիգորիս (Դոփյան) եպիսկոպոսը մտել է Հայ եկեղեցու պատմության մեջ որպես պառլամենտականության և ամհանդուրժողականության խորհրդանիշ: Խոսքը վերաբերում է Լոռիի եկեղեցական ժողովին հետո Հաղբատի ճանապարհին կատարված դեպքին, որը սակայն սխալմամբ կապվել է

Գրիգոր Տուտեորդու անվան հետ (Օրմանյան, Ազգապատում, էջ 1578, Եզգիկ ծ. վրդ. Պետրոսյան, Հայ Եկեղեցու պատմություն, Ս. Էջմիածին, 1995, էջ 152): Իրականում Տուտեորդին Լոռիի ժողովի ժամանակ հավանաբար արդեն մահացել էր, իսկ Հաղբատի միջադեպի նախաձեռնողը Ջաքարյանների քույր Դոփի որդի Գրիգորիս եպիսկոպոսն էր (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 30, Բ. Ուլուքարյան, Խայենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975, էջ 167-168):

7. Հովհաննես Դ-ից սկսած մինչև Ջաքարե, Հաղբատի եպիսկոպոսների հերթականությունը դժվար է որոշել, որովհետև նրանց նույն անունն են կրել: Կ. Ղաֆադարյանը նշում է՝ «Յովհաննես եպիսկոպոս (հայր), (հավանաբար մի քանիսը միմյանց հաջորդող)» (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 276), որից հետո թվարկում է հիշատակության թվականներն ըստ արձանագրությունների՝ 1258-ից մինչև 1288, ապա նշում ևս մեկ Հովհաննես՝ 1297 թ.: 1258-ից մինչև 1297 նույնանուն առաջնորդների թիվը որոշելն առայժմ անկա տվյալներով անհնար է, ուստի մենք պայմանական բաժանում ենք կատարել նշելով Հովհաննես Դ 1258-1274 թթ. և Հովհաննես Ե - 1278-295 թթ.: Հիշատակարանները որոշ լրացուցիչ տեղեկություններ են տալիս. 1261-ին Հաղբատի Հովհաննես առաջնորդն անվանվում է «մեծապատիւ արհիեպիսկոպոս», հիշվում է նաև նրա եղբորորդի Սարգիս քահանան (Ե-ԺԲ, էջ 310): 1265-ի հիշատակարանում նշվող Հովհաննեսը կրկին արքեպիսկոպոս է (Ե-ԺԲ, էջ 333): Իսկ 1278 թ. արձանագրության մեջ, իր Միթլասան եղբորորդու արձանագրության մեջ հիշվող, մեր կարծիքով՝ հաջորդ Հովհաննեսը, կոչվում է «եպիսկոպոս» (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 159):

Հաղբատում բազմաթիվ են նաև Հովհաննես առաջնորդի հիշատակմամբ ԺԳ դարի անթվական արձանագրությունները:

8. Կ. Ղաֆադարյանը, որպես Կիրակոս Վիրապեցուն ընտրող Էջմիածնի 1441 թ. ժողովի մասնակից, նշում է Գրիգոր վարդապետին՝ օգտվելով մանր ժամանակագրություններում առկա ոչ ամբողջական տեղեկությունից (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 276): Մինչդեռ ժողովի մասին համազամանորեն պատմող Թովմա Մեծոփեցին Հաղբատից ժողովին մասնակցած Գրիգոր վարդապետից բացի նշում է նաև առաջնորդ Մարտիրոսին: Պատմիչը սկզբում նշում է ժողովական վարդապետներին՝ ակնարկելով նաև, որ նույն վառքից եկել է եպիսկոպոս. «...այս են ժողովեալ վարդապետք և եպիսկոպոսք... Ստեփանոս վարդապետ ի տանէմ Սիւնեաց..., Գրիգոր վարդապետ, և եպիսկոպոս՝ ի սուրբ առաքելոյն Թադէան, և միւս Գրիգոր վարդապետ, և եպիսկոպոս՝ ի հոշակաւոր ուխտէմ Հաղբատու...», ապա շարունակելով հասնում է եպիսկոպոսների թվարկմանը՝ «...և երկուտասան եպիսկոպոս աստի և անտի... տէր Մարտիրոս Հաղբատու..., տէր Ստեփանոս տեղապահ Սիւնեաց Աթոռոյն» և այլն (Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, Թիֆլիս, 1892, էջ 51-52):

9. Ղուկասի անվան հիշատակությամբ երկու մատյաններն էլ գրվել են Տիդիխում, Էջմիածնում Ջաքարիա Աղթամարցու աթոռակալության ժամանակ՝ «ի հայրապետութեան տեառն Ջաքարիայ Կաթողիկոսի և յառաջնորդութեան տէր Ղուկաս Հաղբատայ արհեպիսկոպոսի» (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Երևան, 1958, էջ 169, 195): Ղուկասի անունն առաջին անգամ հիշվում է Հաղբատում գրված 1458 թ. հիշատակարանում, ուր գրիչը նշելով առաջնորդ Աստվածատուր եպիսկոպոսին, այնուհետև ըստ ավագության թվարկում է միաբանների՝ «ի ժամանակս յայս կան բազում կրամատորք և աղաթարարք՝ տէր Ղուկաս, տէր Աստուածատուր...» (Լ. Խայիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, Բ, էջ 98): Հենց նրանցից առաջին

երկու հիշատակվողներն էլ հետագայում հաջորդաբար առաջնորդ դարձան, Ղուկասը՝ սկզբում աթոռակից լինելով Աստվածատուր Ա եպիսկոպոսին:

10. Կ. Ղաֆադարյանի մոտ Աստվածատուր Բ-ի անունը չկա: Նա որպես առաջնորդ հիշատակվում է Արիստակես գրչի Սաճաճիցուն գրած հիշատակարանում, ընդ որում՝ աթոռակից եղբորորդու հետ. «Գրեցաւ... ի կաթողիկոսութեան տէր Արիստակիսի, և յառաջնորդութեան սուրբ ուխտիս (Սաճաճի, Կ. Մ.) տէր Բարսեղի, ի խնդրոյ սրբազան եպիսկոպոսին տէր Աստուածատուր և եղբորորդոյն իւրոյ տէր Յոհաննէս եպիսկոպոսին» տեսուչ և առաջնորդք սուրբ ուխտիս Հաղբատայ մեծի» (Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, Երևան, 1967, էջ 452): Իսկ առաջին անգամ Աստվածատուրը հիշատակվում է 1458-ին (տե՛ս նախորդ ծանոթագրությունը):

11. Կ. Ղաֆադարյանը Պետրոսի, Սարգսի և Փիլիպոսի անունները հաջորդաբար դրել է առաջնորդների ցուցակում՝ հիմք ընդունելով Հաղբատի մեկնական արձանագրությունները: Առաջինը տապաճաքարի վրա է. «Այս է հանգիստ Պետրոս Հայրապետի, թվին ԶԽ» (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 235): Այս տապաճաքարի կողքին կա մեկ ուրիշը՝ «Կիրակոս եպիսկոպոս տեղոյս, թվին ՌՀՀ» (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 235), որը, բնական է, կասկած չի թողնում Կիրակոսի՝ Հաղբատի եպիսկոպոս լինելու հարցում: Սարգիս վարդապետի արձանագրությունը վերաբերում է մի խաչքարի կանգնեցմանը, իսկ Փիլիպոսի տապաճաքարի վրա վկայված է միայն նրա Առնցեցի արքեպիսկոպոս լինելը: Մենք այս երեք անունները պահպանում ենք ցանկում, թեև հիմնավորապես հաստատված չենք համարում նրանց Հաղբատի առաջնորդ եղած լինելը:

12. Կ. Ղաֆադարյանի մոտ մշված է միայն Կիրակոսի տապաճագիրը, սակայն նրա անվանը հանդիպում ենք մաև երկու հիշատակարաններում: Առաջինը 1624 թվականից է, վերաբերում է մի Ավետարանի կազմմանը, որը կատարվել է. «Զհայրապետութեանն սբ. Աթոռոյն Հայսպատայ Կիրակոս արհեպիսկոպոսին» (Վ. Հակոբյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Երևան, 1978, էջ 142), իսկ երկրորդը գրվել է 1631-ին, Ախալզորում, ուր գրիչ Գրիգոր քահանա հիշում է. «եպիսկոպոսին մերոյ տէր Կիրակոսին, որ է սպասատր աթր և ուղղալիատ Հախքաթայ Ս. Նշանին...» (Վ. Հակոբյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Բ. Բ, Երևան, 1978, էջ 141): Սակայն ինչպես տապաճագրի արձանագրությունն է վկայում, Կիրակոսը մահացել է 1629թ.՝ «Կիրակոս եպիսկոպոս տեղոյս, թվին ՌՀՀ» (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 235): Մնում է ենթադրել, որ կա՛մ հիշատակարանի թվականն է սխալ, կա՛մ ձեռագրի գրության սկիզբը եղել է մինչև Կիրակոսի մահը, այդ պատճառով էլ մշված է նրա անունը: Չի բացառվում նաև, որ 1629-ին մահացած Կիրակոսին հաջորդել է նույնանուն եպիսկոպոս, որն էլ հիշատակված է Գրիգոր քահանայի հիշատակարանում:

13. Կ. Ղաֆադարյանի ցուցակում Կիրակոսին հաջորդում է Ավետիսը, որ հիշվում է 1651 թ. արձանագրության մեջ, մինչդեռ 1641 և 1648 թթ. երկու հիշատակարաններ վկայում են Բարսեղի՝ Հաղբատի եպիսկոպոս լինելը (Վ. Հակոբյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Բ. Բ, Երևան, 1984, էջ 28, 710): Իսկ 1655 թ. մի արձանագրություն ներկայացնում է երկու եպիսկոպոսների. «Թառաջնորդութեան Թովանի որդի Բարսեղ եպիսկոպոսի, Աւետիս եպիսկոպոսի» (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 224-225): Այսինքն Ավետիսն է, որ հետո միացել է Բարսեղին: Ավետիսի անունը Կ. Ղաֆադարյանը գրել է երկու անգամ՝ երկրորդ դեպքում իրավագիտորեն կասկածելով, որ գուցե նախորդն է (Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 276):

ՌՈՒԲԵՆ ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՂԵԼ Է ՆԱԵՎ ԽԵՐՈՒՄՅԱՆ ՄԵԼԻՔԱԿԱՆ ՏՈՀՄ

Կիրանցի անտառապատ ձորը հարուստ է պատմա-մշակութային հուշարժան-ներով, որոնք հիմնականում վերաբերում են 12-14-րդ դարերին՝ մահկանաբերյացի Արծրունիների և վրաց արքունիքում առաջնային դիրքերի հասած Զախարյան պալազատների տիրապետության ժամանակներին: Փաստական նյութերը հիմք են տալիս ասելու, որ թաթար-մոնղոլական ավերիչ արշավանքներից և երկրամասը 16-րդ դարի կեսից թուրքական ցեղերով բնակեցվելուց հետո էլ, ճիշտ է ոչ նախկին շուքով ու գորությամբ, հայոց կյանքն այստեղ եղել է շարունակական, անգամ գավառին իշխել է մելիքական մի տոհմ, որը ցայսօր մոռացված է հայ պատմագիտության կողմից:

Մեզանում հայտնի հնավայր է Կիրանցի ձորի երբեմնի պարծաճ Էյն Կունեն գյուղը, որն այժմ գտնվում է Տալուշի մարզի Անարկուտ գյուղի վարչական տարածքում: Այստեղ կան 13-18-րդ դարերին վերաբերող բնակելի տներ, իշխանական պալատների ավերակներ, եկեղեցիներ, անխափան գործող ջրանց, կամուրջ, խաչարքեր և ճոխ զարդանախշեր ունեցող տապանաքարերով գերեզմանոց: Կիրանց գետի աջ ափին, Մելանց տան ձորի ջուր կամ Տամար կոչվող վտակի միախառնման սուր անկյունում, որը բնական բարձունք է, նաև այժմ վթարային վիճակում կանգուն է ոչ մեծ չափերի, թաղակապ, անմշակ քարերով կերտված ձեփաթափ պատներով, կամարակապ Սուրբ Աստվածածին եկեղեցին: Միմյուրյան մուտքի նակատակալ սալ քարին այսօր էլ հիմք տողի մեջ հատակորեն ընթերցվում է. «*Ի քվի՞ն Ռժի (1675): Ես՝ Մելիք Շահնազարս, որդի Մելիք Ասլամազին, ասկէ՛ն խէրումէ, ամուսին իմ խանգատէն շինեցի՛նք Սուրբ Աստուածածին: Զակատակալ քարի ծախակողմյան ճեղ լեզվակին գրված է. «Ձեռամբս Ծակորի»: Վերջինս հավանաբար եկեղեցին կառուցող վարպետն է:*

Այս վիմագիր արձանագրությունը լավ հայտնի է հղել 1914 թվականին լույս տեսած «Նյութեր հայ մելիքության մասին» աշխատության հեղինակ Կարապետ Խախկոպոս Շահնազարյանին: Նա տեղյակ է հղել նաև Հաղարծնի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հարավային արտաքին պատին փորագրված արձանագրությանը, ուր ասված է. թե «*Ի քվին հայոց Ռժ-ին (1651)», րիփլիզեցին Հոգիջանի որդիները պարսից Շահ-Սուլեյմանի բազավորության (1666-1694 թթ.), Գրլ-գոր իշխանի պարոնության, պարոն Շահնազարի մելիքության և Հակոբ Զուղայեցի Կաթուկիկոսի հայրապետության (1655-1680 թթ.) ժամանակ իրենց միջոցներով նորոգել են Աղստևի հովտում գտնվող այս սրբատունը: Կարապետ Խախկոպոսը հատուկ ուշադրություն է դարձրել Հին Կունենի և Հաղարծնի եկեղեցիներին արձանագրություններում առկա, միմյանց ժամանակակից (1651 և 1675 թվականներ) Մելիք Շահնազարներին: Սխալ ռոտագործելով թվագրերը, նա միաժամանակ նույնացրել է երկու Մելիք Շահնազարներին՝ նրան համարելով Գեղարքունիքի Մագրա գյուղից սերված մելիքական տոհմի շառավիղ: Այս խնդիրը չի վերաբերում նաև «Գիվան հայ վիմագրության» (սյրակ 6-րդ) հեղինակներ Ս. Ավագյանի և Հո. Զանգուլդյանի ուշադրությունից: Նրանք Հին Կունենի Աստվածածին եկեղեցու արձանագրության կապակցությամբ ասում են. «Բնագրում հիշատակված*

շինարար ամուսինների՝ Մելիք Ասլամազլի որդի Մելիք Շահնազարի և իր կին Խանգառնի մասին դժվար է որևէ հավաստի կարծիք հայտնել՝ նախ այն պատճառով, որ այլ աղբյուրներից նրանք հայտնի չեն և ապա՝ այդ շրջաններում Մելիք-Շահնազարյանների գոյությունը անհավանական է, քանի որ աղբյուրներից հայտնի է, որ նրանց ծառանգական տիրույթները գտնվում են Գեղարքունիքում...: Սակայն Մելիք Շահնազարի մելիքության հիշատակությունները կուցենի ձորից ոչ այնքան հեռու ընկած Հաղարծնի վանքի համարյա նույն տարիների արձանագրության մեջ գալիս է ամրապնդելու այն վարկածը, որ Մելիք-Շահնազարյանների սերունդներից մեկը տիրույթներ է ունեցել նաև Գեղարքունիքի սահմաններից դուրս, Առանա լճից հյուսիս-արևմուտք ընկած այս գավառներում...: Մենք միանգամայն անվիճելի ենք համարում Մելիք Շահնազարի իշխանությունը հայտնող՝ հետազայից թողնելով այն հարցը, թե Մելիք Շահնազարը ինչ ազգակցական կապեր է ունեցել Մազրալի համանուն մելիքական գերդաստանի հետ»: Կարելի է վստահորեն ասել՝ ոչ մի կապ, իսկ անուցները պատահական զուգահեռություն են:

Բայց այն է, որ Աստվածածին եկեղեցու ոչ խրթին արձանագրությունը թերի է ըմբռնվել, իսկ հնավայրը վատ է ուսումնասիրվել և այդ պատճառով անուշադրության է մատնվել ամենակարևորը: Զե՞ որ քարեգործ գավառագետը չի ասում, թե ինքը Մելիք-Շահնազարյան մելիքական գերդաստանից է, այլ Մելիք Ասլամազլի որդին է. Մելիք Շահնազարը, այն էլ՝ «ԱՍԿԵՆ ԽԵՐՈՒՄԷ»: Հայտնի է, որ մինչև այժմ էլ Հայաստանի հյուսիս-արևելքի գյուղերում մեկի ո՛ր ընտանիքից, տոհմից կամ գերդաստանից լինելն իմանալու համար հարցնում են՝ ո՞ր ազգից ես, որովհետև վերջինս փոխարինող հոմանիշ է նախորդ բառերին: Իսկ «ազգ» բառի փոխարեն այս կողմերի խոսակցական լեզվում սգազգործվում է քարքառային *ասկ* ձևը, ինչպես Մելիք Շահնազարի օրերում: Բացի այդ կիրանցի ձորի գավառագետը նաև հայտնում է, որ ինքը «*ԽԷՐՈՒՄԷ*» ազգից (տոհմից, գերդաստանից) է: Ուրեմն Մելիք-Շահնազարյան չէ, այլ Խերումյան: Դժբախտաբար նախորդ ուսումնասիրողները տեղյակ չեն եղել, որ Հին կուցեն գյուղում Մելիք Շահնազարի կառուցած Աստվածածին եկեղեցուց մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա պահպանվել են ոչ միայն «մշակված անարձանագիր տապանաքարեր», ինչպես հայտնում են «Դիվան հայ վիմագրության» հեղինակները, այլև ճոխ զարդարված արձանագիր տապանաքարեր և վիմագիր խաչքարեր, որոնց մի մասը՝ դեռ հենում ջարդված: Գուցե դրանք պատկանել են Աղստևի և Կիրանցի ձորերին 16-18-րդ դարերին իշխած տոհմի գավակներին: Սակայն դրանցից մեկը՝ խաչատուր կազմողի (ֆարագործի) կենցաղային հարուստ պատկերներով կերտված օրորոցաձև տապանաքարը, վկայում է, որ Մելիք Ասլամազլի ունեցել է *ԱՄԼՐԱՄ* անունով երկրորդ որդի, հետևաբար Մելիք Շահնազարը՝ եղբայրը, մահկանացուն կնքել է 1674 թվականին, հավանաբար Ս. Աստվածածին եկեղեցին կառուցելու ընթացքում: (Վերջերս Մելիք Բահրամի տապանաքարի արձանագրությունն ընթերցվեց Հայաստանի ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից, որի կազմում էին պատմական գիտությունների դոկտոր Արամ Քալանթարյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Հուսիկ Մելիքյանը և Գագիկ Սարգսյանը): Սակայն նյութական փաստերը խոսում են այն մասին, որ ԽԵՐՈՒՄԵԱՆ մելիքական տոհմը հին ծագում ունի, գուցեև Բագրատունիների կամ Զաքարյանների շառավիղն է եղել: Այդ է վկայում գերեզմանոցի կենտրոնում հայոց ՌԺԹ (1570) թվականին մահացած *ՄԵԼԻՔ ԱՂԱՅԻ* ճոխ հարթաձև եկեղեցու զարդարված օրորոցաձև տապանաքարը: Գերեզմանաքարի

հյուսիսային երեսին ԱՂԱ կոչված մելիքն է, ձախ ձեռքին՝ հրացան, աջին՝ զինանշան, աղավառն հեշտոտող արծիվ։ Տապանաբարի վերին ձախ անկյունում իշխանուհին է, որի առջևում նախշկեմ սփռոցով րացված սուփրա է։ Կինը սպասում է ամուսնունջ ոչ միայն ուտեստով, այլև նետերով լի կապարեով, որի պատրաստումը երևի կանացի պարտականություն է եղել։ Սակայն բոլորից հետաքրքիրը տիկնոջ ձախ կողմում դրված տորքն է՝ գորգագործական հաստոցը։ Շնորհալի ֆարագործ վարպետը կիսավարտ գորգը ներկայացրել է այնպես, որ հստակ երևում են ոչ միայն հենքի թելերը, այլև գործված մասի նախշազարդերը։ Ուրեմն Կիրանցի ձորը հանդիսացել է հայ գորգագործության հնագույն կենտրոններից մեկը, որի ավանդույթները հիմա էլ շարունակում են Տավուշի մարզի ինքնուս վարպետուհիները (անցած դարում Այսրկովկասում եղել է ասացվածք. «Եթե ուզում ես ընտանիք կոռոջ վաստակով ապրի, ամուսնացիր Աջաջրեցի գորգագործ աղջկա հետ»)։ Սակայն դառնա՞մ տապանաբարի բովանդակությամբ։ Պատկերների կենտրոնում չորս տարբեր հասակի տղամարդիկ են, հավանաբար Մելիք Ազալի որդիները, որոնք շարունակել են խերումյան մելիքական տոհմը։ Հարթաֆանդակների շարքն ավարտվում է ներքևի աջ և ձախ անկյունների կազմ ու պատրաստ նախապարի ելնելու սպասող ձիերի պատկերներով, որոնց սանձերը բռնած ունեն հավատարիմ ծառաները։ Հավանաբար Մելիք Ազան եղել է Մելիք Ասլամազի հայրը։ Իսկ Սուրբ Աստվածածին եկեղեցու արձանագրություններից արդեն հայտնի է, որ այն կառուցող Մելիք Շահնազար խերումյանը եղել է Ասլամազի որդին։ Հավանաբար Մելիք Շահնազարը եղել է նրանցից մեկը, որոնց 17-րդ դարի սկզբին պարսից շահը Շահ-Աբաս Առաջինը, ըստ պատմիչ Առաֆել Դավրիժեցու վկայության, *մեղիք* անունով վերակացուցեց է կարգել գավառների հայերի վրա, որպեսզի «ուրիշ երկրից եկվոր և հավաքածու» մարդկանց ղեկն Պարսկաստանի խորքը։ Միով բանիվ, հայոց պատմության մեջ եղել է նաև խՆՐՈՒՄՅԱՆ մելիքական տոհմ, որի երևելի ներկայացուցչին իմացել և հարգանքով իրենց արձանագրության մեջ հիշատակել են Հաղարծնի Սուրբ Ստեփանոս եկեղեցին նորոգող «թիփլիզեցիները»։ Գուցե այդ տոհմը տիրել է նաև Աղստևի հովտին։

Որ Հին Կուսեն գյուղը եղել է մելիքության նստավայր, իմացել են նրա գավառները՝ մերօրյա Կիրանց գյուղի բնակիչները։ Նրանցից լավատեղյակ տարեցները հիմա էլ կարող են Արգելիկուտ անվանվող քաղաքում ցույց տալ մելիքների դաստակերտի հիմքերը, մելիքական գյուղաֆառաքի բարձունքներից թռած թաղամասերը, որոնք իրար միացված են եղել ձորակների վրա աղեղված ֆարե կամուրջներով։ Մարդիկ մինչև այժմ էլ Կիրանց գետի աջակողմյան վտակը կոչում են Մելիքանց տան ձորի ջուր։ Իսկ խերումյան մելիքներին պատկանած կալվածներից մեկում անցած դարասկզբին ստեղծված բնակավայրը կոչվել է Մելիք գյուղ (այժմ՝ Մաղկավան)։ Նաև պատմում են, թե Կովկասի լեռնականների առաջնորդ Շամիլի դեմ կռիվների ժամանակ, որին մասնակցել են հայոց հյուսիս-արևելյան գավառների ոչ ֆիչ թվով զինվորներ, երկու կուսենցի զինվորներ գիշերում են գրավված ավարական մի առուում։ Տան պառավը, 115 տարեկան մի կին, որ կերակրում էր ջահել հյուրերին, լսելով նրանց զրույցը, հանկարծ սկսում է խոսել տղաների բարբառով։ Իսկ երբ իմանում է, որ Կուսեն գյուղից են, համբուրում է ջահել հյուրերին, գուրգուրում հարազատի պես ու դառնադի արտասվում։ Ապա պատմում է, որ ինքը Կուսենի վերջին մելիքի աղջկն է՝ լեռնականներից գերի ընկած տառը կամ տասնմեկ տարեկան հասակում։ Նա նաև հայտնում է տոհմական գանձերի թափսոցի տեղը։ Սա ավանդազրույց է, իսկ Հին

Կունենի մելիփությանը, որը մտնում էր պարսից թագավորության Արևելյան Վրաստանի վալիության (փոխարքայության) մեջ, 18-րդ դարում, հատկապես նրա առաջին կեսին, ծանր հարվածներ են կասցեում Դադստանի լեռնականները, որոնք ձգտում էին այստեղով անցնող ամենակարգ մանապարհով դուրս գալ Լուվա սարահարթ և միանալ Զավախում մտած թուրքերին: 1700-ական թվականներին ամայացած բազմաթիվ բնակավայրերի փլատակները վկաներն են այն եղերական տարիների, երբ փրկված հայերը բռնել են տեղահանության ու գաղթի ճամփաները՝ հասնելով Ռուսաստանի հարավում մոր եիմոված ֆաղաֆներ՝ Ղզլար, Մոզդուկ, Գեորգիևսկ, Աբմավիր: Ըստ Խաչատուր Աբովյանի վկայության, հենց 18-րդ դարի սկզբին, հեղվելով լեզգիների չղադարող ասպատակություններից, իր ազնվական, հնարավոր է՝ Մելիք Աբով մախապալը, գալով Հայաստանի եյուսիսից, Քանախում բնակվելու իրավունք է խնդրել Երևանի սարդարից և դրական պատասխան ստացել: Գուցե այդ տեղում ևս տեղափոխվել է հենց Սյրանցի ծոթից, որովհետև Հին Կունենի հարևանությամբ կա Աբով ավերակ գյուղ և Աբով սար: Կան նաև Լեզգու փար, Լեզգու կածան, Լեզգու ծոր, Զաչանի (Զեչենի) գոմեր հանդամասերը՝ նորից վկաներ անցած ժամանակներին:

Իսկ պատմական Կանգար, Կուլբոփոր գավառներին իշխած մելիփական տոհմը հավանաբար իսպառ վերացել է պարսից Աղա Մահմադ-խանի 1795 թվականի ավերիչ արշավանքից հետո, որովհետև 1772 թվականին շարադրված «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» գրքի հեղինակները Մեծ Հայքի Գուգարք աշխարհում իրենց ապրած ժամանակաշրջանում իմացել են Կանգարք գավառ, «որ ունի գեամանուն իւր ֆաղաֆ ի երևսիսյ Գրիմայ և զլեռն Մթին» առ Կուր գետով»: Եվ ըստ նրանց ներկայացրած ֆարսեզի՝ Կանգարքը համընկնում է Կիրանց, Ոսկեպար և Աղստև գետերի միջին և վերին հոսանքներն ընդգրկող տարածքներին: Եվ այժմ հատուկ ուշադրություն և հոգատար վերաբերմունք է հայցում Հին Կունենի գերեզմանոցը, որի շիրմաքարերը մանրակրկիտ ուսումնասիրման կարիք են զգում, իսկ ընթերցվածներն արդեն սկզբնաղբյուր են Աստվածածին եկեղեցու արձանագրության հետ պնդելու, որ 16-րդ դարից այստեղ իշխել է Խերումյան մելիփական տոհմը: Ի դեպ, հնավայրում թաղումներ կատարվում են նաև այսօր, ուրեմն *գերեզմանոցը շարունակում է գործել ճինգ դար*, որն ինքնին եզակի երևույթ է մեզանում: Սակայն դա ունի նաև իր անցանկալի դրսևորումը՝ իրն գերեզմաններն ավերվում են: Ուստի անհրաժեշտ է շտապ մասնագիտական ուսումնասիրության հեթարկել հնավայրի վիմագիր և ոչ վիմագիր խաչաքարերն ու նոյս գարդարված տապանաքարերը, գերեզմանոցը ցանկապատել, դադարեցնել թաղումները՝ պահելով պատմական շերտը:

ՀՐԱՇԱ ՄԻՐՁՈՅԱԼ

*Փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ԻՆՔՆԱԼՐԱՅՈՒՄ**ԿԱՄ****ՄԵԿ ՆԿԱՐԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ**

Համոզված եմ, որ «Էջմիածնյա» ընթերցողներին քաջ հայտնի է 17-րդ դարի ականավոր պատմագիր Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» կոթողային երկի բացառիկ կարևորությունը եվրոպական դարի ոչ միայն հայոց քաղաքական, տնտեսական ու գիտամշակութային կյանքի պատմության, այլև հարևան երկրների (Վրաստան, Իրան, Թուրքիա), մասամբ և եվրոպական առամձին պետությունների (Նիսաստան, Հոլանդիա և այլն) պատմական այլևայլ իրողությունների ուսումնասիրման ու լուսաբանման գործում: Այն հազվագյուտ աղբյուր է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության պատմությանը և հատկապես դարասկզբի ծայրաստիճան ամկյալ, ապա դարակեսի ծաղկյալ վիճակին ծանոթանալու համար: Վերջապես, կա մեկ այլ հանգամանք, որը էջմիածնական յուրաքանչյուր հոգևորականի պարտավորեցնում է իմանալ նրա հետ կապված ամեն մի մանրուք. չէ՞ որ այդ երկի թե՛ հղացման, թե՛ իրագործման և թե՛ շուտափույթ տպագրության պատվին ամենայն իրավամբ պատկանում է հենց Էջմիածնի միաբանությանը՝ հանձնա ժամանակի երջանկահիշատակ կաթողիկոսներ Փիլիպոս Աղբակեցու և Հակոբ Ջուղայեցու, բացառիկ հայրենասեր պատմագիր Առաքել վարդապետ Դավրիժեցու և հայ տպագրության ու մշակույթի մեծ ռաեվիրա Ոսկան Երևանցու: Գուցե սխալվում եմ, բայց ինձ թվում է, որ Դավրիժեցու պատմությունը հենց այստեղ հղացված ու իրականացված գրական ամենամեծ հուշարձաններից է, եթե ոչ ամենամեծը, որի հեղինակությունը ժամանակի հուրվույթում ոչ միայն չի մկազում, այլև գնալով ավելի է մեծանում ու տարածվում: Եվ բնավ պատահական չէ, որ նրա հանդեպ ընդգծված հետաքրքրությունն են դրսևորել ոչ միայն ժամանակակիցները, այլև հետագա սերունդները, ոչ միայն հայրենակիցները, այլև օտարները: Պատահական չէ և այն իրողությունը, որ թեև մինչև 17-րդ դարի 60-ական թվականները տպագրվել էին ութ տասնյակից ավելի հայերեն գրքեր, բայց դրանց մեջ չկար պատմագիտական (յիմի հայրենական, թե օտար) և ոչ մի գիրք, բացի կաթոլիկ միսիոներ Կղեմես Գալանտսի հակահայկական ոգով գրված քազմամասնյա հայերեն-լատիներեն ստվարածավալ աշխատությունից, որը, սակայն, լույս էր տեսել ոչ թե հայ տպագրիչների, այլ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու օանքերով: Փաստորեն Դավրիժեցին առաջինն է արժանացել հայ տպագրիչների ուշադրությանը, ինչպես նաև առաջին պատմագիրն է, որ կենդանության ժամանակ տպագրված տնտսվ տարիների իս տքնանքի ու տառապանքի աղբյուրներ:

Հարկավ, ես ոչ մի մտադրություն չունեմ դուզմ-ինչ մանկացնելու անցյալի մեր մյուս պատմիչների անմահ երկերի արժեքն ու կարևորությունը, այլ պարզապես ցանկանում եմ ընդգծել ժամանակակիցների կողմից Դավրիժեցու գրքին տրված քաջատիկ նշանակությունը, նրա հետ կապված հալսերն ու սպասումները: Եվ իսկապես, տպագրվելուն պես այն եկավ հաստատելու, որ ժամանակակիցները չէին սխալվել. բանն այն է, որ Դավրիժեցու գիրքն ունեցավ ինչպես սիրողներ ու քաղերականներ, այնպես էլ հակառակորդներ ու թշմամիներ¹: Ըստ այդմ, այն մինչև զրս ունեցել է հայերեն հինգ և ֆրանսերեն, ռուսերեն ու լեհերեն մեկական ամբողջական (ֆրանսերենն և ռուսերենն նաև մասնակի) հրատարակություն, իսկ Վրաստանին վերաբերող հատվածներն ատանձին տպագրվել են թե՛ ֆրանսերեն և թե՛ վրացերեն: Վերջապես, անկարևոր չէ և այն փաստը, որ հայերեն հրատարակություններից երկուսը դեռ անցյալ դարի վերջերին հրակամացվել է Վաղարշապատում (1884, 1896):

Դիշտ է, Դավրիժեցու մասին տարբեր առիթներով ու տարբեր նպատակներով գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ², անգամ իսկ մեծագրական աշխատություն, սակայն սխալ կլինի կարծել, թե ամեն ինչ արված է և այլևս չկան անելու: Ընդհակառակը, իմ կարծիքով, դեռ կան Դավրիժեցու անմահ երկի չուսումնասիրված ու չուսարանված շատ ծայքեր, մութ մնացած հարցեր ու խնդիրներ, որոնք կարատ են համագամակից ուսումնասիրության:

Վաղուց ի վեր զբաղվելով 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի պատմության ուսումնասիրությանը, բազմիցս առիթ եմ ունեցել օգտվելու Դավրիժեցու հայտնած արժանահավատ տեղեկություններից ու պատմական երևույթներից՝ տված սրափ գնահատականներից, իսկ ատանձին դեպքերում փորձել եմ լուսարանել նրա գրքի ստեղծման ու տպագրության հետ կապված որոշ համագամացներ³, արձևորել նրա տեղն ու դերը հայ պատմագրության զանաչառանում⁴, կարևորել նրա նշանակությունը դարի հայ մշակույթի, ի մասնավորի հայ փիլիսոփայական մտքի պատմության ուսումնասիրման գործում⁵:

Ներկա հոդվածում ցանկանում եմ ընթերցողի ուշադրությունը հրավիրել Դավրիժեցու աշխատության ձեռագիր օրինակներում առկա մի մանրանկարի

¹ Մտոպապես հայտնի է, որ լեհահայերի բռնի դավաճանությունն իրականացնող կաթոլիկ քարոզիչները Արեփոս Պիդուի գլխավորությամբ միանգամայն միշտ գնահատելով Դավրիժեցու գրքի խաղալիչ դերը, կտրականապես արգելեցին նրա վաճառքը լեհահայ գաղթօջախներում (տես «Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ Եկեղեցւոյն Հռովմայ: Ժամանակակից յիշատակարանը», Ս.Պետերբուրգ, 1884, էջ 215: Այդ մասին ավելի համագամանքն տես Հ. Ղ. Միրզոյան, Ոսկան Երևանցու իմաստասիրական երկի գործնական արժեքն ու կարևորությունը, «Էջմիածին», 1998, թիվ 7:

² Մատենագիտական մանրամասն ցանկը տես Լ.Ղանեղյան, Առաջել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Խրանի 17-րդ դարի պատմության սկզբնաղբյուր, Եր., 1978. Տես՝ Առաջել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ Լ.Ա. Խանյարեանի, Եր., 1990:

³ Տես Հ. Միրզոյան, Առաջել Դավրիժեցու պատմության առաջին հրատարակության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, թիվ 2:

⁴ Տես Հ. Միրզոյան, Մովսես Խորենացի և Առաջել Դավրիժեցի, «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակը, միջազգային գիտաժողովի դրույթներ» գրքում, Երևան, 1991:

⁵ Տես Հ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի ընդհանուր վերլուծություն, Երևան, 1983:

վրա, որը քաղաքական իր սուր բովանդակության պատճառով դուրս է մնացել Դավրիժեցու գրքի նախորդ բոլոր հրատարակություններից, իսկ վերջինում (Երևան, 1990) թեև գետեղված է, բայց, ինչպես հարկն է, չի մեկնաբանված:

Շուրջ երեք տասնամյակ առաջ Դավրիժեցու աշխատության ոսկանյան հրատարակության (Ամստերդամ, 1669) մասին գրելիք հեղվածիս համար նյութեր հավաքելիս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի երկու ձեռագրում (թիվ 1772 և 1773) հայտնաբերեցի մանուշակագույն թանաքով (համապատասխանաբար՝ մուգ ու բաց երանգով) գրչանկար բոլորածև մի օծապատկեր, որի գալարների վրա՝ սկսած գլխամասից, գրված է «Առաջին Օսման», իսկ այնուհետև՝ մինչև 17-րդ դարի 60-ական թվականների սկզբին դեռ զահակալոդ սուլթան «Մահամատ»-ի անունը ներառյալ, թվով 18 սուլթանի անուն: Ընդ որում սուլթան Մուստաֆայի անունը գրված է երկու անգամ, որովհետև իրականում, ինչպես պատմագիրն է հայտնում, այդ շրջանում թուրքական սուլթանները իսկական խաղալիք էին եմիլներին ձեռքին, և վերջիններս նրան գահ են քաղծրացրել երկու անգամ:

Դրանցից առաջինում (թիվ 1772, էջ 356բ) օձը պատկերված է սուր ժանիքներով և ունի եղջյուրներ: Գրիչն սկզբում ճիշտ չի հաշվարկել զծապատկերի գրելիք տարածքը, ուստի տեսնելով, որ մի քանի անուն դուրս է մնում զծագրից, նորից երկարացրել է օձակնիկի փակված տառը (տես նկար 1): Ընդհակառակը, մյուս ձեռագրում (թիվ 1773, էջ 368բ) գրիչն այնպես է զծագրել, որ բոլոր անունները գրելուց հետո դատարկ է մնացել գրերի մի անբողջ գալար, որտեղ կարելի է ավելացնել բազմաթիվ նոր անուններ: Հավանաբար ցանկացել է հասկացնել, որ դեռ շատ նորանոր սուլթաններ են գալու, բայց դրանք բոլորն էլ լինելու են նույնը, շարունակելու են նախորդների օձային գիծը: Այստեղ օձը առաջինի նման ունի եղջյուրներ, գուրկ է ժանիքներից, բայց դրա փոխարեն բաց երախից դուրս է նետված եռասայր լեզուն (տես նկար 2):

Ինչ խոսք, հայտնաբերելուց հետո որոշեցի անսլայման հրապարակել այն, թեև մտածում էի, որ հագիվ քե դա վիվիայի խորհրդային գրաքննության ամենատեսալից: Հարկավ, այդպես մտածելու լուրջ հիմքեր ունեի, որովհետև դրանից առաջ մի ուրիշ հեղվածի համար երկար չարչիվել էի նույն գրաքննության կողմից: Լրջորեն կշռադատելուց հետո՝ «Թանքեր Երևանի Համալսարանի» հանդեսի այն ժամանակվա պատասխանատու քարտուղար, ներկայումս գլխավոր խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Մադյանի հետ միասին եկանք այն եզրակացություն, որ հնարավոր է մանրանկարը տպագրել առանց մեկնաբանության: Ուստի գրեցի, որ «Մական Երևանցին Դավրիժեցու գրքի առաջին տպագրությունից, հավանաբար տեխնիկական դժվարությունների պատճառով, դուրս է թողել մաս քանկարից քարերի անունների յթելվյալ տախտակը և մի քանի այլ պատկերներ: Հետագա հրատարակություններում դրանք բոլորն էլ վերականգնվել են, բացի մեկից, որը տալիս ենք ստորև» (էջ 193):

Հավատա, սիրելի ընթերցող, դեռ այն ժամանակ քաջ հասկանում էի բերածս պատճառաբանության կեղծությունը, բայց ստիպված էի դիմելու մնաց քայլի: Հետո, երբ զգացի, որ այն վրիպել է ոչ միայն խորհրդային գրաքննության, այլև հեղվածիս ամենաբանիմաց ընթերցողների ուշադրությունից, սկսեցի մտածել հարմար առիթի յեպքում վերաստպագրելու մասին: Անցան տարիներ: 80-ական թվականների վերջին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ներկայիս տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Արևշատյանի համձնարարությամբ տպագրության երաշխավորելով Լ. Ա. Խանլարյանի գիտական բացառիկ բարեխղճությամբ

աշխատասիրած «Գիրք պատմութեանցի» վերջին՝ ակադեմիական հրատարակության ձեռագիրը (Երևան, 1990), բանավոր խմբերի ամպայման գեոեղել մահ հիշյալ նկարը: Նա, իհարկե, խոստացավ և բարեբախտաբար, կարողացել է կատարել իր խոստումը (տես 432 և 433 էջերի միջև գետնոված ներդիրը): Դատելով խմբի առարկա նկարի ներկայացման վիճակից ու հանգամանքներից, վստահորեն կարող եմ ասել, որ կամ եղել են յուրջ դժվարություններ, կամ պարզապես, գոյաշնորհով այս ժամանակ արդեն խոցվալից ապրող խորհրդային գրաքննությունից, մա մույնպես գերադասել է հրատարակել առանց մեկնաբանության ու ծանոթագրման: Դրանում համոզվելու համար բավական է ասել, որ ոչ միայն չի մեկնաբանել կամ ծանոթագրել, այլև չի նշել մույնիսկ, քե որ ձեռագրից է վերցված այն: Միմյուրե ուրիշ դեպքերում ամենաչնչին իսկ տարակուսանք առաջացնող փաստը, միտքը, բառը, անունն ու դեպքը ծանոթագրել է ամենայն բնականորեն (գիրքն ունի 975 ծանոթագրություն, որոնցից մի քանիսը կարող էին լինել ինքնուրույն հոդված): Այս, իրոք, աշխատասիրողն այդպես է վարվել գրաքննչական գլխացավանքից ազատվելու համար, անտաղակալորեն հաստատում է մահ ինքը: Թվարկելով Դավրիժեցու երկի առաջին հրատարակության ընթացքում Ոսկանի կատարած միջամտություններն ու փոփոխությունները, գլխում է. «Կարելի է միայն ենթադրություններ անել, քե ինչպիսի նկատառումներով էր առաջնորդվում Ոսկան Երևանցին ճախնական բնագիրը խմբագրելիս: Պատճառները կարող էին լինել կրոնական, գրաքննչական, քաղաքական և այլ բնույթի»⁶: Արդյո՞ք հարկ կա ասելու, որ այս խոսքերը մատամբ վերաբերում են մահ իրեն:

Որ խմբի առարկա նկարի մտահղացումը պատկանում է հենց Առաքել Դավրիժեցուն, իմ խորին համոզմամբ վեր է կախածից: Իսկ ինչ փաստեր ունենք այսպես պնդելու համար: Հայագետներին վաղուց հայտնի է, որ ինչպես նշված ձեռագրերը, այնպես և ուրիշ երեք ձեռագիր պատմագիրն ամենամեծ իր նյութական միջոցներով սեփական ինքնագլխի օրինակից գաղափարել է ամբել Աթանաս և Ավետիս գրիչներին: Այդ վեց ձեռագրից (1 ինքնագիր և 5 ընդօրինակություն) մեզ են հասել չորսը, որանցից երեքը գտնվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (թիվ 1772, 1773 և 7296), իսկ չորսերորդ՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը (թիվ 137): Բարեբախտաբար վերջինիս մանրաթափանց ճշգրտության կա մեր Մատենադարանում (թիվ 678): Ասենք մահ, որ հենց Վիեննայի ձեռագիրն է հիմք ծառայել ոսկանյան հրատարակության համար:

Զավոք, հեղինակի ինքնագիրը և ճրանից ընդօրինակված հիմք ձեռագրերից մեկը մեզ չեն հասել: Դրա փոխարեն անառարկելիորեն ապացուցված է, որ պահպանված չորս օրինակից հնագույնը և լավորակը (թիվ 1773), որը 1663 թ. ընդօրինակել է Աթանաս գրիչը «Կարքի գիտաքաղաքում», մասամբ ունի հեղինակային ինքնագրի արժեք⁷: Իր բնույթով սրան է հարում մահ թիվ 7296 ձեռագիրը, որը, ինչպես պարզեցի սույն հոդվածի առթիվով, մույնպես ունի մույն նկարը, քայց քե ինչպիսին է այն ու ինչու, այդ մասին փսքը-ինչ հետո:

⁶ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությանը Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 48 (ընդգծումն իմն է- Հ. Մ.):

⁷ Այդ մասին մանրամասն անհ Հ. Միրզոյան, Առաքել Դավրիժեցու պատմության առաջին հրատարակության մասին, ԲեՀ, 1971, թիվ 2, էջ 190-191: Ի դեպ՝ իմ արտահայտած տեսակետն ու քերած փաստարկները յիշվին հավանության են արժանացել դավրիժեցիագետ Լ. Ա. Խանլարյանի կողմից (տես Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 39-40 և այլուր):

Մյուս երկու ձեռագիրն ընդօրինակել է Ավետիս գրիչը Երևանում, որոնցից Վիեննայինը՝ 1665 թ., իսկ Երևանինը՝ 1666 թ.: Թե՛ մեկը և թե՛ մյուսն ունեն մույն պատկերը ամառաբարտ վիճակում: Թվում է, որ, իբրև մույն հեղինակի գործ, դրանք պետք է հիմնականում մույնը լինեին: Իրականում դրանք էապես տարբերվում են իրարից, որը լուրջ խոսիրգաժառանգությունի տեղիք է տալիս: Թիվ 1772 ձեռագրի օժապատկերը մոտավոր ձևով նկարագրեցի վերը: Ինչ վերաբերում է Վիեննայի ձեռագրում եղածին, ապա մամրաժապավենից դժվար է որևէ բան ասել նկարի գույնի մասին, քեև ենթադրելի է, որ, նկարված է մույն մուգ մանուշակագույն բամաքով: Բայց ահա օձի գլուխն այստեղ այնպես է նկարված, որ առաջին հայացքից դժվար է կռահել, որ նկարվածը, իսկապես, օձ է: Գրիչն օձի գլուխը նկարել է ամուր փակված բերանով, որ հիշեցնում է մահակի կլոր գլուխ կամ տափօղակ, այն տարբերությամբ միայն, որ կա աչք հիշեցնող ծաղկամման մի բան և տափօղակը երկու անհավասար մասերի բաժանող մի թույլ գծիկ, իսկ այդ գծիկից, այսինքն՝ օձի բերանից, դուրս եկած գրեթե ամենշարելի լեզվափուշ (տե՛ս նկար 3): Գուցե դա է պատճառը, որ մույնիսկ ակնամվոր հայագետ Հակոբոս Տաշյանը սույն ձեռագիրը նկարագրելիս պարզապես նշել է. «Թդ. 368թ մասի զավարածի-բոլորակ՝ ազգաբանություն օսմանցուց»⁸: Դժվար է ասել, իբրք, չի նկատել ակնամվոր հայագետը, որ ոչ թե սովորական «զավարածի-բոլորակ» է, այլ իսկական զավարված օձ: Կամ գուցե նկատել, բայց Ոսկանի և մյուս երատարակիչներին մնամ «գրաքննչական, քաղաքական» և կամ այլ պատճառով չի ցանկացել արտահայտվել: Բոլոր դեպքերում ներկա հոդվածի համար թե՛ մեկ և թե՛ մյուս ենթադրությունը հետաքրքրական է:

Հարց է ծագում, իսկ ինչու է մույն գրիչն ընդամենը մեկ տառվա տարբերությամբ ընդօրինակած երկու ձեռագրում մույն պատկերը գծագրել իրարից էապես տարբեր ձևով: Իմ կարծիքով հիմնական, գուցե և միակ, պատճառն այն է, որ դրանցից առաջինը, այսինքն՝ Վիեննայի ձեռագիրը, հենց սկզբից նախատեսված է եղել վաղուց Ամստերդամում գտնվող Ոսկանին ուղարկելու համար: Պարզ է, որ Դավրիժեցին այն պետք է ուղարկել հայ վաճառականների հետ, որոնք ձեռագիրը կալուղ էին Ամստերդամ հասցնել մի քանի ճանապարհով, որոնցից, հասկանալի է, ամենից վտանգավորը Լ. Պոլսով անցնում էր, բայց թուրքովի անվտանգ չէին մաս մյուսները: Եթե ենթադրենք, որ հեղինակն, ըստ նախնական պայմանավորվածության, այն ուղարկելու էր Ոսկանին Աստրախան-Մոսկվա-Միխանգելսկ-Ամստերդամ կամ մեկ ուրիշ համեմատաբար ապահով ճանապարհով, ապա միևնույն է, ոչ մի երաշխիք չկար, որ ճանապարհին կամ տեղ հասնելուց հետո որևէ թուրք, թուրքամետ մեկը կամ քեկուզ Ոսկանի անթիվ հակառակորդներից մեկն ու մեկը դա չէր նկատի ու մատնի թուրքերին: Կարծում եմ, այս ամենը հիմք է տալիս

⁸ «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Հ. Յակովբոս Կ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 431: Ի դեպ՝ այս ձեռագիրը նկարագրելիս Հ. Տաշյանը գրել է, «Հանգամանք ընդամենապես լա. միայն սկիզբը քանի մը թուրք ինկած է (4 թուրք)»: Պարզվում է, որ Ոսկանյան տպագրությունը լրիվ ունի այդ չորս թերթի բովանդակած նյութը: Իրավամբ հարց է ծագում, արդյո՞ք այդ չորս թուրքը տպագրությունից հետո են անհայտացել ձեռագրից, թե՛ Ոսկանը դրանք ստացել է բուն ձեռագրից առանձին: Առայժմ դժվար է պատասխանել այս հարցին:

ասելու, որ հենց այդ կարգի վտանգներից զգուշանալու մպատակով հեղինակն իսկ գրչին նախապես պատվիրել է այնպես նկարել այդ շարաքատտիկ օծի գլուխը, որ նախ՝ անմիջապես աչքի չգարնվի, իսկ ապա՝ օձը մնա օձ: Ավելին, Դավրիժեցին այդ օրինակը պատրաստելուց և Ոսկանին առաքելուց հետո կարծես հույս չի ունեցել, որ այն անպայման տեղ կհասնի (ինչն էլ այստեղ, որ ճանապարհին չէին պատահում վաճառականների հետ) և կամ տեղ հասնելու դեպքում Ոսկանն անպայման կկայառաջարկ կատարել խոստովմը, ուստի շարունակել է բազմացնել այն գրչության եղանակով: Դրա լավագույն հաստատումն է հենց նույն Ավետիս գրչի 1666 թ. գաղափարած թիվ 1772 ձեռագիրը:

Վերը խոստացա անդրադառնալ նաև թիվ 7296 ձեռագրում ստեղծ նկարին, որն, իմ կարծիքով, ամենագայացումն է: Պատկերացումն է, անհայտ ինչ-որ ձեռք հաստով ջանադրությամբ ամբողջովին ջնջել-մաքել է օծի գլուխը (էջ 365բ), որի հետևանքով նկարը լիովին զրկվել է իր արտահայտչականությունից՝ վերածվելով բոլորովին անկենդան ու անիմաստ գծապատկերի: Ուստի մյուսների համեմատությամբ թողնում է ճիշտ նույնպիսի տպավորություն, ինչպիսին կարող է թողնել կենդանի, ֆշշոցով գալարվող բունավոր օծի փոխարենն գլուխը կտրած օծի անկենդան դիագալարը (տես նկար 4):

Նկարագրելով մեզ հետաքրքրող ձեռագիրը, Լ. Խանլարյանը գրել է. «Անտղյակի տվյալների (ձեռագիր, թանաքի գույն, ուղղագրություն, սխալների նույնություն և գրադաշտում բաց թողնված տեղեր) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սույն ձեռագիրը նույնպես, նախորդների նման, արտագրված է ինքնագրից: Այս ձեռագիրը, որը ներկայացված է Ե տառով, հարում է ամենահին (1663 թ.), ամենալավ ու ամենալավ պահպանված ձեռագրին (Գ): Ներմուծումները և սխալների ուղղումներն արված են, ինչպես և Գ ձեռագրում, հեղինակի ձեռքով»⁹: Իրավամբ հարց է ծագում, եթե հեղինակն ամձամբ կատարել է «ներմուծումներ» և «սխալների ուղղումներ», ապա չէ՞ր կարող օծի գլուխը ջնջողը նույնպես լինել ինքը: Առաջին հայացքից իմ այս ենթադրությունը կարող է թվալ անտրամաբանական ու անհիմն, եթե չասեն՝ անհեթեթ, բայց փորձեն հիմնավորել: Զանի որ Լ. Խանլարյանի վերը բերված նկարագրությանից հետևում է, որ այս ձեռագիրը ընդօրինակողը նույնպես, ամենայն հավանականությամբ, հենց Աբանաս գրիչն է, ուրեմն նա պետք է ընդօրինակած լինի կամ 1664 թ., կամ ծայրահեղ դեպքում 1665 թ. սկզբին, բայց անպայման Վիեննայի ձեռագրից առաջ, որովհետև Ավետիս գրիչն իր ընդարձակ հիշատակարանում ասում է, որ Վիեննայից Դավրիժեցու ինքնագրից գաղափարված չորրորդ ձեռագրին է: Արդ՝ եթե Վիեննայի ձեռագիրը պատմագրի անմիջական «հոգաբարձությանը, ծախիք և արդեամբ» ընդօրինակված ընդամենը հինգ ձեռագրից չորրորդն է, ուրեմն հինգերորդը կլինի հաջորդ տարում (1666 թ.) նույն Ավետիսի ընդօրինակած թիվ 1772 ձեռագիրը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ եթե չորրորդն ու հինգերորդը գրվել են 1665 և 1666 թվականներին, ապա մյուսները, այդ թվում և մեզ հետաքրքրող ձեռագիրը, պետք է գրված լինեն չորրորդից առաջ, այսինքն՝ 1665 թ. սկզբին կամ նախորդ տարում: Ըստ այսմ շատ հմարավոր է, որ Դավրիժեցին Ոսկանից ստանալով մեկ

⁹ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմության, էջ 50 (ընդգծումն իմն է - Հ. Մ.):

օրինակ իրեն ուղարկելու մասին լուրը, ժամանակ չկարգցնելու համար որոշել է արդեն պատրաստի ձեռագրելից մեկն ու մեկը ուղարկել, բայց տեսնելով, որ քուրթի մեջ նկարված է նույն օձապատկերը, ուստի հնարավոր փոանգից խուսափելու նպատակով փորձել է մաքրել հենց այս ձեռագրի օձագրվիսը: Սակայն, մաքրելուց հետո համոզվելով, որ դրանից նկարը միանգամայն խաթարվել է, որոշել է պատրաստել նոր օրինակ, որտեղ թե՛ նկարը լինի և թե՛ օձը մեռած անմեղա: Ուստի դիմել է Ավետիս գրչին, պատվիրել չորրորդ, այսինքն՝ Վիեննայի ձեռագիրը, տվել համապատասխան ցուցումներ, որոնք ամենայն բարեխղճությամբ իրագործել է գրիչը: Այս ենթադրության օգտին է խոսում նաև այն փաստը, որ դրանից հետո, 1666 թ., նույն գրչի ընդօրինակած թիվ 1772 ձեռագրում, որն, ինչպես ասվեց, հեղինակի ինքնագրից գաղափարված հինգերորդ օրինակն է, նույն օձապատկերը նկարված է խիստ ահագնատեսիլ, այսինքն՝ մոտավորապես այնպես, ինչպես եղել է բնօրինակում:

Կարծում եմ, այս փոքրիկ փաստը բավական լուրջ պատկերացում է տալիս մեր ժողովրդի համար Օսմանյան Թուրքիայի դաքավոր լծի ունեցած ահավոր հետևանքների մասին: Այո՛, ցավալիորեն ծանր է գիտակցել, որ թե՛ երեքուկես դար առաջ հեռավոր Ամստերդամում, թե՛ ամցյալ դարավերջին Վաղարշապատում ու Վիեննայում և թե՛ գալիք հազարամյակի շեմին քաղաքամայր Երևանում հայ գիտնականն ու տպագրիչը ստիպված են եղել չասելու ճշմարտությունը կամ ասելու կես ճշմարտություն: Բայց ավելի ցավալին այն է, որ այդ վախճ տպագիր գրքերից բացի յափանցել է նաև ձեռագրերից մերս ու այնտեղ նույնպես ծավալել իր ավերիչ գործունեությունը:

Թերևս հարկ չլինեք այսքան մանրամասն անդրադառնալու շուրջ երեքուկես-դարյա հնություն ունեցող այս փոքրիկ գծապատկերի տառապալից պատմությանը, երե դա լինեք միայն անցյալ: Մինչդեռ այն, իմ խորին համոզմամբ, այսօր ոչ պակաս, գուցե և ավելի, կարևոր է, քան իր ժամանակին: Չմոռանա՞ք, որ 1915 թ. հայկական ցեղասպանության հեղինակների իրավահաջորդներն ու ժառանգորդները ճի՞գ ու ջանք չեն խնայում կեղծելու համար պատմական իրողությունը: Ըստ այդմ՝ ի թիվս այլևայլ կեղծիքների նրանք հորինել ու ամփոփել վանկարկում են այն ամենքեք տեսակետը, որ իբրև հայ ժողովուրդը դարեր շարունակ վայելել է թուրք իշխանավորների «հայրական» վերաբերմունքը, որ իբրև հայերի ու թուրքերի միջև ոչ մի թշնամանք չի եղել, ուստի 1915 թ. կառարվածի համար իբրև մեղավոր են ոչ թե երիտթուրք մարդակերները, այլ նրանց գազանություններին զոհ դարձած հայ նահատակները: Ուրեմն թող մեկ անգամ ևս փաստվի, թե ո՞վ ո՞վ է և երբվանից:

Վերջում կցանկանայի խորին շնորհակալությունս հայտնել Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրատան վարիչ Արմեն Մալխասյանին, համակարգչային բաժնի ավագ մասնագետ Հովհաննես Կիզոյանին և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Մերուժան Կարապետյանին այս նկարների պատրաստմանը օգնելու համար:



Նկ. 1
(Ս. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ.
թիվ 1772, գրության թվական՝ 1666)



Նկ. 2
(Ս. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ.
թիվ 1773, գրության թվական՝ 1663)



Նկ. 3

(Վիեննայի Մխիթարյան Սատենադարան, ձեռ. թիվ 137, գրության թվական՝ 1685)



Նկ. 4

(Ս. Սաշտոցի անվ. Սատենադարան, ձեռ. թիվ 7296, գրության թվական՝ 1684?)

ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՋԱԲԱՐԻԱ ԵՐԵՑ ԱՎԱՆՑՈՒ ՉԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԺԶ-ԺԷ դարերի հայկական մամրանկարչությունը քիչ է ուսումնասիրված: Մինչդեռ այս ժամանակաշրջանի արվեստը ուրույն և հետաքրքիր տեղ է գրավում հայ եկեղեցական կերպարվեստի բազմադարյան ավանդույթում: Այն ուշագրավ է ոչ միայն իր ոճական ու պատկերագրական համակարգի առանձնահատկություններով, այլև զանազան նորամուծություններով, որոնք ի հայտ եկան և ամրագրվեցին հայ միջնադարյան գեղագիտության ասպարեզում՝ շնորհիվ ժամանակի գեղարվեստական մտածողության փոփոխության:

ԺԶ-ԺԷ դարերը պատմական, քաղաքական առումով խիստ անբարենպաստ էին արվեստների զարգացման համար: Հայաստանը ալեկոծվում էր թուրք-պարսկական անընդհատ պատերազմների արհալիրքից: Բայց մուլմիսկ այս աղետալի պայմաններում գրչության կենտրոններում շարունակում էին ստեղծվել պատկերագարող մատյաններ: Այս առումով արգասաբեր էր հատկապես Վասպուրականը, որտեղ գործում էին ժամանակի շնորհաշատ մկարիչների զգալի մասը: Նրանցից մեկն էր գրիչ, մկարիչ և կազմող Զաքարիա Ավանցին:

1893 թվականին Վենետիկի Մխիթարյան միաբանությունը լույս ընծայեց հայր Ղևոնդ Ալիշանի «Սիսական»¹ կոթողային աշխատությունը, որի վերջում, իբրև լրացում գրքի 352-354 էջերի, գետեղված է մի ուշագրավ հավելված: Ալիշանը գրում է. «Մինչ դեռ այն ինչ ասարտեալ էր իսպառ տպագրութիւն մատենիս, հասին ի ձեռս մեր, շնորհելով Գերապ. Սեդրակեան Եպիսկոպոսի լէջմիածնէ, երկու յիշատակարանք գրոց, յորս գիտելիք են զվանորէից Օռոտթոյ, լրացուցիչք և ուղղիչք գրելոցս...»²: Սրանցից երկրորդը «...յիշատակարանք էր յաւետարանի Կզմուտ գեղչ Երմեակայ, գրեալ յԱւանց աւանի Վանայ, լելս ԺԶ դարու, յամի 1600...»³: Այս շարադրվում է բուն հիշատակարանը, որտեղ, ի շարս այլ տեղեկությունների, կարդում ենք. «Եւ արդ ես յամենաթշուառականս և անարժան մկարողս և կազմողս մեղապարտ Զաքարէ... աղայն... յիշել յերկնագնաց յաղաթս ձեր գեղկելիս... և ամենայն արեան մերձաւորացն... Աւարտեցաւ սուրբ աւետարանս ի գեաւղաքաղաքս որ կոչի Աւանց, ընդ հովանեաւ Ս. Գրիգոր Լուսաւորչին և Ս. Յովանէս Մկրտչին...»: Այս հիշատակարանի իրատարակումով առաջին անգամ գիտական գրականության

¹ Ղ. Ալիշան, Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893:

² Սիսական, էջ 562:

³ Հետաքրքիր է, որ Արիստակես եպս. Սեդրակյանը իր «Հնութիւնք Հայրենեաց ի գաւառից Երմեակու» /Վաղարշապատ, 1872 թ./ գրքում այս Ավետարանի մասին հիշատակություն չի թողել և միայն հպանցիկ մկարագրել է Կզմուտ գյուղը:

մեջ հայտնի դարձավ Ջաջարիա Ավանցու անունը⁴: Հետագայում վերոհիշյալ հիշատակարանից հատվածներ է հրատարակել Մեսրոպ արք. Սմբատյանը⁵:

Ջաջարիայի անձն ու մանրամասնական ժառանգությունը առաջինը քննության մյուս է դարձրել Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանը /Մագիստրոս/⁶: Նրան հայտնի էին 9 ձեռագիր Ավետարաններ, որոնք ծաղկել ու, մկարագարողել էր Ջաջարիա Ավանցին, և որոնք գտնվում էին Էջմիածնի Մատենադարանում: Նա գրում է. «Դոցանից առաջինը վանք է բերել Գեորգ Դ Կաթողիկոսի օրով... Նախնեանի Կզմութ գիղից: ... Երկրորդը Էջմիածին է բերել Վասպուրականի ԶԶ-ի հետ Աղթամարի կաթողիկոսական զորդարանից... Իսկ երրորդի մասին դրական տեղեկություն ինձ յայտնի չէ»⁷: Այս երրորդ Ավետարանը Տեր-Մովսիսյանը ինքն էր հայտնաբերել Աստրախանի Կոնսիստորիայում և 1918 թվականին բերել Էջմիածին⁸: Ձեռագիրը սկզբնապես պատկանել էր Աստրախանի Ս. Աստվածածին եկեղեցուն:

Իր ուսումնասիրության առաջին մասում հեղինակը, հենվելով նորահայտ Ավետարանների հիշատակարանների վրա, մասնակիորեն վերականգնում է Ջաջարիա Ավանցու կյանքի առանձին դրվագները և փորձում գնահատել նրա արվեստի գեղարվեստական արժանիքները: Սակայն նյութի սղության պատճառով Ավանցու կենսագրության և մանավանդ ստեղծագործության հետ առնչվող զանազան հարցերը մնում են անպատասխան և թերի:

Հետագայում ևս եղան անդրադարձներ Ջաջարիայի վերաբերյալ, սակայն հեղինակները խնդիր չունեին ամբողջապես ուսումնասիրելու նրա արվեստը, այս հարցը դուրս էր նրանց նպատակից, այլ առավելապես հիշատակում էին իրենց հայտնի այն ձեռագիր մատյանները, որոնք մկարագարողել էր Ավանցին, և համառոտ շարադրում նրա կենսագրականը⁹:

Ջաջարիայի 10 ձեռագիր է մշտն Նորայր արք. Պողարյանը¹⁰: Հարություն Բյուրտյանը իրեն ծանոթ ձեռագրերի քանակը հասցնում է 14-ի¹¹: Իսկ Հրավարդ Հակոբյանն իր «Հայկական Մանրանկարչություն. Վասպուրական» աշխատու-

⁴ Սույն հոդվածում փորձ կարվի ի մի բերել Ջաջարիայի կենսագրությունը լուսարանող սուղ նյութը և մկարագարող ձեռագրերից պահպանված մուշմուշների քանակը:

⁵ Մեսրոպ արք. Սմբատյան, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երեջակայ և շրջակայից նորա, Տիխին 1904, էջ 147-148:

⁶ «Ջաջարա մկարչի ձեռագիրը եւ Դաւիթ Բէկի մասին յիշատակարան», Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921-1922:

⁷ Նույնը, էջ 128: Դրական տեղեկություն ասելով Տեր-Մովսիսյանը մկատի ունի, որ առաջին երկու Ավետարանների վերաբերյալ ինքը տեղեկացել է Ալիշանի «Սիսական»-ից և Ե. Լալայանի կազմած Վասպուրականի ձեռագրերի ցուցակից:

⁸ Այս Ավետարանները մերկայումս գտնվում են Մաշտոցյան Մատենադարանում, թիվ 2804, 5345, 5794:

⁹ Ջաջարիայի մասին եղած հիշատակությունները, ըստ պահպանված հիշատակարանների, կրեւնք ստորև:

¹⁰ Նորայր Արք. Մովսիսյան /Պողարեան/, Հայ մկարողներ /ԺԱ-ԺԷ դար/, Երուսաղէմ, 1989, էջ 171-174:

¹¹ Տես՝ Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Բյուրտյան հավաքածոյի, Կանգաս, ԱՄՆ, «Բանբեր Մատենադարանի» հ. II, Երևան, 1973, էջ 411:

թյան մեջ, Ջաքարիա Ավանցուն ճերկայացնելիս, գրում է, որ Մաշտոցյան Մատենադարանում են գտնվում նրա 8 նկարազարդ Ավետարաններ¹²:

Ինչպես տեսնում ենք, ձեռագրերի քանակի հարցում վերոհիշյալ հեղինակ-ների տարբեր տեղեկություններ ունեն, և հարցը կարող է հստակեցմամբ ի վերջո քանի՞ ձեռագիր է պահպանվել Ավանցուց:

Պողարյանի և Քյուրտյանի կազմած ձեռագրացանկերում նկատելի են կրկնություններ և անճշտություններ, հատկապես երբ թվարկվում են Մատենադարանի հավաքածուի ձեռագրերը: Եթե միավորենք վերը նշված ձեռագրախմբերը և սրբագրենք առկա անճշտությունները, ապա կստանանք հետևյալ պատկերը¹³:

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրախումբ.

Թիվ 5507 /Ավետարան 1577 թ.: Ս. Հակոբ վանք՝ Արցախ /Խաչեան երկիր/: Գրիչ՝ Սաղաթել կրոնավոր: Ստացող՝ Սիմեոն արքեպս.: Նկարիչ՝ Ջաքարիա Ավանցի: Ժամանակ՝ 1595 թ.: Վայր՝ Ավանց: Ստացող՝ պարոն Կարապետ: Թերթ՝ 293: Թուղթ՝ Չափ՝ 30x21: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ /դրոշմազարդ/: Հիշատակարան Ջաքարիայի՝ 21ա, 231բ, 232ա /:

Թիվ 6503 /Ավետարան 1595 թ.: Վայր՝ Ավանց: Գրիչ և նկարիչ՝ Ջաքարիա Ավանցի: Ստացող՝ մահտեսի Կոնստանդին: Թերթ՝ 109: Թուղթ՝ Չափ՝ 24x18: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ լաթապատ սովորաթուղթ: Հիշատակարան Ջաքարիայի՝ 96ա, 97ա, 97բ, 109ա /:

Թիվ 5794 /Ավետարան 1599-1600 թթ.: Վայր՝ Ավանց: Գրիչ՝ Կարապետ արքեպս: Ստացող՝ պարոն Միրում: Նկարիչ և կազմող՝ Ջաքարիա Ավանցի: Թերթ՝ 210: Թուղթ՝ Չափ՝ 23,5x15: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ թավջապատ տախտակ արծաթյա խաչով: Հիշատակարան Ջաքարիայի՝ 22ա, 22բ, 78ա /:

Թիվ 2804 /Ավետարան 1600 թ.: Վայր՝ Վարազ, Ավանց: Գրիչ՝ Մարտիրոս: Ստացող՝ Եսեփայմ: Նկարիչ և կազմող՝ Ջաքարիա Ավանցի: Թերթ՝ 270: Թուղթ՝ Չափ՝ 25,5x18: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ /դրոշմազարդ/: Հիշատակարան Ջաքարիայի՝ 24բ, 25ա, 35բ, 105ա, 266ա, 266բ /:

Թիվ 10220 /Ավետարան 1491 թ.: Վայր՝ Վասպուրական՝ Գրիչ՝ անհայտ: Նկարիչ՝ անհայտ: Ստացող՝ Մինաս քահանա: Նկարիչ, մորթող և կազմող՝ Ջաքարիա Ավանցի: Ժամանակ՝ 1601 թ.: Վայր՝ Ավանց: Ստացող՝ Տեր Ղազար: Թերթ՝ 314: Թուղթ՝ Չափ՝ 26,8x18,1: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ /դրոշմազարդ/, կոստղապատ, ակնակոտ արծաթյա 8 անկյունազարդով և ակնակոտ 2 արծաթյա խաչով: Հիշատակարան Ջաքարիայի՝ 3բ, 307բ /:

Թիվ 4101 /Ավետարան 1603 թ.: Վայր՝ Արգազ: Գրիչ՝ Կարապետ արքեպս: Ստացող՝ պարոն Հովհաննես: Նկարիչ՝ Ջաքարիա Ավանցի: Թերթ՝ 287: Թուղթ՝ Չափ՝ 26x19: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ /դրոշմազարդ/: Հիշատակարան Ջաքարիայի՝ 32ա /:

Թիվ 7755 /Ավետարան 1603 թ.: Վայր՝ Առինջ: Գրիչ՝ Մարտիրոս արքեպս: Նկարիչ՝ Ջաքարիա Ավանցի: Թերթ՝ 253: Թուղթ՝ Չափ՝ 25,2x17: Գրություն՝

¹² Հ. Հակոբյան, Հայկական Մանրանկարչություն. Վասպուրական, Երևան, 1978, էջ 247:

¹³ Ձեռագրերը ճերկայացնում ենք համառոտ նկարագրություններով հանդերձ:

երկայուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ /դրոշմազարդ/: Հիշատակարան Ջաքարիայի՝ 13ա, 250ա/:

Թիվ 4838 /Ավետարան 1604 թ.: Վայր՝ Կոտոց: Գրիչ՝ Կարապետ: Ստացող՝ խոջա Սպանդիար: Նկարիչ՝ Ջաքարիա Ավանցի: Թերթ՝ 250: Թուղթ՝ Չափ՝ 26,5x18,5: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ /դրոշմազարդ/: Հիշատակարան Ջաքարիայի՝ չկա/14:

Թիվ 5345 /Ավետարան 1611 թ.: Վայր՝ Քաղաք գյուղ /Սպահան, Պարսկաստան/: Գրիչ, նկարիչ և կազմող՝ Ջաքարիա Վանեցի /Ավանցի/: Թերթ՝ 205: Թուղթ՝ Չափ՝ 23,5x17: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ /դրոշմազարդ/: Հիշատակարան Ջաքարիայի՝ 94ա, 162ա, 162բ, 213բ, 217ա/:

Հ. Բյուրտյանի ձեռագրախումբ.

Ավետարան 1597 թ. /Բյուրտյան հավաքածու թիվ 33, այժմ գտնվում է վեներտիկի Միխայելյան Ուխտի մատենադարանում: Վայր՝ Ավանց: Գրիչ, նկարիչ և կազմող՝ Ջաքարիա Ավանցի: Ստացող՝ պարոն Շադոբաբ: Թերթ՝ 307: Թուղթ՝ Չափ՝ 9 3/4x7 1/2x3 1/2 /15: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ /դրոշմազարդ/: Հիշատակարան Ջաքարիայի՝ 27ա, 160ա, 302ա/:

Ավետարան 1599 թ. /տեղը՝ անհայտ/:

Հատակտոր 1599 թ. /Լոնդոն, Բրիտանական թանգարան թիվ 98/16:

Մաշտոցի հատակտոր 1599 թ. /Բյուրտյան հավաքածու, այժմ գտնվում է վեներտիկում/:

Մաշտոց 1537 թ. /Փարիզի Ազգային գրադարան թիվ 59: Վայր՝ Երևան: Գրիչ՝ Մարգարա դպիր Երևանցի: Ստացող՝ Եսայի բարոնապետ Ուրծեցի: Նորոգող և կազմող՝ Ջաքարիա Վանեցի /Ավանցի/: Ժամանակ՝ 1608 թ.: Վայր՝ Սպահան: Ստացող՝ Նաչատուր քահանա: Թերթ՝ 288: Թուղթ՝ Չափ՝ 23x16: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հիշատակարան Ջաքարիայի՝ 287ա, 288ա /17:

Ավետարան 1614 թ. /գտնվում է մասնավոր անձի մոտ18: Վայր՝ Քաղաք գյուղ /Պարսկաստան/: Գրիչ, նկարիչ և կազմող՝ Ջաքարիա Վանեցի /Ավանցի/: Ստացող՝ Շադոսկի: Թերթ՝ 266: Թուղթ՝ Չափ՝ 25,5 x20: Գրություն՝

14 Այս Ավետարանի մանրանկարների պատկանելությունը Ջաքարիա Ավանցու ստեղծագործությանը մատնանշել է Մատենադարանի աշխատակից Ա. Գևորգյանը: Զեռագրի մանրանկարների ընկությունը ցույց է տալիս, որ դրանք իրոք պատկանում են Ջաքարիա Ավանցուն:

15 Զեռագրի չափը տալիս ենք ըստ Բյուրտյանի չափագրության:

16 Stn' A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum... by Frederick Cornwallis Conybeare, London, 1913, p. 239:

17 Զեռագրի նկարագրությունը մեզ է տրամադրել Մատենադարանի աշխատակից Ա. Տեր-Ստեփանյանը: Stn նաև՝ Catalogue des Manuscrits Armeniens et Georgiens de la bibliotheque Nationale par Frederic Macler, Paris, 1908, p. 28:

18 Stn՝ Բ. Չուգասյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց, հանքեր Մատենադարանի, թ. 15, Երևան, 1988 թ., էջ 343-349: Զեռագիրը, որ վերջին անգամ նկարագրվել է 1976 թվականին, պատկանել է Շահմիրզա Կարապետյանին՝

երկայուն: Գիր' բոլորգիր: Կազմ' կաշեպատ տախտակ: Հիշատակարան Ջաքարիայի' 121ա, 129ա, 200ա, 356ա/:

Ավետարան ԺԶ-ԺԷ դդ. /Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատուն, թիվ 47/: Վայր' անհայտ, Գրիչ' անհայտ: Նկարիչ' անհայտ: Նորոգող' Ջաքարիա Ավանցի: Ժամանակ' ԺԷ դարի սկիզբ: Ստացող' պարոն Վարդանես: Թերթ' 282: Թուղթ: Չափ' 18x15: Գրություն' երկայուն: Գիր' բոլորգիր: Կազմ' կաշեպատ տախտակ: Հիշատակարան Ջաքարիայի' 129ա/:

Ն. Պողարյանի ձեռագրախումբ.

Ավետարան 1611 թ. /Պետերբուրգ, Արևելագիտության ինստիտուտ C - 33: Վայր' Քաղաք գյուղ /Պարսկաստան/: Գրիչ, նկարիչ և կազմող' Ջաքարիա Վանցի /Ավանցի/: Ստացող' դարքից Աստվածատուր: Թերթ' 298: Թուղթ: Չափ' 25,2x18,5: Գրություն' երկայուն: Գիր' բոլորգիր: Կազմ' կաշեպատ տախտակ /դրոշմագարդ/: Հիշատակարան Ջաքարիայի' 103ա, 287բ, 291բ, 293ա/19:

Աղոթամատույց 1612 թ. /Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թանգարան թիվ 34/: Վայր' Պարսկաստան: Գրիչ, նկարիչ և կազմող' Ջաքարիա Վանցի /Ավանցի/: Ստացող' անհայտ: Թերթ' 120: Թուղթ: Չափ' 10x6,6: Գրություն' միասյուն: Գիր' մոտրգիր: Կազմ' կաշեպատ տախտակ /դրոշմագարդ/: Հիշատակարան Ջաքարիայի' 69ա, 120բ/:

Ավետարան 1615-1618 թթ. /Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թանգարան թիվ 109/: Վայր' Քաղաք գյուղ /Պարսկաստան/: Գրիչ և նկարիչ' Ջաքարիա Վանցի /Ավանցի/: Ժամանակ' 1615 թ.: Ստացող' Վարդանես: Թերթ' 285: Թուղթ: Չափ' 26,2x18: Գրություն' երկայուն: Գիր' բոլորգիր: Կազմ' կաշեպատ տախտակ: Հիշատակարան Ջաքարիայի' 98բ/20:

Մեր հետազոտման ընթացքում ի հայտ եկան Ջաքարիա Ավանցու ևս 4 ձեռագիր:

Ավետարան 1581 թ. առաջ /Էջմիածնի ձեռագրատուն թիվ 26/: Վայր' անհայտ: Գրիչ' Հակոբ եպիսկոպոս: Ստացող' անհայտ: Նկարիչ և կազմող' Ջաքարիա Վանցի /Ավանցի/: Ժամանակ' 1616 թ.: Վայր' Պարսկաստան: Ստացող' Մելիքսեթ քահանա: Թերթ' 256: Թուղթ: Չափ' 20x14,5: Գրություն' երկայուն: Գիր' բոլորգիր: Կազմ' կաշեպատ տախտակ արծաթյա կրկնակազմով: Հիշատակարան Ջաքարիայի' 74ա/:

Մաշտոց ԺԶ դար /Վենետիկ թիվ 369/: Վայր' անհայտ: Գրիչ, նկարիչ և կազմող' Տեր Եղիա: Ստացող' անհայտ: Նորոգող' Ջաքարիա Ավանցի: Ժամանակ' ԺԷ դարի սկիզբ: Վայր' անհայտ: Թերթ' 186: Թուղթ: Չափ' 15,5x10,5: Գրություն' միասյուն: Գիր' բոլորգիր: Կազմ' կաշեպատ տախտակ: Հիշատակարան Ջաքարիայի' 186բ/21:

Ավետարան 1570 թ. /Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թանգարան թիվ 87/: Վայր' Կնքան գավառ, Փախու գյուղ: Գրիչ' Մարտիրոս քահանա: Ստացող' Հերապետ Փարխվացի: Կազմող' Ջաքարիա Վանցի /Ավանցի/: Ժամանակ'

19 Ձեռագրի նկարագրական տվյալները վերցված են' Կ. Յուզբաշյան, Հայկական ձեռագրերը Լեռնեզորի հավաքածուներում /ռուսերեն/ աշխատությունից, անտիպ ձեռագրաբանականի ֆոնդ, թիվ 172բ:

20 Յուզակ Հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա. Վիեննա, 1970, էջ 44 և 155-156:

21 Տես' Մայր Յուզակ Հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ, հ. Գ. Հ. Բարսեղ Սարգիսեան և Հ. Գրիգոր Սարգիսեան, Վենետիկ, 1966, էջ 426-428:

1610 թ.: Վայր՝ Ջուղա: Ստացող՝ խոջա Միրի Թումա: Թերթ՝ 310: Թուղթ: Չափ՝ 28,3x17,8: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հիշատակարան Ջաքարիայի՝ 305ա/1:

Ավետարան 1595 թ. /Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թանգարան թիվ 103/: Վայր՝ Խալեազ գյուղ /Բասեն/: Գրիչ՝ Խաչատուր: Ստացող՝ Միրանջառ և Առաքել: Նորոգող և կազմող՝ Ջաքարիա Վանցի /Ավանցի/: Ժամանակ՝ Ժէ դարի սկիզբ: Վայր՝ Պարսկաստան: Ստացող՝ ուստա Աստվածատուր: Թերթ՝ 275: Թուղթ: Չափ՝ 19,8x14,4: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ արծաթյա կրկնակազմով: Հիշատակարան Ջաքարիայի՝ 266բ/22:

Այսպիսով կարող ենք փաստել, որ Ջաքարիա Ավանցու ձեռագրական ժառանգությունից մեզ են հասել՝ 18 Ավետարան, 2 Մաշտոց, 1 Աղոթամատույց և 2 հատակտոր, թվով 23 միավոր: Պահպանված ձեռագրերի մասն քանակը ցույց է տալիս, որ գործ ունենք մի բազմաթեղում ու արդյունաշատ վարպետի հետ, և չի բացառվում, որ ապագայում ևս կհայտնաբերվեն մոր ձեռագրեր՝ կապված Ավանցու անվանն ու գործին:

ձեռագրերի բազմաքանակության համեմատ մկարչի կենսագրությանը վերաբերող հիշատակարաններում պահպանված տեղեկությունները քավական սուղ են և մախքան դրանք շարադրելը, համառոտ ներկայացնենք Ավանցու գյուղաքաղաքը:

Գյուղաքաղաքը²³ գտնվում է Վան քաղաքից հյուսիս-արևմուտք, համանուն լճի եզերքին: Պատմական Հայաստանի հին քնակավայրերից է և հիշատակվում է Դ դարից²⁴: Մի հետաքրքիր ավանդություն Ավանցու կապում է Ներսես Մեծ կաթողիկոսի անվան հետ: Հայ Եկեղեցու ճշմարիտ քարեմուրդիչը, շրջելով վասպուրական աշխարհում, կարգավորում է տեղի եկեղեցական կյանքը և որոշ ժամանակ հանգրվանում Ավանցում: Հեռանալիս Հայրապետը օրհնում է գյուղը իր բոլոր սահմաններով ու աւուտ. «Մի մուագեսցիս ի քարոթեանց քոց յափտեան...»²⁵: Ավանդության գրական հիմքը Ժ դարի հայ մատենագիր Մեսրոպ երեցի /Հողոցմանցի/ «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց Հայրապետի» երկասիրությունն է²⁶:

²² Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 126-127 և 145-147:

²³ Այժմ՝ Իսքելեքոյ: Ավանցի մասին տես նաև՝ Գեորգ Երեմե, Արապայրեր, Թիֆլիս, 1902, Ա-ԴՕ, Վանի, Բիթլիսի և Էդզրուի վիլայեթները, Երեւան, 1912 և այլն:

²⁴ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների քառարան, Երևան, 1986, հ. 1, էջ 357:

²⁵ Տես՝ Արծուի վասպուրական, Վարազ, 1859, թ. 10, հ. 3, էջ 262:

²⁶ Պատմութիւն Մնացորդաց հայոց և վրաց: Արարեալ յունեմնէ ի Մեսրոպայ քահանայէ ի Հողոց գեղէ ի վայոց ձորոյ յԱշխարհէմ Սիւնեաց. Մադրաս, 1775: Արշակաւանի կործանումից հետո, Ներսես Մեծն անցնում է ... ընդ վասպուրական գաւառն և բազում ատուրս հանգեալ ուրախութեամբ մեծաւ ի մեծ և յանուանի քաղաքն՝ որ ունի զքարադրիւրն մեծ բերդ աղբիւրս քարեհամս՝ պտղաբերս և անուշա շուրջ զամրոցաւն: Եւ Սուրբն Ներսէս հանգեալ ի նմա վասն վայելչական տեղւոյն այնորիկ և յուսազարդեալ պայծառացոյց Սուրբ գեկեղեցիսն՝ որը կային անդ՝ վայելչական ծովուն հայելոյն և օրհնեալ գմա..., էջ 82: Այս պատմության մեկ այլ խմբագրություն հայտնի է եղել Ղ. Ինճիճյանին. «...Ազգում ատուրս հանգեալ... ի մեծ և յանուանի Գիտաքաղաքն՝ որ ունի զքարաբլուրն մեծ բերդ, աղբերք քարեհամս և պտղաբերք անուշա շուրջ զամրոցովն և անուն Գեղջին Ասանս կոչեցեալ և սրբոյն Նաղմամի. համարեալ ի նմա կառն կախեալ տեղւոյն այնորիկ և յուսազարդեալ

Ավանցը եղել է լճի մավառագիստներից մեկը²⁷ ու, որպես վանի գլխավոր մավակայան, քաղաքը ջրային ուղով կապել ասիամերձ քնակավայրերին: Նրա քնակիչները վարպետ մավաշինարարներ էին ու փորձառու մավավարներ: Ժամանակին մեծ Ռոչակ էր վայելում Ավանցի աղը /Ռոչակ/, որը ստացվում էր լճի ցրից գոլորշիացման եղանակով և ուներ կենցաղային կիրառություն²⁸: Աղը մաև վաճառում էին վանում, Բաղեշում, տանում Պարսկաստան: Տեղաբնակները ավանդաբար համարում էին, որ բորակ պատրաստելու արվեստը իրենց մախնիներին է սովորեցրել Ս. Ներսես Մեծ Կաթողիկոսը: Մ. Միրախորյանի վկայությամբ, երբ բորակագործները ավարտում էին աշխատանքը, ապա վերջում անպայման արտասանում էին հետևյալ աղոթք-մաղթանքը. «Աստուած ողորմի Ներսէսի հոգւոյն»²⁹:

Վանա լճի մակերեսի հաճախակի քարձրացման և դրան հետևող հեղեղումների հետևանքով Ավանցը իր պատմության ընթացքում մի քանի անգամ փոխել է իր դիրքը և ճորովի կառուցվել: Շատ հնագույն կառույցներ մնացել են ջրի տակ, ինչպես, օրինակ, գյուղի մշամավոր եկեղեցին՝ Ս. Հովհաննեսը³⁰: Գյուղաքաղաքը մտնում էր Վարազա վանքի թեմի մեջ:

Միջին դարերում Ավանցը եղել է գրչության կենտրոն: Մասնավորապես ԺԴ դարից հայտնի է Յ ձեռագիր մատյան, որոնք գրվել են այստեղ³¹: Սրանք հիմնականում մեկնողական, ծիսական բնույթի մատյաններ են՝ մանրամասնաչափ գուսպ հարդարանքով, և գրվել են Ավանցում Վարազա վանքի միաբանների ձեռքով:

ԺԵ դարից Ավանցում գրված կամ ընդօրինակված ձեռագրեր գրեթե չեն պահպանվել³²: Եվ միայն ԺԶ դարի երկրորդ կեսից կրկին արձանագրվում է ձեռագրական արվեստի վերագաղթոնը, որը մասնավորապես կապված է

սուրբ եկեղեցեացն որ անդ կային և վայելչական ծովուն հայելոյ և օրհնեալ գնոսա...: Ստորագրութիւնք հին Հայաստանեայց, Տեառն Հ. Ղուկաս վարդապետի ինճիճեան, Վեմետիկ, 1822, էջ 172: Ինճիճյանի կարծիքով այստեղ խոսքը գնում է ոչ թե Ավանցի, այլ Վանի մասին: Նշենք մաև, որ Ներսես Մեծի Ավանց այցելելու դրվագը բացակայում է «Սոփերք Հայկականը»-ում հրատարակված համաճում պատմության մեջ: Տես՝ Սոփերք Հայկականը, Բ. Զ. Վեմետիկ, 1853:

²⁷ Հ. Խալփախյան, Միջնադարյան Հայաստանի մավառագիստներն ու մավակայանները, «Էջմիածին», 1963, Բ, էջ 98-99:

²⁸ Հ. Ս. Էփրիկեան, Պատկերագրող Բնաշխարհիկ բառարան, Վեմետիկ, 1903, էջ 392:

²⁹ Մ. Միրախորյան, Նկարագրական ուղեորություն ի հայաբնակ գաւառս արեւելեան Տաւկաստանի, մասն Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 205 /տողատակ/:

³⁰ Ավանցի եկեղեցու հիմնադրումը կրկին կապվում է Ներսես Մեծի հետ: Համարվում է, որ այն կառուցվել է նրա Ավանց այցելելու ժամանակ: Տես՝ Միրախորյան, էջ 209: Հետաքրքիր է, որ Վարազա վանքի միաբանները, որոնք ԺԴ դարում ձեռագրեր են ընդօրինակել Ավանցում, մատնանշում են երկու եկեղեցիների գոյություն: Գրիչ Հովհաննես քահանայի 1304 թվականի հիշատակարանում կարդում ենք, որ նա ձեռագիրը ավարտել է «...ի գետղս, որ կոչի Աւան, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցի Ա.ՅԱՅԱՅՄ՝ Սուրբ Յովհաննու Կարապետի և Սուրբ Գրիգորի հայոց Լուսաորքի»: ԺԴ դարի հիշատակարաններ..., էջ 26: Նույնը է գրում մաև գրիչ Թուման, էջ 131-132:

³¹ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմող՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 26, 56, 71, 131, 132, 384:

³² Ձեռագրապ. հիշատակարանում/կոտս՝ մեկն՝ սովորություններ չվան:

Ջաքարիա Ավանցու ու մրա աշակերտների ծավալած ձեռագրաստեղծական աշխատանքների հետ³³:

Ջաքարիա Ավանցին ծնվել է ԺՁ դարի նրկորդ կեսին³⁴: Վաղագույն հիշատակարանը 1595 թվականից է, ըստ որի նա որդին էր Հովհաննես քահանայի³⁵ /232ա/: Մայրը՝ Ուլուխաթունը, մահացել էր դեռևս այն ժամանակ, երբ Ջաքարիան տակավին մանուկ էր, և նա մեծացել էր Քոր խնամքով, որի մասին գրում է. «Ջի հայրն իմ անմայր սնուց զիս» /331բ/: Ձեռագրի գլխազարդման պատկերատուն էր ռմն պարոն Կարապետ, որն էլ պատրաստի Ավետարանը տանում է «ի դուռն Պաղոսի առաքելոյն» /331բ/: Հիշատակվում են նաև Ջաքարիա աշակերտները՝ Կարապետն ու Մելքիսեդեկը:

1595 թվականին Ջաքարիան գլխազարդում է ևս մեկ Ավետարան³⁶, այս անգամ մահտեսի Կոնստանդինի /Կոստան/ խնդրանքով: Նա Ավետարանը տարել է Սևանի Ս. Ստեփանոս եկեղեցի: Ձեռագրի 97բ էջում Ջաքարիան հիշատակում է իր կնոջը՝ Մահմուդին, և որ ինքը աշակերտն է եղել «Տեր Յակոբ Զուղեցուն»: Խոսքը նշանավոր մանրամասնիչ Հակոբ Զուղայեցու մասին է, որը 1592 թվականին Ավանցուն ձեռագիր է ընդօրինակել³⁷, և հնարավոր է, որ Ջաքարիան այդ ժամանակ է մրան աշակերտել: Իհարկե սա չի նշանակում, որ Ջաքարիան 1595 թվականին սկսակն գլխիչ էր: Այն համաժամանքը, որ Ավետարան գլխազարդելու խնդրանքով մրան էին դիմում այլ բնակավայրերից եկած մարդիկ, և որ արդեն այդ տարիներին նա աշակերտներ ուներ, խոսում է նրա համբավավոր վարպետ լինելու մասին:

Հաջորդ ուշագրավ տեղեկությունը 1597 թվականից է³⁸: Ջաքարիան հիշատակում է իր դեռաբույս որդուն՝ Կարապետին, և իր դստերը՝ Ամանին: Նշում է, որ բազում անգամ արտասվելով է գրել Ավետարանը, քանի որ այդ տարի մահացել էր իր եղբոր՝ Ախշիբեկի կինը: Ձեռագիրը գրել է իր քրոջ՝ Նուբարի տանը: Հիշում է իր հորեղբորը՝ Խլաթին, իր աշակերտներին՝ Տեր Մարտիրոսին և Կիրակոս սարկավագին, որոնք «աշխատեցան ի կոկել թղթիս», նաև իր հոգևոր մորը՝ Իմանիաշին, որ «բազում երախտիք ունի ի վերայ ինձ» /302բ/:

1600 թվականին մահանում է Ջաքարիայի հայրը, որի մասին նա գրում է. «Ա/ստուա/ձ ողորմի ասացեք հօրն իմոյ Տեր Յովաննիսին, որ յայսմ ամի փոխեցօ առ Ք/րիստո/ս որ անմայր էր պահեր զիս»³⁹: 1604 թվականին Օսթ Աբասի կազմակերպած բռնագաղթի զոհերից մեկը դառնում է Ջաքարիան:

³³ Մ. Միրխաթյանը թերում է մի ականատեսի վկայություն, որ ԺՁ դարի սկզբին Ավանցի Ս. Հովհաննես /ճախքան ջրասույզ լինելը/ եկեղեցու պահարանում տեսել է բազմաթիվ ձեռագիր մատյաններ /նույնը, էջ 207-209/: Հիշատակում է նաև, որ Ավանցուն ժամանակին սրբությանը պահվում էին երեք Ավետարան՝ Մեռելահարույց, Խուլում և Ուրբաթ անուններով /էջ 211/:

³⁴ Նորայր արք. Պողարյանը մրա ծննդյան տարեթիվը թեմաքար համարում է 1555 թվականը: Տես՝ նշված աշխատությունը, էջ 171:

³⁵ ՄՄ ձեռ. թիվ 5507:

³⁶ ՄՄ ձեռ. թիվ 6503:

³⁷ Տես՝ Մայր ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց՝ Նորայր արք. Պողարեան, Երուսաղեմ, 1990, հ. 10, էջ 339-340: Այս փաստը առաջինը մատնանշել է Հ. Հակոբյանը, տես՝ նշվ. աշխ., էջ 247: Իսկ 1614 թվականին Ջաքարիան ավելի որոշակի է գրում, որ Տեր Հակոբը իր հոգևոր հայրն է և «գուսուցանող զիս եւ արուեստիս»:

³⁸ Գյուրտյան հավաքածու, թիվ 33:

³⁹ ՄՄ ձեռ. թիվ 2804, էջ 25ա:

Տարագրության մեջ ևս շարունակում է իր աշխատանքը: 1608 թվականին վերամորոգած Մաշտոցի⁴⁰ հիշատակարանը դրա վկայությունն է: Ջաքարիան մորոգել ու կազմել է այս մատյանը Սպահանում: Ձեռագրի 287ա էջում գրում է. «կազմեցաւ ձեռամբ Ջաքարա իր/ի/ցու մեղապարտի վանեցոյ»: Նրա քաճաճա լինելը առաջին անգամ այստեղ է հիշատակվում: Հետաքրքիր է, որ իրեն անվանում է ոչ թե Ավանցի, այլ Վանեցի:

1610 թվականին մա գումվել է Զուղայում, որտեղ կազմել է մի վմասված Ավետարան⁴¹: 1611 թվականին Քաղաք գյուղում /Պարսկաստան/ գրված Ավետարանում⁴² /213թ/ թողել է մի ընդարձակ հիշատակարան, որտեղ մանրամասնորեն նկարագրում է Օսթրաբայան բռնագաղթի դժբախտ եղելությունը⁴³:

Ծավոք հիշատակարանները Ավանցու մասին կենսագրական այլ տեղեկություններ գրեթե չեն տալիս: Վերջինը վերաբերվում է նրա մահվանը: 1618 թվականին Ջաքարիայի աշակերտ Հովհաննես սարկավազը ավարտում է մի Ավետարան⁴⁴, որը սկսել էր նրա ուսուցիչը. «...գայս Աւետարանս, Վանեցի Տէր Ջաքարայ վարպետի ասեն, այն էր սկիզբն արարեալ, թղթերն ամէն ծաղկել էր, տնարիմականքն նկարեաց, ապայ ողորմած հոգին վախճանեցաւ» /281ա/: Ջաքարիան այդ աշխատանքը կատարել է 1615 թվականին /98թ/, քայքայ անհայտ պատճառով անավարտ է թողել: 1616 թվականին մա դեռևս կենդանի էր: Նույն թվականին մա վերամորոգել է մի Ավետարան⁴⁵, որի 74ա թերթին թողել է իր գրությունը. «Գրեցաւ սակաւ յիշատակս ի Ռկն /1616/ թվին... ձեռամբ Ջաքարայ վանեցոյ իրիցու». հետևաբար Ջաքարիայի մահվան տարեթիվ կարելի է համարել 1617 թվականը:

Այսպիսով կարող ենք ասել, որ Ջաքարիա Ավանցին ապրել է բոլոր ստեղծագործական կյանքով, ունեցել է աշակերտներ և թողել նշանակալից ձեռագրական ժառանգություն: Առաջիկայում մենք կանդրադառնանք Ավանցու մանրանկարչական ստեղծագործություններին, դրանց գեղարվեստական և պատկերագրական արժեքին:

40 Փարիզի Ազգային գրադարան, թիվ 59:

41 Յուգակ Հայերեն Ձեռագրաց Նոր Զուղայի..., էջ 126-127:

42 ՄՄ ձեռ. թիվ 5945:

43 Այս նույն հիշատակարանը Ջաքարիան կրկնել է 1614 թվականի Ավետարանում /956ա/:

44 Յուգակ Հայերեն Ձեռագրաց Նոր Զուղայի..., թիվ 109:

45 Էջմիածնի հավաքածու, թիվ 26:

ՎԱՐՈՂԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

**ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՍՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՐԹԼ-ԿԱՆԵԹԻ ԹԱԳԱՎՈՐ ՀԵՐԱԿԼ ԵՐԿՐՈՐԴԻ ԵՎ ՎՐԱՑ
ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ
(1786-1792 թթ.) ***

Վավերագիր N 2

1787 թ. դեկտեմբեր — Թուրք առ Դերակլ արքայն Վրաց, ի պատասխանի թղթոյն նորա, գոր գրեալ էր վասն նորոգ հանգուցեալ Միրզայ Գեօրգիին որդի Ռուստամին, որ յերևան էր յուսումն դպրութեան պարսից, առ ի բերել զնա յԱթոռս և ազդել զմահ հօրն և մխիթարել, գոր և արարեալ այնպէս, զրէ այժմ միամտութիւն:

Յորմէ անխարդախ սիրով և կաթոգին կարօտիւ, քրիստոսածիր սուրբ ողջունիւ և հոգևոր օրհնութեամբ և միածնաէջ սրբոյ տեղւոյս առատածաւալ շնորհիւն ծանուցումն լիցի իսկապէս սիրեցելոյդ իմոյ, հոգւոյս ցանկալոյ և հաւատարիմ բարեկամիդ և խնամողիդ սրբոյ Աթոռոյս, աստուածասէր և բարեպաշտ, իմաստնախոհ և բազմահանճար բարձրապատիւ մեծի արքայիդ Դերակլայ գօրացելոյ ի Քրիստոս: Զի թուրք մեծութեան քո էհաս առ մեզ և ընթերցեալ մեր իմացաք զմահ հարազատի սիրելոյն քոյ և մերոյ խոհեմափայլ Միրզա Գեօրգիին և գտրտմութիւն քո առ այն և յոյժ տրտմեցաք: Այլ զի զործ Աստուծոյ է, որ զվճիռ մահուն եդ ի վերայ բնութեանս հողածնի և յորժամ կամի, կոչէ առ ինքն և կամի, զի՞նչ ունիմք առնել, եթ ոչ զոհանալ զնմանէ և վասն հանգուցելոյն զարքայութիւն խնդրել և վասն ձեր ևս զմխիթարութիւնս սրտի: Վասն որոյ ասեմք՝ օրհնեալ են կամք Տեառն, որ և լուսաւորեսցէ զհոգի հանգուցեալ Գեօրգին Միրզային, և արժանացուցէ հանդերձեալ երանաւէտ կենացն և ի կողմանէ նորին զօրհնեալ արքայդ և զքայայինսդ, և նորին մնացորդսն ողջ պահեսցէ և Դոգւովն Սրբով մխիթարեսցէ:

Իսկ որ գրել էիր վասն մխիթարելոյ զհանգուցելոյ որդի Ռուստամն, ծանիր առ այն, զի երևանու մէլիք Աբրահամն եբեր զնա ի սուրբ Աթոռս և մեք մեծաւ սիրով ընկալաք և մեղմով իմաց արարեալ նմա լուր մահուան հօրն, ապա մխիթարեցաք և սփոփեցաք, և յերկուս աւուրս աստէն պահեալ, քանիցս կոչելով առ մեզ սրտադիրական բանիւ հաստատեցաք: Եւ թպէտ կամեաք յայլ քանիս աւուրս ևս առ մեզ պահել, սակայն ինքն թախանձեաց շուտով արծակել զինքն՝ պատճառ դնելով, թէ խնդրեալ են զիս և զնալոց են ի քաղաքն: Ուստի և մեք զծաղկեայ ուրախարար պատմութեան զգեցուցեալ, խաղաղութեամբ արծակեցաք՝ հարկադրելով մի բնաւ տրտմիլ և հոգալ, ըստ որում ունի զողորմառատ տէրութիւնդ ինքեան խնամածու: Եւ զի պիտոյ էր

* Սկիզբը տե՛ս թիվ Ե:

ժանուցանել պատուականութեանդ զկատարելս մեր զգրեալն ի քէն, ահա այսու սիրածիդ թղթով ժանուցաք, զի միամիտ լիցի:

Իսկ զերկրես մերմէ և զմէնջ այսպէս իմասցիս, զի ողորմութեամբն Աստուծոյ և քաղցր ականարկութեամբ քրիստոսագօր արքայիդ մինչև ցայժմ կերպիւ մի խաղաղութեամբ անցուցաք: Այլ ի տոյն-աւուրքս զդիւագունդ լեզկեացն ծայն հինեաց իբր թէ քանի հազարք ի Շուշոյ եկեալ են ի Նախիջևան ծմերել և ի շրջակայից երկրացս ևս զպէտս կերլեաց են պահանջելոց [և թէ չտայցեն զաւարս են առնելոց]⁴⁸ և այլն: Եւ առ այն սասանումն կալաւ զերկիրս և զմեզ, թէ և տակաւին ոչ հաւաստեցաք: Բայց յետոյ ստեցաւ այնքան բազում զոյն լեզկեաց, այլ ասեն, թէ Նախիջևանու խան կոչեցեալ Աբաս Դուլին երեք հարիւր լազկի է խնդրեալ և բերեալ անդ իբր ի պահպանութիւն ինքեան: Իսկ սոսկ լուր մարդախտոյդ զազանացն քաւական է վրդովել և ի տարակուսման արկանել զմեզ: Եւ առ այսպիսիս մնամք մայիս ի բարեգործութիւնն Աստուծոյ և ապա ի պաշտպանութիւն նոյնագօր տէրութեան ձերոյ ապաստան: Եւ միշտ աղօթանուէր մաղթանօք հայցենք ի Տեառն վասն բարեպաշտ արքայիդ զերկար կեանս և զբարի հաջողմունս և զհանգստարար հովանաւորութիւնդ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ անպակաս առնել: Ողջ լէր Տերամք Քրիստոսիւ և զօրացեալ շնորհիւ ամենալաղթ սրբոյ խաչին: Ամէն:

Գրեցաւ ի ՌԱԼԶ /1787/ թուոջս, ի դեկտեմբերի ... և ի լուսակառոյց Աթոռս Մուրք Էջմիածին:

Սաշտոցի անվան Սատենադարան, ձեռ. N 4501, էջ 1248-1249:

Վավերագիր N 3

1788 թ. 11 դեկտեմբերի — Թուրք առ Դերակլ արքայն Վրաց. ուրախութիւն ի յաջողմունս նորա, մինչ խաղաղացաւ ի յօսմանցւոց՝ հաշտութիւն առնելով ընդ նոսա և զօրս յղեաց ի կողմն Գեանջայու առ միւս թշնամիսն: Եւ շնորհաւորութիւն Ամտոն որդւոյն կաթուղիկոսանալոյն ի վերայ Վրաց, և այլ բանք սիրոյ և բարեկամութեան: Ընդ որում ընծայ ևս յղեցաւ:

Յորմէ ժամանեցի թուրք ճշմարիտ սիրոյ, ստոյգ բաղձանաց և կարօտոյ, խաղաղարար սուրբ ողջունի և հոգևոր օրհնութեան՝ հանդերձ անհատաբար լիս և զօրացուցիչ շնորհիւ սրբոյ տեղւոյս իջմանն Քրիստոսի և պահպանողական զօրութեամբք համայն աստուածաիրաշ սրբութեանց և սքանչելարար մասանցն սրբոց, որք ի սմա, ի վերայ բազմագով սիրելոյդ իմոյ, հոգւոյս ցանկալւոյ և աստուածակերտ սրբոյ Գահիս բնիկ բարեկամի և խնամարկուի, բարեպաշտի և մեծահաւատի, պերճիմաստի և վսեմախոհի՝ քրիստոսագօր և խաչապսակ մեծի արքայիդ Դերակլեայ, և աստուածապահ տան քում և նոյնապարզս զաւակացդ թագազարմից և ամենից իսկ ընդ քեզ ընդ օրհնեալ տէրութեամբ քով եղելոցն իշխողաց և իշխեցելոց, խնդալ ի Տեր յարազուարճ բերկրանօք: Ամէն: Շնորհք և խաղաղութիւն, սէր և քաղցրութիւն եռանձնեայ և միաբան աստուածութեանն Դօր և Որդւոյ և Դուոյն Սրբոյ իջեալ յանգիցէ ի վերայ բարեացապարտ ազնուականիդ և համայն քոյայնոցն, և լցուսցէ զմեզ բիրազան բարութեամբք հոգեկանօք և մարմնականօք: Ամէն:

⁴⁸ Ուղիղ փակագծերի մեջ վերցված պարբերությունը քննադրում ջնջված է:

Եւ ընդ աստուածապարզեւ օրհնութեան ողջունակիր քարտենիս, ծանուցումն լիցի գերապատիւ սիրելւոյդ մերոյ յատկականի և օգտակար բարեկամիդ լուսակառոյց Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի: Ձի որ ողջ անուանեսցի անուամբք իւիք, պարտի և այնր անուան արժանի զգործսն կատարել, զոր օրինակ քրիստոնեայ կոչեցեալն պարտի զհետ Քրիստոսի զնալ՝ ընկալմամբ կրօնից նորա և բարեպաշտ ասացեալն պարտի զպաշտօն բարի ունիլ առ Աստուած: Այսպէս և բարեկամ կոչեցեալն ուրուք՝ պարտի զբարիս կամիլ այնմ, որում բարեկամ ասացաւ: Քանզի թարց ունելոյ ունեք զհարկաւորագոյն հետևումն կոչման իւրոյ, ոչ երբեք արդիւնանայ ի վերայ նորա մակագրեալն նմա այն անուն, այլ որպէս թէ օտար ինչ ասութիւն գօտարէ ունեմն: Վասն զի կարդալն զանունն բարեկամ ի վերայ որոյ և իցէ անձին միոյ, պարտաւորէ զնա կոչումն այն՝ զոլ կամեցօղ բարեաց այնորիկ, որում բարեկամացեալ է, և ոչ բնաւ կամիլ զվտանգն նորա: Նաև ընդ ուրախալի դիպումսն ուրախակցիլ և ընդ տրտմալիսն տրտմակցիլ: Եւ մինչ ասացեալքն հետևումնք անմկտալ իրաւանան յանձն ուրուք, ընդ որում բարեկամք են, ապա անխարդախ պարզութեամբ արդիւնաւոր ստուգեն ի վերայ ինքեանց զայն անուն:

Արդ, ամարկեալ զայս կամ է ինձ գեկուցանել զերզգօն յարգութեանդ, թէ առ հարկի ճշմարիտ սիրոյն անխախտ կայացելոյ ի միջի մերում և գոլոյն մեր աներկբայ բարեկամ, միշտ զբարին զլաւն տէրութեանդ կամիմք և վասն այնց աղօթեմք և զայնս խնդրեմք, իսկ առ ներհական նոցին, որք թէ պատահին ոգւով չափ ցաւիմք և նեղիմք: Որպէս մինչ յանցելումն միջոցի ի շրջակա թշնամեացն ամբարշտաց և բարբարոսաց ոճիրք անօրէնութեան հնարէին ընդդէմ բարեպաշտութեանդ և վնասք յառաջանային և խաղաղագուրկ առնէին զտէրութիւնդ, յայնժամ ի լսելն մեր զնոյնս անհնարին տազնապաւ տարակուսանաց նեղեալ կենամաշ լինեաք: Բայց այժմ զկնի ծախորդութեանց ի յաջորդել յաջողութեանց առ մեծութեամբդ՝ ցնծուն ենք և խրախ: Քանզի լուաք զցրումն նենգաւոր խորհրդոյ հեթանոսացն, որ ոչ էր Տերամբ, և զհաշտութիւն առնելդ ընդ հազարացիսն և ընդ լեռնականսն, և զգօրս յարծակելդ ի վերայ միւսոյն ապախտաւորի: Եւ զոր մեծն է և առաւել զուարճալին, ըստ վերնախնամ տեսչութեան Հոգւոյն Սրբոյ զօծանիլն հարազատի որդւոյն քո թագազնէի և սիրելւոյն մերոյ արժանապատւոյ՝ տեառն Անտօնի ի կաթողիկոսութիւն օրհնեցելոյ ազգիդ ձերոյ: Որովք և ըստ օրհնի ճշմարիտ բարեկամի մեծապէս ուրախացեալ, զոհաբանեցաք և փառաւորեցաք զամենողորմն Աստուած՝ զտուօղն յաջողութեան և խաղաղութեան արքայիդ մեծի, զպարգևածիրն շնորհաց քոյն հարազատի և զմխիթարիչն այդոքիւկ մերս տրտմաթախիծ սրտի:

Ուստի որք յառաջն տրտմակացեալ էաք սիրոյդ ի տրտմալի դիպումսն, այժմ բերկեցեալ ի զուարճալի յաջողմունսդ, մատչիմք այսու օրհնածիր թղթով յողջոյն բարեբաստութեանդ և ուրախակցեալ մեծիդ՝ խնդամք ընդ խնդացօղ ըստ առաքելոյն բանի, օրհնեմք զբարեյաջողութիւնդ՝ առաւել ևս յառաջել անսայթաք, և շնորհաւորեմք զնորափայլ հոգևոր պսակաւորութիւն հոգեընտիր քահանայապետին՝ որդւոյն քոյ ազնւոյ և մեր սիրելւոյ, որոյ աղագաւ և ասեմք աչք քո ի լոյս և երանի անձին քո բարերջանկի, որ ոչ ի նուաստից, այլ ի կայծակնաստուրբ մարգարէին իսկ ընդունիս զերանութիւն այնու բանիւ նորին, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիօն:

Ապա և խնդրեմք ի յառատ խնամոցդ՝ զբարուք ակնածութիւնդ ընդ սրտական սիրոյդ անհատ ունիլ ի սրբոյ Աթոռոյս մերոյ և ի մէնջ աղօթողացս վասն քո և սպիարար թղթովդ մխիթարել երբեմն զվշտաւորութիւնս մեր, որք միշտ պաղատիմք առ Աստուած յերկայնել զաւուրս յաւուրս քո և յամերամ ժամանակս բաշխել զմիմեակդ ի մխիթարութիւն մեզ: Ողջ լեր ի Քրիստոս՝ պսակացեալդ խաչիւ նորին սրբով, պահպանեցեալ ամենագոր ռզմականութեամբք նոցին: Եւ շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ ամենեսին, որք ըռ են: Ամեն:

Գրեցաւ ի ՌԱԼԵ /1788/ թուոցս մերում, ի դեկտեմբերի ժԱ /11/ և ի լուսակազմ Աթոռս Ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին:

Այլ և ի կողմանց սրբոյ Աթոռոյս ճորտ Պապային և եղբարցն, որք են յազգէ ձերմէ, յայդր վեճէ անցեալ և զգատն առ տէրութիւնդ են արկեալ: Վասն որոյ խնդրեմ ի բարեպաշտութենէ ձերմէ, զի թէ ոչ իցէ վերջացեալ վեճն այն իրաւունս տեսեալ հրամայեսցիք մնալ նոցա ի ճորտութեան սրբոյ Աթոռոյս, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք:

Մաշտոցի անվան Սատենադարան, ձեռ. N 4501, էջ 1387-1388:

Վավերագիր N 4

1790 թ. 15 փետրվարի — Թուղթ առ Հերակլ արքայն Վրաց, ի պատասխանի թղթոցն վասն կատարման խնդրոցն⁴⁹:

Յորմէ ճշմարիտ սիրով և կարօտիւ, աստուածային օրհնութեամբ բազմաւ և հոգեպարար շնորհիւ սրբոյ իջման տեղոյս Քրիստոսի մատուցի ողջոյն խաղաղական գերյարգոյ սիրելոյդ և ցանկալոյդ հոգւոյս, և ստոյգ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս մերոյ, քրիստոսագոր բարեպաշտօն և բարձրապատիւ մեծի արքայիդ Հերակլայ: Ձի թուղթք մեծութեանդ երկիցս հասին առ մեզ, որովք նախապէս իմացեալ զբարուք որպիսութեանց նազելոյդ, ուրախ եղաք, զոր Տէր պահեսցէ անփորձ յամենայն վտանգից ի զուարճալի կեանս, ի փառս եկեղեցւոյ և ի մխիթարութիւն մեզ:

Իսկ առաջնով թղթովն գրեալ էիր զնոր կոնդակ տալ Տէր Մովսէսին վասն ժողովարարութեան ի վերայ Ռուսաց երկրին: Ձոր և մեք գրեցաք վասն ազնուագոյն խաթերդ և յղեցաք առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն, մատուցանել ի սպաս, որ տացի Տէր Մովսէսին:

Եւ երկրորդ թղթովն ծանուցեալ էիր զՂալաչու խղճալի քրիստոնէից գերութիւնն և ազատեցման ծանրագնութիւնն, որ յիրաւի ոչ սակաւ ցաւ է մեզ այնպիսի դիպուածն հաւատացելոց:

Արդ, և մեք թէ յորպիսի՝ կացութեան կամք և զի՞նչ նեղութիւնս կրեմք ի նեղչաց մերոց, իմաստնախոհ արքայդ կարէ գիտել, սակայն և զնոցօք ոչ էր զանց առնելի, մինչ յարգելիդ ևս գրեալ էիր: Ուստի ահա որքան ներկայապէս կարն մեր զօրեաց յիսուն թուման տեղոյս դրամ ետուք Ղալաչու քեանդիստայիցն Բահատուրին, Սարուխանին և Ջաղուն՝ ի մերս կողմանէ մասնակցութիւն փրկանաց խղճալի գերեացն: Վասն որոյ և գրեցաք զայս թուղթ առ բարեպաշտութիւնդ, ի պատասխանի քոյն թղթոյ, զի միամտիցին:

⁴⁹ Այս նամակի համառոտագրութիւնը տե՛ս ձեռ. 4481, էջ 314: Նամակը գրվել է հայերեն:

Դարձեալ և զայս գրեմ տէրութեանդ, զի ի կողմանէ Զօպան աղայի էլի մնացուածոցն մինչ բանս էին գրեալ մեզ ի Վանայ Թամուր փաշան և այլք: Յառաջ բան զայս երկիցս գրեցաք մեծութեանդ և ծառային ձերոյ՝ Թաղայ բէկին երկարօրէն հասկացուցուք զբանսն մեր, լիապէս ծանուցեալ ձեզ և մինչև ցայժմ զպատասխանի ինչ ոչ ընկալաք: Զգիտեմք քե ընդէ՞ր է այսքան յամեցումն: Եթէ գիտեաք քե խնդիրն մեր ընդդէմ ինչ իցէր ձեզ, կամ վնասաբեր ինչ, ամենևին բերան բերել ևս ոչ կամեաք: Սակայն անվնաս հարցումն մի է, զոր արարաք՝ իմանալ զմիտս ձեր և պատասխանատրել նոցա:

Եւ այս փոյթ ոչ այլով ինչ պատճառաւ, եթէ ոչ այսու, զի ազգն մեր ըստ մեծի մասին ընդ ձեռամբ նոցա է և երթեկն անպակաս: Եւ քե ի մեք բարեկամութիւն չտեսանիցեն, չարաման և վնասակամ լինին մեզ և մերայնոց: Վասն որոյ որովհետև խնդրեալ էին և մեք ի յօրհնեցելոյ խնդրեցաք, զի մի անպատասխանի մնայցեմք առ նոսա:

Արդ, ահա երրորդ անգամ խնդրեմ, զի զի՞նչ և դիտումն է ձեր առ այն էլն, այսինքն եթէ կամիցիս տալ և քե չկամիցիս, և քե զայլ ինչ ևս կամս ունիս, համառօտակի թղթով միով գրեսցես մեզ, զի և մեք ըստ կամեցողութեան մերոյ, պատասխանի արասցուք նոցա: Այլ և թեպէտ ծանծրոյթ է պատուական գլխոյդ, սակայն ցավքն իմ շատ են և զանազանք, և ոչ լինի ամենայնիւ լռելն: Վասն որոյ վստահացեալ ի ճշմարիտ բարեկամութիւնդ և ի տիրագոյն խնամոյ, որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, զխնդիր իմն գրեցաք յատուկ թղթով զթաճասիրտ օրհնեալ արքայիդ վասն արտասուելի ամայացեալ հրաշակերտ վանիցն Սրբոյն Գեորգեայ զօրավարին, և զայն թուրք բաց յղեցաք առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն, թարգմանեցուցանել և առանձնակի մատուցանել առ բարեպաշտութեան ձեր:

Որում արժանաւոր խնդրոյ քե կատարումն տացես, մեծագոյն շնորհ և բարերարութիւն է, որոյ աղագաւ մեծապէս շնորհակալիլոց ենք զաստուածահաստատ տէրութենէ ձերմէ: Եւ ի վերայ այս ամենայնի զսիրոյդ և խնամոցդ անուագութիւնն խնդրելով, ասեմք ողջ լեր Տերամբ ի բերկրանս աղօթողացս վասն քո: Ամէն:

Գրեցաւ ի թուոջ Փրկչին 1790 և ի փետրուարի 15, ի սուրբ Աթոռս Էջմիածին:

Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 4501, Էջ 1534-1535:

Վավերագիր N 5

1790 թ. 15 փետրվարի — Առանձնօրէն թուրք առ արքայն Վրաց Դերակլ՝ վասն Սօղմոյ Սուրբ Գեորգեայ վանիցն⁵⁰, յորմէ նեղեալ ոգով և ցաւամաշ սրտիւ ծանուցումն լիցի անխարդախ սիրելոյ և առատախնամ բարեկամի սրբոյ Աթոռոյս և մեր, յԱստուծոյ օրհնեալ և սուրբ խաչին պահպանեալ, բարձրափառ և իմաստմախոհ մեծի արքայիդ: Զի վիշտ և նեղութիւնք մեր բազումք են և անտանելիք, զորս բարեկամական օրէնն պահանջէ գրել տէրութեանդ, սակայն նկատելով, քե օրհնեալդ ևս կաս ի մեծամեծ և զանազան հոգս և ի զբաղմունս, խնայեաք գրել՝ առ ի չաւելուլ զցաւս ի վերայ ցաւոց: Բայց այժմ ստիպեցեալ ի հարկաւորութենէ, գրեմ զսակաւս ի բազմացն և զլայտնագոյնսն:

⁵⁰ Համառօտագրութիւնը տես ձեռ. 4481, Էջ 314: Նամակը գրվել է հայերեն:

Քանզիի այժմոյս տառապեալ ազգ մեր՝ թէ ի յազարացիս, թէ ի պարսիկս, և թէ ի մարս, և թէ յայլ տեղիս, վասն մեղաց իմոց հարեալ են ամենակերպ անյաջողութեամբք և վշտիւք, որոց զդառն համբաւսն լսելով, միշտ մորմոքիմք: Եւ զսոյն այս երկրիս խղճալի մերագնեայսն ևս աչօք տեսանելով յեզիպտական ծառայութիւնս և ի յետին թշուառութիւնս, անկանիմք յանհմարին տարակուսանս, ոչինչ կարելով օգնել տառապանաց սոցա: Եւ ի վերայ այսց ամենայնի մեք անծամբ իսկ հանդերձ սուրբ Աթոռովս ոչ սակաւ նեղութիւնս և վնասս կրեմք և զանպատուութիւնս յանպատիւ անծանց: Որք դառնացուցիչ վիշտք և հոգք այնքան սրտամաշ առնեն զմեզ, մինչև կասեցուցանել ի յամենայն բարեջանութենէ և շինախարութենէ, որովհետև և ոչ միով կերպիւ յաջողի: Սակայն որպէս ասութիւն է հասարակաց, թէ ընկղմեալն ի խորս ջուրց, որ թէև մերձ իցէ ի մահաճալ, բայց որքան յոգւոջ լինիցի, յայսկոյս և յայնկոյս ձկտի պահպանել զկեանսն, նոյնպէս և մեք՝ թէպէտ տեսանեմք զմեզ վտանգեալս ի պէսպէս փորձութիւնս, զերկիրս մեր աղաւաղեալ, զվանորայսն մեր ամայացեալ և ոտնակոխ եղեալ, սակայն մինչ տակաւին կեանքս, ջանամք զեղեալ բարեկարգութիւնս պահել և զշէնսն ոչ թողուլ իսպառ խանգարիլ (սպասելով այցելութեան Տեառն Տերանց և բարեյաջողութեան քրիստոսագօր տէրութեան ձերոյ, որովք լինի թէ խաղաղութիւն և ողորմութիւն ընծայեսցի ի վերայ այսց տառապանաց):

Արդ, այսու ջանիւ գրեցաք զայս թուրք ցաւածանոյց և աղեխարկու առ աստուածասիրութիւն քո յաղագս Արքայն Գեորգեայ հրաշագործ վանիցն, որ ի Մուղնի գեղոցն: Քանզի վանքն այն յանցեալսն չէն էր, իսկ երբեմն ի գալն մեծութեան ձերոյ յայս երկիր և ի դառնալն, մինչ յերեսաց այլազգեաց զօրացն աղաւաղեցաւ և ամայի մնաց առ միջոց մի, Բարեպաշտ օրհնեալ արքայդ ի գութ շարժեալ առ սուրբ վանքն այն, զբնակիչսն զեղքն նորա դարձուցեր անդէն. և քանի թուման դրամ ևս շնորհեցեր վասն նորոգութեան խաչկալին: Եւ մեք դրամս ծախսեցաք ի վերայ պարսպին, զի շինասցի և ի պայծառութեան մնասցէ: Բայց իշխօղն մեր, որպէս գիտես, պատանի գլուով, ոմանք ի դրան մարդկանցն խօսեցեալ յականջս նորա, զբնակիչս այնր գեղքն հանին անտի և տարան յայլ գիւղ: Ուստի թէ գիւղն, և թէ սուրբ վանքն ամայացաւ մինչև ցայսօր և օր ըստ օրէ աւերի: Եւ մեք յանվոյթ լինելոյն խղճահարիմք և մինչ հետևիմք, հնարն ոչ լինի, զի իհարկէ տէրութիւն քո տեղեկացեալ է զորպիսութեանց անկայուն կառավարչացն դրան մանուկ իշխողին: Ապա նտածեցաք, թէ զուցէ կատարեալ հոգածութեամբ մեծահրաման իշխողիդ վերանորոգութիւն լինիցի այն սուրբ Տանն: Ուստի, խնդրեմ ի բարեսէր և յողորմած արքայեդ, զի զգեցեալ զհոգին Ջօրաբաբէլի, ի փառս և ի սէր Արքայն Գեորգեայ քաջ նահատակին (թէև ծանրութիւն է) յանձին կալցիս հոգ տանիլ և հնար առնել շինացուցման այն սուրբ վանիցն: Իսկ որպէս մեք ընտրեմք, պատշաճն այս է, որ գրիցես Մահմատ խանին, թէ գիտեք, որ մեք խնամք և սէր ունիմք ի վերայ վանորդից և եկեղեցեաց, յառաջագոյն Մօղնու գիւղացիսն ծրիապէս դարձուցի վասն շինութեան այն վանիցն, որ իմ սիրելի է, այժմ լսեմ, թէ յորդորմամբ ոմանց մարդոց դրանդ այն գիւղի բնակիչսն քօչեցուցեալ էք անտի և գիւղն և վանքն ամայի են: Եթէ ի ժամանակս հօրն քո չէն է եղեալ, այժմ իմ և քո ժամանակին է՞ր պիտի անշէն լինիլ: Կամիմ հարկիւ, որ զայն Մօղնու գիւղականսն ուր և իցեն, կրկին դարձուցեալ զայն գիւղն շինացուցանես, զի վանքն ևս շինասցի և այդպէս առնելդ մեզ ծանուցանես և այլն:

Բայց թե իմաստութիւն քո զայլ իմն կերպ առնել ընտրիցէ, կամք քո լիցի: Եւ թե հաճիցիս ընդ հայցուածս մեր, խնդրեմ փութով կատարել, զի ահա գարունն առաջիկայ, եթէ գիւղականացն դարձ լինիցի, ժամանեցեն վաստակոց և արդեանց երկրի և շինարարութեան:

Ձինչ ևս երկարեցից, տէր արքայ, գիտեմ, զի սակաւուք այսու գրագունս իմանալոց ես, իսկ մեծածնեմ ցաւոցս դեղն յԱստուծոյ լիցի: Այլ զայս միմ աստուածահաճոյ բան ի քէն խնդրեցի առնել, զոր թե կամիցիս և կատարեցես, մեծավարձ գործ է առաջի Աստուծոյ և սրբոց նորա, և մեզ ևս առիթ սրտադիւրութեան և հոգևոր մխիթարութեան: Որոյ վասն ամենայն շնորհակալութեամբ աղօթօղ լիցուք վասն աստուածապահ տէրութեանդ՝ ամենայն միաբանիւք, որպէս և եմքս: Ողջ լեր խաղաղական կենօք ի պարծանս և ի հրճուանս մեր: Ամէն:

Գրեցաւ ի թուոյ Փրկչին 1790 և ի փետրուարի 15, ի Սուրբ Էջմիածին:

Սաշտոցի անվան Մատենադարան, ձեռ N 4501, Էջ 1441-1442:

Վավերագիր N 6

1790 թ. նոյեմբեր — Թուղթ առ Դերակլ արքայն Վրաց, ի պատասխանի Բ/Չ/ թղթոց նորա, որովք վասն Մարտիրոս վարդապետին, զոր սրբազան Վեհն ի յառաջնորդութենէն Թիֆլիզու դարձուցեալ բերեալ էր, խնդրէր դարձեալ յղել անդ ի յառաջնորդութիւնն:

Յորմէ ժամանեցի թուղթ...⁵¹

Եւ ընդ սիրոյ և ողջունի օրինառաջ թղթոյս, գիտութիւն լիցի բարեպաշտութեան ձերում: Ձի ընկալաք զերկոսին թուղթս ձեր՝ զգրեցեալսն ի յօգոստոսի Ը /8/ և ի հոկտեմբերի Ի /20/ և ծանեաք զմիտս գրուածոցն ի նոսա, որք էին խնդիր վասն վերադարձուցանելոյ զհոգևոր որդին մեր՝ Մարտիրոս վարդապետն ի յառաջնորդութիւն քաղաքիդ, զոր խնդրեալ էաք, և եկն և մեք ի սեր և ի խնամս առ ընկալաք իբրև գորդի սիրելի: Առ որ ծանիցէ մեծութիւն ձեր, զի զայսպիսի խնդիր առնելոյ ըստ որում սիրոյ վստահութեան նշանակ է, ընդ այն խնդրամիտ եմք, այլ զի կատարումն առ յապայն վտանգաբեր իմանի, վասն այն ոչ սակաւ տարակուսիմք: Ուստի նախապէս խնդրեմք ի ներողամիտ արքայէդ չնեղսրտիլ առ գրելիքս և ապա զայսոսիկ գրեմք, զի յարգութիւն ձեր փորձեալ է զամխարդախ սեր և բարեկամութիւն մեր, որ մինչև ցայժմ զկարելի հրաման ձեր ի գլուխ մեր ընդունելով, ըստ կարի մերում ջանացեալ եմք ի կատարումն ածել, բայց այս տարակուսելի իմն է, ըստ այնմ զի արտաքոյ է բնիկ սովորութեան սրբոյ Աթոռոյս: Քանզի սովորութիւն է միաբանից սորա փոխանակաւ գնալ ի վիճակս և գնացելոցն ի լրման ժամայնակին վերադառնալ և յայլ իրողութիւնս պիտոյանալ: Ուստի առ ընծայի օգուտ սրբոյ Տանս և խաղաղութիւն ժողովրդոց մերոց և ինքեանց իսկ գործավարացն յարգաւոր լինիլ:

Այլ այժմ եթէ առաջնորդի քաղաքիդ ներիցեմք մնալ ցվախճան... եթէ իւրաքանչիւր վիճակաւորք մեր ևս օրինակ առեալ յիրերաց գնոյն կամին, և

⁵¹ Այստեղ հապաված է նամակի սկզբնամասը, որտեղ քարեմադոթութիւններ եմ և բնութագրվում է հասցեատեղը: Այդ բաժինը կազմվում էր ընդունված շաբլոնով և կրկնվում էր նույն անձին ուղղված բոլոր նամակներում (տես վավ. 1):

վիճակեցեալ ժողովուրդըն ևս խնդրիցեն, որպէս և բազմիցս եղեալ է, զի՞նչ պատասխանեսցուք մոզա: Եւ եթէ անասացուք ամենից իսկ խնդրողացն, ո՞ր ճո՞ղովք վաղնջական սահման և բարեկարգութիւն ընդհանրական Աթոռոյս, զորովք զանց առնելն ոչ փոքր յանցանք է համարելի: Թողում զվնասսն և զազգի ազգի գլխացաւութիւնս և զգայթակղութիւնսն, որք լինիցին, որպէս և երբեմն յայդր ի յոմանց յառաջացեալք են: Զորս բազմիմաստ արքայդ ինքնին կարես իմանալ:

Ապաքէն ոչ է պարտ մեզ քակել զսահմանս նախնեացն և լինիլ պատճառ ապագայից վնասուց և անդէպ իրաց: Իսկ մինչ յառաջարկէք զստիպումն ժողովրդեանդ, դոքա ոչ միայն վասն Մարտիրոս վարդապետիս, այլ վասն Զովհաննէս վարդապետին և վասն Կարապետ վարդապետին ևս այդպէս ադարին և այդ ո՞ն արարողութեան իբր թէ մորաձև իմն սովորութիւն է դոքա, որք կարծելով թէ յապագայէն չշահիցին, զներկայականն ոչ յօժարին թողուլ: Բայց Աստուծով ի բազում ամաց հետէ որքան առաջնորդք են առաքեցեալք ի սրբոյ Աթոռոյս ի յօրհնեալ քաղաքդ, որպէս պիտոյն է վայելուչ կառավարութեամբ մխիթարեալ են զդորա, և յուսանք զի այսուհետև ևս զոր պատշաճ տեսեալ խոհեմութեամբք վարիցի ընդ ամենայնսն:

Ուրեմն խնդրեմք ի բարեպաշտութենէ քրիստոսասէր մեծի արքայիդ Գերակլայ, զի մի ընդ մորաձևական առաջարկութիւնս այլոց յօժարիցիս, այլ ընդ մեր կամս հաճիցիս, որ է ըստ նախնեացն աւանդութեան և ըստ բնիկ սովորութեան սրբոյ Աթոռոյս:

Եւ զայս ոչ թէ ընդդիմակայաբար գրեմք մեծութեանդ, զի սրտամնայ լիցիս առ մեզ, ոչ, այլ յուսալով ի յաստուածապարզ և խոհականութեանդ առաւելութիւն բարեկամական վստահութեամբ բացայայտեմք մեզ զարժանին առնելոյ, զի գերազանց ընտրողութեամբ ձերով եթէ բարուք համարիցիք զդիտումնս մեր, ընկալիք ի հաճոյս, որպէս զի յապագայն մի տացի գայթակղութիւն այլոց և վասն սրբոյ Աթոռոյս, և մնացէ մեզ անբարի յիշատակ ի լեզուս բազմաց և այնու պարտաւորութիւն առաջի Աստուծոյ: Այլ մեծագոյն երևեսցի սեր և բարեկամութիւն առտախմամ մեծի արքայիդ Գերակլայ առ սուրբ Աթոռս և առ մեզ, որովք զպատիւ սորա ի յարգի պահեսցես, որպէս մինչև ցայժմ և զմեզ սրտադիւր արասցես, զմեր քանս ընդունելով և առ սորին կատարումն ախորժելով: Որ թէպէտ այժմոյս չունիմք ձեռնհասութիւն զառաջնորդ յղել ի քաղաքդ, որոյ վասն գրեալ ենք գործակալին մերոյ՝ Տէր Ղազար աւագ քահանային առ ժամանակ մի հոգ տանիլ առաջնորդական գործոյն, բայց յետ միջոցի մինչ բարեպաշտութեան ձեր ևս իցէ մեզ կամակցութիւն, զայլ ոմն պատշաճաւոր նախկուպոս առաքեսցուք ի տիրախմամ քաղաքդ՝ յառաջնորդութիւն ժողովրդեանն մերոյ:

Այսպէս գիտեցեալ զսիրամիշ թուղթդ հանդերձ տիրաբար և խնամօքդ անպակաս առնելով ի մէնջ և ի սրբոյ Գահես, ողջ լեր ի Տեարն Տերանց՝ առ ի մեր հրճուանս, որք ենք հայցօղք վասն ձերոյ տէրութեան գյաջողուածս բարեաց:

Գրեցաւ ի թուականի Փրկչին 1790 և ի նոյնքերի ի Մայր Աթոռս Ամենայն Դայոց՝ ի Սուրբ Էջմիածին:

Մաշտոցի անվան Սատենադարան, ձեռ N 4501, էջ 1565-1566: 52

ՄԵՐՈՒԺՄԸ ՄԿԻՏՅՈՒ ԿԱՐԱՊԵՏՅՈՒ

ՀՈՎԱՍԵՓ ԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՈՐԱՀԱՅՑ ՏՊԱԳԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

1996-1997 թթ. ծնոանը, Ամենայն Հայոց Ս. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի հովանավորությամբ ու աջակցությամբ, աշխատեցինք Վատիկանի Դիվաններում և, օգտվելով առիթից, մոտ երկու շաբաթ Մխիթարյան Հայրերի բարեհաճությամբ¹ աշխատեցինք նաև Մխիթարյան նշանավոր դիվանում: Այստեղ փնտրտուքների ժամանակ մեր ուշադրությունը գրավեցին մի շարք գրավորներ, որոնք, ի շարս այլ պատկերների, ամրացված էին Դիվանում պահվող մի մեծադիր կաշեկազմ «Նկարք փորագրեալք ի պետս վանաց» խորագրով հաստատվոր հատորում:

Այն հանգամանքը, որ մատյանում մեզ հետաքրքրող փորագիր պատկերները հաջորդում էին միմյանց և նրանց նախորդում էր սկզբում եփրեմ Կաթողիկոսի ստորև տպագրվող ընծայագրով պատկերը, ապա՝ Սուրբ Էջմիածնի մի քանի պատկերներ ենթադրել էր տալիս, որ նրանք բոլորը միասին են հայտնվել Սուրբ Դազարում: Դատելով եփրեմ Կաթողիկոսի պատկերի ներքևում եղած ընծայագրից («Ընծայ յէջմիածնէ առ Հայր Մինաս վարդապետ Բժշկեան»), պատկերները Սուրբ Դազար էին ուղարկվել Էջմիածնի միաբանության կողմից և հասցեագրված են եղել Մխիթարյան Հայրերից Մինաս Բժշկյանին:

Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Մինաս վարդապետ Բժշկյանը (1777-1851), հովվական առաքելությամբ լինելով Տրապիզոնում, XIX դարի առաջին քառորդի վերջին մեկնեց Դրիմ Կարասու, ուր և մնաց մինչև 1846 թվականը: Այս քառորդ դարի ընթացքում նա, շնորհիվ իր լայնախոհության, ակտիվ հովվական և մշակութային գործունեության, շփումներ ունեցավ հայ հոգևորականության բազում ներկայացուցիչների հետ և նրանցից շատերի հետ հաստատեց կայուն բարեկամական կապեր: Պակաս կարևոր չէին նաեւ նրա հաճախակի հանդիպումները Ռուսաստանի քաղաքական ու պետական նշանավոր գործիչների հետ: Որպես ասվածի ապացույց ստորև ներում ենք նրա 1796-1851 թթ. ընդգրկող ցարդ անտիպ Օրագրությունից (տե՛ս Սուրբ Դազարի դիվան, տուփ 161) մի քանի հատվածներ.

1832. յուլիս - եկն կոմսն Վօրոնցով և մեծաբեաց գիս:

1833 յունվար 10 - եկն յայցելութիւն ի սենեակ իմ և յեկեղեցին մեծ կոմսն Վօրոնցով ընդ կուսակալին և ընդ այլ մեծամեծաց...

1837 սեպտեմբեր 12 - Զոգայ ի Պաղեսէրայ. անդ համդիպեալ կայսեր Նիկողայոսի Ա. խօսակցեցայ ընդ մմայ և ընդ ժառանգին:



Պատկեր 1. Եփրեմ Կաթողիկոս
1809 թ. դեկտեմբեր

1. Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Վենետիկի Մխիթարյան վարդապետներից Հայր Եղիա Քիլադպանին, Հայր Սեդրեք Զամուլյանին և հատկապես Հայր Դովսեփ Պեհեսնիկյանին, որը մեզ համար պատրաստեց բոլոր լուսանկարները:

1840 նոյեմբեր 14 - Կոմսն Վորոնցով եկն ի սենեակ իմ յայգելութեան:

1843 - Ընծայեցի կայսերորդույն Աղեքսանդրի գիմ Ջերականութիւն Դայ-Ռուս², որ ապա յղեաց առ իս թուղք և մատանի պրլանդ:

1844 - Կոմսն Վորոնցով կարգեցաւ փոխարքայ և գրեաց առ իս թուղք յԱլուփքայէ ձեռամբ իւրով:

1845 - Եկն ի խարասու Ներսէս Կաթողիկոս:

1846 Սեպտեմբեր - Չոքայ ի Մաստաքով և ետու կայսեր զճակատ բազում լեզուութեանն քերականութեան³ ընդ որ հաճեալ ետ հրաման զնալոյ ի վանս և տպագրելոյ զբառարանս, ի՞նչ, ի՞նչ միջոցի երկուց ամաց:

1847 ի մայիսի 3 - Գիւպատոսն Ռուսաց երբեք առ մեզ [Սուրբ Ղազար] զոսկի մետալ փառաւոր իւր ի խորի ծանրութեամբ հանդերձ թղթով Ուվարով միճխտրին, որ զո՛ւ առ Աբրահայրն ի 13 մարտի 1847. «Պատիւ եղև ինձ ճերկայացուցանել կայսեր զբազում լեզու քերականութեանն Գ. Մինասայ Մետիցի, զոր առաջեալ էիք: Վեհափառ կայսրն մեր հանդերձ բարեհաճութեամբ ընկալեալ զայս մատեան, արժանի համարեցաւ ընծայել մատենագրին զմեծ մետալ ոսկի և նենդանագրի Նորին Մեծութեան: Զոր ահա այսու պատիւ ունիմ անցուցանել առ վեհութիւն Զեռ և խիղորն զի հաճեսցիք համարել զայս ըշան պատուոց առ Գ. Մինաս Մետիցի» և այլն: Ի՞նչ կողմն մետալին շուրջանակի տպեալ է «Nicolaus totius Russiae Imperatoris» և ի՞նչ կողմն «Premia digno», որ և եղաւ ի թանգարանի վանագս:



Պատկեր 2. Հայր Մինաս Բժշկյան
(Վենետիկ, Ս. Ղազարի
պատկերասրահ)

Այսպիսով ամենևին էլ պատահական չէր, որ Էջմիածնի Սայր Աթոռի միաբանության կողմից այս հրատարակությունները ուղարկվում էին Դայր Մինաս Բժշկյանին, քանի որ վերջինս բազում համակիրներ էր չափել հատկապես իր տեղագրական ու կենսագրական բնույթի աշխատություններով (տես օրինակ՝ Պատմութիւն Անուկան ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, Ս. Ղազար, 1830: Դամառոտ նկարագիր վարուց երեւելի արանց, Վենետիկ, Ս. Ղազար, 1850 և այլ գործերը):

Մինաս վարդապետ Բժշկյանի ստացած տպագիր պատկերների շարքում հատկապես հետաքրքրություն են ներկայացնում XVIII դ. երկրորդ կեսի Ռուսահայոց առաջնորդ, հայ ազգային ազատագրական շարժման նշանավոր գործիչ, Արցախում հայկական պետականության վերականգնման ամիսոնք քատագով Դովսեփ արքեպիսկոպոս Արղությանի չորս տպագիր դիմապատկերները:

Բավական ենք համարում նշել, որ հայ հնատիպ գրականության մատենագիտական ցանկերում, ուր սովորաբար ընդգրկված են մասնապատկերները և նույնիսկ 1 էջանոց տպագիր կոնդակներ, զանազան բնույթի թերթիկներ, մեր տեսած պատկերներից միայն մեկն է արտացոլված⁴:

2 Իմա՝ Մինաս վարդապետ Բժշկյան. Ջերականութիւն Ռուսերէն-Դայերէն. Ի Վենետիկ, ի տպարանի Արդյն Ղազարի, ՌՄԴԷ // Российско-армянская грамматика П. Минаю Медвиль. Вакелат, типография Св. Лазаря. 1828.

3 Իմա՝ Մինաս վարդապետ Բժշկյան. Ջերականութիւն բազմալեզուեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1844:

4 Այսպես Ն. Ռակմյանի, Զ. Կորկոտյանի, Ս. Սավալյանի «Դայ գիրքը 1512-1800 թվականներին», Դայ հնատիպ գրքի մատենագիտություն, (Երևան, 1988) աշխատության էջ 767-ում N 1035-ի տակ նշված է «Յովսէփ Արքեպիսկոպոս Արղութեանց (Դիմանկար): Առանց տպագրութ. վայրի և տպարանի հիշատակութ.», 1798:»։ Ազգային գրադարանում պահվում է դիմանկարի լուսանկարը: Գիշատակուած աշխատության Վերնագրերի ցանկում (էջ 850թ) նշված են Արղությանի դիմանկարի երկու տարբերակ՝ մեկ վերորդերայր (N 1035) և մյուսը N 1097-ի տակ: Սակայն ցավով նկատեցինք, որ գրքում նկարագրված ամենավերջին միավորը 1095-ն է:

Հովսեփ Արղությանի դիմանկարը պատրաստելու մասին հիշատակություններ հանդիպում ենք հենց Արղությանի Օրագրություններում: Այսպես, 1780 թ. հունիսի 2-ի զրազրություններում Հ. Արղությանը նշում է. «...եկաք 'ի տուն ազնի աղա Յովհաննիսին [Լազարեան] 'ի ճաշել, կանգնեալ 'ի յոտին որպես ինքն նմանապես և այլքն շնորհակալեցան զմեզ և յոյժ յարգեալ զովեցին զհամեստ արարողութիւնս սուրբ եկեղեցոյս մերոյ և բազում հարց ու փորձ արարին վասն ուղղափառ դաւանութեանս մերոյ: Եւ մինչդեռ բազմեալ էին 'ի վերայ սեղանին առ մեզ հայեցեալ յոյժ հաւանէին դրութեան պատկերի մերոյ և մանաւանդ աչացս, որպէս ինքնեանք նմանապես և իշխանուհիքն՝ Մարիա Պապլովնէն և Մարիա Ստեփանովնէն կինն Տալիզինի: Աղայ Յովհաննէսն ասաց նոցա թէ պատկեր սրբազանիս մերոյ նկարեն և խնդրեցին բերել և ամենեքեան զբօսան 'ի յերեսս և 'ի նկարն, որ դեռ կիսատ էր և յոյժ հաւանեցան նմանութեանն»:⁵

Եիշտ նույն թվականին Ռուսաստանում հաստատված Ջուղայեցի նշանավոր Մանուչարյան զերդաստանից Մարգար և Փիլիպպոս եղբայրների⁶ կողմից փորագրել է տրվում Հովսեփ Արղությանի մեզ հայտնի առաջին դիմանկարը: Հովսեփ Արղությանը իր նամակներում ևս հիշատակություններ ունի իր տպագիր պատկերների մասին: Այսպես, 1791 թ. օգոստոսի 3-ին Հնդկաստանի նվիրակ Տեր Ստեփանին զրաժ իր նամակում Արղությանը վերջինիս տեղեկացնում է. «2 [80] հատ աղօթամատոյցն է, ԻԸ [28] հատ Ողբն Էքմիածնայ և քանի մի հատ Հեզ Սաղմոսս և տետր: Ի Մատրասս և ի Սուրաթ ով ոք ողորմութիւն է տուեալ քեզ, զորոց անունս զրեալ ես մեզ, նոցա մէկ մէկ հատ ընծայեցի: Իսկ Շամիրամ Աղային և Աղայ Յօհաննէան Գերակեանին 10-10 առաքեցի: 6 հատ մեծ պատկերքն իմ առաքեցի ըստ խնդրոյդ 1 հատ Շամիրին, 1 հատ Աղայ Սկրտիչ Էմինազին և Ա[1] հատ ի Կալկադայ Պետրոսի որդի Աղայ Յարութիւնին: Իսկ մնացեալ պատկերքն և զրեանքն հասուցանել զքեզ, եթ դեռ ի յերկրի յայդ իցես որ դու արժանաւոր անծանց մատուցես: Իսկ եթ դու գնացեալ իցես ինքն Շամիրամ Աղայն որպէ՛ս և կամիցի և ու՛մ պատշաճաւոր տեսցէ հեռաւոր քաղաքացն նոցա հասուցէ: Իմ փոքրիկ պատկերք ևս առաքեցի շատ զեղեցիկ, մինն Շամիրին, միսն Յօհաննէան Գերակեանին. Շամիրամին առաքեցի և քնեագի իմա՝ Պոտյոմկինի- Մ. Կ.] փոքրիկ պատկերն»: Եթե նկատի ունենանք, որ մեծ պատկերքն ասելով Արղությանը կարող էր նկատի ունենալ միայն 1783 թվականին տպվածը, ապա պարզ է դառնում, որ արդեն 1791 թվականին տպված կար նաև Արղությանի ավելի փոքր պատկերը, կամ էլ այն կարող էր իրենից ներկայացնել մեծ տպագրվածի փոքր օրինակը: Ինչևէ, այս փոքր նկարը մեզ մնում է անհայտ⁷:

Հաշվի առնելով այս տպագիր նկարների կարևորությունը Հայ հնատիպ գրականության ուսումնասիրության համար, ստորև ժամանակագրորեն բերում ենք Հովսեփ Արղությանի դիմապատկերներ և տալիս նրանց նկարագրությունը:

⁵ Տես Յովսեփ Կաթողիկոս Արղութեան, մասն առաջին (1780-1800)- Դիւան հայոց պատմութեան, զիրք Թ, Հրատարակեց Գիւտ ք. Աղանձանց, Թիֆլիս, 1911, էջ 32-33:

⁶ Մանուչարյան եղբայրների զործունեության մասին տե՛ս նույն տեղում, էջ 28, 29, 31, 34-36, 130, 169-170, 222, 230, 242, 255, հմմտ. Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг. Сборник документов. Т. IV, Под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1990, стр. 1828-93, 173-174, 323-324, 339-340, 342, 372, 457 և այլն:

⁷ Տես Դիւան հայոց պատմութեան, . էջ 128-129:

1. Յովսէփ Արքեպիսկոպոս Արղուքեան (դիմանկար), 1780, Մոսկուա: Նկարի չափերը՝ 48,5x29 սմ:

Արղուքեանի պատկերով շրջանակի մեջ՝

«ՅՈՎՍԷՓ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՌՈՒՍՍՅՑ ԵՐԿՐԻ ԴԱՅՈՑ ՄԱԳԻՆ. ՇՆԵԱՆ ՅԱՍԻ ՏԵԱՐՆ 1743.»



Պատկեր 3. Հովսէփ Արղուքեանի
դիմանկարը (1780 թ.)

Իշխանագնեայ Պատկերս Մեծի, Տեառն Յովսէփայ՝ Արիի-Տեղեալ գլով Սանահնեցի, որ Արղութաղըն անուան-Հոգեսնունդ՝ զաւակ բարի, Տեառն Սիմեոն՝ Հայրապետիւրակ կարգեալ՝ գահոյն մեծի, Սուրբ Աթոռոյն Էջմիած-Ուստաց երկրի՝ Հայոց ազգի, արթուն իովիւ՝ պետ պանծա-Յարքայանիստ՝ քաղաքն եկեալ, զեկեղեցիսն՝ որ անդ օծ-Ի կայսերէն՝ ըզջնորիս զըտեալ, և յիշխանացն՝ յոյժ յարգե-Հոգևորացն՝ մեծարեցեալ, զքանս հաւատոյ՝ ընդ նոսա խօ-Ձիաւատս ազգիս՝ յայտնաբանեալ, զեկեղեցիս՝ նոր նորո-Նոր Նախըտան՝ քաղաք դիմեալ, զհիմունս նորին՝ օծմամբ դրոշմեալ: Ձեկեղեցեաց զհիմունս արկեալ, և հիմնադիր՝ նոցին կո-Ըզդատարանս՝ ի մմին կարգեալ, և կանոնիւք զնա՝ զարդա-Որոքոց այրեաց՝ զգթասիրեալ, զգործս անվախճան՝ զկնի թո-Երեսնակի և ութն ամաց, եղև նկար՝ նորին դի-Ի հոյակապ մեծ քաղաքի, որ Պետրբուրգ՝ վերածայ-Ոայ ընդ չայի՝ ծայիս զուգեալ, ըզթիւ ծննդեան՝ փրկչին զը-

Ձիմանշանից ներքև պատվանդանի շրջանակի մեջ.

Ծայրագոյն նուիրակ Սուրբ Էջմիածնի, աշակերտ տեառն Սիմեոնի.

Արքազան Կաթողիկոսի Հայոցն ամենի. սանահնցի Արղութեմց Շիօշբեգի որդի եկեալ քաղաքս կայսերունի, արթունիստ յոյժ անուանի.

Ի յօծանել հայոցս եկեղեցի, կառուցեալ յանուն Սուրբ Կատարինի.

Պատվանդանից ներքև.

Իսկ սա արդեամբք փորագրի, երկու եղբարց բարեպաշտի.

Պարոնք Մարգար և Փիլիպպոսի, Մանուչարեանց Ջուղայեցի, 1780 յամին Փրկչի

Եւ ի Հայոցն ՌԱԻԹ թուի.

Սանկը Պետրբուրգ մեծ քաղաքի:

Иосифъ Архиепископъ Армянско́й.

Josephus Archiepisopus Armenorum.

Ընդի ամենամերձեւում երկայունակ չափածո՝

դիտի:

նի:

տի:

նի:

լի:

եալ:

ցեալ:

սեալ:

զեալ:

չեալ:

րեալ:

դեալ:

մաց:

նի:

տեալ:

Պատվանդանի ներքևի երկու անկյուններում, փոքր տառերով՝

C. L. Christnecké P.

Grav. J. Bougreaff.

2. Յովսէփ Արղութեան (դիմանկար), 1798, Ամսկտ Պետերբուրգ: Նկարի չափերը՝ 33,5x23 սմ:

Դիմանկարի շուրջ եղած շրջանակի մեջ՝

«Յովսէփ արք եպիսկոպոս Ռուսաց երկրի Գայոց, իշխան երկայնաքաղուկ Արղութեանց. ծնեալ յամի Տեառն 1743 եւ ՚ի մայիսի 23»:

Դիմանկարի ներքեւում, ուղղանկյան կենտրոնում, շրջանակի մեջ, Արղութեանի զինանշանի աջ և ձախ կողմերում, համապատասխանաբար գրված են.

Արքուն հովիւ ազանց Գայկայ,
Որ ՚ի դարուս այսմիկ ներկայ,
Ձի Կայսերէն շնորիս գտեալ,
Иосифъ Архиепископ Армянскій,
Князь Аргутинскій Долгоруковъ.

Մխիթար՝ սփոփիչ գտեալ նոցա:
Երջանկացոյց զազգս առ ապայ:
Եւ գեաօրէն նոցա հեղեալ:
Josephus Archiepiskopus Armenorum,
Princeps Argutlensis Dolgorukow.

Նկարի և ուղղանկյան միջև, ձախ կողմում, հստակ կարդացւում է. Грав. Березников. 1798 года.

Ծանոթություն. Այս դիմապատկերը, առանց տեղեկության, որ այն տպագիր է, լույս է ընծայվել Գ. ք. Աղանյանցի կողմից վերոհիշյալ «Դիւան հայոց պատմութեան» մեջ:

Այս պատկերի մասին է, որ խոսվում է «Գայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության մեջ:



Պատկեր 4. Հովսէփ Արղութեանի դիմանկարը (1798 թ.)

3. Յովսէփ Արքեպիսկոպոս Արղութեան (ղիմանկար), 1798, Սանկտ Պետերբուրգ: Նկարի չափերը՝ 17,2x26,2 սմ:

Շրջանակի մեջ. արքեպիսկոպոսական գավազանը ձեռքին կանգնած Յովսէփ Արղությանի նկարի շրջանակի տակ, Աստվածածնի պատկերն է մանուկ Յիսուսի հետ միասին, որի երկու կողմերում ժապավենի վրա գրված է.

«Иосифъ Архиепископ Армянской. Josephus Archiepiscopus Armenorum».

Այս բոլորի ներքևում, ուղղանկյան մեջ՝

«Կենդանագիր պատկեր Իշխան Երկայնաբազուկ Արղութեանց Յովսէփայ Արիի Եպիսկոպոսի Ռուսաց երկրի ամենայն Հայկազունեացս ազգի և հիմնադրի Նոր Նախիջևանու և Գրիգորիօպօլու. Ճնեալ յամի Տեառն 1743:»

Նկարի և ուղղանկյան միջև, աջ կողմում՝

Грав. Березников в Санктпетербурге 1798 год.



Պատկեր Տ. Հովսէփ Արղությանի ղիմանկարը
(1798 թ.)

4. Յովսէփ Արքեպիսկոպոս Արղուքեան (դիմանկար), 1800, Մօսկով: Նկարի չափերն են 22,3x46,5 սմ:

Ներքևում, Արղուքյանի զինանշանի երկու կողմերում և մերտեղում, գրված է.

Иосифъ святаѣйшій Патриархъ всея Арменіи, кавалеръ и князь Аргутинскіѣ Долгоруковъ..

Josephys sanctissimys totivs Armeniae Patriarcha eqves ac princeps Aruvtinvs Dolgorovkov.

ΙΟΥΣΙΦΟΣ Ὁ ΠΑΝΑΓΙΟΤΑΤΟΣ ΠΑΤΡΙΑΡΧΑ ΠΑΝΤΗΣ ΤΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ
ΠΠΑΡΧΟΣ ΚΑΊ ΑΡΧΩΝ ΤΗΣ ΑΡΓΥΤΙΑΣ ΔΟΛΓΟΡΥΚΟΥ

Ամենաներքևում՝

Կենդանագիր պատկեր տեառն Յովսէփայ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ամենայն Գայոց Զրտնաջան // և արդիւնաւոր Գովուպետի և իսկաքանչ Լուսաւորչի հաւատոյ և ազգի Գայկազունեաց որ 'ի դարս մեր մի // միայն երևեցաւ յատկացեալ նորիւք հոգևոր մշակութեամբ գորովագութ ազգասիրութեամբ և մեծամեծ գործովք պսակեալ կրկին պարգևօք 'ի մեծ ԿԱՅՍԵՐԱՅ և յատուկ հրովարտակօք կոչեցեալ իշխան Գայոց և ամենայն Ռուսաց // երկայնաբազուկ Արղութեանց, սերեալ 'ի յարմատոյ և 'ի շառաւիղէ Սուրբ Լուսաւորչին մերոյ յԱրշակունեաց Պաիլաւ//ունի և յիրաւամբ ժառանգ Աթոռոյն նորին Սուրբ Էջմիածնի: Ծնեալ 'ի Սանահին յամի Տեառն 1743. մայիսի 23. փորագրեալ 'ի Մօսկով 1800 յամի:



Պատկեր 5. Հովսէփ Արղութեանի
դիմանկարը (1798 թ.)

Ծանոթութիւն. Այս նկարը, առանց ներքևի մակագրութեան, տպագրվել է Աղ. Երիցեանց. Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, մասն Ա (1800-1832 թթ.), Թիֆլիզ, 1894, հատորի սկզբում, ցանկերից անմիջապէս հետո: Այն տեսել և շատ կարճ նկարագրում է նաև Ե. ք. Գեղամյանը (տե՛ս նրա Պատմական քաղաձմեր, պրակ առաջին. Յովսէփ Կաթողիկոս Արղութեան, Բազու, 1909, էջ 50):

ՍԱՍՈՒՆԻԿ ՎԻՐԱՔՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԷԶՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻ ԶՐԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

(17-րդ դ. - 20-րդ դ. սկիզբ)

Վաճառական հողատիրությունն ու ջրատիրությունը Հայաստանում սկիզբ են առնում քրիստոնեության պետական կրոն հռչակվելուց հետո: Բավականաչափ հողատարածություններ է ձեռք բերում հատկապես Էջմիածնի վանքը, որը, որպես կաթողիկոսության կենտրոն, հիմնադրվել է 303 թ.: Սկզբնական շրջանում վանքն իր կալվածքներն ընդլայնում է հեթանոսական տաճարներից և քրմերից թոճազրավված հողերի հաշվին: Արշակունյաց հարստության, հետագայում Բագրատունիների ու Զաքարյանների տիրապետության շրջանում վանքն ստացել է ընդարձակ մշակելի տարածություններ ու այլ կալվածքներ, որոնք մվիրաբերվում էին թագավորներից, մրանց մերձավորներից և աշխարհիկ ֆեոդալներից: Հետագա դարերում, երբ Հայաստանում իշխում էին օտար նվաճողները, վանքը գրեթե զրկվում է այդ կարգի խոշոր կալվածքների և առանձին գյուղերի մվիրատվությունից, դեռ «ավելին» մինչ այդ ձեռք բերված կալվածքների մի մասը հափշտակվում է օտար տիրապետողների կողմից:

1431 թ. վանքի վաճառայր Գրիգոր Մակվեցի եպիսկոպոսը կարակոյունլուների տիրապետության ժամանակ Արարատյանց երկրի փոխարքա (ամիր) Ռուստամ Օրբելյանից գնում է Վաղարշապատ, Աշտարակ, Բաթոհնջ, Նորագավիթ, Աղավմատում, Թեղենիս-Քիրաջլու և Մուղնի գյուղերից 6-ական դանգ հողամաս: Ռուստամ Օրբելյանի այս վաճառքը ձևական էր, այն փաստորեն մվիրատվություն էր: Այնուհետև Գրիգոր Մակվեցին դրանք վակֆ է անում Էջմիածնի վանքին:

Արարատյան երկրում տնտեսական կյանքն աշխուժանում է 1441 թվականից հետո, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսարանը Կիլիկիայի երբեմնի Սիս մայրաքաղաքից վերստին տեղափոխվում է Էջմիածին: Վանքն աստիճանաբար հարստանում է, ընդարձակում կալվածքները, սկսում ծավալել շինարարական գործունեություն: Սիմեոն երևանցու վկայությամբ, 15-րդ դարի կեսերին Էջմիածնի վանքի վարելահողերը, այգիները և արոտատեղիները կազմում էին 2335 սոմար տարածություն¹:

16-րդ դարում թուրք-պարսկական պատերազմների հետևանքով Հայաստանի համար սկսվում է տնտեսական քայքայման և քաղաքական իրավազրկության մի ծանր շրջան: Արարատյան դաշտի բնակավայրերի հետ միասին Էջմիածնի վանքը «խալառ մնաց ի յամայութեան»: Ժողովրդական տնտեսության անկման այս շրջանը տևում է մինչև 17-րդ դարի 30-ական թվականները: Վանքի տնտեսական վերելքն սկսվում է Մովսես Սյունեցի

¹ Սիմեոն Կաթողիկոս երևանցի, Զամբո գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաչից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 152-154 (այսուհետև՝ «Զամբո»):

Կաթողիկոսի եռանդուն գործունեությամբ (1628-1632 թթ.): Երբ տևական խաղաղության պայմաններում վերականգնվում է գյուղատնտեսությունը, զարգանում են արհեստներն ու առևտուրը:

Փիլիպոս Աղբակեցի Կաթողիկոսի օրոք (1633-1655 թթ.) վանքն ուներ միայն Թիրաշլու գյուղի ամբողջ 6 դահգ մուլքը: Մյուս գյուղերը, այդ թվում՝ Օան Վաղարշապատը, յուրացրել էին օտար իշխողները: Սակայն Փիլիպոս Աղբակեցու և նրա հաջորդ Հակոբ Զուղայեցու (1655-1680 թթ.) օրոք վանքն աստիճանաբար գնում է տասնյակ գյուղեր, որի շնորհիվ արդեն մուլք ուներ 23 գյուղերում:

Էջմիածնի վանական տնտեսության գլխավոր ճյուղը երկրագործությունն էր, մասնավորապես դաշտավարությունը և այգեգործությունը, որը հիմնված էր սեփականության երկու ձևի վրա՝ մուլքադարական, երբ արտադրությունը կազմակերպում էին գյուղացիները և վանքին վճարում հասույթի 1/10 մասը, մյուսը սեփական կալվածքներն էին, որտեղ արտադրությունը վանքն էր կազմակերպում և ինքն էլ տնօրինում ամբողջ եկամուտը: Վանքի սեփական հողերի և կալվածքների մեծ մասը կենտրոնացած էր Վաղարշապատ գյուղում: Էջմիածնի վանքի սեփական տնտեսության ցանքատարածությունները 17-րդ դարի վերջերին կազմում էին շուրջ 3.000 սոմար: Մոտավորապես այդքան տարածություն էլ գրավում էին վանքի այգիները: Սակայն Քասաղի շրերը հազիվ բավականացնում էին վանքի ամբողջ ցանքատարածության միայն կեսի ոռոգմամբ: Ուստի վանքի առաջնահերթ խնդիրը դարձան ջրաշինարարական աշխատանքները:

Էջմիածնի վանքի ջրաշինարարական աշխատանքների մասին բավականաչափ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Սիմեոն Երևանցի Կաթողիկոսը «Զամբո»-ի 13-րդ գլխում: Այստեղ նա մանրամասն անդրադառնում է նաև Փիլիպոս Աղբակեցու և հաջորդ Կաթողիկոսների ջրաշինարարական ձեռնարկումներին:

Փիլիպոս Կաթողիկոսը հիմնովին վերակառուցում է դեռևս Վանի թագավորության ժամանակներում Քասաղ գետից սկզբնավորվող ջրանցքը և անվանում «Շահարխ»: Սակայն վերջինիս ջրթողունակության սակավության պատճառով Կաթողիկոսը որոշում է ուրիշ ակունքից ջուր բերել ու մեծացնել ջրանցքի ելքը: Նա Գեղաձոր (Գյոզալդարա) գետի ջրի կեսից ավելին, որը բնական ընթացքով հոսում էր դեպի Շիրակի դաշտ, Ամբերդի ձորով ուղղում է դեպի Քասաղ գետ:

Ջրաշինարարները «մեծ աշխատութեամբ և դրամածախութեամբ» քանդել են քարակարկառները, ջուրը հասցրել Ամբերդ գետին, որը Քասաղին է միանում Ոսկեվազ գյուղում: Նոր ջրանցքի շինարարական աշխատանքները կազմակերպել է Գրիգոր վարպետը, որն էլ Էջմիածնի վանքի Տրդատի դուռն վրա 1639 թ. այդ մասին արձանագրություն է թողել: Գեղաձորի ջրանցքը Քասաղի ոռոգման կարողությունն ավելացրել է 6-7 «ջրաղացի ջրի» չափով²:

Փիլիպոս Աղբակեցին կառուցում է նաև երեք ջրամբար: Առաջինը, որը ամենամեծն էր և «բազմախարճ», կառուցված էր Մոլլադուրսուն (Շահումյան) գյուղի մոտ, երկրորդ ջրամբարը գտնվում էր վանքին պատկանող, այսպես կոչված, «Ղոփ այգու» արևելյան կողմում: Այս ջրամբարը երեքից ամենափոքրն էր: Երրորդ ջրամբարը կառուցված էր «Մանգասարի այգու» գլխամասում, որը

² «Զամբո», էջ 23:

դարձյալ պնդականում էր Էջմիածնի վանքին: Այս երեք ջրամբարներն էլ սնվում էին Քասաղի ջրերով և ոռոգում ինչպես նշված այգիները, այնպես էլ վանքին պատկանող այլ ցանքատարածություններ: Փիլիպոս Աղբակեցին ձեռնարկում է նաև ստորերկրյա ջրային պաշարների օգտագործման աշխատանքներ: Կառուցվում են ստորգետնյա ջրանցքներ (քաֆրիզներ): Նա «համեալ է գշուր մի ի յատակէ Սրբոյ Աթոռոյս, որ կոչի Քամքան, - գրում է Սիմեոն Երևանցին, - որ է ջուր չափ միոյ ջրաղացի ջրոյ»³: Այս ստորգետնյա ջրանցքը հասնում էր մինչև Գայաննի վանք և ոռոգում նրա շրջակայքում տարածված այգիներն ու ցանքատարածությունները: Այն կոչվում էր «Սարի քամքան», որի շնորհիվ չորացնում են Մայր Տաճարի պատերը: Կաթողիկոսը երկու այդպիսի ջրանցք էլ կառուցում է Օռոլու (Ռաշտավան) գյուղի մոտերքում, որոնք նույնպես ոռոգում էին Էջմիածնապատկան ցանքատարածությունները:

Փիլիպոս Աղբակեցին հավանաբար առաջիններից մեկն էր, որ ուշադրություն է դարձել Սևանա լճի վրա, ցանկացել ոռոգման նպատակներով օգտագործել լճի ջրերի դարավոր պաշարները: Նա 1649 թ. «...յաւել գշուր ի Հրազդան (այսինքն Զանկի գետոյն) ի Սևանա ծովակէն, բանալով գյառաշն մեծաւ աշխատութեամբ և դրամածախութեամբ», - գրում է Սիմեոն Երևանցին⁴: Սևանա լճի ջրերով գետի ելքի մեծացնելը կնպաստեր ջրերի լրացուցիչ քանակության հաշվին գետի ստորին հոսանքում նոր ջրանցք կառուցելու գործին:

Ջրաշինարարական աշխատանքներն էլ ավելի են ընդլայնվում հաջորդ Կաթողիկոսի՝ Հակոբ Զուղայեցու օրոք: Նա կառուցել է տալիս Ռինգ ջրամբար: Առաջին ջրամբարը կառուցվում է Մուլադուրսում գյուղի հանդեպ՝ Փիլիպոս Աղբակեցու ջրամբարի հարևանությամբ: Այս կառույցը կոչվում էր «Քարաքթի գյոլ» կամ Ռոյակի անունով: Այն լցվում էր Քասաղի, ինչպես նաև ձյան և անձրևի ջրերով և ոռոգում վանքին պատկանող ցանքատարածությունները: Ըստ «Զամբուի» հեղինակի, ջրամբարն ու ջրանցքը գործել են մինչև 1700 թ.: Երկրորդ ջրամբարը շինարարները կառուցել են «Քարաքթի գյոլից» քիչ ներքև, Վաղարշապատի այգիների գլխամասում, որը նույնպես սնվում էր Քասաղի ջրերով: Երրորդ ջրամբարը գտնվում էր Հոփսիսի վանքի արևելյան կողմում, Երևանի ճամապարհի ներքևում: Չորրորդ ջրամբարը, որն ամենահինն էր, Հակոբ Զուղայեցին կառուցել է տալիս Վաղարշապատ քաղաքի ներքևում, Օռոլու գյուղի մոտերքում: Այս ջրամբարը լցվում էր Փիլիպոս Աղբակեցու կառուցած երկու ստորգետնյա ջրանցքների ջրերով: Ջրամբարը երիզված էր ամուր պարսպով:

Եկամտաբեր ու գեղեցկատես ջրամբարը գրավել էր Երևանի Սաֆիկուլի խանի ուշադրությունը, նա ցանկանում էր գրավել կամ չնչին գումարով ձեռք բերել Հակոբ Զուղայեցու ջրանքերով կառուցված այդ ջրամբարը: Կաթողիկոսի և խանի միջև հակասությունները աստիճանաբար ավելի ու ավելի են սրվում: Այդ ընթացքում Զուղայեցուն հաջողվում է գաղտնի գնալ Սպահան և այդ մասին հայտնել Օսմ Սուլեյմանին: Սաֆիկուլի խանը ձերբակալվում է և բռնագրավվում նրա ողջ ունեցվածքը⁵:

³ «Զամբու», էջ 197:

⁴ «Զամբու», էջ 23:

⁵ Զաքարիա Սարկավազ, Ժամանակագրություն, հ. 2-րդ, էջ 78-83:

Հիգերորդ ջրամբարը կառուցվել է դեպի Քյուլթափա (Մոխրաբլուր) գնացող ճամապարհի մոտ: Այն լցվում էր ևս մրա կառուցած, այսպես կոչված, մերքին Բանջանի ջրերով: Վերջինս ոռոգում էր վանքապատկան մերքին փոսի արտերը:

Հակոբ Զուղայեցին զբաղվում է ման քաֆրիզների շինարարության հարցով: Նա Բասադ գետի կողմերից պատրաստել է տալիս մի ստորգետնյա ջրանցք, որը հասնում էր վանք և միանում Փիլիպոս Աղբակեցու կառուցած «Սարի քանքանին»՝ ավելացնելով վերջինիս ոռոգման կարողությունը: Այդ երկու ստորգետնյա ջրանցքները միասին ունեին երկու ջրաղացի ջուր և ոռոգում էին Ս. Գայանե վանքից մերքև ընկած դաշտի ցանքատարածությունները, որոնք ձգվում էին մինչև մեծ ջրամբարի ոռոգման ցանց: Հակոբ Զուղայեցին այս քաֆրիզի բազանի հիման վրա կառուցում է մի ջրաղաց և բրնձահամ: Նա Ալիբեկլու գյուղի մոտերքում փորել է տալիս ևս մի քաֆրիզ՝ մրա վրա կառուցել տալով «ջրաղացս և բրնձահամս և արար ծով և ելից ձկամբ: Տնկեաց տունկս առ ափամբ ծովակին և սերմանեին բազում սերմանս»:

Ջրաշինարարական աշխատանքները շարունակվում են ման Եղիազար Այնթապեցի (1631-1691 թթ.) և Նահապետ Եղեսիացի (1691-1705 թթ.) կաթողիկոսների օրոք:

17-րդ դարում ազգությամբ թուրք, երևանցի Պուրճ-Ալի բեկը Հրազդան գետից ջրանցք է հանում և ջուրը հասցնում իր Զաֆարապատ (Մախկին Կավակերտ, այժմ՝ Արգավանդ) կալվածք: Այդ մասին Սիմեոն Երևանցին գրում է. «Ի մերքոյ կուսէն ջրաղացացն Նորագեղու և Սարվանդար կոչեցեալ գեղջն ծակեալ զեանո՝ ջուր հանէ և ընդ հատակաւ երկրի բերէ ի փոքր ձորակն հասուցանէ»⁶: 1698 թ. Նահապետ Եղեսիացին Պուրճ-Ալի բեկի ժառանգներից 50 թումանով գնում է հիշյալ ջրանցքը և, շարունակելով շինարարական աշխատանքները, ջուրը հասցնում մինչև Ս. Հռիփսիմե վանքի շրջակայք: Սակայն մախկին տները, ջրանցքը վաճառելուց հետո, փորձում են դարձյալ օգտվել նրանից: Աստվածատուր Համադանցի Կաթողիկոսը (1715-1725 թթ.) 1717 թ. թողոթում է Երևանի Ալի խանին և կարողանում նրանց զրկել ջրանցքից օգտվելու իրավունքից⁷:

Էջմիածնի վանքի այս ջրանցքը Սիմեոն Երևանցու ժամանակ (1765 թ.) արդեն խաթարված էր:

Աստվածատուր Կաթողիկոսը 1772 թ. Օշականի գյուղական համայնքից 9 ու կես թումանով գնում է գյուղի առվի ջրի 1/3 մասը: Հետաքրքրական է այս ջրի հետ կապված պատմությունը: Մուլադուրսուն գյուղի գեղջավազը, որն ազգությամբ թուրք էր, Օշականի իր այգին ջրելու համար ցանկանում է օգտվել վանքի ջրից: Սակայն Աստվածատուր Համադանցին չհամաձայնելով՝ դիմում է Երևանի Մեհր-Ալի խանին: Վերջինս Կաթողիկոսին տալիս է հատուկ հրամանագիր, որով արտոգնում էր Օշականի առվի ջրի նկատմամբ վանքի սեփականատիրական իրավունքները⁸:

Աբրահամ Խոշաբեցի Կաթողիկոսի օրոք (1730-1734 թթ.) Էջմիածնի վանքի աթոռակալ Պետրոս վարդապետ Քյուրթուր Հոռմկլայեցին կամեցնում է Մեծամոր գետից ջուր բերել՝ Վաղարշապատի ցանքատարածություններն ու այգիները

⁶ «Զամբռ», էջ 200:

⁷ «Զամբռ», էջ 201:

⁸ Նույն տեղում, էջ 229-230::

ոռոգելու համար: Աշխատանքները բավականին առաջ էին գնացել, երբ Էջմիածնի վանքի և ջրուղիներից առընթեր կաթոլիկ գյուղերի մի քանի գյուղերի միջև վեճ է ծագում: Հարցը հասնում է Արարատյան մահաձգի կառավարիչ Իբրահիմ փաշային ու շարիաթական իշխանություններին: Քանի որ այդ գյուղերը պետական սեփականություն («Միրի») էին, որոնցից պետությունը հարկեր էր վերցնում, ուստի հարցը լուծվում է գյուղացիների օգտին. Իբրահիմ փաշան որոշում է ջրի կեսը տալ ջուր բերողին, այսինքն՝ Էջմիածնի վանքին, իսկ մյուս կեսը՝ Վերին Զեյվա, Ներքին Զեյվա և Ներքին Այնալու գյուղերին, որոնց հողերով պետք է անցներ ջրանցքը, ու այդ մասին հրապարակում է հատուկ հրամանագիր⁹: Նույնպիսի վճիռ է կայացնում մահ Երևանի շարիաթական դատարանը¹⁰: Վանքը չի համաձայնվում շարունակել ջրանցքի կառուցումը, մահ ջրուղիների շատ հատվածներում հայտնաբերված ջրի մեծ կորուստների՝ «հարամիների» (ծծանցումներ) առկայության պատճառով, որոնց դեմ պայքարելը այն ժամանակ անհնարին է եղել: Պետական ատյանի վերահիշյալ որոշումներից և փաշայի հրամանագրից հետո ջրաշինարարական աշխատանքները դադարեցվում են:

Ջրաշինարարական աշխատանքներով զբաղվել և վանքի ջրի սեփականատիրական իրավունքները պահպանել է Ղազար Զահկեցի կաթողիկոսը (1737-1751 թթ.): Այս կաթողիկոսի օրոք կառուցվում են Ղազարապատ կոչվող հյուրանոցը (ավելի քան 30 սենյակ), պարտեզ, ջրավազան, բաղնիք և այլն: Այս և մնաց մպատակների համար օգտագործվել են Արարատյան դաշտի արտեզյան ջրերը՝ ստորերկրյա ջրանցքների միջոցով:

Ծիմարարական եռանդուն գործունեություն է ծավալել մահ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը (1763-1780 թթ.): Նրա կաթողիկոսության շրջանում ընդարձակվում են վանքի կալվածքները, կառուցվում են գործանոցներ, ջրանցքներ և այլն, վանքապատկան տնտեսությունն ավելի է հարստանում: Նրան հաջողվում է վաղարշապատի մոտ գտնվող «Դուլթափա գյուղում հաստատված Հաջիկառալու քոչվոր ցեղին տեղահան անել, որը բռնի օգտվում էր վանքապատկան ջրից, ինչպես մահ Հյուսիս-Ալի խանից գնել այդ գյուղի թ դանգ մուլքը: Ապա մահ մեծ ջանքեր գործադրելով կարողանում է մուլքադարական իրավունքով գնել մահ Եղվարդ գյուղի 4,5 դանգ մուլքը, որն ուզում էր գավթել մույն խանը:

Սիմեոն Երևանցին 1788 թ. վանքի հատակից հանում է մի մոր քահրիզ և միացնում Փիլիպոս Աղբակեցու կառուցածի հետ: Նա մորոգում է Հակոբ Զուղայեցու կառուցած ջրանցքները, որը գտնվում էր Ս. Հոփսիսիմ վանքի արևելյան կողմում:

Էջմիածնի վանքն օգտվում էր մահ Խաթունարիսի ջրանցքից, որը կառուցվել էր 1680 թ.: 1718 թ. Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը Ալիբեկլու գյուղի համայնքից 25 թումանով գնում է մի ընդարձակ հանդամաս, որը կոչվում էր Իմամ-արխ և ոռոգվում Խաթունարիսի ջրանցքով: Սակայն գյուղացիները բազմիցս բողոքել են այդ հողամասը Էջմիածնի վանքից ետ վերցնելու համար: Համաձայնագրում հաջորդող կաթողիկոս Աբրահամ Կրետացին գյուղացիներին տվել է ևս 12 թուման, որպեսզի չդժգոհեն:

Թուրքական կարճատև տիրապետության ժամանակ (1724-1736 թթ.) Ալիբեկլուի գյուղական համայնքի ջրահարկը զանձելու իրավունքն արդեն տրվում

⁹ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավերագիր 340:

¹⁰ Նույն տեղում:

է երկու մուլքադարձերի, որոնք Հակոբ Օսմախեցի Կաթողիկոսից պահանջում են այդ հողամասի ջրաճարկը: Հարցը լուրջ տարաձայնությունների տեղիք է տալիս, և Երևանի դատարանը այն լուծում է վանքի օգտին: Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի ժամանակ Ալիբեկյուի մուլքատերերը կրկին բողոքում են: Կաթողիկոսն ստիպված է լինում նույնիսկ Սպահան դիմելու, որպեսզի ջրաճարկ չվճարի իրավատեր մերկայացող մուլքադարձերին, համաձայն ջրանցքի կառուցողների կտակի¹¹: Սիմեոն Երևանցուն հաջողվել է ապացուցել իր արդարացիությունը, սակայն Հյուսեյն-Ալի խանը, որն արդեն ամրապնդել էր իր տիրապետությունը և ձեռք գցել Երևանի խանությունը, զավթում է Սեֆիապատի և խաթունարխի ջրանցքներն ու գյուղերը, այդ թվում՝ մահ Էջմիածնի վանքից պատկանող իմամարիս կոչված հանդամասը: Հետագայում, հավանաբար 19-րդ դարի կեսերին, վանքն ի վերջո տիրում է խաթունարխի ջրանցքի ջրի մի մասին, որը դարավերջին ոռոգում էր Էջմիածնապատկան 200 դեսյատին ցանքատարածություն: Էջմիածնի վանքի ոռոգման ցանցը ապահովում էր հողերի բարձր բերքատվությունը և հնարավորությունը ընձեռում մշակել այնպիսի եկամտաբեր կուլտուրաներ, ինչպիսիք բրինձն ու քամբակն էին: 19-րդ դարի սկզբներին դրանք զբաղեցնում էին վարելահողերի կեսից ավելին: Միայն բրնձի արտադրությունից վանքը տարեկան ստանում էր 25 հազար ռուբլու եկամուտ: Բրնձի տարեկան բերքը կազմում էր ավելի քան 100 տոննա, իսկ քամբակինը՝ մոտ 900 լիտր: Վանքի ընդարձակածավալ հողերի կեսից քիչ ավելա խաղողի այգիներն էին, որոնց բերքի բազայի վրա ստեղծվել է խոշոր գինեգործական տնտեսություն՝ տարեկան շուրջ 10 հազար դուլլ գինու արտադրությամբ, որի մեծ մասն, անշուշտ, հանվում էր վաճառքի: Վանքը ցանում էր մահ 400 սոմար ցորեն, 160 սոմար գարի, 30 սոմար կտավհատ, 4 սոմար քունջութ և այլն¹²: Իբրև անասնակեր, վանքը ցանում էր մահ առվույտ և այլ կերպրույսեր: Երբ վանքը հայկական գյուղեր էր գնում մուլքադարձական իրավունքով, նրանցից տուացված եկամուտները վանքի կողմից օգտագործվում էին մահ շինարարական, արտադրական, բարեգործական նպատակներով: Այդ գյուղերը մի՞չ այդ գտնվում էին մահնեղական քոչվոր ավազանու, պարսիկ խաների, թուրք բեկերի իշխանության տակ, որոնք հայ աշխատավորներին կողոպտում էին բարբարոսական, հիրավի անմարդկային մեթոդներով և կուտակված հարստությունը վատնում անարտադրողաբար: Վանքը աշխատանքով ու ապրուստի միջոցներով ապահովել է շրջակա գյուղերի հայ բնակչությանը:

Ներսես Աշտարակեցի Կաթողիկոսի (1843-1857 թթ.) նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ կառուցվում է Էջմիածնի մեծ ջրամբարը, որն ունի 170 մ երկարություն, 70 մ լայնություն և 7 մ խորություն: Ներսիսյան պարսպապատ ու ծառազարդ լճակը գոյություն ունի մինչև այժմ և ունի 80 հազար խմ ջրատարողունակություն: Նրա պատերն ու հատակը կառուցված են սիրառաջ

¹¹ «Դիվան հայոց պատմության», գիրք Գ, «Սիմեոն Կաթողիկոսի հիշատակարանը», մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 472-474: Զրանցքը կառուցել են Երևանի Սեֆի խանը և իր կին խաթունը, որի անունով էլ կոչվում է այդ ոռոգման համակարգը: Ըստ «Զամբուի» հեղինակի, նրանք «վախճ ու խելրաթ» (հիշատակ և ողորմություն) են արել այն և հողագործներից զանձել միմիայն քահրա՝ բերքի 1/5-ը, իսկ ջրաճարկը՝ մուլքը (բերքի 1/10-ը), զիջել են երկրագործներին: Մահրամասն տե՛ս Ս. Վիրաբյան, Մեծամորի ջրային ռեսուրսների տնտեսական օգտագործման պատմությունից, «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1984, թիվ 2:

¹² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավերագիր 117:

քարերով: Ջրամբարի կառուցման համար ծախսվել է 120 հազար ռուբլի: Ջրամբարը սնվում էր դեռևս 17-րդ դ. կառուցված չորս ստորգետնյա ջրանցքների ջրերով: Ջրամբարի ջուրն օգտագործվում էր ինչպես վանքի կարիքների, այնպես էլ վանքից քիչ հեռու գտնվող մոտավորապես մեծ անտառի (100 դեկադար) ու մրա ջուրը գտնվող ցանքատարածությունների ոռոգման համար: Ջրամբարում բուծում էին մեծ ձկներ:

Էջմիածնի վանքը երբեմն գտնվում էր ամբողջական ջրանցքներ, ոռոգման ջրի քաժիճներ ու մասեր: Այնքանաճոր Ջուղայեցի Կաթողիկոսը (1706-1714 թթ.) Իրանի Թավրիզ քաղաքում Մուհամմեդ Մուսիից գնում է «երկու շաբաթեճ ջուր» 6 թումանով, Մահմեդ Օնֆիից՝ ևս «երկու շաբաթեճ ջուր»՝ 5 թուման 9000 դինարով, Սաշի խանումից՝ «մեկ շաբաթեճ ջուր»՝ 3 թուման 3000 դինարով, և Մուհամմեդ Ռահիմից՝ «Ժ. (14) յօրեճ մեկ ատուր ջուր»՝ 6 թումանով¹³: Այս գնած ջրերը ոռոգում էին Էջմիածնապատկան այգիները, որոնք գտնվում էին Թավրիզում:

Էջմիածնի արտեզյան ավազանի ջրերի օգտագործման, գործող քահրիզների պահպանման, մոր ստորանցքների անցկացման ու պատրաստման հարցերով զբաղվել է մեծ Մկրտիչ Ա Նրբիմյանը (Հայրիկ) (1892-1907 թթ.): Նա իր հայրենի վանք քաղաքից հրավիրված հմուտ արհեստավորների միջոցով մոր քահրիզներ է կառուցում և դրանք միացնում գործողների հետ: Դրանցից մի քանիսը գործում էին մինչև մեր դարի 30-ական թվականները և ստանորակ ու վճիռ ջրով ապահովում ինչպես վաղարշապատ քաղաքի բնակչությանը, այնպես էլ վանք այնպիսի բազմահազար ուխտավորների կարիքները: Բացի այդ, քահրիզների ջրերն օգտագործվում էին մեծ վանքի և վեհարանի բակերի պարտեզներն ու ծաղկանոցները ոռոգելու համար: Բացի դրանից, մի քանիսը կառուցված լինելով 17-րդ և 18-րդ դարերում, խաթարվել էին և շարքից դուրս եկել: Ահա այդ էր պատճառը, որ Կաթողիկոսը 1906-1907 թթ. նախաձեռնում է Էջմիածնի հովտում խորքային հորերի պատրաստման աշխատանքներ: Նախատեսվում էր արտեզյան ջրերով ոռոգել 500 դեկադարի հողատարածություն: Սակայն տեխնիկայի բացակայության պատճառով չհնարարական աշխատանքները քիչ արդյունք տվեցին. այդ ջրերով ոռոգվեցին հազիվ մի քանի դեկադարի ցանքատարածություններ:

Հետաքրքրական է Էջմիածնի ջրանցքի վերակառուցման պատմությունը: Կարելի է ենթադրել, որ ջրանցքն ավերվել է թուրքական տիրապետության տարիներին (1724-1736 թթ.): Այն խափանված էր Ի. Օռպենի շրջագայությունների ժամանակ (1828-1830 թթ.), որը մամրամասն ուսումնասիրել է մեծ Հայկական մարզի ջրային տնտեսությունը: Նրա ժամանակ երևանի բերդի մոտից՝ Զանգու (Հրազդան) գետից հանված էին և գործում էին Նորագավթի, Ուլուխամլուի, Հասան-Հավարի, Նորագեղի, Օրթաարխի և Օիրաբադի ջրանցքները¹⁴: Իսկ Էջմիածնի ջրանցքի մասին, որը կոչվում էր Էջմիածնի դալմա, Օռպենը չի հիշատակում՝ խաթարված լինելու պատճառով: Էջմիածնի ջրանցքը չէր գործում մեծ Հ. Օսմանյանի և Օսմանյանի ժամանակ (1842 թ.): Վերջինս մանրամասն նկարագրում է այդ ջրանցքի ընթացագիծը՝ մրա գլխամասից մինչև Էջմիածին: Նա միաժամանակ վկայում է, որ թեև առում

¹³ «Ջամրո», էջ 201-202:

¹⁴ И. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, стр. 387-394.

խափանված էր, բայց դրա ուղղությունը լավ նշմարվում էր¹⁵։ Զրանցքի վերականգնումը կենսական նշանակություն կունենար վաճառի համար, եթե նկատի ունենանք, որ Քասաղից համված ջրանցքը հեռու էր քավարարելու Էջմիածնի պահանջները։ Վաճառ ավելի էր ընդարձակել իր տնտեսությունն ու ցանքատարածությունները։ 1860-ական թվականներին Էջմիածինը միայն Երևանի մահամզում ուներ 22 հազար դեպիտոն հող¹⁶։

1867 թվականի հուլիսի 2-ին Կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (1866-1882) հատուկ կոնդակով հանձնարարում է Սիմոնին՝ Սարգիս արքեպս. Զալայանի գլխավորությամբ զբաղվելու Էջմիածնի ջրանցքի վերանորոգման հարցով¹⁷։ Նահանգային և բարձրագույն իշխանությունները պահանջում էին, որ վաճառ այդ ջրանցքի նկատմամբ ունենա ջրատիրական մոր իրավունք։ Երևանի մահամզային վարչությունը վաճառից պահանջում էր աշխատանքները դադարեցնել։ Սակայն վաճառ, հաշվի չառնելով ոչ մի խոչընդոտ, շարունակում է ջրանցքի վերականգնման աշխատանքները։ Ելնելով ավանդական այն իրավունքից, որ ջրանցքը վաղնջական ժամանակներից պատկանել է վաճառին, Կաթողիկոսը գտնում է, որ պարտավոր չէ թույլտվություն խնդրել ջրանցքը վերակառուցելու համար։ Երեք տարվա ընթացքում վաճառն հաջողվում է ոչ միայն լիովին վերականգնել ջրանցքը, այլև իրականացնել իր սեփականատիրական իրավունքը ջրանցքի նկատմամբ։ Զրանցքն անարգել գործում է մինչև 1881 թ. գարունը՝ մինչև Հրազդան գետի վարարելը, որի հետևանքով քանդվում է ջրանցքի գլխամասը։ Սիմոնը որոշում է մորից վերակառուցել ջրանցքի քանդված հատվածները և այդ մասին հայտնում է Երևանի մահամզային վարչությանը։ Երևանի մահամզ է գործուղվում ջրաշինարար ինժեներ Ս. Պ. Պատրյուկը, որին մահամզապետը հանձնարարում է զբաղվելու Էջմիածնի ջրանցքի վերականգնման աշխատանքներով։ Հատուկ հանձնաժողովը՝ Երևանի գավառապետի, ինժեներ Պատրյուկի և վաճառի ներկայացուցիչ նախկնպոս Մեսրոպ Սմբատյանի մասնակցությամբ, 1883 թ. ամռանը չափում է գետի ջուրը, առաջին հերթին բավարարում Զանգիբասարի գյուղական համայնքների պահանջները, իսկ ջրի ավելցուկը՝ 22,6 խորանարդ ֆուտ (630 լ/վրկ) հատկացնում Էջմիածնի վաճառին¹⁸։

Սակայն ջրանցքի վերականգնման հարցը դրական լուծում չի ստանում ու ձգձգվում է տարիներ շարունակ։ 1897 թ. մայիսի 8-ին Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը անձնական նամակով դիմում է Կովկասի ջրերի տեսուչ Վեյս ֆոն Վեյսինհոֆին՝ Ռիշեցնելով ջրանցքի վերականգնման գործի ձգձգումը և խնդրում արագացնել հարցի լուծումը։ Չստանալով դրական պատասխան՝ 1898 թ. հունվարի 28-ին Կաթողիկոսը առանձին գրությամբ նույն խնդրանքով դիմում է Կովկասի կառավարչապետ Գ. Ս. Գոլիցինին, մի մարդու, որին շարունակ զբաղեցրել է Էջմիածնի վաճառի ունեցվածքը բռնագրավելու և Էջմիածնապատկան հողերը ռուսական զաղութացմանը ծառայեցնելու միտքը։ Էջմիածնի

¹⁵ Թովմ. Օսմիսաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հիմա գաւառաց Կարարատայ, հ. 1-ին, Վաղարշապատ, 1842, էջ 137-138։

¹⁶ Հայ ժողովրդի պատմություն, ՀԱՍՀ ԳԱ հրատ., հ. 6-րդ, Երևան, 1981, էջ 41։

¹⁷ ՀԱՍՀ մեղրագիտի և ջրային տնտեսության մինիստրության արխիվ, գ. 2296, թթ. 29-30։

¹⁸ Նույն տեղում։

Անատմամբ Գուլիցիցի չարականության պատճառներից էր նաև այն, որ նրան թվում էր, թե վանքի գույքի եկամուտների մեծ մասն օգտագործվում է հակակառավարական մպատակներով: Գուլիցիցի մերժում է խրիսյանի խնդրանքը¹⁹: Էջմիածնի ջրանցքի վերակառուցման հարցը ձգձգվում է մինչև 1912 թ., երբ վանքը վերջապես թույլտվություն է ստանում վերականգնելու այն և ձեռք է բերում ջրատիրական իրավունք:

Այդուհանդերձ, 1912 թ., 45 տարվա քաջքշուկից հետո, ջրաշինարար ինժեներ Ս. Ֆ. Զավալիշիցի կազմած նախագծով վանքն սկսում է ջրանցքի վերանորոգման աշխատանքները: 1913 թ. գարնանը Հրազդանի ջրերը վերակառուցված ջրանցքով հասնում են Վաղարշապատ: Սակայն ջրանցքի ընթացագծի առանձին հատվածներում հայտնաբերվում են բազմաթիվ ծծանցներ, իսկ հրաբխային շերտերում ջուրը խոտորվում էր, արագորեն ներծծվում և չէր հասնում ցանքատարածություններ:

1914 թ. սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, և ջրանցքի մոտ վերակառուցման աշխատանքներն ամբողջովին ընդհատվում են: Էջմիածնի ջրանցքը հիմնովին վերակառուցվեց և շարունակությունը կառուցվեց 1922 թ. մոյսեբերին:

Այսպիսով, Էջմիածնի կաթողիկոսները և միաբանությունը, ամեն կերպ դիմակայելով օտար նվաճողներին և նրանց նկատմամբ կիրառելով դիվանագիտական ճիշտ մոտեցում, կարողանում են տարբեր ուղիներով հետզհետե ընդարձակել ու պահպանել վանքի հողային տարածություններն ու մյուս կալվածքները:

¹⁹ Նույն տեղում:

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՅՈՒ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Նորայր Բյուզանդացին (Ստեփան Գապեգյան-Միզմենյան) ծնվել է Կ. Պոլսում 1845 թվականին: Սկզբնական կրթությունն ստացել է Բերայի Մխիթարյան դպրոցում: 1854 թվականից ուսումը շարունակել է Սուրբ Ղազարի վանքում: 1866 թվականին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ստանալով Հայր Հարություն Թերզոնց անունը:

1866-1868 թթ., որպես հայերենի և ֆրանսերենի ուսուցիչ, դասավանդել է Վենետիկի Ռաֆայելյան, ապա Քաղկեդոնի Մխիթարյան վարժարաններում: 1868-ին վարել է «Բազմավեպ»-ի տեսչությունը: 1868-69-ին եղել է վանքի մատենադարանապետի պաշտոնում: 1870-ին, հրաժարվելով հոգևորականի կոչումից, մեկնել է Փարիզ, ապա Կ. Պոլիս: Կ. Պոլսում զբաղվել է մանկավարժությամբ և բանասիրությամբ:

1881-ին անուսնացել է Եվեղիայի արքունիքի գլխավոր նկարչուհի Սեզմա Հակոբսոնի հետ և 1882-ին կնոջ հետ տեղափոխվել Ստոկհոլմ: Ստոկհոլմում Ն. Բյուզանդացին ապրել է ավելի քան քսան տարի:

Կտրված լինելով հայ մշակութային կենտրոններից, գտնվելով հայագիտական աշխատանքների համար «անլարմար վայր»-ում, ինչպես նաև նյութական սուղ ու ծանր պայմաններում, մեծանուն հայագետը աշխատել է ստեղծագործել է՝ գրելով արժեքավոր աշխատություններ ու հոդվածներ:

Կնոջ մահից հետո, 1903 թ., տեղափոխվել է Վենետիկ, որտեղ էլ ապրել է մինչև իր մահը՝ 1915 թվականը: 1924-ին անյունը Վենետիկից տեղափոխվել է Եվեղիա, ամփոփվել Ստոկհոլմի գերեզմանոցում, կնոջ կողքին:

Մեծավաստակ գիտնականն ապրել է 70 տարի, որից ավելի քան հիսունը նվիրել է հայոց լեզվի, հայ գրականության ու հայ մատենագրության ուսումնասիրության գործին, սակայն, ցավոք, նրա աշխատությունների մեծ մասը մնացել է անտիպ:

Մահվանից հետո Ն. Բյուզանդացու ժառանգությունը, համաձայն իր կտակի, հանձնվել է «Ֆրեդրիկա-Բրենդեր-Ֆորբուրգեռ» կանանց բարեգործական ընկերությանը՝ որի անդամն է եղել կինը՝ Սելմա Հակոբսոնը: Ընկերության կենտրոնը գտնվում էր Ստոկհոլմում: 1915-1922 թվականներին այն պահվել է այդ հաստատության նկուղներում: Անձնական գրադարանն ու ձեռագրերը 1923 թվականին տարվել է Գյոթերորգ քաղաք, որտեղից էլ 1945-ին, հայագետ Ս. Լորենտս պահանջով, տեղափոխվել է Ուպսալա: Որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո, նորից վերադարձվել է Գյոթերորգ ու հանձնվել է քաղաքի համալսարանի կենտրոնական գրադարանին:

1982 թ. Մարտիրոս Մինասյանը, գործուղմամբ լինելով Գյոթերորգի համալսարանի գրադարանում, ուսումնասիրել և մանրամասն ցուցակագրել է

* Մահվանից առաջ, Ն. Բյուզանդացու ֆրանսերեն լեզվով գրված կտակի համաձայն, ընկերությանն է հանձնվել անձնական գիտական գրադարանը՝ բաղկացած հայագիտության վերաբերյալ 1000-ից ավելի ընտիր հատորներից, ֆրանսերեն-հայերեն քառագրից եզգար օրինակ, իր քվեի ձեռագրերը և դրամագույն հարյուր տասը հազար շվեդական կրոնը («Բազմավեպ», 1983, էջ 48):

Բյուզանդացու ամբողջ դիվանը (Տե՛ս «Նորայր Բյուզանդացու դիվանի նյութերի ցանկ», «Բազմավեպ», 1983, էջ 62-96):

Ն. Բյուզանդացու դիվանում պահվող անտիպ ռազմաթիվ գործերի միկրոժապավեններից մի քանիսը գտնվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, Գիտությունների Ազգային Ակադեմիայի կենտրոնական գրադարանում, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանում, Ժնևի վաղուզի Ղուկասյանց Եղբայրների հաստատության գրադարանում:

Մաշտոցյան Մատենադարանում է պահվում նաև «Նորայր Բյուզանդացի» արխիվ-նամականին:

Նամակները, որ ներկայացնում ենք հրատարակության, հասցեագրված են նշանավոր գիտնական Սո. Մալխասյանցին և պահվում են Մատենադարանի արխիվի համանուն ֆոնդում: Ներկայացնում ենք Մալխասյանցին ուղղված այն նամակները, որոնք անձնական բնույթի լինելուց առավել պատմա-բանասիրական առանձին առանձին փոքրիկ դիտարկումներ են:

Սույն վավերագրերը բովանդակում են տեղեկություններ մեծատաղանդ գիտնականի կենսագրության, կարևորվելով նաև նրանցում արձարծված հայագիտական հարցերի տեսանկյունից:

Ստորագրում. 8 ապրիլ 1888

Մեծապատիւ Տէր

Տէր Ստեփան Մալխասեանց.

Ձեր փետրուար 25-ի (հ. տ.)^{*} պատռական նամակն՝ քան զսովորականն վեց օր անագան էես առ իս ի 19 մարտի, պատճառաւ յորդառառ ձեանց:

Յոյժ շնորհակալ եմ անշափ ազնուութեանդ՝ որով կը ըստեմքեանիք դատել զՔննաւերն¹, իցիւ դիւրութիւն ունենայի յաճախագոյն երատարակելոյ գիմ ուսումնասիրութիւնս: Սիրելի է ինձ Ստեփան, վասն զի խաղաղ եւ հանդարտ քաղաք մի է. քայց կը պարտաւորիմ խոստովանել թէ Հայ լեզուի և գրականութեան համար աշխատելոյ կարի անյարմար վայր է, եւտի հայութեան ամէն կեդրոններէ:

Յուսում ընթերցայի վերջապէս գիմ Տեղեկութիւնս յԱտղիկ. կը փափագիմ լսել զկարծիւդ: Ունիմ ինչ ինչ նոր հաղորդել առ Ձեզ յայլում նուագի: Ձեռագրին Ոոռ վարեցէ՛ք (երես 238) բառերուն համար պիտի ըսեմ Ձեզ թէ ես ինչ կը հասկնամ, եւ պիտի խնդրեմ որ օգնէք ինձ՝ դիմելով առ Յոյն մէն քահանայ Պետերբուրգի, զի յունական եկեղեցւոյ սովորութեան ակնարկութիւն մը կը թուի ինձ այդ: Գեղեցիկ մտածութիւն եւ Ձերն՝ իւրաքանչիւր՝ հայ պատմագրի կցել նաեւ զծամանակին աշխարհացոյց քարտէ (Յառաջարան, ԽԲ), առ մոռացութեան չյիշեցի ես զայն լիմ Նախնիք յօդուածի² (Ա. պրակ «Քննաւերի»), զի միշտ իմ փափագս եղած է այդ աշխարհացոյցն, առանց որոյ Բիւզանդ., Եղիշէ, Փարպեցի, Խորենացի չեն կրնար հասկացուիլ: Կարի իրաւացի է նոյնպէս յանդիմանել Ձեր գրագմայատիկ սխալս Դիւլօրիէի³ (յերես ԻԹ-ԼԱ). Dulaurier, Langlois, Felix Néve մի քանի գլխի անհմուտ մարդիկ են, եւ աւագ մեզ, որ Գուշմիտի⁴ մասն էմնադատք Լանկլուայի⁵ թարգմանութենէն կը դատեն զԽորենացի: Նուապար փաշա⁶ կ'երեսի թէ ծով նետելու դրամ ունէր, որ յանձն առած է հոգալ զծախս Լանկլուայի կրկին

* Հին տոմարով (խմբ.):

հատորաց, երբ յամին 1877 ի Պարլիս քաղաքի թուղթ գրեցի առ Նուպար վաշա, (որ եւ ինքն ի Պարիս կը գտնուէր յայնմ ժամանակի), խնդրելով որ ինձ յանձնէ զշարունակութիւն գործոյն Լաւկլուայի, եւ ոչ պատասխանելոյ արժանի եղայ ի վաշայէն, անշուշտ քախտախնայի կամ մուրացկան ոմն կարծեց զիս: Լուսահոգի Իզմիրեանցն⁷ արդարեւ չնաշխարհիկ մարդ մ'էր որ կը քաջալերէր դրամով զհամազգի բանասէրս. իբրեւ քարեքարեալ՝ ես եւս կամակար կը ստորագրեմ Ձեր Յառաջարանին խԳ - խն երեսաց, որ արժանաւոր դամբանական ճերբող եմ այնպիսելոյ Առն: Աստուած յարուցանէ մեզ ի Ռուսաստանէ Իզմիրեանցի հոգեով եւ սրտով քարեքարեան, ի Ռուսաստանէ կ'ըսեմ, զի ի Տանկաստանէ վաղուց յուսահատեալ եմ:

Փափագելի էր ինձ *Բնասէրի* ծաւալումն առ Ռուսաստանի հայս. բայց չգիտեմ թէ առ ով պէտք է դիմեմ: Յառաջ քան զամս ինն փորձեցի ի Կ. Պօլսէ թղթակցիլ ընդ ումեմն գրավանառի Տփղիսաց Գաղղիներէն-Հայերէն քառարանին վանաումանն համար, բայց պատասխան չընկալայ: Անշուշտ լաւ է ըստ Ձեր խորհրդոյ յայտարարութիւններ հրատարակել ի լրագիրս Ռուսաստանի եւ գրոց պահեստ ունենալ Ձեր երկրին մէջ. բայց ես բոլորովին անծանօթ եմ, եւ լրագիրք եւ գրավանառք աշխարհիդ նոյնպէս անծանօթ եմ ինձ: Եթէ Դուք, Մեծապատիւ Տէր, նախապահի ցուցանէք ինձ, երախտագիտութեամբ կ'ընդունիմ զՁեր օգնութիւն: *Բնասէրի* գինն (5 դահեկան)⁸ է 50 կոպեկ. *Բառաբնութեան*⁹ գինն (12 դահեկան) է 1 ռուբլի 20 կոպեկ:

Կրնա՞ք ըսել ինձ թէ ուր պէտք է դիմեմ առ ի ստանալ զՊատմութիւն Մովսէսի Կաղանկատուացոյ, տպ. Հմին, Մոսկուա, 1860, եւ զՊատմութիւն Մխիթարայ Արիվանցելոյ, տպ. Հմին, Մոսկուա, 1860:

Կը խնդրեմ որ շնորհ ընեմ յդիլ ինձ զՁեր լուսանկար, եւ (եթէ ունիք) գլուսանկար հանգուցեալ Տ. Յովսեփայ Իզմիրեանց: Քանի մի օրէն կը յղեմ Ձեզ զիմս, զոր խնդրեմ ընդունեցէք իբր գրաւակոց իմ քարեկամութեան եւ անկեղծ յարգանաց, որովք մնամ Մեծապատիւ Տեառնդ եւ հմուտ եղբայրակցիդ.

Խոնարհ ծառայ
Նորայր Ն. Բիւզանդացի

Neandre de Byzance Norayr
15, Fredsgatau
Stockholm (Suedé)

Ատոհնով, 15, Fredsgatan
3 մայիս 1888

Մեծապատիւ եւ Սիրելի Բարեկամ
Տէր Ատեփան Մալխասեանց,

Ընկալայ հիմզ աւուրք յառաջ զՁեր *յանձնարարեալ* նամակն ապրիլ 12 (հ. տ.) թուականաւ, եւ կը փութամ մատուցանել Ձեզ զիմ շնորհակալութիւնս վասն լուսանկարի հանգուցեալ Տ. Յովսեփայ Իզմիրեանց, զոր եանեցաք ստանալ ինձ համար ի նորա ազգականաց: Մեծաւ խնամով պիտի պահեմ զայդ կենդանագիր՝ իբրեւ անգուգական քարեքարի Հայ գրագիտաց: Տ. Իզմիրեանցի դէմքն յայտարար է նորա քարի սրտին:

Կը ցաւիք, Մեծապատիւ Տէր. թէ ինչու երբէք տարի յառաջ չհրատարակուեցան իմ Տեղեկութիւնքս ի Ստ. Ասողիկ: Ես եւս մեծապէս կը ցաւիմ թէ ինչու այսչափ անգահան ծանօթացայ բոլորով՝ Ձեզ եւ վսեմ. Տ. Կ. Եղեանցի նման ազնիւ անձանց: Ճշմարիտ րախտ մ'եղաւ ինձ՝ մեր հռչակաւոր Յ. Ալվազովսքեայ¹⁰ անցեալ տարի ի Ստոֆեովմ գալուստն. նա քաջալերեց զիս գրել առ Տ. Եղեանց, եւ յոյժ ուրախ եմ, որ թէ Տ. Եղեանց եւ թէ Դուք՝ իսկ եւ իսկ շնորհեցիք ինձ գծեր քարեկամութիւն եւ յօժարեցաք ձեռն կարկառել առ իս: Ձեր բարձր համարումն, զոր արդ կը վայելեմ առանել քան զիմ արժանաւորութիւն, կը խրախուսէ զիս ի ներկայիս, եւ յուսով կը լնու ապագային համար:

Տեղեկութիւնքն ի Ստ. Ասողիկ¹¹, ինչպէս գրեցի առ Տ. Եղեանց, կրնան հրատարակուիլ որ լրագրի կամ հանդիսի մէջ որ հաճելի է վսեմ. նուիրատուին: Դիտեցիք անշուշտ, Մեծապատիւ Տէր, որ ուրեք ուրեք երկրաշառհար խօսած եմ. ահա այս երկրաշառհար համար մասնաւորապէս կը խնդրեմ զօգնութիւն Ձեր եւ Տ. Եղեանցի, զի ինձ անհնարին է իմ թերակատար գիտութեամբս եւ անբաւական միջոցներովս սլարգել զամենայն դժուարութիւնս՝ որ կը գտնուի թէ յԱսողիկ եւ թէ յայլ մատենագրութիւնս նախնեաց: Դուք նմուշ էք ոչ միայն ուսեւերէն լեզուի, յորում կան շատ գիտնական հրատարակութիւնք, այլ եւ գերմաներէնի, որ նոյնագոյն է ամենագոյն հնախօսական մատենաներով. ինձ գաղղիներէն լեզուն միայն ծանօթ է, եւ դժբախտաբար շատ եւ շատ անգամ կը պատահի, որ երբ գաղղիացի ենդիցակ մի կը խնդրեմ յԱրքունի Մատենադարանէ Ստոֆեովմի, պատասխան կը լսեմ *Finnes est!* (այսինքն Ոչ գտանք): Թող զիմ սեպիական մատենադարանիս հայերէն զրոց սակաւաւորութիւնն եւ մանաւանդ գծեռագրաց ի սպառ անչփութիւնք՝ որ մեծ, ամենամեծ գրկում է ինձ: Ահա թէ ինչ ըսել կ'ուզեմ իմ թերակատար գիտութեամբս եւ անբաւական միջոցներովս:

Առնունք այժմ զիմ Տեղեկութիւնս, թիւ 3, կը փափագիմ ուսանել թէ որու որդին էր Գարեհ Գ Կողոման: Եւսերեայ ըսելէն «Դարեհ Արշամայ (Արշասայ)», չեւտելիք թէ Դարեհ էր որդի Արշամայ, ինչպէս եսականած է Աւգերեան. «*Darius Arsami fitius*». Եւսերեայ խօսքն կրնայ նշանակել նաեւ «Դարեհ Արշամայ յարորդ»: - Թիւ 7. Է. Ղ. Ալիշան (Վարդան Արեւելցի, Պատմ. երես 31) եւ Տ. Ա. Մ. Գարազաշեան (Քննական պատմ. Հայոց, երես 251, 252) չեն ընդունիր զվրաց ծագումն յԵրեւեանցոց (ի Ապամիացոց): Կը փափագիմ ուսանել թէ ինչ են գերմանացի գիտնոց կարծիք գծագմանէն վրաց: - Թիւ 11. *Ներքեան, Ներքիտն*. Կը խնդրեմ որ հանիք քննել զանուկ յԻնճիներեանի Ատորագրութիւնն Հայաստանի (իմ Ինճիներեանս, ինչպէս նաեւ Զամչեանս, արգելեալ կը մնայ ի Կ. Պօլիս ի պատճառս թուրք Դրաֆնութեան): Նոյնպէս թիւ 12. Զիթառին կամ Կթոնն անուան համար կը փափագիմ գիտել զկարծիս եւ գտեղեկութիւնս Ինճիներեանի: - Թիւ 17. «Գանի» են նշանակութիւնք արաբերէն *գահիտ* բառի: Ի Տանկերէն-Հայերէն բառարանի Միխիթրեանց Վիեննայ այս բառը կը մեկնուի, 1. Ուժեղ, քաջ. 2. Արեղայ, հզնաւոր, միանձն, կրօնաւոր, անապատական. 3. Պարկեշտ, ժուժկալ, քարեպաշտ, աստուածապաշտ: Իսկ կամաւոր *գիմուոր* նշանակութիւնք, զոր տուած են հրատարակիչք Միխայելի Աստուրոյ, չիք ի Բառարանին Վիեննացոց: Ինձ թուի այժմ թէ գահիտներն էին մահմետական կրօնաւորք՝ որ Արաբացի զօրաց քանակներու կ'ընկերացային առ ի քաջալերել զգիմուորս, թերեւս եւ ի պատերազմիլ. կը հանիք քննել եւ ստուգել գայս յԱրաբացի պատմագրաց: Նոյնպէս *Մուղրիներն*, թիւ 21, (գորս *Dulaurier* վրիպակաւ Մարիտանացիս, *Magretins* կ'իմացայ) թուին ինձ մահմետական կարդացողք՝ որ կ'ընկերացային Արաբացի զօրաց. տե՛ս զյաջորդ վկայութիւնք. «Աղօթաւոյժօք իւրեանց, զոր մուղրի անուանեն». Կիրակոս Պատմ. 92 (տպ. Ս. Ղազարեւ) - «եւք մուղրի

դեմիւ»։ անդ 202: Ն. Ղ. Ալիշան յերկրորդ վկայութիւնդ կը դնէ զարարացի բռնն եւ կը մեկնէ «կարդացող կամ ուսուցիչ»։ կը խնդրեմ որ ըսէ՛ք ինձ քէ ինչ է քնիկ ընթերցումն արարացի քաղիդ, *mauxci? mauxi?* *Մուղրի* սեպինն նշանակութեամբ կայ եւ ի Միխայիլ Աստուրի, 372, որ նոյնպէս սխալ կը մեկնուի Մարիտանացի։- *Մուկրի* կայ նաեւ ի վարդանայ Պատմութեան, 127 (տպ. Ա. Ղազարու), զոր Միխայիլի Աստուրդ հրատարակիչք աստ եւս սխալ կը մեկնեն Մուղրի արարք, 446: - Եթէ ունի՛ք զՊարսկերէն-Հայերէն Բառարանն Գեորգայ Տէր Յովնանիսեան (տպ. Կ. Պօլյա), կը խնդրեմ որ օրինակէ՛ք ինձ համար *փուլուն* քառի համար տուած մեկնութիւնը (թիւ 20):- Կը տեսնէ՛ք, Մեծապատիւ Տէր. թէ որչափ պէտս ունիմ իբրեւ զՁեզ քննող եւ կրկնող մատենայած բանասիրաց քազում ինչ կը պակասէ ինձ աստ ի Ստոֆիլով, քայց եթէ քարեհանիք շնորհիւ ինձ զՁեր գործակցութիւն, ոչ սակաւ պիտի մխիթարուիմ, զի իմ աշխատութիւնք կատարելագոյն ձեւ պիտի առնուն:

Ջատ թղթոյ վերայ գրեցի Ձեզ քանի մի նոր Տեղեկութիւնս յԱստղիկ:

Յոյժ շնորհակալ եմ Ձեզ զի *Նախնիք* մատենի հրատարակութեան կը փափագի՛ք եւ զսրբագրութիւն թերթիցն այնպիսի ազնուութեամբ ստանձնել կը յօժարի՛ք: Այժմ իմ բոլոր ժամանակս նուիրեալ է Կորեան Պատմութեան, զոր կը ջանամ աւարտել ց՞օգոստոս ամիս եւ յղել առ վսեմ. Տ. Եզեանց. երախտագիտութեամբ կ'ընդունիմ՝ եթէ հանիք սրբագրել զթերթս Կորեան¹², զի Աստղկան տպագիրդ անսխալ է, եւ այս կը ցուցանէ թէ, որպիսի մտադրութեամբ եւ խնամով աշխատած է՛ք. պէտք է որ յայսմ մասին եւս խնդակցիմ Ձեզ: Իսկ *ճախնիք*¹³ է գործ երկայն. չկարեմ ասել թէ երբ կրնայ պատրաստ ըլլալ ի հրատարակութիւն. հազարաւոր Տեղեկութիւնք, Դիտողութիւնք եւ Ուղղութիւնք կան յայսմ մատենի. Թ. Արծրունւոյ Պատմութեան¹⁴ ունէ՛ք քազում Ուղղութիւններ, զորս մտադիրք կը խաղորդէի Տ. Պատկանեան¹⁵ Ուսուցչապետին, եթէ գիտնայի որ նոր տպագրութիւն մի կը պատրաստէ:

Մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեզ եւ անոր համար որ կը հանիք ծաւալել զ*Քննասէրն* զ*Բառաքննութիւն* ի Ռուսաստան: Խնդրեմ ըսէ՛ք ինձ թէ ունի՞՞ք զիմ Գաղղիերէն-Հայերէն բառարանը:- Կը նաճաչէ՞ք արդեօք զՄանուչարեան ընտանիս (ի Տփղիս ?), եւ կրնա՞ք ըսել քէ ո՞ր է այժմ Տ. Մկրտիչ Մանուչարեան, որ իրաւագիտութիւն կ'ուսանէր ի Geneve (Suisse) երկու տարի յառաջ: - Տ. Մկրտիչ էմի՞ն¹⁶ չպարտէր վշտանալ ի Ձեր դիտողութեանց. Նախնեաց մատեններն այնպիսի քանձոր մթով պատեալ կը մնան ցարդ ի քազում տեղիս, որ քանասերք պէտք է ուրախման երբ նորանոր քննութեամբք կը փարատի մասն ինչ յայդ մթութենէ: Ես ոչ միայն կ'ուրախմամ, այլ եւ մեծապէս շնորհակալ կ'ըլլամ անոնց՝ որ զիմ չհասկացածն կը մեկնեն եւ կը լուսաւորեն:

Մտտուցանելով Մեծապատիւ Տեառնդ զիմ անկեղծ քարեկամութեան հաւաստիս, մնամ յարգանօք

Ձերդ

Նորայր Ն. Բիւզանդացի

Յաւելուած
ի Տեղեկութիւնս Աստղկան

1. «Տէր Քրիստափոր... ի գեղջէն Տիրառնոյ», երես 81:

- Ի Յանկի Անուանց դնի ուղղական *Տիրառնոյ*, այլ կարծեմ պիտի *Տիրառիճ*, որպէս ունի Յոնան կաթողիկոս. «Ի *Տիրառիճ* գեղջէ», երես 37 (տպ.

էմից): Տե՛ս եւ Բագայառից, Խաղտոյառից, Կուկայառից, Զիքառից (կամ Լիթառից, Մկնառից, եւ այլն):

2. «Քրիստոսն քո եւ աշակերտքն քոյն զգծուծն եւ զչնչին *պատուիրեցին*», երես 104:

= Լաւ եւս թուի իցծ *պատուեցին*: «Քրիստոսն ձեր զպարկեշտ եւ զչնչին զգեստ *պատուեաց*, եւ զնոյն արարին աշակերտքն քոյն»։ Յոհ. Կթ. 58. «Զաղփատութիւն եւ զգծութիւն առաւել *մեծարեմ* քան զմեծութիւն եւ զփարթամութիւն»։ Կիր. Գանձակ. 37 (տպ. Ա. Ղազարու):

3. «Քանզի «Հաւատք յայժմու ժամանակիս լրումն քանին է», *ասէ զոր ասացն*», երես 227:

= Լաւ եւս է Զնազարին ընթերցուած ասէ որ ասացն: «Ճանցք գարշեցուցանեն զիւդ, *ասէ՛ որ ասացն*»։ Գր. Նազիանգացի, Առ որս. ԺԳ (տե՛ս *Ասեմ* ի Նոր Հայկազեանց, երես 313, սիւնակ Գ):

4. Զերես 238, տող 4-12, թուի այսպէս ընթեռնելի. «Որովհետեւ ոչ համարիմ սրբութիւն, ընդէ՞ր եւ դուք մկրտիք կամ ընկզմիք: Ընդէ՞ր եւ զխորհրդեան քաժակն ձեր մկրտէք ջրով կամ ապակեմէք, եթէ մկրտութիւնդ ոչ է սրբութիւն: Ընդէ՞ր ոռն վարիցէք ընդ անուքս խաչին, զոր դրոշմէք, որպէս եւ առնէք իսկ, եւ յորժամ գերախալսն ձեր քրիստոնեայս կամեցիք առնել, (ընդէ՞ր) փոխանակ ջրոյն մկրտելոյ՝ (ոչ) նոյնպէս առնեցէք, զի ասացից ինչ ծաղրականս, այլ եւ ամօթալիս: Ընդէ՞ր եւ զխորհրդական քաժակն ձեր մկրտէք ջրով» եւ այլն:

Ոռն նշանակէ աստ գաղղիներէն coin, որ առ մեզ ասի նա եւ Սեպ կամ երիթ. *Ոռն* վարել է գաղղիներէն *Enfoncer un coin*. այս ստոյգ է ամենեւին: Մնայ մեկնել զբառսն *անուքս խաչին* (կամ ըստ տպագրին *անօքս խաչին*): Ո՞ւր վարէին Յոյնք զայդ *Ոռն*. զի՞նչ են *անուքք* (կամ *անօքք*) *խաչին*: Աւցում զխաչն:



իցէ՞ արդեօք Յունաց սովորութիւն վարել ոռունս (*enfoncer des coins*) յանուքս, այսինքն յանկիւնս, խաչին, այսպէս,



եւ դրոշմել, այսինքն մկրտել, գոռունսն:

Եթէ չիք Յունաց այսպիսի սովորութիւն, *խաչին* ուղղելի՞ իցէ խաչին. այլ զի՞նչ նշանակէ յայնժամ *անօք* քառն:

Զի արդ եւ իցէ, իաչիկ Կաթողիկոսի միտք այս են. «Ընդէ՞ր փոխանակ ջրով մկրտելոյ գերախալսն ձեր – զի ասացից ինչ ծաղրականս, այլ եւ ամօթալիս – ընդէ՞ր ոչ վարիցէք, ընդ նստատեղիս՝ նոցա զոռունս, որպէս սովոր էք վարել ոռունս ընդ *անուքս* (*անօքս*) *խաչին*»:

Ոռն, յոգնակի *Ոռունք*, իբր գղ. coin, չիք ի Նոր Հայկազեանց. այլ կայ ի Բարսղի վեցօրեա, Ե. 97, երկիցս, ուր վրիպակաւ գրի *Ոռն* – կայ եւ յԱգաթանգեղոս, 94, Ա տպ. ուր նոյնպէս վրիպակաւ գրի *Ոռունս* փոխանակ

* Զայս ակնարկէ իաչիկ Կթ. ծաղրական, այլ եւ ամօթալի *ասելով*:

Ուունս, եւ զոր սխալ միկնէ Նոր Հայկազեանն ի բառն *Ոռն* - կայ եւ ի Գեորգեայ Պիսիդիայ Վեցօրէս (սնտլսլ), ուր գրիւ ելիցս *Ոռն*:

5. «Եւ կանոնական սանտանն արտաբոյ եկեղեցւոյ իրամայէ առնել գայնախիսն ընդ *այնպիսին* իսմարեալ»։ Երես 239:

- Թուի գրելի: *այրասպանն*:

Ստոփուլմ, 3 մայիս 1888

Նորայր Ն. Բիւզանդացի

Ստոփուլմ, 15, Fredsgatan

29 սեպտտոս 1889

Մեծաստտիւլ

Տէր Ստ. Մալխասեանց,

Ի սկիզբն ամսոյս ցլտառութեամբ հիւանդացայ եւ 15 օր յանկողնի մնացի: Այժմ փոքր ի շատէ կազդուրեալ լինելով, կը պատասխանեմ Ձեր 10/22 յուլիս բուականաւ նամակին:

Հ. Արսէն Բագրատունւոյ¹⁷ *Երկնէր երկինի* կարգաւորութիւնն այս է.

Երկնէր երկին եւ երկիր, երկնէր եւ ծիրանի ծով.

Երկն ի ծովուն ունէր՝ ըզկարմրիկ եղեգնիկն

Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,

Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր.

Եւ ի բոցոյն՝ պատանելիկ՝ վազէր, նա հուր՝ հեյ ունէր.

Ապա թէ բոց՝ ունէր մորուս,

Ու աչկունքն էին՝ արեգակունք:

(Բերականութիւն Գալղիական¹⁸, Երես 580, թիւ 23):

Ըստ այսմ Բագրատունին գեետեւեալ չափսդ կու տայ երգոյս.

Ա տող 4 - 3 - 4 - 3.

Բ տող 6 - 6

Գ եւ Դ տող 4 - 4

Ե տող 4 - 4 - 4 - 3

Ձ եւ է տող 4 - 4.

Իսկ ի նմին Բերականութեան, յերես 539, Բագրատունին կը գրէ.

«Սակայն եւ այս տեղաչափութիւն տակաւին անկատար էր եւ անպանոյն, որպէս յայտնագոյնս աւանդեն Կուրիտիլիանոս եւ Կիկերոն, որոց յետինդ առաւել իմն գինարական փերթութենէն հաստատէ զնոյն, եւ մինչեւ յաւուրս իւր, ասէ, գտանել ի չափաքերութիւնս յարեանց տաղս յինչ, որոց ոչ երեսին յինչ ոտք եւ ձեռք են անդամք, եւ ոչինչ ընդհատ են յարձակ շարագրածոյ՝ առանց մերձ կալոյ գործիւսկան նուագարանաց եւ գուսանաց: Այսմ օրինակ ունիմք եւ ի մեզ գեմագոյնն ի բանաւոր երգարանաց մերոց, *Գերկնէր երկինն* աւանդեալ ի Խորենացւոյն, որոյ եւ խորիրն բացերեւակի ի յայտ գայ ի բաղդատելն զնոյն ընդ յետնագոյն տաղի

Գողթնացի երգարանից՝ *Հեծաւ արի արքայն Արտաշէս*, գոր բերէ նոյն խորհնացին»:

Ի *Բազմավիպի* 1850, երես 359 (որ սխալմամբ եղեալ է 343 երկրորդ անգամ) և տողն այսպէս է.

Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ
Նա հուր հեր ուներ:

Ի փոքրադիւր խորհնացին, տպ. Ս. Ղազարու, 1881, երես 128, եղեալ է. «Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր, նա հուր հեր ուներ. (այսպ թէ) բոց ուներ մուրտուս», եւ այլն: Բայց ներքի չէ այնու օրինակաւ Նախնեաց գիրս երատարակել. ի՞նչ է փակագիծդ. հրատարակիչն աւելո՞րդ կը համարի զայդ երկու բառսդ *այսպ թէ*. Թէ կ'ուզէ ըսել արդեօք որ ի ձեռագիրս ինչ կը պակասին այդոքիկ: Ես կախարդութեամբ կը յաջողիմ հասկանալ զբազում տեղիս ի Մխիթարեանց հրատարակեալ նախնեաց մատենագրութեանց. բայց կը խոստովանիմ որ կախարդութիւնն չօգնեց ինձ առ իմանալ զճանակութիւն փակագծիդ *:

Ստոկհոլմ, 15, Fredsgatan
1 Ապրիլ 1893

Մեծապատիւ
Տէր Ստ. Մալխասեանց.

Ձեր յանձնարարեալ թուղթն 28 Փետր. /10 Մարտի թուով հեաս առ իս ի 27 Մարտի, Պետերբուրգի նաճապարհաւ: Ընդունեցայ հետգհետէ զՁեր պատուական նուէրսն Գրաբարի եռլովում, Գրաբարի համաձայնութիւն, Մակբեր եւ Խորհնացւոյ նոր աղբիւրը, որոց համար մեծապէս շնորհակալ եմ: Իմ լուսեանս մի միայն պատնառն էր Ձեր հասցէին անգիտութիւնս:

Քննասէրի Բ պրակաւ եւ վաղ հրատարակեցի զայն կարծիս՝ թէ Մ. Խորհնացւոյ *Պատմութիւնն* գրեալ է ի վերջին ամս և դարու, եւ յառաջ քան զկարիէրի¹⁵ յողուածն՝ նորանոր բնութեամբք հասած էի այն որոշման որ աւելի հաւանականութեամբ Խորհնացւոյ *Պատմութիւնն* Ձ դարու առաջին տարիներէն է: Ոչ ոք կարեւորութիւն տուաւ *Քննասէրի* մէջ գրածներուս, եւ բանասիրաց մտքերն սկսան զբաղիլ Խորհնացւոյ *Պատմութեան* յօդմամանն թուականին կարեւոր խնդրով՝ երբ Կարիէրի յողուածն երատարակեցաւ²⁰: Ապահով եմ որ հազարաւոր հալ ձեռագիրս բովանդակող մատենադարանաց մէջ կը գտնուին այնպիսի յիշատակարանք, որ նպաստաւոր են իմ կարծեաց, բայց Աւետարանն գեղեցկապէս ըսած է. «Դուք ոչ մտանէք, եւ որ մտանելոցն եմ՝ արգելուէք»:

Ըստ իս *Սնդրեստրոսի Վարքն* կապ չունի Սոկրատայ *Եկեղեցական Պատմութեան* հետ: *Սնդրեստրոսի Վարքոց* եւ Խորհնացւոյ *Պատմութեան* նշանաբանութիւնն կը ցուցանէ թէ առաջինն թարգմանեալ էր *առ Խորհնացւով*. Կ'ըսէի նաեւ ի *Ձմիւն իսկ ի Խորհնացւոյ* եթէ ծանօթ ըլլային ինձ *Սնդրեստրոսի Վարքոց* ամենայն ձեռագիրք: Այս յայտնի է թէ Սոկրատայ *Եկեղեցականին* - կրկին թարգմանութիւնք կը գտնուին. կա՞ն նաեւ կրկին թարգմանութիւնք *Սնդրեստրոսի Վարքոց*, ոչ ինչ գիտեմ, եւ վասն այսորիկ ոչ ինչ կտրեմ ասել հաւաստեալ:

* Նամակի շարունակութիւնը չենք հրատարակում, քանի որ գուտ անձնական է (խմբ.):

Կը գրե՛ք թէ յԱ եւ յԲ պրակաց *Քննասէրի* 8 օրինակ վաճառեալ եմ ըստ ամենայնի, եւ թէ ունիմ Ձեր փո՛ղ զուտ 3 ռուբլի եւ 20 կոպեկ: Հանեցէ՛ք խնդրեմ գումարե՛ղ զգին Մխ. Այրիվանցեւոյ (տպ. էմիցեան) զոր կը պարտիմ Ձեզ. հանեցէ՛ք նոյնպէս զթոթատարի ծախս *Քննասէրի* ի Պետերբուրգէ ի Տփղիս, եւ ի Տփղրսէ ի Ստոքհոլմ, եւ հանեցէ՛ք յղել առ իս զմնացեալ 36 օրինակս, եւ զմնացեալ փողն, (եթէ կայ 1 ռուբլիանոց թղթադրամ եւ եթէ կարելի է յղել առ իս ներփակեալ ի նամակի, յանձնարարելով):

Այժմ կ'աշխատիմ իմ *Կորին վարդապետ եւ Թարգմանութիւնը*²¹ իւր ընդարձակ գործով, զոր կը յուսամ աւարտել այս ամառ: Կը փափագէի որ Տփղրսի Հրատարակչական ընկերութիւնն յառաջ քան զերատարակել զիմ Տեղեկութիւնս յԱսողիկ՝ հարցանէր զիմ հանութիւն. Մոսկուայի տպագիրն լի է անհեթեթ սխալներով, եւ կը ցաւիմ եթէ նոյնութեամբ հրատարակեալ է ի Տփղիս: Ես փող մի շահ չունիմ ի հրատարակութենէդ Տփղրսի. բայց եթէ չափազանց չէ պահանջումս՝ կը խնդրեմ որ գտնէ 2 օրինակ ձրի յղեն ինձ:

Յղեցի Ձեզ ընդ թղթոյս օրինակ մի յիմ գրութենէն De l'Urgence d'une edition critique des textes armenienes.

Խորին յարգանքով մնամ

Խոնարհ ծառայ
Նորայր Ն. Բիւզանդացի

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Քննասէր. ինքնագրութիւնք Նորայրի», պրակ Ա, էջ 64, Ստոկհոլմ, 1887 թ., 15 մայիսի: Պրակ Բ, էջ 64, Ստոկհոլմ, 1887 թ. 3 դեկտեմբեր:

2. «Նախնիք» հոդված. «Քննասէր. ինքնագրութիւնք Նորայրի», պրակ Ա, էջ 4-8:

3. Էդուարդ (Ժան Պոլ) Դյուլոբիե (1807-1881), ֆրանսիացի հայագետ: Զբաղվել է հայ մատենագիրների երկերի ուսումնասիրությամբ ու թարգմանությամբ, հրատարակել է հայոց պատմությանը վերաբերող ուսումնասիրություններ:

4. Ալֆրեդ Գուտշմիդ (1831-1889), գերմանացի արևելագետ, հայագետ: Մայրահեղ բնագիտական վերաբերմունք է ցուցաբերել Խորենացու հանդեպ:

5. Վիկտոր Լանգլուա (1829-1889), ֆրանսիացի պատմաբան, հայագետ, արևելագետ: Թարգմանել է երկու հատորով հրատարակել է հայ պատմիչներից մի քանիսի (Փավստոս Բյուզանդ, Կորյուն, Մովսես Խորենացի և այլն) երկերը:

6. Նուբար փաշա Նուբարյան (1825-1899), եգիպտահայ պետական գործիչ: Զբաղվել է հայ ժողովրդի ինչպես բաղաձայն, այնպես էլ մշակութային և լուսավորությամբ հարցերով: Կազմակերպել է հայ մատենագիրների ֆրանսերեն թարգմանությունն ու հրապարակումը:

7. Հովսեփ Իգմիրյան Ղզրաբեցի, մահացել է 1883 թ.: Հիմնավորել է հայագետներին, աշակցել հայ մատենագիրների հրատարակման գործին: Մրցանակ (Իզմիրյան մրցանակ) է շնորհել Էնդինակներին՝ լավագույն աշխատությունների համար: Տե՛ս «Արարատ», 1875, էջ 114-115, 149-152, 1887 թ., էջ 376, 416-424, 506, 1888, էջ 721-722, 1889, էջ 661-668, 1892, էջ 240-250, 1903, էջ 720-723, 1904, էջ 225-226, 1906, էջ 372, 1913, էջ 680:

8. Դահեկյան, կշռի և ոսկե դրամի միավոր: Դահեկյանի արժեքը որոշվել է ոսկու և արծաթի որոշակի հարաբերությամբ 13: 1, 14: 1, 15: 1, 13, 9: 1, 14, 4: 1:

9. «Հայկական քառանկյունի» ռեդիոկայանի ընթերցողական մատենագրությանը նախնեաց և շարունակությանը քաղից ինչ», Կ. Պոլիս, 1980, ռաթածալ, 128 էջ: Այս աշխատության համար Ն. Բյուզանդացիին ստացել է 500 ֆր. Իզմիրյան մրցանակից:

10. Հովհաննես Ավագովսկի (1817-1900, աշխարհաեոչակ ծովանկարիչ:

11. «Տեղեկութիւնք ի գիրս Պատմութեան Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողիկ կոչեցելոյ», «Հանդէս գրականական և պատմական», Մոսկվա, 1989, էջ 291-332:

12. Տե՛ս ծանոթագրութիւն 27:

13. «Նախնիք» աշխատութիւնը լույս է տեսել Ն. Բյուզանդացու մահվանից 81 տարի հետո՝ 1998 թ. Ժնևում, հրատարակել է Մարտիրոս Մինասյանը:

14. Խոսքը վերաբերում է «ԲՅՈՅՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԻ՞՞ ԿԱՅ ՈՆԱԽՆԵԱԳ ԲՆԱԳՐԱԳ: Ա. Թովմա Արծրունի և Անանուն Արծրունի երկու այլիւայլ պատմագիրք հն» հոդվածին, որ տպագրվել է «Բագմավէպ»-ում, տե՛ս՝ 1905, 5, էջ 227-231, 6, էջ 263-271, 7-8, էջ 329-337, 9, էջ 398-407, 10, էջ 464-476:

15. Բերովսի Պետրոսի Պատկանյան (1833-1889), արևելագետ, աղբյուրագետ, բանասեր, պատմաբան: Թարգմանել և հրատարակել է հայ պատմիչների երկերը: 1872-ից վարել է Պետերբուրգի գրաքննչական ատյանի հայ հրատարակութլուհների գրաքննիչի պաշտօնը:

16. Էմիլ (Կարապետյան) Մկրտիչ Հովսեփի (1815-1890), եայ բանասեր, պատմաբան, մանկավարժ, թարգմանիչ:

17. Արսեն Բագրատունի (1790-1866), հայ բանաստեղծ, բանասեր, լեզվաբան, քերական, փիլիսոփա, թարգմանիչ:

18. «Բերականութիւն գաղղիական», 1821 թ.:

19. Օգլուստ Կարիեր (1898-1902), ֆրանսիացի հայագետ, արևելագետ: Ուսումնասիրել է Մովսես Խորենացուն, նրան համարել 8-9-րդ դդ. եեղիեակ:

20. Նկատի ունի Օ. Կարիերի «Մ. Խորենացւոյ մէկ նոր աղբիւրը» հոդվածը. «Հանդէս ամսօրեայ», 1892 օգոստոս:

21. «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», Տփղիս - 1900, 520 էջ: Սրբագրել է Գլուս Բահան Աղանյանը:

ԳԵՂԱՄ ՍՐԿ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՈՒՐՎԱԳԻԾ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
(20-ՐԴ ԴԱՐ)

Հայ Առաքելական Եկեղեցու բարեկարգության հարցը տևական պատմություն ունի: Վաղճալական ժամանակներից մեր Հայրապետները, հոգևոր և աշխարհիկ գործիչները ազգային-եկեղեցական ժողովներում քննարկել, լուծումներ են գտել ու որոշումներ ընդունել Եկեղեցու բարեկարգման տարբեր հարցերի վերաբերյալ՝ միշտ առաջնորդվելով ժամանակի հրամայականով: Սույն հոդվածում հակիրճ կերպով ներկայացնում ենք 20-րդ դարում Հայ Եկեղեցու բարեկարգության մասին եղած քննարկումների պատմությունը, երբ հայ մամուլի հրապարակումներում հետևողականորեն այն միտքն էր շեշտվում, որ մեր ազգային Եկեղեցին հրաժարվի դարերի ընթացքում ընդունած իր մի շարք ծեսերից, ձևերից և սովորույթներից, որոնք համարվում են նրկորդական, ամգամ՝ ավելորդ: Սակայն պատմական անբարենպաստ պայմաններում հմարավոր չէր այդ կարևոր խնդրի առթիվ պաշտոնական ժողովներ և խորհրդակցություններ հրավիրել, հատկապես ցարական Ռուսաստանի տիրապետության պայմաններում:

Անցյալ դարի հայ ազգային-հասարակական շատ գործիչներ, ովքեր ընդունում և գնահատում էին Հայ Եկեղեցու դարավոր ազգաշեն գործունեությունը, իրենց նյութներում բազմիցս շեշտում էին, որ պետք է Եկեղեցին բարեփոխվի, ժամանակակից կյանքին համապատասխան ձևակերպումներ ստանա, պարզեցվեն և կոճատվեն եկեղեցական արարողությունները, Աստվածաշունչը թարգմանվի աշխարհաբար, պատրաստվեն ուսյալ քահանաներ, վերանայվի կուսակրոնությունը, կրթական գործը դուրս հանվի Եկեղեցու իրավասությունից և այլն: Այդ գործիչներից էին Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Գր. Արծրունին, Համբարձում Ահաքեյանը և ուրիշներ:

Մենք թիվ էին կազմում մեկ այն հոգևորականները, ովքեր նույնպես հանդես էին գալիս Հայ Ազգային Եկեղեցու բարեկարգության և բարեփոխության պահանջով: Առաջիններից էր Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանը, որն անգիջում պայքար էր ծավալում տգետ և անուս քահանաների դեմ¹:

Հայ Եկեղեցու և պատմագրության կարկառուն դեմքերից Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը նույնպես այն կարծիքից էր, որ Հայոց Եկեղեցու ուսմունքը, հավատալիքները, ծեսն ու պաշտամունքը ժամանակի ազդեցությամբ խճճվել են տարբեր բարդություններով, ծանրաբեռնվել ու կերպարամափոխվել և ժամանակի թելադրանքով էլ դրանք պետք է պարզեցվեն, գտվեն, մաքրվեն:

20-րդ դարասկզբին Հայ Եկեղեցու բարեփոխության վերաբերյալ ավելի որոշակի ձրագրերով ու առաջարկություններով հանդես եկան Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Երվանդ վարդապետ Տեր-Միճասյանը, Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանը, Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, Բաբկեն արքեպիսկոպոս Կյուսենդրյանը և ուրիշներ:

¹ Տե՛ս Արիստակես եպիսկոպոս Սեդրակյան, «Քահանայական խնդիր...»:

Որոշ ազատության շնորհիվ, Մկրտիչ Ա. Կաթողիկոսի պահանջով, 1906 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրավիրվեց Ռուսաճայոց Կենտրոնական ժողով. սակայն այդ ժողովը ի վիճակի չեղավ գործնական որևէ քայլ կատարելու. որովհետև ցարական կառավարության պահանջով անմիջապես փակվեց: Այնուհետև քաղաքով թեմերի ու հոգևորականների պահանջով, Գեորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի կարգադրությամբ, 1917 թ. Մայր Աթոռում հրավիրվեց ռուսաճայ հոգևորականության խորհրդակցական ժողով՝ 67 հոգու մասնակցությամբ. որոնցից յուրաքանչյուրը բերել էր իր առաջարկությունները: Ժողովը տևեց մի քանի օր, և քննության առնվեցին քաղաքով խնդիրներ: Ժողովը բարեկարգության վերաբերյալ ընտրեց հատուկ հանձնաժողով, որի վրա պարտականություն դրվեց՝ հավաքել քոյոր նյութերն ու առաջարկությունները, խորհրդակցության արդյունքները և բարեհորոգչական քոյոր խնդիրները դասակարգել, մշակել՝ հարցի մախապատրաստմանը ներգրավելով նաև այլ գիտակ ուժերի: Այդ աշխատանքների ավարտից հետո պետք է զումարվեր ազգային-եկեղեցական ժողով: Հետագա քաղաքական փոփոխություններն ու անցյալստ հանգամանքները, սակայն հնարավոր չդարձրեցին վերջինիս գումարումը:

Գեորգ Ե Կաթողիկոսը 1917 թ. ապրիլի 7-ին թիվ 579 կոմդակով Հայ Եկեղեցու կյանքում նորից «վերահաստատում է ընտրական թեմական պատգամավորական ժողովներ ու թեմական խորհուրդներ, վերականգնում է քոյոր եկեղեցական պաշտոնյաների ժողովրդական ընտրական սկզբունքը և վերահաստատում է կանանց սեռի ընտրական իրավունքը այդ մարդկանց հավասար»²:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանը խորհրդայնացավ: Բոլշևիկյան իշխանությունները Եկեղեցու հանդեպ թշնամական դիրք գրավելով, երկար ժամանակ թույլ չտվեցին եկեղեցական ժողովի գումարումը: Գեորգ Ե Վչտալի Կաթողիկոսը, տեսնելով, որ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը կարող է շատ ուշանալ, ստիպված եղավ մի քանի կարևոր և հրատապ խնդիրների մասին գրավոր պահանջել Երուսաղեմի և Կ. Պոլսո հայոց պատրիարքների պաշտոնական կարծիքներն ու եզրակացությունները և ապա հյուստարակեց մի շարք հայրապետական կանոնական կոմդակներ.

Ա) 1922 թ. նոյեմբերի 11-ին թիվ 544, որով արտոմում էր այրի քահանաների կրկնամուսնությունը,

Բ) 1922 թ. նոյեմբերի 11-ի թիվ 645-ով արեճակցական հիմնգերորդ աստիճանի, խմամիական չորրորդ աստիճանի պսակների թույլտվության և հոգևոր աջակցության արգելքների վերացման մասին,

Գ) 1923 թ. նոյեմբերի 9-ի թիվ 350՝ Հայոց Եկեղեցում երգեհոն գործածելու և երաժշտության գործածության մասին,

Դ) 1923 թ. նոյեմբերի 9-ին, թիվ 349 կոմդակով կարգադրվել է նաև նոր տոմարի կիրառումը: Այնուհետև կարգադրություն է արվել պսակի օրերի ընդարձակման մասին:

1923 թ. նոյեմբերի 24-ին Գեորգ Ե Կաթողիկոսի հաստատմամբ Մայր Աթոռում կազմվել է «Հայոց Եկեղեցու բարեմորոգության Կենտրոնական հանձնաժողով»:³ Այդ հանձնաժողովի ամբողջ գործն ու նյութերը, որոնք

² Ս. Բեհբուզյան, հտ. Ա «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», Երևան, 1994, էջ 250:

վերաբերում էին Հայոց Եկեղեցու բարեփոխությանը, կենտրոնացվում են Գերագույն Հոգևոր Խորհրդի դիվանում:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ի մկատի ունենալով այդ հանձնաժողովի և Մայր Աթոռի Միաբանական ժողովի որոշումները, ամրապնդել է համարում 1924 թ. հունվարի 25-ին շրջաբերական գրություններով դիմումներ անել առաջին հերթին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի հայոց թեմական առաջնորդներին՝ տեղերում այդ նպատակով խորհրդակցություններ հրավիրելու և եզրակացություններն ու կարծիքները պատրաստի մյուսերի և ուսումնասիրությունների հետ ուղարկելու Ս. Էջմիածին, Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ Հայոց Եկեղեցու բարեկարգության կենտրոնական հանձնաժողովին հանձնելու համար, որը և կատարվում է:

1925 թ. փետրվարի 8-ի շրջաբերականով Գերագույն Հոգևոր Խորհուրդը խնդրում է թեմերի վարչական մարմինների ձեռնհաս հոգևոր և աշխարհիկ անձանց կարծիքներն ու դիտողությունները բարեփոխական հարցերի մասին: Դրանք խորհրդակցության ու քննության մյուս են եղել 1917 թ. Մայր Աթոռում ուսումնայ կուսակրոն ու աշխարհիկ հոգևորականության մերկայացուցիչների համագումարում:

Ահա այդ հարցերը.

Ա. Ժամապաշտության կրճատումն ու բարեփոխությունը, այն է ժամագրքի, Օարկնոցի, Մաշոցի, Տոնացուցի կրճատումն ու բարեփոխությունը:

Բ. Մաշոց Ծխարանի կրճատումն ու բարեփոխությունը:

Գ. Հայոց Եկեղեցում նաև աշխարհաբարի գործածության խնդիրը (ընթերցվածքների և աղոթքների վերաբերմամբ):

Դ. Կուսակրոնության խնդիրը, որը կապ ունի Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետության արմատական փոփոխության հետ:

Ե. Հայաստանյայց Եկեղեցու ընդհանուր սահմանադրության մշակման հարցը:

Զ. Հոգևորականության մյուսական ապահովության հարցը:

Է. Հոգևորականների սքեմի փոփոխության խնդիրը (այս հարցն արծարծվել է 1917 թ. համագումարում և հետո՝ Թիֆլիսի քահանայության կողմից):

Ը. Եվ այլ խնդիրներ, որոնք կարևոր կհամարվեն տեղական խորհրդակցություններում:

Հանգամանքներն ու պայմանները, սակայն հայտնի պատճառներով, չեն թույլատրել, որպեսզի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կարողանար այդ ժողովներում հանդես գալ բարեփոխության ընդարձակ ծրագրով, որի պատճառով ցայսօր Հայ Եկեղեցին չունի վերջնական մշակված և հաստատված Սահմանադրություն:

Պետք է ասել, որ հետագայում մույնպես Հայ Եկեղեցու բարեփոխության խնդիրները քննարկվում են Գերագույն Հոգևոր Խորհրդի 1925 թ. ընդլայնված մերկայացուցչական ժողովում, 1932, 1941, 1945 և 1955 թթ. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովներում: Իհարկե, 1923-1938 թթ. Հայ Եկեղեցու բարեփոխության անվան տակ հանդես են եկել նաև «Ազատ եկեղեցական» շարժման «գործիչները»: Այդ շարժման նպատակի և քայքայիչ գործունեության գնահատականը տրվել է և այդ մասին խոսելը մեր նպատակից դուրս է:

«Ազգային-եկեղեցական ժողովին է վերապահված Հայ Եկեղեցում ընդունված կարգի համաձայն հանգուցյալ հայրապետի վերոհիշյալ կոնդակները ընդունել, եթե նա կամենում է եղած որոշումները Հայ Եկեղեցու համար հաստատուն կանոն դարձնել: Այսպես 447 թվին Օսմանյանի ժողովում ընդունվեցին տիեզերական առաքին երեք ժողովները, որով նոցա կանոններն ու

դավանական սահմանումները պայտադիր նշանակություն ստացան մեր եկեղեցու համար»³,- ճշում է Գեորգ Արքեպիսկոպոս Չորեքչյանն իր զեկուցման մեջ, որը կարդացվել է 1932 թ. մայիսի 11-ին, Ազգային-եկեղեցական ժողովում:

Մենք հիմնականում ներկայացրեցինք մեր դարի առաջին երեք տասնամյակ-ներում քննված եկեղեցական բարեկարգության հարցերը և կարող եմք ասել, որ դրանց մեծամասնությունը այսօր արդեն իր լուծումն է գտել՝ համաձայն Գևորգ Զ Չորեքչյան կաթողիկոսի զեկուցման: Այժմ ամդրադառնա՞նք զեկուցման մեջ շոշափված հարցերին:

1. ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ՑԵՆՋԻ ԽՆԴԻՐ,- այսինքն՝ առաջ էր քաշվում հայ հոգևորականության բարձրագույն և մասնագիտական կրթության հարցը, որպեսզի, իբրև Ավետարանի քարոզիչ, մոր հոգևորականությունը զինված լինի մորազույց գիտությամբ, ունենա փիլիսոփայական և քրիստոնեական լայն աշխարհայացք, ծանոթ լինի բնական գիտություններին, իմաստասիրության և սոցիալական գիտություններին եզրակացություններին, ուսումնասիրած լինի քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքները: Պահանջվում էր, որ մոր հոգևորականությունը կարողություն ունենա ըմբռնելու իր ժամանակաշրջանի ոգին և ուղղությունը:

Բարեկարգության ծրագրի այս կամ այն կետի վերաբերյալ եղած տարակարծությունը կարելի է հանդուրժել, սակայն հայ հոգևորականի մտավորական պատրաստվածության մասին տարակարծություններ չեն կարող լինել, և հայ հոգևորականության կրթական պատրաստվածությունը առաջնահերթ կարևորություն ունի: Այս հարցը բարեկարգության առանցքն է և մախապայմանը: Առանց զարգացած հոգևորականության բարեկարգությունը հաջող ընթացք չի կարող ունենալ, ուստի կրոնագիտական ու հայագիտական ամհրաժեշտ գիտելիքներ ստանալու համար, համաձայն Գուշակյանի առաջարկի, «Նախնական, երկրորդական և բարձրագույն դասընթացքները պետք է կատարել էջմիածնի, Երուսաղեմի, Անթիլիասի կամ մյուս կրոնաստաններում մեջ, լուսազոյն կանոնադրությամբ և հայ եկեղեցագիտութեան և հայագիտութեան անունազույց պատրաստություններով, իսկ լրացուցիչ կրթական ընթացքին համար օգտուիլ երոպական միջոցներէ»⁴:

Այս գործը հմարավորությունների սահմանում այսօր իրականացնում է Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Նորին Արքության մախաձեռնությամբ վերաբացվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանը: Այն ուսանողներին օժտում է եկեղեցագիտության և հայագիտության առավելագույն պատրաստություններով, իսկ լրացուցիչ և ամբողջական հոգևոր կրթություն ստանալու, լեզուների իմացության մեջ կատարելագործվելու համար կուսակրոն հոգևորականներին տրվում է հմարավորություն՝ Եվրոպայի ուսումնական բարձրագույն հաստատություններում իրենց ուսումը շարունակելու:

2. ԿՈՒՍԱԿՐՈՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ,- եկեղեցական բարեկարգության հարցերում միշտ էլ կուսակրոնության հարցը հիմնական տեղ է գրավել: Այդ հարցը շոշափվել է բոլոր ժողովներում, համագումարներում, տարբեր քննարկումների ընթացքում: Եատերը բարեկարգություն ասելով կուսակրոնության

³ Նույնը, էջ 250:

⁴ Թորգոմ պատրիարք Գուշակյան «Բարեկարգութիւն Հայ եկեղեցւոյ», Երուսաղեմ, 1940, էջ 78:

վերացում են միայն հասկանում: Սակայն զեկուցման մեջ այդ հարցին շատ նուրբ և կշռադատված վերաբերմունք է ցուցաբերված:

«Դեռեւս առաքելական դարում ամամուսնական կեանքը գերադաս է համարուել ամուսնականից, ապացոյց Պօղոս առաքելի Կորնթացոց գրած թուղթը /Է, 1, 2, 3/: Այս հայեացքը հետզհետե՛ գարգացաւ եւ Դ-րդ դարում այլ եւ այլ պատճառներով շատ տարածուեցաւ եւ կուսակեանքը մանաւանդ պատշաճ եւ վայել համարուեցաւ հոգեւոր դասի համար: Հետզհետե՛ տիեզերական եկեղեցու մէջ յառաջ եկան կանոններ, որով բարձր հոգեւորականութեանը արգելում էր ամուսնանալ, եթէ նա մինչեւ սարկաւագութիւն չէր ամուսնացել: Ե դարում այս աշխարհայեացքը պատրաստուում էր նաեւ մեր երկրում, որին ամենայն հաւանականութեամբ նպաստում են նաեւ մեր քաղաքական կեանքի պայմանները եւ ահա սկիզբ է առնում Հայ Եկեղեցում վանական կուսակրօն կեանքը, որ ապագայում մեր կեանքի քաղաքական, կուլտուր-կրթական եւ գրական ասպարեզներում խոշոր դեր է խաղում»:

Կուսակրօնության վերաբերյալ երկու հոսանք էր առաջացել: Մեկը պահանջում էր վերացում՝ համարելով կուսակրօնությունը անբնական երևոյթ, իսկ մյուսը՝ պահպանում և «Նրանցից բարձր կրթական ցեմզ եւ Առաքնորդական պաշտօններից դուրս պարտադիր է համարում նոցա մնալը վանքում եւ գիտութեամբ ու գեղարուեստով պարապելն անհարժեշտ՝ համապատասխան իրենց հակումների ու պատրաստութեան: Իսկ միւս հոսանքը հակառակ է նորա պաշտօնավարութեան եւ կողմնակից է վերապահելու նրան ձեռնադրութեան իրաւունք եւ եկեղեցու ու աշխարհիկ հոգեւորականութեան նկատմամբ հոգեւոր տեսչութիւն, սակայն ոչ իշխողի, այլ բարոյական հեղինակութեամբ դիտողի եւ դէկավարի հանգամանքով»⁵: Զեկուցողի վերջնական կարծիքն է, որ կուսակրօն հոգեւորականությունը անհրաժեշտ է Եկեղեցու նվիրապետական կարգի պահպանության համար:

3. ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ. - «Ինչ երջանկութիւն պիտի ըլլար մարդկութեան համար, եթէ բնաւ իսկ գոյութեան իրաւունք չլուծենար այդ հարցը, այսինքն՝ եթէ ամբիժ սերը կարենար լուսաւորել և տաքցընել միշտ սիրտերը ըմտանեկան յարկի խաղաղութեան մէջ»⁶. - գրում է Թորգոմ Պատրիարքը:

Գեորգ արքեպիսկոպոս Չորեքշաբթի իր զեկուցման մեջ նշում է, որ «Հայ Եկեղեցին յիշեալ կանոնական հարցերի նկատմամբ այլ եւ այլ պատմական ժամանակաշրջաններում արել է ժողովական տարբեր որոշումներ՝ արձագանք տալով իրական կեանքի պահանջներին, մասամբ եւս յստիարակելով քաղաքական իշխողների ազդեցութեան: Ամուսնական /հաս ու չհաս/ խնդիրներով զբաղուել եւ որոշումներ են արել մեր Եկեղեցում մեզ յայտնի հետեւեալ ժողովները՝ Աշտիշատ /365/, Օսհակիվան /447/, Պարտաւ /768/ եւ Երուսաղէմ /1651/: Առաջին երկուսը թոյլատրել են 3-րդ աստիճանի թէ արեւակցական եւ թէ խնամէական պսակներ: Պարտաւի ժողովը՝ արեւակցական 4-րդ աստիճանի եւ Երուսաղէմինը՝ արեւակցական 5-րդ աստիճանի պսակը: Պարզ է, թէ կանոնական արգելք չկայ,

⁵ Սանդրո Բեյրուտյան, Վալերապրեր Հայ եկեղեցու պատմության, Խո. Ա. Երևան, 1994, էջ 253-254:

⁶ Թորգոմ պատրիարք Գուշակյան «Բարեկարգութիւն Հայ եկեղեցւոյ», Երուսաղէմ, 1840, էջ 96:

որ Ամենայն Հայոց Հայրապետը այդ սահմանների մէջ կանոնական կոնդակներ արձակէ կենցեցի պահանջներին հետեւանքով: Յայտնի է, որ մեր եկեղեցում 15-րդ դարում իսկ արեւակցական 6-րդ աստիճանի պատկեր անգամ չէին թողատրուում եւ կամ թողատրուում էին ոչ յօրինակ այլոց»:

Մենք տեսանք, որ այդ տեսակետը հիմք ընդունելով, Գեորգ Ե Սուրենյանցը 1922 թ. մի քանի կանոնական կոնդակներ հրապարակեց: Իսկ գալով ամուսնալուծության և ամուսնալուծական հարցերին, Հայ եկեղեցին, պահպանելով Ավետարանի սկզբունքը, գուցե և հետևողականությամբ Ռուսաց եկեղեցու գործելակերպի, Պոլոժենիայի գոյության ընթացքում ամուսնալուծության հիմք է համարել միայն և զլխավորապես ամուսնական ուխտի անհավատարմությունը: Գերագույն Հոգևոր Խորհուրդը, կյանքի ստիպողական պահանջների առջև տեղիք տալով, թեթևացրել է ամուսնալուծությունը: Այս հարցի մկատմամբ լավագույնը, ըստ զեկուցողի, կլինի ընդունել Օահապիվանի ժողովի որոշումը, որով ամուսնությունը լուծելի է համարվում հետևյալ պատճառներով.

1. Ամուսնական անհավատարմություն,
2. Ամուլություն,
3. Մարմնական և հոգեկան արատներ,
4. Արքեցոլություն,
5. Անհաշտ բնավորություն /ծեծ, կոխվ և այլն/:

4. ՆՈՐ ՏՈՄԱՐԻ ՀԱՐՑ.- Հոռմեական և Արևմտյան բոլոր եկեղեցիները 16-րդ դարից սկսած գործածում էին մոր կամ Գրիգորյան տոմարը՝ Գրիգոր ԺԳ Պապի /1573-1585/ անունով: Ցարական իշխանությունը Ռուս Ուղղափառ եկեղեցում թույլ չէր տալիս ընդունելու մոր տոմարը: Բնականաբար, Հայ եկեղեցին ևս չէր կարող գործածել այն: Բայց երբ 1917 թ. տապալվեց ցարական իշխանությունը, բոլշևիկներն անմիջապես անցան մոր տոմարի: 1920 թ. Սովետական Հայաստանի կառավարության ղեկրետով Հայաստանի ամբողջ տարածքում մույնպես ընդունվեց մոր տոմարը, որին հետևելով Ռուսաց, Վրաց և Հայոց եկեղեցիները 1922 թ. ընդունեցին մոր տոմարը: Գեորգ Ե Կաթողիկոսն այդ մասին հրապարակեց հատուկ կոնդակ: Սակայն Ռուսաց և Վրաց եկեղեցիները, անմիջապես հետ կանգնելով, մորից անցան հին տոմարի գործածությանը: Նրանց օրինակով պարտադրված եղան մասն հին տոմարի գործածությանը վերադառնալ Ռուսաստանի և Վրաստանի հաշոց թեմերը: Բացի երուսաղեմից, որտեղ եկեղեցական իրավունքների պահպանության հարց կար, սփյուռքահայ բոլոր թեմերն էլ, առանց որոշակի դժվարության, սկսեցին գործածել մոր տոմարը⁷:

5. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՔԵՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ.- Այս հարցը թեև երկրորդական է, բայց ժամանակաշրջանի և քաղաքական հանգամանքների բերումով, քանի որ Հայաստանում և մյուս քաղաքներում եկեղեցու և հոգևորականության դեմ խիստ պայքար էր ծավալվում, հայ հոգևորականը հնարավորություն չուներ եկեղեցուց դուրս սքեմ հագնելու, որովհետև ծաղր ու ծանակի էր ենթարկվում, անարգվում: Այդ իսկ պատճառով Կաթողիկոսի անունով քաղաքիով դիմումներ էին գալիս, որպեսզի թույլատրի եկեղեցուց դուրս սքեմ չհագնելու: Սակայն կային մասն ավանդապահ հոգևորականներ, որոնք

⁷ Զաւէ Ա. Բահանայ Արգումանեան- Ազգապատում, Դ հատոր, Ա գիրք, Նյու-Յորք, 1995, էջ 309::

պահանջում էին, որ պետք է հոգևորականը ամեն տեղ սքեմով ներկայանա, որովհետև ժողովուրդը դարձել էր շարունակ չտվորել է իր հոգևոր՝ հորը սքեմով տեսնել: Ջեկուցողն այն կարծիքին է, որը պաշտպանում է մահ Գերագույն Հոգևոր խորհուրդը, «որ յարմար կը լինի պարտադրել հոգեւորականութեան հոգեւոր սքեմ կրել եկեղեցում, օրինականաւորութիւնների, պաշտօնական հանդեսների եւ հանգամանքների ժամանակ, որից դուրս՝ արտօնել մոցա աշխարհիկ սքեմ կրել»:

6. ՊԱՀՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑ.- Այս հարցի վերաբերյալ զեկուցողի և Գերագույն Հոգևոր խորհրդի կարծիքը բխում է այն ժամանակ տիրող քոմատիական կարգի թելադրող իրավիճակից, որին չէին կարող համաձայնել նվիրապետական Աթոռներն ու թեմակալ առաջնորդները:

«Այս հարցը կենքն ինքնին է լուծել, քանի որ այլևս պաս պահող չկա»,- ասում է Գևորգ Զ Կաթողիկոսը, ապա շարունակելով նշում, որ «Գերագույն Հոգևոր խորհուրդը կարծում է, որ պետք է թողնել միայն Ջատկի եւ Աստուածայայտութեան տօների պասերը մի-մի շաբաթ եւ խաչելութեան յիշատակին նուիրում ռուբաթ օրուայ պասը, որով կը դադարի Օրենքը գայթակղութեան աղբիւր դառնալ: Պասերի կրճատմամբ ինքնին յառաջ է գալիս պասկի օրերի մոտ ընդլայնման հարցը: Այս խնդրի նկատմամբ առաջարկ կայ անխտիր ամեն օր պասկ կատարել: Գերագույն Հոգևոր խորհուրդը հնարաւոր է գտնում պասկի օրերի արգելքը վերացնել՝ համարելով արգելեալ օրեր միայն Ս. Ջատկի եւ Ս. Ծննդեան շաբաթապասերը»⁸: Սակայն փոխանակ վերացնելու, զուցե կամավոր թողնել է ավելի ճիշտ, որովհետև եկեղեցական պահքին չպետք է միայն թշկական տեսակետով մայել և իմաստավորել: Մենք Պահքը չպետք է նկատել միայն համեղ կերակուրներից և մսեղենից հրաժարում, այլև այն մի առիթ է, որպեսզի մարդ ինքն իրեն ինքնաքննադատության տառապանքի և ինքնաճանաչումի ենթարկի, հոգեպես կազդուրվի և պատրաստվի քրիստոնյայի կյանքի ամենամեն նորախությանը՝ Ս. Հարությանը:

7. ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԼԵՋՈՒՆ.- Ըստ զեկուցողի, «Աստուածաշտութեան կարգի հետ աստուածաշտութեան լեզուն անցեալի ծնունդ է, որ իր ժամանակ ժողովրդին հասանելի լեզու է եղել, բայց այժմ անհասկանալի է, ուստի և հասարակաց աղօթքը, որի մպատակն է ստեղծել ընդհանուր կրօնական տրամադրութիւն աղօթողների մէջ եւ մոցա միացնել՝ չի ծառայում իր նպատակին: Այս հարցի նկատմամբ եղած առաջարկները՝ թարգմանել Ս. Գիրքը, շարականները եւ աղօթքները, ցանկալի են, բայց շատ դժուար իրագործելի: Գերագույն Հոգևոր խորհուրդը հնարաւոր է գտնում թոյլատրել, որ Ս. Գրքի որոշ հատուածներ եւ հայրերի թղթերը թարգմանաբար կարդացուին եղած թարգմանութիւններից օգտուելով, մինչեւ որ հնարաւոր կլինի Ս. Գիրքը ամբողջովին թարգմանում տեսնել»:

Սակայն ոչ բոլորը կարող էին և այսօր էլ կարող են համաձայնել այս առաջարկությանը. «Հայաստանեայց Եկեղեցին, իբրեւ գերագանցապէս ԱԶԳԱՅԻՆ Հաստատութիւն մը, կոչումն ունի հայութեան մէջ պահպանելու ինչ որ ազգային է և ազգին հոգւոյն հետ կը զօդէ իր ժողովուրդը: Գրաբարը, իբրեւ մեր

⁸ Սանդրո Բեյրուդյան «Վաղեբազրիբ Հայ եկեղեցու պատմության», Կ. Ա. Երևան, 1994, էջ 295:

պատուական նախնեաց լեզուն և քարքառը. միակ կապն է այսօր, որ կը միացնէ զմեզ տակաւին մեր նախնեաց հետ. ու Եկեղեցին է, այժմ, այն գանձարանը, որ մեր անցեալ սրբութեանց հետ կը պահպանուի Գրաքարը. անոր վտարումից մեր Եկեղեցին՝ գրեթէ պիտի ճշանակէր խզում մեր նախնեաց հետ. ինչ որ անշուշտ ցանկալի չէ ոչ մէկ Հայուն»⁹:

Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը իրավացիորեն առաջարկում է Ա. Պատարագը, աղոթքներն ու շարականները պահել գրաքար, քարոզման մեծ աղոթքները, Կտակարանի և Առաքելական ընթերցվածները կարդալ աշխարհաքար: Մեզ թվում է, որ այս տեսակետն է ընդունելի, կիրառելի թեկուզ այսօր: Մնացածը մերժելի են և անընդունելի, որը սակայն երբեմն շատերի կողմից ինքնակամ խախտվում է և չի դատապարտվում:

Զեկուցման վերջում Գեորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը բարեճորդության բուն նպատակը համարում է հայ ժողովրդի կրոնական ըմբռնումների կերպարանափոխումը՝ վերածնելով նրան հոգեպես, տալով նոր կյանք ու քրիստոնեական կենցաղ: Գերագույն Հոգևոր խորհուրդը մատնանշել է այդ ուղին հարթող հետևյալ միջոցներն ու տեսակետը.

«1. Հիմնել մասնագիտական հոգեւոր բարձրագոյն դպրոց, տեսական եւ գործնական աստուածաբանական ծրագրով և բնական գիտութիւնների ուսուցման լայն ծաւալով, որ ապագայ հոգեւորականացուն ձեռք բերէ քրիստոնէական ոգի եւ խորը համոզումներ, քրիստոնէական բարձր գաղափարների ճշմարտութեան եւ իր կենցաղով այդ աշխարհայեացքի մարմնացողը հանդիսանայ կեանքի մէջ, դաստիարակիչ օրինակ ծառայելով իր համայնքին: Այլապէս ասած նոր հոգեւորականութիւն ստեղծէ՝ ընդունակ նոր կեանքի պահանջներին զոհացում տալու:

2. Քրիստոնէական ուսմունքը կենդանի խօսքի միջոցով իրացնել տալ համայնքին՝ նրա մէջ քրիստոնէական սիրոյ ոգին կենդանացնելու եւ կեանքում համապատասխան կենցաղ ստեղծել տալու նպատակով:

3. Նպաստել կրօնա-բարոյական բնոյթ կրող գեղարուեստական երկերի զարգացման, կազմակերպել կիրակնօրեայ դասախօսութիւններ եւ ծրագրուած զրոյցներ՝ մատաղ սերնդի եւ ընդհանրապէս հաւատացեալ հօտի կրօնա-բարոյական դաստիարակութեան նպատակով:

4. Կազմակերպել համայնքի մէջ գթութեան եւ սիրոյ գործեր:

5. Հրատարակել Աստուածաբանական ամսաթերթ եւ կրօնական շաբաթաթերթեր:

6. Վերականգնել նուիրականութիւնը ազգային եկեղեցու միութիւնը պահպանելու, ի սփիւռս աշխարհի ցրուած գաղութահայութիւնը Մայր Աթոռի եւ Մայր Երկրի-Հայրենիքի հետ սերտօրէն կապելու նպատակով: Եւ վերջապէս՝

7. Եկեղեցու արտաքին ծիսական կարգերն ու արարողութիւնները նպատակայարմար կրճատումներով եւ մշակուած քաղցրալուր գեղարուեստական երգով եւ երաժշտութեամբ վեհացնել:

Ահա այն ուղին, որ կ'առաջնորդէ մեզ դէպի արտաքին ու ներքին ճշմարիտ բարեճորդութիւն»:

Պետք է գշել, որ Հայ Եկեղեցու բարեկարգութեան հարցերի շուրջ խոսվել են նաև 1941, 1945, 1955 թվականներին գումարված Ազգային-եկեղեցական ժողովներում, առանց լուրջ քննարկումների և որոշումների ընդունման, որովհետև,

⁹ Թորգոմ Պատրիարք Գուշակյան- Բարեկարգութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1940, էջ 132:

դժբախտաբար, այդ տարիներին Ռճարավոր չէր առանց պետական միջամտության լուծել այս հարցերը: Ուրեմն, պայմաններն աննպաստ էին բարեմոդոցչական որևէ հարց լուծելու, առավել ևս Սահմանադրությունը ընդունելու, թեև հետագայում երջանկահիշատակ Վազգեն Ա. Կաթողիկոսը ճոր Սահմանադրության մախագծի ընմարկումը մի քանի անգամ օրակարգի հարց է դարձրել: 1990 թ. ազգային պետականության վերականգնմամբ Եկեղեցուն վերադարձվեցին ճոր դարավոր իրավունքներն ու անկախ գործելու Ռճարավորությունները: Հայաստանում օրինական ճոր պայմանների ստեղծումով, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից ընդունված «Խղճի ազատության» օրենքի Ռիման վրա Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը և Եպիսկոպոսական ժողովը խմբագրում և 1991 թ. Ռրապարակում են ժամանակավոր «Ճերքին թեմերի եկեղեցական կանոնադրություն»՝ «Ճսխտակ ունենալով վերականգնելու Հայաստանի և Ճերքին սփյուռքի տարածքի վրա Հայ Առաքելական Եկեղեցու կանոնական և վարչական կյանքը՝ համաձայն եկեղեցական ավանդական կարգ ու կանոնի»¹⁰:

Այսօր օրակարգի առաջին և ամենաանհրաժեշտ հարցը Հայ Եկեղեցու ճոր սահմանադրության մախագծի վերջնական մշակումն ու հաստատումն է, որը կդառնա բոլոր չլուծված հարցերի Ռիմական բանալին և 1700-ամյա Հայ Առաքելական Եկեղեցու՝ մեր դարի ամենակարևոր նվաճումը:

Այսօրվա սերունդը համոզված է, որ ինչպես մեր երջանկահիշատակ Հայրապետների մախաճեռնած, սկզբնավորած և ի մի բերած շատ ու շատ ճրագրեր և հղացումներ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի իմացությամբ ճոր թափ և ուժ, գործունեության ընդարձակ Ռճարավորություն են ստանում, այնպես էլ Նորին Սրբությանը փոխանցված Հայ Եկեղեցու բարեկարգության վերաբերյալ հարցերի ու ճրագրերի անլուծելի մնացած ամբողջ փաթեթը ջալլ առ ջալլ պետք է լուծում ստանա, իրեն հատուկ խորաթափանց իմացությամբ, բացառիկ բժախմորությամբ, խստապահանջ ավանդությամբ և լուսապայծառ տեսիլքով:

«ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ ՄԵՐ ՀԵՌԱԿԷՏԸ, ՍԵՒՆԵՌԱԿԷՏԸ, ՆՇԱՆԱԿԷՏԸ, ԻճՉ ԿՈՂԷՃ ասէք: Եւ բարեկարգութիւն կնշանակէ. Երուսաղեմի մախկին Պատրիարքներից Թորգոմ Գուշակյան պայծառիմաստ մեծ Պատրիարքի բացատրությամբ. ԲԱՐԻՕՔ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԱՅՆ ԿԱՐԳԻՆ, ՈՐ ԿԵԱՆՔ Է, ՈՉ ԹԷ ՄԻԱՅՆ ԿԱՌՈՑՑ», այսիճքը՝ Եկեղեցին բարեկարգել այնպես, որ դառնա սքանչելի մի ուժ, գործուն մերկայություն և կենսունակ մերգործություն մեր ժողովրդի կյանքում: Թող իմ այս առաջին խոսքի վերջին բառերը լինեն «ԱՇԽԱՏԱՆՔ ՎԱՍՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՒ ԱՃԳԻՍ ՀԱՅՈՑ»¹¹:

¹⁰ «Էջմիածին», 1992, դեկտեմբեր, էջ 15:

¹¹ «Էջմիածին», 1995, ապրիլ, էջ 84:

ԳՐԱԿԱՆ

«ԽԼՉԻ ԶԱՆԱԳԱՐ»



Այսպես է կոչվում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անցյալ տարի անգլերենով գրված աղոթքների և խոկումների շարքը, որը 1997 թ. Ավագ Շաբաթի նախօրեին իտալերեն թարգմանությամբ նախ լույս տեսավ Հոռմում, ապա այս տարի, Ավագ Շաբաթի նախաշեմին, Մեծի Պահոց խորհրդական օրերին, հայերեն թարգմանությամբ վերահրատարակվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում:

Այս գործի վերնագիրը և գրության շարժառիթն ունեն իրենց նախապատմությունը, որը կապվում է Հոռմեական Կաթողիկե եկեղեցում Ավագ Ուրբաթ օրը կատարվող համանուն ծիսական արարողության հետ: 14 հանգրվաններից կազմված այս ծեսի ընթացքում, ավետարանական համապատասխան 14 ընթերցումներով, կայանից կայան է տարվում Հիսուսի խաչափայտը խորհրդանշող մի խաչ, որը վերականգնանալու է հիշատակը Հիսուսի կյանքի վերջին դրվագների՝ Գեթսեմանի պարտեզի աղոթքից մինչև խաչելություն և գերեզման դրվելը:

Աշխարհի բոլոր Կաթողիկե եկեղեցիներում ամեն տարի, Ավագ Ուրբաթ տեղի ունեցող այս արարողությունը Հոռմում, Կաթողիկե եկեղեցու Քահանայապետի նախագահությամբ, կատարվում է հուշակալոր կոլիզեի՝ անտիկ աշխարհի ամենամեծ ամֆիթատրոնի շուրջ, այնտեղ, ուր առաջին քրիստոնյաները, զազանների առջև նետվելով, չարչարակից դարձան իրենց Տիրոջը և ցորենի հատիկների նման աղացվելով զազանների երախներում, արյան նահատակությամբ վկայեցին իրենց հավատի ճշմարտացիությունը:

Պապի նախագահությամբ կատարվելիս, այս արարողությունն ուղեկցվում է նաև խոկումներով՝ հոգևոր մտածումներով և աղոթքներով, որոնք վերջին շրջանում գրում են Կաթողիկե եկեղեցու ճանաչված դեմքերը: Մի քանի տարի առաջ, առաջին անգամ, այս խոկումներն ու աղոթքները, Պապի խնդրանքով, պատրաստվեցին Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի կողմից: Անցյալ տարի, ի մշան եղբայրական սիրո, վերստին Պապի խնդրանքով, դրանք պատրաստվեցին Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի կողմից, որոնք Հոռմ տարավ Մայր Աթոռի դիվանապետ գերազնորն Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապայանը:

Ինչպես արդեն ասացինք, Վեհափառն այս խոկումներն ու աղոթքները գրել էր

անգլերեն, որոնց իտալերեն թարգմանությունը 14 կայաններում մեկ առ մեկ ընթերցեց Հոռմի Հովհաննես-Պողոս Բ Պապը: Արարողությունն ուղիղ եթերով հեռարձակվեց ողջ աշխարհում, և այն դիտեցին միլիոնավոր մարդիկ: Սակայն, ինչպես գրում է այս աղոթքները անգլերենից թարգմանած և հայերեն հրատարակության առաջաբանի հեղինակ հոգեշնորհ Տ. Միքայել Մ. Վրդ. Աբապահյանը, «Մեր հայրենաքանակ ժողովուրդը, ցավոք, մեծ չափով անմասն և անհաղորդակից մնաց նման կարևոր դեպքից և վեհափառ Հայրապետի կրոնաշունչ խոկումներից ու աղոթքներից»:

Այս մտահոգությամբ էլ մենք ձեռնամուխ եղանք պատրաստված գրքուկի թարգմանությանը և այն դնում ենք մեր հավատավոր ժողովրդի առջև՝ որպես կրոնական գրականության մի սքանչելի նմուշ և արձակ բանաստեղծության մի գեղեցիկ օրինակ»:

Քանի որ այս գործերը գրվել են՝ արտասանվելու հիշյալ արարողության ժամանակ, վերջինիս 14 կայանների հետևությամբ, գիրքն ունի 14 բաժիններ, որոնցից յուրաքանչյուրում գետեղված է մաս տվյալ բաժնի ավետարանական հատվածին վերաբերող մեկ գունավոր մանրանկար: Վերջիններս տպագրվել են մաս գրքի՝ Հոռմում կատարված հրատարակությունում: Բաժիններից յուրաքանչյուրն էլ իր հերթին ունի հետևյալ կառուցվածքը. մախ բերվում է տվյալ կայանը ներկայացնող ավետարանական հատվածը, որին հաջորդում է վերջինիս մփրված հոգևոր մտածումն ու խորհրդածությունը՝ խոկումը, որն էլ իր հերթին ունի եռամաս կառուցվածք:

Սկզբում բնութագրվում են այն մեղքն ու մարդկային թուլությունները, որոնք հիշվում են ավետարանական տվյալ պատումում, ապա ներկայացվում են աղոթման մեթոդային անդրադարձումները, ու խոկումն ավարտվում է ասվածի հոգևոր ընդհանրացում-խորհրդածությամբ: Վերջինիս հաջորդում է աղոթքը, ուր թողություն, ուժ և զորություն է հայցվում՝ քավելու և հեռու մնալու այն մեղքերից, որոնք հիշվում են տվյալ բաժնում:

Գիրքն սկսվում է Հովհաննես-Պողոս Բ Պապի բացման աղոթքով, որում հավատացյալներին ծանուցում է, թե խաչի ճանապարհին

Այս տարի մեր քայլերն առաջնորդվելու են
մեզ համար պատրաստված խոկմամբ
մեր սիրեցյալ եղբոր՝ Գարեգին Ա
Ամենայն Հայոց Կաթողիկոսի:
Եկեք այժմ մեր ճամփորդությունն
սկսենք իր խոսքերով:

Վեհափառ Հայրապետը բացման աղոթքում ասում է, թե «Բարի Ուրբաթ» է կոչվում այս օրը արևմտյան ծիսական ավանդույթում և «Ավագ Ուրբաթ»՝ հայկականում: Նույնն են ոչ միայն Ուրբաթը և Ուրբաթի խորհուրդը, այլև Ավագն ու Բարին: Ուրբաթի մեջ Բարին մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, Նա, Ով իր սերն արտահայտեց

տառապանքով, մվաստացմամբ, կտտանքներով,
ծաղրով, խարազանվելով, խաչելությամբ,
մահվամբ և թաղմամբ:

Ավագն էլ այս Ուրբաթի մեջ դարձյալ մեր Տեր Հիսուս Բրիստոսն է՝

Ով մեզ առաջնորդում է մեր
փրկագործության ճանապարհով՝
մեզ հրավիրելով հետևելու
փրկագործության իր աստվածադիր ճանապարհին:

Վեհափառ Հայրապետը Եկեղեցիների ծիսական սովանդության ինքնօրինակության պահպանության և արդի աշխարհում առ Բրիստոս ունեցած սիրով քրիստոնյաների հոգևոր միության գաղափարը խտացնում է հետևյալ տողերում.

Այսօր, ևս մեկ անգամ և շատ տարբեր ձևով,
մենք աղոթում ենք միասին, և մենք
մտածում ենք միասին:
Այդ միասնականությունը
ճշմարտացիության ու ամբողջականության
մի հատուկ երանգ է հաղորդում մեր աղոթքին:

Այս ցույց միտքն է շեշտվում և Պապի պատասխան աղոթքում.

Տերդ խաչի,
միացրու մեր սրտերն ու մտքերը
և դրանք միացրու Քո սրտին ու մտքին,
մինչ մենք քայլում ենք միասին ձեռք ձեռքի տված՝
հետևելով դեպի խաչն ուղղված
Քո քնթացքի ուղևորներին:

«Խաչի ճանապարհի» առաջին կայանը Գեթսեմանիում Հիսուսի առանձնացյալն է, երբ մարդկության Փրկիչը, դիմելով իր երկնավոր Հորը, ասաց. «Այս քաժակը ինձնից հեռացրո՛ւ, քայքայի թե ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես դո՛ւ ես կամենում» (Մարկ. ԺԴ 36):

Գարեգին Վեհափառն այս պահը անվանում է

Հիսուսի կյանքի ամենատկար և սակայն
ամենագորեղ ժամը...

Մահից երկնյում են բոլորը և ամենուր՝ թե՛ հիվանդության մահճում, թե՛ պատերազմի դաշտում և թե՛ դատական ատյանում՝ իրենց համոզմունքներն ու գաղափարները պաշտպանելիս: Վեհափառը շեշտում է, որ Հիսուս ճշմարտապես և կատարելապես մարդ լինելով, ապրեց մարդկային այդ պահը, որին, սակայն, հաղթեց մարդկանց հանդեպ տաժաժ իր փրկչական սիրով:

Խոկմանը հաջորդող աղոթքում ցույց այս մտածումներն աղոթական ձևի մեջ ուղղվում են Հիսուսին, թե ինչպես ինքը դիմեց իր Երկնավոր Հորը, այնպես էլ մենք ենք դիմում իրեն, որ մեր մեջ զորացնի իր ունեցած հավատն ու սերը:

Մատնությունը և ձեռքակալությանը նվիրված երկրորդ կայանում ասվում է, որ մատնությունը սիրո պատասխանն էր՝ ատելությանը, և թե մատնությունը դավաճանությունն է՝ ծնված թշնամանքից, որը «հաճախ պարուրված է...

բարեկամության հանդերձների մեջ» և աղոթքում հայցում է, որ մաքրվենք թշնամանքի ու դավաճանության փշերից, և մեր հոգիները չսողոսկեն հուղաների սուվերենները:

Երրորդ կայանը՝ «Հիսուս լքվում է յուրալիմներից», նվիրված է Մարկոսի Ավետարանի այն հատվածին (Մրկ. ԺԴ 27, 50), որում պատմվում է, թե մատուռայն գիշերը աշակերտները ինչպես մեռակ թողեցին Ուսուցչին: Խոկման սկզբում Հիսուսի այսպես մեռակ մնալն է շեշտվում հետևյալ տողերում.

Իր աշակերտներն իր ընտանիքը եղան,
սակայն իրեն մեռակ թողեցին
Իր տառապանքի ժամին:

Այնուհետև ներկայացնում է արդի աշխարհն իր հարափոփոխ ընթացքով և ուրիշով, որի մեջ միայնակ են զգում իրենց մարդիկ տնանկներից մինչև աշխարհի հզորները: Մենք մեր Տիրոջը լքելով՝ մեզ միայնակ թողեցինք

Եվ սակայն լքվածը
չլքեց մեզ,
չի լքելու մեզ:
Եկեք դառնանք դեպի Նա:

Երրորդ կայանի Տիրոջն ուղղված աղոթքում այս պատճառով խնդրում է, որ ընդունի մեզ, որովհետև

Քեզանից մեր փախուստը
մեզ մոտեցրել է դժոխքին:

Չորրորդ կայանը Հիսուսի դատապարտվելն է հրեական ատյանում, որը Գարեգին Վեհափառը բնորոշում է իբրև «գործի վերածված ատելություն», վերջինս էլ՝ համեմատելով մթության հետ, որը մեզ շրջապատում է այն ժամանակ, երբ «մենք հեռանում» ենք «Աշխարհի լուսից»:

Հաջորդ՝ Պետրոսի ուրանալուն նվիրված դրվագում մեկ անգամ ևս շեշտվում է վախի թողած ազդեցությունը՝ թե որքան դժվար է հետևել Հիսուսի «Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում» (Մտթ. Ժ 28) խոսքերին, և թե ուրացումից հետո վերստին առ Հիսուս կարող ենք դառնալ միայն առաքյալի նման լալով, այսինքն՝ զղջմամբ:

«Հիսուս դատվում է Պիղատոսի կողմից» վեցերորդ կայանում ստեղծագործաբար զարգացնելով մեր շարականագիրների հնօրյա գրական ավանդները, Վեհափառ Տերը գրում է.

Արարիչը դատվում է արարածների կողմից:

Հաջորդ՝ յոթերորդ՝ «Հիսուս դատապարտվում է մահվան» կայանի մեխը քանի որ Մարկոսի Ավետարանի (ԺԵ 12-15) հատվածի «Խաչը հանիր նրան» խոսքերն են, ասում է, որ այսօր մեր գործած մեղքերով մենք կրկնում ենք այդ նույն բառերը:

8-րդ կայանը վերնագրված է «Հիսուս ծանակվում և թագադրվում է փշե պսակով», իսկ 9-րդը՝ «Հիսուս աշակցություն է գտնում Սիմեոն կյուրենացուց»:

«Հիսուս իր արքայությունն է խոստանում բարի ավագակին» 10-րդ դրվագում Հիսուսի հետ խաչվող երկու ավագակներից մեկի «Հիշի՛ր ինձ, Տեր, երբ գաս Քո թագավորությամբ» (Ղուկ. ԻԳ 42) խոսքերի հետևողությամբ խոկումն ավարտվում է հետևյալ խոսքերով.

Եկեք միանանք այս հանցագործին և
միասնաբար ասենք՝
«Հիսուս, հիշիր մեզ»:

11-րդ կայանը՝ «Հիսուս խաչի վրա, մայրը և աշակերտը», որի ընթերցվածում (Հովհ. ԺԹ 25-27) պատմվում է, թե ինչպես խաչված Հիսուս Տիրամորը հանձնում է իր սիրելի աշակերտի խնամքին, Գարեգին Վեհափառը նվիրել է մայրության խորհրդին ու գաղափարին: Ինչպես աղոթքի սկզբում է ասում.

Տեր Հիսուս, Որդին Սուրբ Կույս Մարիամի,
Քո սուրբ մոր քարեխոսությամբ
մեր սրտերում անարատ պահիր սերը
համդեպ մեր մայրերի:

Վերջին երեք կայաններն էլ համապատասխանաբար նվիրված են Հիսուսի՝ խաչի վրա հոգին ավանդելուն, խաչից իջեցվելուն և գերեզման դրվելուն:

Եվ աչսպես, ողջ Խաչի ճանապարհին, Գեթսեմանից մինչև գերեզմանի այրը, կայան առ կայան ընթերցողի ուղեկիցներն են Քրիստոսի սերը և մարդկային մեղքը՝ երկուսն էլ իրենց ալլազան դրսևորումներով շարունակ հարաբերվելով յուրաքանչյուր կայանը ներկայացնող ավետարանական պատումի արտահայտած հոգևոր խորհրդի հետ: Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի այս խոկումներն ու աղոթքները, մշտապես հարաբերվելով հանդերձ մերօրյա նյութականացող աշխարհըմբռնման և ընկալումների հետ և ուղղված լինելով այսօրվա մարդուն, միաժամանակ գրված են Ավետարանի համապատասխան հատվածների միջնադարյան կանոնական մեկնությունների հոգևոր վերիմաստավորումների հետևողությամբ, ստեղծագործական առումով էլ ներառելով նաև նախորդ դարերի հոգևոր բանաստեղծության տարբեր ժանրերի՝ շարական, աղոթք, գանձ ու ներբողյան, առանձին տողերը և ընդհանրապես բնորոշ ավանդները:

Այս առումով հատկանշական է 14-րդ կայանը: Հիսուսի թե՛ Ծննդյանը և թե՛ մահվանը նվիրված շարականներում հոգևոր խորհուրդը առավել ուժգին կերպով շեշտվել է պատկերային հակադրությամբ, թե՛ Տիրամայրը իր մեջ կրեց անկրեկին: Նա, Ում երկիրն ու երկինքը չէին կարող պարփակել, խանձարուրում պատկեց: Նույն կերպ գերեզման դրվելու պարագայում ընդգծվում է այն միտքը, թե Նա, Ով բնակվում է վերին և անմատույց լուսի մեջ գերեզմանի խավարային գոտը դրվեց, և կամ անպարագրելի լուսը գերեզմանի մեջ, պարագրվեց, ամփոփվեց: Խոսքը կառուցելով այս հակադրության վրա և շարականային մեկ հատված ներառելով 14-րդ կայանի խոկումի մեջ, Գարեգին Վեհափառն այնուհետև ասում է, որ մարդիկ կարող են գերեզմանվել, սակայն

Հավատքը, հույսը, սերը,
գաղափարները, տեսիլքները,

արժեքները հավիտենական...

Գերեզմաններ չունեն:

Վեհափառը ցանկանում է, որ գերեզմանը դառնա այն տեղը, ուր թաղվում են մեր մեղքերը, իսկ Հիսուս ամփոփվի մեր սրտում և այնտեղից Հարություն առնի, վերահառնի մեր մեջ: Այսպիսով, «Խաչի ճանապարհը» իր վերջին հանգրվանն ու փարոսը ունենալով Հարության խորհուրդն ու լույսը, ավարտվում է հիշյալ աղոթք-մաղթանքով

Թող մեր մեղքերը թաղվեն գերեզմանում,

Թող քո ներողամտությունը մեզ տա

ճաշակը հավիտենական կյանքի,

որպեսզի մենք կարողանանք ողջունել

հարությունը քո՝

սրբված սրտերով ու մտքերով,

և Քեզ գոհություն և փառք ընծայենք

հավիտյանս հավիտենից: Ամեն:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ԱՔԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ՏԱԹԵՎԸ ԹՈՂ ՏԱ՛-ԹԵՎ

Ամենաջերմ սրտով և մեծ ուրախությամբ եմք ողջունում Գևորգյան Հոգևոր ձեմարանի երկար սպասված «ՏԱԹԵՎ» տարեգրքի յույս ընծայումը: Ուսանողական այս գրքույկը պատկերն է Գևորգյան ձեմարանի՝ վավերական վկայություներն ապրող և կենդանի *աշակերտության*, որ ինքնարտահայտության այսպիսի ձեռնարկներով, տվեալն աշխատանքով, առաջագնաց և նպատակասլաց ընթացքով պիտի վերածվի *առաքելության*:

ՏԱԹԵՎԸ, ծնվելով Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի, Կարապետ Կալանթարյանի, Կոմիտաս վարդապետի, Գալուստ Տեր-Մկրտչյանի և մեր մյուս մեծերի շնչառությամբ միախառնված պատերի ներքո, որ կոչվում է Գևորգյան ձեմարան, ձեր՝ այդ ձեմարանի սաներիդ յավագույն ընծան է նախ և առաջ նրանց հիշատակին: Այդ շնչառության թրթռումների ունկնդիրներն են դուք այսօր և, ավելին, այն թանձրացած, խտացյալ և առաջին թոթովանքներով ներկայացնողները: Գևորգյան վերաշինված ձեմարանի առաջին հրախայրի՛քը թող բազմաբանգ ու փթթուն ծաղկեփունջ լինի նրանց շիրիմներից և մաքրափայլ ու հավերժաբույր աղոթք առ Աստված՝ վասն հիշատակացն նոցա:

* *

Վեհացնող և պարտավորեցնող անվան ներքո են դուք դնում ձեր առաջին ֆայլը.

ՏԱԹԵՎ...

Հայոց պատմության անշիջանելի ջահ, որ առաջնորդող է եղել բազմաթիվ սերունդների: Հոգևոր, մշակութային, ազգային, կրթական կյանքի մեջ լեռնացում է այն՝ դուրս բոլոր շրջանակներից, ինքը շրջանակ և պարունակ *Արժեքի* համար:

ՏԱԹԵՎ...

Բարձունք հայ եղբու, հայ մտքի, հայ կամքի: Այդ բարձունքից նառագած աննվազ լույսը մինչև այսօր նեղում է մեր կյանքի մուրը՝ փարոսացած որպես փրկության բոցավառվող *Տույս*:

ՏԱԹԵՎ...

Անընկճելի բերդապարիսպ, ընդմեծ Տաթևացու արծվաեղջյուրն զիտանոց և տարաբնույթ հարձակումներից ընդդեմ «վախ՛ան ամբուրեան» և «զէն յաղթութեան»: Իրավ է ասել. «հաւատք քո կեցուցին, զմեզ» — ոչ հնույնամբ և հիշատակությամբ, այլ՝ ապրված ու ապրվող կենդանի *Քաղաք*:

ՏԱԹԵՎ...

Աղբյուր անապատ, բխում իմաստության, գիտության, համարի: Զավակների խաչակիր, խաչակցած իր խաչագամ փեսային՝ Սիրո Վարդապետին, անակարկ ու ժալոացած սեղ:

Սյունյաց լեռներից եկող հույսը, հավատը և սերը Տաթևացրել են մեր կողմնիկի անդաստանները, առանց որի ամշակության մի մեծ դատարկության առջև կգտնեինք ինքներս մեզ: Ուրեմն, *անունը* կրողը *անվանը* վայել գործով պիտի արժեցնի իրեն:



Հայտնի է, որ աշխարհիս հիմքը, կենդանության առաջին նախապայմանը շարժումն է: Առանց շարժման կդադարի գոյությունը, կվերածվի անշարժության, ֆարացման, կարծրացման, ճակնացման, որ հավասարազոր է անգոյության ու մահվան: Առանց արյան շրջանառության չի տրոփի սիրտը, առանց գետի ռոտզման լիճը ճանիճ կդառնա և, վերջապես, առանց պտույտի հրկիրը դուրս կմնա՝ Աստվածադիր ներդաշնակությունից անցնելով տիեզերքի անհայտության անդունդը:

Այսօր մեր Մայր եկեղեցում և ազատ ու անկախ Մայր Հայրենիքում մամենից առավել կարիք կա ներքին մարդու հոգեշարժման, վերափոխության: Անհունորեն ուրախ ենք, որ Գևորգյան ձեմարանի հարկից ներս ջրերը շարժելու, խառնելու ընթացքն է սկսում ծայր առնել *գրով* և *գրականությամբ*: Սա ինքնավայություն լավագույն ձևն է: Այն հայելի է, որում կարող ես տեսնել և տեսցնել ինքդ ինքդ: Բայց ոչ թե ցուցադրական և ինքնանպատակ կերպով *բան արած* լինելու հոգեբանությամբ, այլ որպես ընթացք ինքնահաստատման նախապարհին: Դեռևս վարդապետ և Տեսուչ, Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը կիլիկիո Աթոռի Դպրեվանքում հրատարակվող «ԳԼԱԶՈՐ» համաճաման տարեգրքում 1957 թվականին հետևյալ մտածումներն է ուղղել ուսանողությանը.

«Չմոռանա՛ք երբեք, որ գիրք պետք է իմաստաւորովի կեանքով, իրա՛ւ կեանքով, այսինքն դառնայ հարազատ և կենդանի, տաք և բաբախուն տրոփը ապրուստ՝ կեանքի: Բառերու, ուղեղէն և ուղեղով շինուած դղեակ մը չէ գրական ստեղծագործական կտոր մը... գրեցէք այնպէս ինչպէս կը զգաք, կ'ապրիք ու կ'ըմբռնէք կեանքը: Թող շունչին տաքութիւնը գիրին մէջ անցնի, ինչպէս ջուրը սպունգին մէջ...»:



1973 թվականին Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանից առաջին անգամ լույս տեսավ «ՏԱԹԵՎ» տարեգիրքը: Ավա՛ղ, այն մեկ համարից անդին չկարողացավ շարունակել իր կյանքը: Դու՛ք՝ սիրելի՛ Գևորգյանցիներ, այսպիսով վերակենդանացրի՛ք «ՏԱԹԵՎ»-ը, սակայն ունենալ այլ բան է, պահելն ու հարատևելը՝ մեկ այլ բան: *Հարատևությունն է արժեքների ստեղծում:*

Բնականաբար, այս ձեռնարկը պիտի մեծամեծ հավակնությունների տեղիք չտա, այլ դառնա այն օջախը, մթնոլորտը, որտեղ ամեն Գևորգյանցի գա Բաբախվելու և համ տալու նրան: Ձեր հետաքրքրությունների, զգացումների, խորերդածու-

թյունների աշխարհը պիտի լիարժեք կերպով քացվի այստեղ՝ վերածվելով հրապարակի և ասպարեզի լայն հորիզոնների համար:

Մե՞նք տեսնե՞ք բավականին լեցուն ձեր Տարեգիրքը, որում տեղ են գտել կրոնական, քառասիրական, պատմական, գրական ստեղծագործություններ: Դրանք աշխատանքի, պրպտումի գեղեցիկ արդյունքն են: Տեսնե՞ք ձեր զգացումները, ուրվագծեցի՞նք ձեր հոգեկան, իմացական մտապատկերը և խրախուսում են՞ առավել զարգացնել, ազնվացնել ու բյուրեղացնել դրանք:

Բարձրորեն գնահատում ենք Տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն Մ. Վրդ. Նաթարյանին և «ՏԱԹԵՎ»-ի խմբագրակազմին՝ մտահղացման և կատարած աշխատանքի համար, որով դաշտ է ստեղծվել նոր իրագործումների, գիտական, գրական հանգրվաններով առաջանալու ճշմարտության ճանապարհով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրակազմի շնորհավորանքը հոգվածագիր հեղինակներին, ովքեր իրենց ստորագրություններով աշակերտական կյանքում հիմնավորում և սկզբնավորում են այն շինարարությունը, որ, քար առ քար դրվելով, վերածվում է մի սփանչելի, հոյակերտ շենքի: Մաղթում ենք, որ այս անունները նախանձախնդրության առիթ դառնան մյուսների համար՝ իրենց մասնակցությունը, անդամակցությունը բերելու այդ անանցանելի գործին:

Թող բազմապատկվի ձեր թիվն ու որակը, որպեսզի լեռների թագուհի Տաթևը վերաբխի ու կենդանանա «ՏԱԹԵՎ»-ի ճանապարհով՝ Գևորգյան Հոգևոր Հիմարանը դարձնելով հարագատ հանգրվանավայր:

Աղոթում ենք Ամենակալ Աստծուն և եայցում բարեխոսությունը Տաթևի Սուրբի՝ Մեծն Տաթևացի Վարդապետի, որ ձեր կյանքը դառնա հարանուն վերելի՝ անընդհատ և տևական, գրիչը՝ անբաժան կյանքից, որպեսզի մի պտղունց աղ լինե՞ք շաղված մեր Մայր եկեղեցու և ազգի սեղանին:

Թող ՏԱԹԵՎԸ ՏԱ՛-ԹԵՎ...

ԱՆՅՐ ԷԹՈՒՈՒՄ
ԵՎ ԽԵՄԵՐՈՒՄ



ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆԻ ՕԾՈՒՄ ԵՎ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ

*«Յիշեցէ՛ք ձեր առաջնորդներին, որոնք
ձեզ Աստծու խօսքն ասացին: Նալեղով
նրանց կենանքի ընթացքի վախճանին՝
հետեռո՛ղ եղէք նրանց հաւատին: Յիսուս
Ջրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ
յաիսեան»:*

ԵԲՐ. ԺԳ 7-8

«Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյ եղանելոյն ի Վիրապէն»,- այսպէս է ավանդում մեզ եկեղեցական օրացույցը՝ համայն հայութեան ի Հայաստան, յԱրցախ և ի սփյուռս աշխարհի ի մի բերելով Աստծո տաճարներում, ծնրադիր աղոթասացութեամբ փառաբանելու Բարձրալիմ, մահ հայցելու մեր հավատի հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսությունը:

Հունիսի 13-ի շաբաթ օրը կրկնակի տոն էր հայ հավատավորի համար: Վաղ առավոտից ուխտավորաբար Խոր Վիրապ էր շտապում հավատավորների հոծ բազմությունը՝ ոչ միայն ներկա գտնվելու մատուցվելիք Սուրբ և անմահ Պատարագին, այլև՝ աղոթասացութեամբ մասնակից լինելու չարչարանաց զքի վրա կառուցված մատուռի Սուրբ Սեղանի և այնտեղ զետեղվելիք Հիսուս Որդուն զրկած Տիրամոր պատկերի օծման հանդիսավոր արարողությանը:



Թերթելով «Հայկական հանրագիտարանի» էջերը, այնտեղ կարդում ենք. «Ըստ Ագաթանգեղոսի և այլ պատմիչների, Գրիգոր Լուսավորչին այս վիրապում է կրել իր չարչարանքները: Մոտ 642-ին Ներսես Ա Կաթողիկոսը սրբազան վիրապի վրա կանգնեցրել է մի մատուռ, որը, ճարտարապետ Ս. Մնացականյանի կարծիքով, 16-րդ դարի արաբ պատմիչ Ալ-Մուկադդասի նկարագրած սափտակ կրաքարից, ներսում ութ պուճերով, բոլորածև կենտրոնական զանգով է: Մատուռն իր ծալատարածական կոնպոզիցիայով և կառուցվածքային սկզբունքով, որոշ մեամություն է ունեցել Զվարթնոցին: Ավերված շինության տեղում 1662-ին կառուցվել է թաղածածկ մատուռ, որը կանգուն է մինչև օրս: Մատուռի Ավագ Խորանից աջ գտնվող մտոցը ուղղաձիգ աստիճանների (ներկայիս՝ մետաղյա) միջոցով տանում է ներքնաճարկ, ուր 4,4 մ տրամագծով, 6 մ խորությամբ, գմբեթանման գոգավոր ծածկով վիրապն է»:

Առավոտյան ժամերգությանն անմիջապես հետևում է օծման արարողությունը՝ ձեռամբ Արցախի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարզե եպիսկոպոս Մարտիրոսյանի, որ ուխտավորաբար Խոր Վիրապ էր եկել Արցախի թեմի քահանայից դասի ուղեկցությամբ: Ասեմք մահ, որ Սրբազան Հոր պատվերով էր նկարվել Սուրբ Սեղանին զետեղված սրբապատկերը, իսկ օրվա օծումը

կատարելը, ապա և Ս. Պատարագ մատուցելը Պարզև Սրբազանի եռամյա ուխտի այդօրվա իրականացումն էր:

«Առաքելոյ աղամոյ» շարականի երգեցողության ուղեկցությամբ ու «Օրհմեսցի և սրբեսցի» աղոթք-մաղթանքի խոսքերի համադրությամբ, Սրբազան Հայրը, մեծաթիվ հավատացյալների ներկայությամբ, Սրբալույս Մյուռնով օծում է Ավագ Ս. Սեդանը և Սրբապատկերը, հավարտ որի անմիջապես հենց նորած Սեդանի վրա մատուցվում է Ս. Պատարագ՝ ի հիշատակ «Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ ելն ի վիրապէն»:

Հըմթացս Ս. Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ, պատարագիչ Սրբազան Հայրը, հավուր պատշաճի քարոզ խոսելով, ներկաներին մեկ անգամ ևս հիշեցրեց օրվա սքանչելի խորհուրդը, մատնացույց անելով չարչարանաց գութը, հակիրճ ներկայացրեց մեր հավատի Հոր տառապանքներով սրբագործված տարիները, ելքը վիրապից, ապա, ընդհանրացնելով ասելիքը, ավելացրեց. «Թեյևս այսօրը մեր Հայաստանյայց Եկեղեցու փառաց պսակը խորհրդանշող օրն է, երբ, ի վերջո, հեթանոս հայը ստիպված եղավ անսալ իր խղճի ծայնին, ընդառաջ գնալ միակ և ճշմարիտ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին, թորափել սեփական հոգիների խավարը:



Սի պահ Ս. Պատարագից

Անշուշտ կրկնակի տոն է այսօր մեզ համար, զի երկար տարիների ընդմիջումից հետո, ի վերջո այս Սուրբ Սեդանի վրա մատուցվեց Ս. Պատարագ, հայ հավատավորն իր աղոթքն առաքեց առ Բարձրալը, հայցեց մեր մեծ Հայրապետի բարեխոսությունը և հավատի ու սիրո բերկրանքն ապրեց: Թող այսօրը լինի մեր հոգիների խավարի փարատման օրը: Եվ մեզանից յուրաքանչյուրը, Սուրբ Գրիգորի բարեխոսությամբ, դուրս գալով իր հոգու գրից, ընդառաջ գնալ դեպի աստվածային լույսը, դեպի այն անմար կանթերը, որ բախտ է վիճակված տեսնել միմիայն մաքուր ու անարատ սիրտ ունեցող հայ հավատավորին:

Թող մեր առաջին Հայրապետի և Հավատի Հոր բարեխոսությունը ձեզ ուղեկցի այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն»:

Սուրբ և անմահ Պատարագի արարողությունն է հետո՝ ներկա բոլոր հավատացյալներին բաժանվեց մատաղ, կամ, ավելի շուտ, տրվեց սիրո ճաշ՝ ազապե:

Հիրավի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի դերն ու տեղը խիստ վճռական ու ճակատագրական եղավ հայոց բազմաչարչար, սակայն մեր այգաբացների բերկրանքով ապրող ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու կյանքում: Լուսավորչի կանթեղի մասին հրաշալի, ժողովրդական սքանչելի ավանդությունը հորինված ավանդությունը գերագույն վկայությունն է այս ամենի: Արագածի քառագագաթ կատարից, առանց պարանի կախված Լուսավորչի կանթեղը, որ յուղի փոխարեն Լուսավորչի արցունքներով է վառվում, Հայոց երկնական արի մեքենա Աստծու ամենախնամ ներմայության լավագույն վկայությունն է: Իսկ այս իրողության արձագանքն է ամենայն հայոց Բանաստեղծի՝ Լուսավորչի կանթեղին մվիրված բանաստեղծությունը, ուր այնքա՜ն գեղեցկորեն ասվում է.

*Ով ամենեղ է, լիքը սիրով
Ու հավատով անսասան,
Ով մայրն է վառ հույսերով
Դեպի հայոց ապագան.-
Նա կտեսնի էն մշտալիտ
Ջահը կախված երկնքից,
Ասես Աստծո աչքը պայծառ
Հսկում է ցած երկնքից:*

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՔԻՑ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ

(8-10 Յունիս 1998 թ.)

Յունիս 8-10 Պաղտատի մէջ հրաւիրուած էր եռօրեայ ֆրիստոնէական խորհրդածողով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն այդ խորհրդածողովին հանձնարարուած էր մասնակցելու Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Զաւէն Արքեպիսկոպոս Չինչիկեանը: Բնաբան էր ընտրուած և պիտի խօսուէր «Եկեղեցին խաղաղութեան և մարդկութեան ծառայութեան մէջ» (The Church in the Service of Peace and humanity) նիւթին շուրջ:

Այն ֆրիստոնէական խորհրդածողովին մասնակցելու համար տասնեկէս տարրեր երկընեւրէ ժամանած էին տասնեակ մասնակիցներ: Հռոմի Եկեղեցիէն եկած էր Գերաշնորհ Էջէկէվարա կարտինալը տեղւոյն Պապական Նուիրակին (Nonce Apostolic) և իր եետուարներուն հետ: Խպտի Ուղղափառ Եկեղեցիէն չորս հոգիներ պատուիրակութիւն Ռաֆայէ Պիտտուիտ Պատրիարքը: Մար Տիմիա, Ասորոց Նորին Ամենապատուութիւն Պատրիարքի ներկայացուցիչ եպիսկոպոսներ, Երուսաղէմի, Աղեփանդրիոյ և Ամտիոքի Յոյն Ուղղափառ Պատրիարքութիւններու ներկայացուցիչ Միտրոպոլիտներ, Մոսկուայի Ռուս Պապական Եկեղեցւոյ, Ուրբանիոյ Եկեղեցւոյ Պապական ներկայացուցիչներ, Ասորի Կաթողիկէ, Նեստորական և Աւետարանական, բողոքական զանազան յարուանութիւններու, միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Իսլամ Շէյխեր, Պաղտատի իսլամական դատարանի նախագահ Շէյխը, թրքակիցներ, դիտորդներ, հիւրեր:

Խորհրդածողովը հրաւիրուած էր ի նիստ գումարանելու Պաղտատի մէջ, Իրաքի Եկեղեցիներու կողմէ, գործակցութեամբ Իրաքի վագֆերու և կրօնական գործոց նախարարութեան: Բոլոր նիստերուն ալ ներկա եղաւ վագֆի և կրօնական գործոց նախարար Տաֆ, Ապա էլ Մոնէլմ Ահմէտ Սալէի: Խորհրդածողովը տեղի ունեցաւ Բաբելոն հիւրանոցի մեծ հանդիսասրահին մէջ:

8 Յունիսի առաւօտեան ժամը 9-ին նիստը բացուեցաւ խաղաղութեան նուիրուած շարականով մը, որը երգուեցաւ Քիլտանիներու դպրեկանքի ուսանողներու կողմէ: Ապա կարդացուեցաւ Յովհաննու Աւետարանի 15-րդ գլխու 9-18 համարները՝ Սեբրոս Սիրեան օրթոտոքս Արքեպիսկոպոսի կողմէ:

Խօսք առաւ և ժողովը բացուած յայտարարեց Նորին Ամենապատուութիւն Մար Ռաֆայէ Պատրիարք և շեշտեց Աւետարանական նշմարտութիւնը «երանի խաղաղարարաց»: Խաղաղութիւնը կը քիչի հաւատքէն, ըսաւ ան և մեր բոլորիս հաւատոյ հօր՝ Արքանամ Նահապետի բնակավայրը, այստեղ, Աստուածաշնչական «ՈՒՐ» երկրին մէջ էր: Միաստուածեան երեք կրօններն ալ Արքանամ Նահապետին հանդէպ պատկառամբ կը տածեն: Ի հարկէ Ս. Եկեղեցւոյ առաքելութիւնը նաև խաղաղութիւնը տարածելու և ամրապնդելու առաքելութիւնն է: Եւ ո՞ւր այդ առաքելութեան կարևորութիւնը ամենէն աւելի կզգացուի, եթէ ոչ զանազան և բազմազան ֆաղափակրթութիւններու ծնունդ տուող՝ Մերձատր Արևելքի մէջ, այսօր:

Երեք օրերու ընթացքին, առտու և յիտ միջօրեին, նիստեր գումարտնեցան, որոնց ընթացքին ատենախօսուներ իրենց ճառերը կարդացին արաբերէն, անգլիերէն, ֆրանսերէն, իտալերէն ու գերմաներէն լեզուներով: Գործածուած լեզուն ընդհանրապէս արաբերէնն էր, բայց օտար լեզուներն ալ կը թարգմանուէին տեղւոյն վրայ անմիջապէս:

Եօթը նիստերու ընթացքին յիսուսեկնգ ճառախօսուներ ատենաբաններէն ոմանք, նախօրօք յանձնարարուած ըլլալով, կարդացին ուսումնասիրութիւններ: Բոլոր խօսողներն ալ շեշտը դրին Իրաքի շրջափակումի ենթարկուած ըլլալուն և ատոր հետևանքով, դիզօրայի սակաւութեան, ժողովուրդը անտառաւորութեան ու սովի մատնելու հարցի մասին: Այս ալս ճառախօսները ընդգծեցին Եկեղեցւոյ կատարելի մարդասիրական գործը:

Ժողովի մասնակիցները տարուեցան պատերազմի ընթացքին գնդակոծուած վայրեր, հիւանդանոցներ՝ տեսնելու և վկայելու համար կատարուած աւերածութիւնը և մեռնող երեխաները:

Երեքշաբթի 9 Յունիսի գիշերասկզբին, Քիլտանիներու Սուրբ Յովսէփ եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ աղօթածողով, որուն քնարան ընտրուած էր «Յուսով ցնծացէ՛ք, տանջանաց համբերեցէ՛ք, և հաստատուն կացէ՛ք ի յաղթօք» (Հովմ. ԺԲ 12): Շարականներ երգուեցան, մարգարէական և առաքելական գիրքերէ և թուղբերէ նաև Աւետարանէ ընթերցումներ եղան: Գերաշնորհ Տ. Րոժէ Էջեկարա Քարտինալը կարճ քարոզ խօսեցաւ:

Իրաքի մէջ գումարուած սոյն եօթեայ Քրիստոնէական խորհրդածողովներուն կեդրոնական յանձնախումբի անդամ եղած է հայոց բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ Արքեպսկ. Ասատուբեան:

9 Յունիսի առաւօտեան ժողովի երկրորդ օրուան նիստին խաղաղութեան և Եկեղեցւոյ ծառայական գործունէութեան մասին ժողովին մասնակցող Գերաշնորհ Տ. Զաւէն Արքեպսկ. Զինչինեան արաբերէն լեզուով գրուած երեք էջանոց խօսք մը կարդաց:

Քրիստոնէութեան և իսլամութեան համագործակցութեան ճիւղին մէջ և տեղծուած խաղաղութեան ցանկութեան մթնոլորտին մէջ խօսք առին երեք իսլամ շէյխեր:

Ամենէն վերջ խօսք առնելու հրաւիրուեցաւ Իրաքի փոխ վարչապետ Տիար Թարէֆ Ագիզ, որը քաղաքացի քրիստոնեայ է՝ պատմական և քաղաքական անդրադարձ մը ունեցաւ առեակատման դէպքերու մասին և առաջարկեց, որ քարի կամեցողութեան տէր մարդիկ իրենց զօրակցութիւնը յայտնեն, բողոքներ քարժրացնեն միջազգային ատենաներու առջև, որպէսզի Իրաքի վրայէն ծանր և անարդար շրջափակումը վերցուի: Շրջափակումը, ըսաւ ան, ոճիր մըն է, մեծ ոճիր, քանի որ ամբողջ երկրի մը բանակչութիւնը անօթութեամբ, հիւանդութեամբ բնաջնջելու կը միտի: Ան շեշտեց որ Եկեղեցիները աւելի գործօն մասնակցութիւն քերեն խաղաղութեան հաստատման:

Որոշուեցաւ հեռագիր ղրկել Իրաքի յարգելի նախագահ Տիար Սատամ Հիւսէյնին: Ժողովի եզրափակիչ յայտարարութիւնը կարդաց Նորին Ամենապատուութիւն Ռաֆայէ Ա. Պիտիաուիտ Պատրիարք:

Աւետարանական Եկեղեցւոյ երգչախումբի շարականով և Տէրունական աղօթքով խորհրդածողովին երեքօրեայ նիստերը փակուեցան:

Սոյն «Խաղաղութեան և Եկեղեցից մարդկութեան ծառայութեան մէջ» թեմայով խորհրդածողովի կազմակերպիչ Եկեղեցիներն ու Իրաքի կրօնական գործոց նախարարութիւնը, ժողովի նիստերէն ետք, յալոր հիւրերուն համար կազմակերպած էին այցելութիւններ դէպի Մուսուլ, Արրահամ Նահապետի տունը տնայնացիները, Հաթրա և այլ վանքեր ու պատմական վայրեր: Մական Գերաշնորհ Տ. Զաւէն Արքեպիսկոպոսը սիրով ընդունեց Իրաքի հայոց քարեջուր Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ Արքեպիսկոպոսի հրաւերը, մնալու իր մօտ իբրեւ իր հիւրը, հանդիպելու գաղութի ազգայիններուն, այցելելով ակումբներն ու կիրակնօրեայ վարժարաններ, ապա Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնին առիթով, Պաղտատի Հայոց յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի կառուցուած Մայր Տաճարին մէջ պատարագելու և քարոզելու:

14 Յունիսի առաւօտեան Տ. Զաւէն Արքեպիսկոպոս իր առաքելութիւնը աւարտած ըլլալով, ցամաքի ճամբով Պաղտատէն Ամման վերադարձաւ:

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԱԹԵՆՔՈՒՄ

1998 թվականի ապրիլի 2-ին Հունաստանի մայրաքաղաք Աթենքի «Մեղարոն» համերգասրահի ճեմասրահներում հանդիսավորությամբ բացվեց «Հայաստանի գանձերը» ցուցահանդեսը: Բացման արարողությանը ներկա էին հույն և այլ ազգերի հարյուրավոր հանդիսատեսներ: Ներկաները մեծ գոհունակությամբ ընդունեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաքինի ողջույնի խոսքը ցուցահանդեսի բացման առիթով, որը հունարենով ընթերցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Այնուհետև սրբազանը կարդաց «Մեղարոնի» գլխավոր տնօրեն Նրիստոս Լամբրակիսին «Ա. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին կոնդակը... Ցուցահանդեսը բացված է... Հիացած հանդիսատեսները շրջում են սրահներում՝ դիտելով հայ արվեստի շուրջ երկու հարյուր քսանի հասնող ինքնատիպ ցուցամուշեքներ:

«Մեղարոն» Եվրոպայի լավագույն մշակութային համալիրներից մեկն է: Այն ունի երկու համերգային դահլիճ՝ 1000 և 500 տեղերով, երկու մեծ ճեմասրահ-դահլիճներ, որոնք նախատեսված են ցուցադրամեքերի, պարային, տոնական միջոցառումների, հանդիսավոր ընդունելությունների համար: «Հայաստանի գանձերը» ցուցահանդեսին «Մեղարոնի» ճեմասրահներում նախորդել էր «Բյուզանդական սրբապատկեր» ցուցահանդեսը:

Հունաստանի և Հայաստանի միջև օրավոր զարգացող միջպետական, հոգևոր, տնտեսական և այլ կապերի մեջ անմասն չի մնում և մշակույթը:

Ներկա ցուցահանդեսը շուրջ մեկ տարի տևած նախապատրաստական աշխատանքի արդյունք է: Նախ Հայաստան ժամանեցին «Մեղարոն» կենտրոնի ցուցահանդեսների կազմակերպման բաժնի վարիչը և ճկարիչ-ձևավորողը: Ուսումնասիրվեցին Հայաստանի պատմության պետական թանգարանի, Մատենադարանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների ցուցամուշեքները, կատարվեց նախնական ընտրություն: «Մեղարոնի» աշխատակիցները, վերադառնալով Աթենք, ձեռնամուխ եղան այլ հետաքրքիր ծրագրերի: Որոշվեց Հայաստանից բերվող ցուցամուշեքների հետ ցուցահանդեսում ներկայացնել նաև Հունաստանի այլևայլ թանգարաններում պահվող հայկական արվեստի գործերը: Պայմանավորվածություն կայացավ Աթենքի «Բենակի» թանգարանի և Թեսալոնիկ քաղաքի հայ մեծ թարերար, կոլեկցիոներ և ազգային գործիչ Կարապետ Գալֆայանի հետ:

«Հայաստանի գանձերը» ցուցահանդեսում հույն հանդիսատեսը հաղորդվեց հայ հոգևոր այնպիսի գանձերի հետ, ինչպիսիք են՝ Նոյան տապանի մասունքով մասնատուփը, Սբ. Թադեոս, Բարդուղիմեոս առաքյալների, Հովհաննես Մկրտչի, Հակոբ Մծբնեցի Հայրապետի մասունքներով մասնատուփերը, Սբ. Գրիգոր Լուսավորչի խաչվառը, «Խոտակերաց Սբ. Նշանը», Սևանի վանքի դուռը, ընտրագույն ձեռագրեր Մատենադարանից և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից: Ցուցահանդեսում մեծ տեղ են գրավում խեցեգործությունը (հիմնականում Քյոթահիայի ջնարակված աշխատանքները), արծաթագործությունը և գործվածքեղենը:

Ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքներում հիշատակելի է Մայր

Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, Հումաստանում Հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի, Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն տիկ. Անելկա Գրիգորյանի, փոխտնօրեն Իվետա Մկրտչյանի, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանի ներդրումը:

Յուզահանդեսի առիթով «Մեղարոն» կենտրոնը լույս է ընծայել 150 էջանոց եռալեզու կատալոգ, որը բացվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաքին Կաթողիկոսի Հայրապետական օրհնանքի խոսքերով: Ապա բովանդակալից հոդվածներով՝ «Արվեստները Հայաստանում և Բյուզանդիոնում» (Հելեն Էվանս), «Հայ-հունական հարաբերությունները» (Հրաչ Բարթիկյան), «Փոխտոփայությունը միջնադարյան Հայաստանում» (Սեն Արևշատյան), «Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Հայաստանի պատմության պետական թանգարան» (Իվետա Մկրտչյան), «Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդիոնի դրամները» (Հենրի Սարգսյան) և այլն հանդես են եկել հայ և օտարազգի գիտնականներ: Մի քանի տասնյակ լուսանկարներով ձևավորված այս կատալոգի հայերեն ամփոփումը կատարված է հունահայ գրող Հակոբ Զեղալյանի կողմից՝ մասնակցությամբ պատմաբան Վիկտորյա Խաչատրյանի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿՅԱՆ

«Հայաստանի գանձերը» ցուցահանդեսի
Մայր Աթոռի քածնի պատասխանատու



Հունիսի 2-ին, երեքշաբթի. - Գ օր Հոգեգալստեան: Պահք:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը ընդունեց Եվրամիության պատվիրակությանը՝ արտաքին հարաբերությունների եվրոպական հանձնակատար Հանս վան դեն Բրուկի գլխավորությամբ:

Տեղեկանալով Ե.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի առողջական վիճակի մասին, հյուրերը շուտափույթ ապաքինում մաղթեցին վեհափառ Հայրապետին:

Այս սրբազան հայրը հյուրերին ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու ներկա կացությունը, պատմեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հոգևոր գործունեության մասին: Սրբազան հայրը նշեց նաև Հայ Եկեղեցու սերտ հարաբերությունները քրիստոնյա քույր Եկեղեցիների հետ:

Հունիսի 7-ին, կիրակի. - Ա. կիրակի զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի միաբան Տ. Թադեոս վարդապետ Զիրեկյանը՝ «Քանզի յոյժ գորաւօր են աղօթք արդարոյ յօգնականութիւն» (Հակոբոս Ե 16) բնաբանով:

Հունիսի 13-ին, շաբաթ. - Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելնի վիպէն:

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց

Մայր Աթոռի միաբան Տ. Մակար արեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ հայր սուրբը՝ «Ընդ որոյ սին բոցոյ առաջնորդէր անծանօթ ճանապարհին. զարեգակն անվնաս ետուր առատ ասպնջականութեանն» (Իմաստ. Սողոմոնի ԺԸ 3) բնաբանով:

Հունիսի 14-ին, կիրակի. - Բ. կիրակի զկնի Հոգեգալստեան: Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը: «Հայր Մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ սրբազանը՝ «Էջ Միածինն ի Հօրէ եւ յոյս փառաց ընդ նմա» (շարական) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Մաղթանք Հայրապետական և Ս. Էջմիածնի:

Հունիսի 21-ին, կիրակի. - Գ. կիրակի զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բագրատ արեղա Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզ խոսեց՝ «Ո՛չ գիտե՛ք՝ թէ որում պատրաստե՛ք զանձինս ձեր ծառայս ի հնազանդութիւն, ծառայ էք որում հնազանդիքն. եթէ մեղաց՝ մահու, եւ եթէ ի հնազանդութիւն՝ արդարութեան» (Հոով. Զ 16) բնաբանով:

Հունիսի 25-ին, հինգշաբթի. - Պահք: Սրբոցն Թէոդիտոնի Գաղատացւոյն եւ Թալիլեայ բժշկին եւ եօթն կուսանացն, որք յԱնկիտիա կատարեցան:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց հայ-ուկրաինական բիզնես-ֆորումի պատվիրակությանը՝ Ուկրաինայի Գործարարների միության նախագահ Ալեքսանդր Ընիպկոյի գլխավորությամբ:

Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին ներկայացնելով հայ-ուկրաինական առաջին հավաքի արդյունքները, Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արամ Վարդանյանը տեղեկացրեց նաև, որ բիզնես-ֆորումի մասնակիցները 10 հազար դոլար են տրամադրել Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Տաճարի կառուցմանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի ողջունելով հյուրերին, սրբազան հայրը շնորհակալություն հայտնեց նվիրատվության համար: Ներսես սրբազանը նշեց, որ երկու ժողովուրդների միջև բարեկամությունն ու հոգևոր կապերն ունեն պատմական հիմքեր, ինչի վկայություն է կրկի Մայր Տաճարի հիմքում արձանագրված հայ վարպետների անունները:

Հայ-ուկրաինական հոգևոր և մշակութային կապերի մասին փաստեց նաև պրոֆ. Ընիպկոն՝ հայտնելով, որ ուկրաինական կառավարությունը ևս աջակցում է այդ կապերի ամրապնդմանը: Ուկրաինայում Հայ Առաքելական Եկեղեցին ունի իր թեմը, ներկայումս հայկական մոր եկեղեցիներ են կառուցվում Օդեսայում և Դոնեցկում:

Հանդիպման ավարտին հյուրերը շրջեցին Մայր Աթոռի թանգարաններում, ծանոթացան Հայ Եկեղեցու 1700-ամյա պատմությանը:

Հանդիպմանը ներկա էր Հայաստանում Ոսկրահնայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոն:

Հունիսի 28-ին, կիրակի. - Ռ. կիրակի զվանի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Սուրբ Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ արեղա խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզ խոսեց՝ «Ոչ ես դադարեցե՛ք բարկություն իմ ի հակառակորդաց իմոց, եւ դատաստանօք դատեցայց զթշնամիս իմ» (Եսայի Ա 24 քնաբանով):

Հունիսի 29-ին, երկուշաբթի. - Սրբոցն վկայիցն Անտոնինոսի, Թեոփիլոսի, Անիքստոսի եւ Փոտինոսի:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Միացյալ մեթոդիստների օգնության կոմիտեի /UMCOR/ պատվիրակությանը՝ «Աջակցություն Հայաստանին անցումային շրջանում» առաքելության ղեկավար Թիերրի Ս. Վոլլենի գլխավորությամբ:

Սրբազան հայրը հյուրերին ծանոթացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի պատմությանը, պատմեց խորհրդային տարիներին Հայ Եկեղեցու կրած դժվարությունների մասին, ներկայացրեց Եկեղեցու առաքելությունն անկախ Հայաստանում:

Պատասխանելով հյուրերի հարցերին, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն անդրադարձավ Ղարաբաղյան հիմնախնդրին, խոսեց հոգևոր կրթության հարցերի շուրջ, պարզաբանեց հայ կնոջ տեղը Հայ Եկեղեցում:

Հունիսի 30-ին, երեքշաբթի. - Սրբոցն Դանիելի մարգարէին եւ երից մանկանցն՝ Սեդրակայ, Միսաքայ եւ Աբեղնագովի:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Հայաստանում գտնվող Ֆրանսիայի Սենատի պատվիրակությունը:

Ողջունելով հյուրերին, Մայր Աթոռի ղրկանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը զոհունակություն հայտնեց՝ վերջերս Ֆրանսիայի Ազգային Ժողովի կողմից Հայոց եղեռնի ճանաչման առթիվ:

«Դա ֆրանկո-հայկական կապի նոր արտահայտություն է», - ասաց սրբազան հայրը:

Գերաշնորհ հայրն իր նրախտիքի խոսքն ողջնց նաև ֆրանսիական ժողովրդին ու պետությանը՝ երկրաշարժից հետո Հայաստանին ցուցաբերած աջակցության համար:

Հանդիպման ընթացքում Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը պատմեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մասին: Հյուրերի խնդրանքով սրբազան հայրն անդրադարձավ Մայր Աթոռի և Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռների հարաբերություններին, Հայ և կաթոլիկ Եկեղեցիների միջև եղած տարբերություններին:

ԽՈՐԵՆ ԱՐԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷԶՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

(1974-1983)

1981

1023. Աթայան Ռոբերտ: - Մա-կար Եկմալյանի եւ նրա մի քանի նորահայտ բնագրերի մասին: [Երեք ծայնագրություններով]: 1981, փետրվար, էջ 46-51:

1024. Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Հունաց Պապ եւ Պատրիարք Նորին Արքություն Տ. Նիկողայոս վեցերորդը Վրաստա-նում: - Գեւորգ սրբազանի խոսքը: [Մեկ նկար]: 1981, օգոստ., էջ 18-2

1025. Ամանորի երեկույթ Մայր Աթոռում: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 16-19:

1026. Ամավերջի հանդիսություն Դոգետր ճեմարանում: 1981, մայիս-հունիս, էջ 77-82:

1027. Ամենայն Հայոց Վեհա-փառ Հայրապետի եւ պետական բարձրաստիճան անձնավորություն-ների միջեւ փոխանակված հեռա-գրեր Նոր տարվա առթիվ: 1981, հունվար, էջ 13-16:

1028. Անթույան Սամվել: - Բարի սերմնացանը: (խաչատուր Կանա-յանի ծննդյան 100-ամյակի առթիվ): 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 49-52:

1029. Ավետիքյան Ջատիկ արե-ղա: - Ամանորը Մայր Աթոռում: 1981, հունվար, էջ 19-22:

1030. Ավետիքյան Ջատիկ արե-ղա: - Ամսօրիքի եւ Համայն Արեւելքի Հոլյն Օրթոդոքս Եկեղեցու Ամենա-

պատիվ Տ. Իզմատիոս Արքագան Պատրիարքը Մայր Աթոռում: 1981, հոկտ., էջ 8-13:

Բովանդ.: - Վեհափառ Հայրապե-տի ողջույնի եւ բարիգալստյան խոսքը: - Տ. Իզմատիոս Պատրիար-քի պատասխան խոսքը Մայր տաճարում: - Վեհափառ Հայրապե-տի խոսքը վեհարանում, ճաշկե-րույթի ժամանակ: - Վեհափառ Հայ-րապետի խոսքը «ԱՄԻ» հյուրանո-ցում: - Իզմատիոս Պատրիարքի շնորհակալական խոսքը «ԱՄԻ» հյուրանոցում:

Երկու նկար: Ներդիր:

1031. Ավետիքյան Ջատիկ արե-ղա: - Առաջին եղբայրասպանությու-նը: [Զարոգ խոսված Մայր Տաճա-րում]: 1981, հունվար, էջ 26-27:

1032. Ավետիքյան Ջատիկ արեղա: - Արվեստի նոր գործեր: [Իջման տեսիլք, Հայոց այբուբեն եւ Վարդանանք գործերը ներդիր-ները]: 1981, հուլիս, էջ 18-24:

1033. Ավետիքյան Ջատիկ արե-ղա: - Երեւանի համալսարանի 60 տարին: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 32-33:

Մեկ նկար: Ներդիր:

1034. Ավետիքյան Ջատիկ արեղա: - Հանդիսություն Երեւանի ս. Սարգիս եկեղեցում: 1981, փետրվար, էջ 11-15:

Բովանդ.: Տ. Արսեն եպս. Բերբերյանի խոսքը: - Վեհափառ Հայրապետի քարոզը Երեւանի ս. Սարգիս եկեղեցում: - Ընդունելություն «Ամի» հյուրամոցում: - Տ. Արսեն սրբազանի խոսքը ճաշկերույթի ժամանակ: - Վեհափառ Հայրապետի խոսքը ճաշկերույթի ժամանակ:

Մեկ նկար: Ներդիր:

1035. Ավետիքյան Ջատիկ արեղա: Արքեպարդանանց տոմարաւորությունը եւ Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում: 1981, փետրվար, էջ 3-10:

Բովանդ.: - Հոգեւոր ճեմարանի տեսուչ տ. Եզնիկ քահանա Պետրոսյանի բացման խոսքը: - Բաբգեն Ներսիսյանի խոսքը: - Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը:

1036. Ավետիքյան Ջատիկ արեղա: - Ուխտավորներ Մայր Աթոռում: 1981, սեպտ., էջ 20-25:

Երկու նկար:

1037. Արաքսյան Անանիա վարդապետ: - Աղոթքի կարեւորությունը: 1981, փետրվար, էջ 20-21:

1038. Արաքսյան Անանիա վարդապետ: - Սովետական Միության եկեղեցիների եւ կրոնական համայնքների ղեկավարների ժողով Ջագորսկի ս. Երրորդություն-Սերգիեւսկի վանքում՝ նվիրված ժողովուրդների միջեւ բարեկամության, զինաթափման եւ խաղաղության: 1981, հուլիս, էջ 8-12:

1039. Բաղդասարյան Վարդան սարկավագ: - Ապրիլյան եղեռնի տարելիցի ոգեկոչումը Մայր Աթոռում: 1981, ապրիլ, էջ 16-17:

1040. Բաղդասարյան Վարդան սրկ.: - Դավիթ Անհաղթ, երկեր, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Ա. Ա.

Արեւշատյանի «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան 1980, 328 էջ: Գրախոսություն: 1981, հունվար, էջ 51-54:

1041. Բամպուլեճյան Գ.: - Հակոբ պատրիարք Նալյան (1706-1764): [Ուսումնասիրություն]: 1981, օգոստ., էջ 34-37:

1042. Բեյրութի կրոնասեր տիկնանց համախմբումի քսանամյակը: [Որին մասնակցեց Մայր Աթոռի միաբան Մասիս վարդապետ Գալստյանը]: 1981, մարտ, էջ 14-16:

Մեկ խմբանկար:

1043. Գալուստյան Ընդրիք արքեպիսկոպոս: - Դավիթ թագավոր: - Հակոբոս Տեառնեղբայր: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 7-11:

1044. Գասպարյան Արամայիս: - Մեղուն, մեղրն ու մեղրամոմը մեր ժողովրդական հավատալիքներում: [Երկու նկար]: 1981, փետրվար, էջ 52-56:

1045. Գերագույն Հոգեւոր խորհուրդ: - Հաղորդագրություն: [Վազգեն Վեհափառը Հովվական այցելությամբ եղավ Վիեննայում, Մյունխենում, Սայնի Ֆրանկֆուրտում եւ Փարիզում]: 1981, մայիս-հունիս, էջ 21-24:

1046. Գրլընճյան Հակոբ վարդապետ: - Մարդու ստեղծման հետ առնչվող հարցեր: 1981, օգոստ., էջ 21-24:

1047. Գրլընճյան Հակոբ վարդապետ: - Մի պանդուխտ հայ արքեպիսկոպոսի դամբարան Բավարիայում: [Գրիգորիս արքեպիսկոպոսի]: 1981, հուլիս, էջ 46:

1048. Գուլանճյան Երվանդ: - Հայ եկեղեցին: [Բանաստեղծություն]: 1981, հունվար, էջ 48-50:

1049. Գուշակյան Թորգոմ արքեպս.: - Տոմք խաչի: 1981, սեպտ., էջ 29-31:

1050. Գուշակյան Թորգոմ արքեպս.: - Տոմք ս. Աստվածածնի: 1981, օգոստ., էջ 8-10:

1051. Դարչինյան Սարգիս: - Հանդիսավոր հոգեհանգիստ: [Գարրիել արքեպիսկոպոս Այվազյանի]: 1981, օգոստ., էջ 56-57: Երկու նկար:

1052. Եկեղեցական-մշակութային լուրեր ու միմահայ թեմից: [Երկու նկար]: 1981, ապրիլ, էջ 22-24:

1053. Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ներկայացուցիչները Մայր Աթոռում: 1981, մարտ, էջ 12-13:

1054. Եղիվարդ (Եղիշե արքեպիսկոպոս Տերտեբան): - Լուսամատեան: (Ավետումը): 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 3-6:

1055. Եղիվարդ (Եղիշե արքեպիսկոպոս Տերտեբան): - Լուսամատեան: (Մարդու ստեղծումը): 1981, հոկտ., էջ 21-24:

1056. Երեւանի Նորազավիթ թաղամասի ս. Գեւորգ եկեղեցու սեղանի օծումը: [Զեռամբ Արսեն եպս. Բերբերյանի]: 1981, սեպտ., էջ 14-16:

Չորս նկար:

1057. Երուսաղեմի Հայոց Ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը, Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը եւ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիվանապետ տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը Մայր Աթոռում: 1981, օգոստ., էջ 3-4:

1058. Եկումենիկ կյանք: - Ուսանողների միջազգային քրիստոնեական ժողովի գումարումը Սան-Ֆրանցիսկոյում: 1981, օգոստ., էջ 58:

1059. Թամանյան Յու. Ա.: - Ալայազի ս. Կարապետ եկեղեցու վերանորոգումը: 1981, ապրիլ, էջ 49-54: Երեք նկար:

1060. Թեմական կյանք: - Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմ: 1981, օգոստ., էջ 51-52:

1061. Թորամանյան Ա. Խ.: - Սուրավիայի հայերի շինարարական գործունեության պատմությունից (Բըլցի եւ Օրիենյի եկեղեցիները): [Ուսումնասիրություն]: [Հիմն նկարով]: 1981, մարտ, էջ 44-50:

1062. Ժամանում Փարիզ: 1981, մայիս-հունիս, էջ 56-71:

Բովանդ.: Վեհափառ Հայրապետը ընդունում է Լոնդոնի պատգամավորներին: - Բ.Բ.Ը. Միության հիմնադրման 75-ամյա հանդիսություն: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 75-ամյակի հանդիսությանը: - Սուրբ պատարագ եւ հայրապետական քարոզ Փարիզի ս. Հովհաննես Սկրտիչ Մայր Եկեղեցում: - Վեհափառ Հայրապետի քարոզը: - Փարիզի Հայագիտական ինստիտուտի բացումը: - Սուրբ պատարագ Ալֆորվիլի Հայոց Եկեղեցում: - Այցելություն Սովետական դեսպանատուն: - Հոգեհանգիստ Փարիզի «Պանյո Փարիզիեն» գերեզմանատանը: - Հրաժեշտի ս. պատարագ ս. Հովհաննես Սկրտիչ Մայր Եկեղեցում: - Վեհափառ Հայրապետի հրաժեշտի քարոզը Փարիզի Մայր Եկեղեցում եւ հոգեհանգիստ Վիլյամ Սարոյանի հիշատակին: -

Այցելություններ: - Մեկնում Սոսկվա:
- Հայոց Հայրապետը Սոսկվայի
Հայոց ս. Հայրության եկեղեցում: -
Վերադարձ Մայր Աթոռ:

Երեք մկար:

1063. Լեփեճյան Կայծակ: - Եկե-
ղեցիներ, վանքեր հայկական: [Բա-
նաստեղծություն]: 1981, մարտ, էջ
42-43:

1064. Լուրեր Իրաքի Հայոց
թեմից: 1981, մայիս-հունիս, էջ 89-
90:

1065. Լուրեր մերքին թեմերից:
[Արտաշատի ս. Հակոբ եկեղեցում
Հուսիկ արքեպս. Սամբուրյանը
քահանա է ձեռնադրում Աշոտ դպիր
Պետրոսյանին՝ վերանվանելով տ.
Հակոբ քին. Պետրոսյան]: [Աշտա-
րակի ս. Մարինե եկեղեցու կառուց-
ման 700-ամյակը]: 1981, նոյեմբ.-
դեկտ., էջ 25:

Նկ. Մի պահ քահանայական
ձեռնադրությունից:

1066. Խաղաղության Քրիստո-
նեական Կոմիտեի Աշխատան-
քային կոմիտեի նստաշրջանը
Կիևում: 1981, ապրիլ, էջ 45-46:

1067. Խմբագրություն էքմիա-
ծին ամսագրի: - Երվանդ Գուլանճ-
յանի ծննդյան 100-ամյակը: [Դիմա-
նկարով]: 1981, հունվար, էջ 44-47:

1068. Կիրակոսեան Ալիսիա: -
Երգ էքմիածնի: Նուիրուած՝ Նորին
Սուրբ Օծութիւն Վազգէն Ա-ին,
Կաթողիկոս Ամենայն Հայոց: 1981,
մայիս-հունիս, էջ 72-73:

1069. Կոստանդյան Էմմա: -
Խրիմյան կաթողիկոսի նամակա-
նիից: 1981, հուլիս, էջ 25-32:

1070. Կ. Պոլսի 381 թվականի
տիեզերական ժողովի զուգարման
1600-ամյակի տոնակատարությանը
մվիրված հանդիսություն Ստամ-

բուլի Հայոց Ա. Երրորդության Մայր
Եկեղեցում: 1981, ապրիլ, էջ 11-14:

1071. Հայաստանի գրողների
ուրբերորդ համագումարը: 1981,
մայիս-հունիս, էջ 91-92:

1072. Հայաստանում սովետա-
կան կարգերի հաստատման 61-րդ
տարեդարձին մվիրված հանդիսու-
թյուն վեհարանում: 1981, նոյեմբ.-
դեկտ., էջ 12-15:

1073. Հայ Եկեղեցու Սահմա-
նադրության մոր նախագծի կազ-
մության համձնաժողովի անդամ-
ները Մայր Աթոռում: 1981, հոկտ.,
էջ 14:

1074. Հայ ժողովրդի ազնիվ
բարեկամը: [Բուլղար օրթոդոքս
եկեղեցու եպիսկոպոս տ. Նիկոլա
Մակրիորուլացիի մահվան ամթիվ]:
1981, օգոստ., էջ 42-43:

1075. Հայոց Հայրապետի այցե-
լությունը Հայկական ՍՍՀ
Միմիստրների խորհրդի նախագահ
տիար Ֆադեյ Սարգսյանին: 1981,
հունվար, էջ 17:

1076. Հանգիստ տ. Խաչատուր
Խաչակիր քահանա Մովսիսյանի:
[Մահախոսական-կենսագրական]:
[Դիմանկարով]: 1981, հուլիս, էջ
56:

1077. Հանգիստ Հայրիկ արքե-
պիսկոպոս Ասլանյանի (1909-1981):
[Մահախոսական-կենսագրական]:
[Դիմանկարով]: 1981, փետրվար,
էջ 44-45:

1078. Հանգիստ տ. Խաչիկ
ավագ քահանա Կիրակոսյանի:
[Մահախոսական կենսագրական
դիմանկարով]: 1981, նոյեմբ.-
դեկտ., էջ 55:

1079. Հանգիստ տ. Պսակ
արքեպիսկոպոս Թումանյանի (1912
-1981): [Մահախոսական-կենսագ-

րական]: [Ղիմանկարով]: 1981, հուլիս, էջ 53-54:

1080. Հանգիստ տ. Տոնավազ քահանա Մանտալյանի (1915-1981): [Սահախոսական-կենսագրական]: [Ղիմանկարով]: 1981, հուլիս, էջ 55:

1081. Հատիտյան Արթուր: - Ալեքսանդրիայի եկեղեցու մեծ հայրապետները Բ-Ե դարերում: 1981, օգոստ., էջ 25-33:

1082. Հ[ատիտյան] Ա[րթուր]: - Եկեղեցու սուրբ խորհուրդները: 1981, սեպտ., էջ 32-35:

1083. Հատիտյան Արթուր: - Եվսեբիոս Կեսարացի՝ ականավոր եկեղեցական պատմիչ (263-340): [Ուսումնասիրություն]: 1981, մարտ, էջ 22-26, ապրիլ, էջ 25-31:

1084. Հատիտյան Արթուր: - Հիպպոլիտ Հռոմեացի կամ Բոստրացի (+235): 1981, հուլիս, էջ 33-41:

1085. Հատիտյան Արթուր: Շահբազյան Պարզե: - Եղիվարդ: («Լուսամատեան», Բոյուսել: 1980 թ., էջ 218: Նկարիչ: Ալբերտ Յարալյան): [Լուսամատյանի շապիկը]: 1981, հոկտ., էջ 21-29:

1086. Հատիտյան Արթուր: - Որոգիներս Ալեքսանդրացի եկեղեցու բազմադարյան վարպետ (185-254): [Ուսումնասիրություն]: 1981, փետրվար, էջ 26-34, մարտ, էջ 17-21:

1087. Հատիտյան Արթուր: - Պետրոս, Ալեքսանդր եւ Թեոփիլոս Ալեքսանդրացի հայրապետները եւ նրանց մատենագիտական վաստակի հայերեն թարգմանությունները: [Ուսումնասիրություն]: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 34-41:

1088. Հատիտյան Ա[րթուր]: - Սուրբ Գրիգոր Աքանջելագործ

Հայրապետ Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքի (213-270): [Ուսումնասիրություն]: 1981, հունվար, էջ 28-36:

1089. Հատիտյան Արթուր: - Սուրբ Սահակ Պարթևի եւ Կ. Պոլսի Պրոկղ պատրիարքի միջեւ փոխանակված դավանաբանական թղթերը Եփեսոսի ժողովից հետո: [Ուսումնասիրություն]: [Մի հատված թղթերից]: 1981, հոկտ., էջ 34-40:

1090. Հ[ատիտյան] Ա[րթուր]: - Վանական վարդապետ Տավուշեցի: (Ծննդյան 800-ամյակի առիթով, 1181-1225): [Սեկ նկար]: 1981, հուլիս, էջ 42-45:

1091. Հարությունյան Ղեւոնդ քահանա: - Սուրբ Շողակաթի կամ Սարինե կույսի վանքը: 1981, օգոստ., էջ 38-41: Երեք նկար:

1092. Հոգեգալստյան տունը Մայր Աթոռում: - Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր Տաճարում: - Հոգեհանգիստ մեծանուն գրող Վիլյամ Սարգսյանի մահվան քառասունքի առթիվ: 1981, մայիս-հունիս, էջ 74-76:

1093. Հոգեւոր ճեմարանում ուսումնական տարեշրջանի բացումը: - Տեսչի խոսքը: [Եզնիկ քին. Պետրոսյանի] 1981, սեպտ., էջ 7-8:

1094. Հովվապետական ուղեւորություն Վիեննա, Մյունխեն, Ֆրանկֆուրտ եւ Փարիզ: 1981, մայիս-հունիս, էջ 25-39:

Բովանդ. Մեկնում Սոսկվա: - Ժամանում Սոսկվա: - «Պրո Օրիենտե»-ի հանդիսությունը ի պատիվ Վեհափառ Հայրապետի: - Հայերը Ավստրիայում: - Առաջին հայերը Վիեննայում: - Հայերը Վիեննայում 19-րդ դարում: - Հայ առաջին մատուռը Վիեննայում: - Հայ եկեղեցին եւ էկումենիկ շարժումը

Ավստրիայում: - Այցելություն Ավստրիայի հանրապետության մախագահին: - Ընդունելություն Վիեննայի Մրքեպիսկոպոսարանում: - Այցելություն Վիեննայի Միսիթարյան վանք: - Ընդունելություն արտաքին գործերի մինիստրությունում: - Ապրիլյան եղեմի 66-րդ տարեկիցի առթիվ հիշատակի ոգեկոչում: - Այցելություն Քլոստերնոյբուրգի վանք: - Հանդիսություն մվիրված Հ.Բ.Ը. Միության հիմնադրման 75-րդ տարեդարծին: - Հայրապետական ս. պատարագ եւ քարոզ Վիեննայի Հայոց ս. Հոսիսիմե եկեղեցում: - Համայնքային ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: - Հայոց Հայրապետի քարոզը Վիեննայի ս. Ստեփանոս Մայր Տաճարում: - Ընդունելություն կրթական եւ մշակութային մախարարություններում: - Այցելություն Սովետական դեսպանատուն: - Վեհափառ Հայրապետի հանդիպումը Վիեննահայ ուսանողական եւ երիտասարդական միության անդամների հետ:

Երկու նկար: Ներդիր:

1095. Հրազդանի շրջանի Աթարեկյան գյուղի մորաքաջ սուրբ Սստվածածին եկեղեցու մավակատիքն ու օծման արարողությունը: [Ձեռամբ Արսեն եպս. Բերբերյանի]: 1981, օգոստ., էջ 15-17: Երկու նկար:

1096. Չեռնադրություն Շիրակի թեմում: [Նարեկ եպս. Շաքարյանը քահանա է ձեռնադրում Ռաֆիկ Ադամյանին եւ Գեւորգ Առաքելյանին, վերանվանելով տ. Մյուռն քին. Ադամյան եւ տ. Շիրակ քին. Առաքելյան]: Նույն օրը տեղի է ունենում մաեւ Սամվել Զարդարյանի եւ Վահան Տերտերյանի սար-

կավագական ձեռնադրությունը: 1981, հոկտ., էջ 16:

1097. Ղազարյան Մանյա: - Հայկական միջնադարյան փայտե եկեղեցական դռները: [Ուսումնասիրություն]: [Քւթ փայտյա դռան նկար]: 1981, փետրվար, էջ 34-43, մարտ, էջ 27-35:

1098. Ղավագյան Կարինե: - Շիրակի թեմ: [Հանդիսություն մվիրված Վարդանանց տոմին եւ Վազգեն Վեհափառ անվանակոչությամբ]: Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանի խոսքը: 1981, փետրվար, էջ 18-19:

1099. Մադոյան Ա.: - Առաքել վարդապետ Սյունեցին եւ իր «Աղամգիրքը»: [Ուսումնասիրություն]: 1981, սեպտ., էջ 36-44:

1100. Մադոյան Ա.: - Վկայաբանական տաղեր: 1981, ապրիլ, էջ 25-38:

1101. Մաթեոսյան Կ[արեն] Ա[րտաշեսի]: - Իշխան Գրիգոր Մամիկոնյան-պատվիրատու եւ հովանավոր եկեղեցական շինարարության: [Ուսումնասիրություն]: 1981, ապրիլ, էջ 39-44:

1102. Մաթեոսյան Կ. Ա.: - Հայոց կաթողիկոսարանի մատենադարանն ու գրչատունը Անիում (X-XI դդ.): [Ուսումնասիրություն]: 1981, հոկտ., էջ 41-45:

1103. Մահ Օմիկ Հովհաննեսի Ասլանյանի (1897-1981): [Մահախոսական-կենսագրական]: [Դիմանկարով]: [Վազգեն Վեհափառի ցավակցական հեռագիրը]: 1981, օգոստ., էջ 59-60:

1104. Մայր Աթոռի միաբան, շրջանավարտ՝ Աթենքի համալսարանից: [Տ. Եզնիկ քահանա Պետրոսյան]: 1981, մոյեմբ.-դեկտ., էջ 29:

1105. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, հունվար, էջ 24-25:

1106. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, փետրվար, էջ 16-17:

Բովանդ. փետրվար 18 [Գրականագետ Գրիգոր Արշակի Զակոբյանի մահվան առիթով Վեհափառ Զայրապետը ցավակցական գրություն է ուղարկում տիկին Զակոբյանին, որը բերված է ամսագրում: Նույն օրը Վեհափառն դահլիճում «Չայ ժողովրդի ծագումը» թեմայով դասախոսություն է կարդում պրոֆ. Ռաֆայել Իշխանյանը]:

1107. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, մարտ, էջ 3-4: Բովանդ. մարտի 22 [Մայր Տաճարում հավարտ ս. Պատարագի հոգեհանգստյան կարգ է կատարվում Մայր Աթոռի բարերար տեր եւ տիկին Սարգիս եւ Աստղիկ Զյուրքճյանների հարսի մահվան կապակցությամբ: Նրանց ցավակցական հեռագիր է ուղարկում Վեհափառ Զայրապետը]:

1108. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, ապրիլ, էջ 18-20:

1109. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, մայիս-հունիս, էջ 83-86:

Բովանդ. հունիսի 28 [Մայր Տաճարում ս. պատարագ է մատուցում Տ. Գարեգին քին. Գասպարյանը]:

1110. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, հուլիս, էջ 13-14:

Բովանդ. հուլիսի 4 [Վեհափառ Զայրապետին է այցելում ավստրիացի հայտնի բյուզանդագետ, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր

եւ ազգագրական թանգարանի դիրեկտոր Զանա Մանդորժը]:

1111. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, օգոստ., էջ 5-7:

Բովանդ. օգոստ. 27 [Միլանից եւ Զյուսիսային Իտալիայի այլ քաղաքներից Վեհափառ Զայրապետին են այցելում 39 զբոսաշրջիկներ: Խմբի ղեկավարն էր Միլանի թեմի եկումենիկ հարաքերությունների բաժնի վարիչ դոկտ. Ֆրանկո Փիցցակալլին: Զայաստանում գտնվելու օրերին նրանց ուղեկցում էր Միլանի հայոց հոգեւոր հովիվ Տ. Սարգիս քին. Սարգսյանը]: - Այցելություն Լենինգրադ [Տ. Սիոն արքեպս. Մանուկյանի Լենինգրադի ուսաց Անտոնի միտրոպոլիտի հրավերով Լենինգրադ այցելելու մասին]:

1112. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, սեպտ., էջ 26-28:

Բովանդ. Սեպտեմբեր 18 [Ուստավորաբար Մայր Աթոռ են ժամանում ԱՄՆ-ի արեւելյան թեմի Զայ Եկեղեցական Ղարաց Ղասի Միության անդամները՝ ղեկավարությամբ Ուիսքանսին մահանգի Սաուր Միլուոքի քաղաքի Ս. Զարություն եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ջենոբ քին. Նալբանդյանի]:

1113. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, հոկտ., էջ 15-16: Բովանդ. էջ 15-16:

1114. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 20-22:

Բովանդ. Դեկտեմբերի 28 [Դոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում նշվում է ճեմարանի նախկին սան եւ այժմյան վերա-

կացու Վաչագան Գովհաննիսյանի ծննդյան 50-ամյակը):

1115. Մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն: [Սրսեն եպս. Բերբերյանը մասնավոր վարդապետական աստիճան է շնորհում Ս. Մյուռոն արքեպ. Գըվըզյանից]: - Ս. Մյուռոն վարդապետ Գըվըզյան: [Կենսագրական: Դիմանկարով]: 1981, սեպտ., էջ 17-19:

Մեկ խմբանկար:

1116. Մարսելի Գայոց ս. Սահակ-ս. Մեսրոպ Արքոց Թարգմանչաց Մայր եկեղեցու շինության եւ օծման հիսունամյակը: [Վազգեն Վեհափառի կոնդակը այս առթիվ]: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 30-31:

Նկ. Մարսելի Գայոց Արքոց Թարգմանչաց Մայր եկեղեցի: Ներդիր:

1117. Մարտիկյան Տիրայր արքեպիսկոպոս: - Թարգմանչաց տոնը: 1981, հոկտ., էջ 17-18:

1118. Մարտիրոսյան Ռուբեն ավագ քահանա: - Գայ արվեստի նորահայտ մի էջ: [Մեկ նկար]: 1981, հուլիս, էջ 47-48:

1119. Մեծարանքի երեկույթ՝ ի պատիվ տիար Գակոբ Ս. Տերտերյանի: [Վազգեն Վեհափառի կոնդակը այդ առթիվ]: 1981, հոկտ., էջ 32-33:

1120. Մեկնում Ֆրանկֆուրտ: 1981, մայիս-հունիս, էջ 49-55:

Բովանդ. Գայոց Գայրապետը Դեսընի նահանգի Լուսեբրական եկեղեցուն: - Լուսեբրական եկեղեցու արտաքին հարաբերությունների կենտրոնը մեծարում է Գայոց Գայրապետին: - Ընդունելություն քաղաքապետարանում: - Գայկական ս. պատարագ եւ Գայրապետական քարոզ: - Գամայնքային ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ

Գայրապետի: - Սո Սոաքելաշնորհի գահակալն Մայր Աթոռի Ամենապատիվ Կաթողիկոս Վազգեն Ա Ամենայն Գայոց Գայրապետին: [Քրիստին Ավգերոլույանի բանաստեղծությունը]: - Վեհափառ Գայրապետի օրհնության խոսքը Դեսընի նահանգի համայնքային ճաշկերույթին:

1121. Միջկրոնական միջազգային հանդիպում վասն աշխարհի խաղաղության: 1981, սեպտ., էջ 53-54:

1122. Մկրտչյան Էդուարդ: - Խոսում Գուշարձաններ: [Շահեն Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները» գրքի գրախոսականը]: [Գրքի շապիկը]: 1981, ապրիլ, էջ 47-48:

1123. Զիլինգարյան Գայկ սրկ.: - Ամերիկայի Միացյալ Նահանգների Արեւելյան թեմի հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության անդամները Մայր Աթոռում եւ հայրենիքում: 1981, հուլիս, էջ 15-17:

1124. Պետրոսյան Եզնիկ քահանա: - Տեառնընդառաջ կամ քառասնօրեայ գալուստն Քրիստոսի ի տաճարն: 1981, փետրվար, էջ 22-25:

1125. Պետրոսյանց Վիկտոր Մնացականի: - Գայրեմական մշակույթի պաշտպան հայ կանայք: 1981, մարտ, էջ 36-41, օգոստ., էջ 44-50, հոկտ., էջ 46-50:

Երկու նկար:

1126. Պետրոսյանց Վիկտոր Մնացականի: - Սաղմոսավանք: [Մեկ նկար]: 1981, ապրիլ, էջ 55-58:

1127. Պոզապալյան Ներսես եպիսկոպոս: - Սուրբ Էջմիածնի

խորհուրդը: [Զարոգ]: 1981, հոկտ., էջ 19-20:

1128. Պողոթյան Նորայր արքեպիսկոպոս: - Երանի որ ունիցի գաւակ ի Դայաստան: 1981, հոկտ., էջ 30-31:

1129. Ռումինահայ թեմի եպիսկոպոսական Աթոռի հաստատման 580-ամյակին նվիրված հանդիսություն Բուխարեստի եւ Սուչավայի Դայոց եկեղեցիներում: 1981, սեպտ., էջ 9-13:

Չորս նկար:

1130. Արտառուչ հանդիպում: [Վազգեն Ա Վեհափառի հանդիպումը հայրենաբնակ Իր աշակերտների հետ]: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 26-28:

Մեկ խմբանկար: Ներդիր:

1131. Սուրբ Ծննդյան տոնը Մայր Աթոռում: 1981, հունվար, էջ 23:

1132. Սուրբ Դարության տոնը Մայր Աթոռում: 1981, ապրիլ, էջ 15:

1133. Սուրբ Ստեփանոսի տոնը եւ սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում: [Յուսիկ արքեպս. Սանթրույանը սարկավագ է ձեռնադրում Վարդգես Մկրտչյանին, Գարուշ Լազարյանին եւ Կառլեն Պետրոսյանին]: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 23-24:

1134. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Դայոց Վեհափառ Դայրապետի կոնդակը Կ. Պոլսի լուսաբնակ տ. Դակոբ Նալյան պատրիարքի ծննդյան 280-ամյակը նշելու մասին: 1981, հուլիս, էջ 5-7:

1135. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Դոգեշնորի տ. Ամանիա վարդապետ Արաքսջեանին հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ

Արքոյ էջմիածնի ողջոյն Դայրական եւ օրհնութիւն Դայրապետական: Բաքու: Վեհափառ Դայրապետի կոնդակը տ. Ամանիա վարդապետ Արաքսջանին Աղոթեցանի առաջնորդական տեղապահ նշանակելու մասին: 1981, հոկտ., էջ 3-4:

1136. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Պատուարժան կենտրոնական վարչութեան, յարգարժան շրջանային վարչութեանց եւ մասնաճիւղոց եւ համայն բարեսէր եւ աստուածապաշտ անդամոց Դայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, ի գահէ սրբոյ հորն մերոյ Գրիգորի Լուսաւորչի եւ ի գահակալէ նորին ողջոյն եւ օրհնութիւն Դայրապետական: Ամենայն Դայոց Դայրապետի սրբատառ կոնդակը Դայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան 75-ամյակի առթիւ: 1981, մայիս-հունիս, էջ 6-7:

1137. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Սուրբ Փրկիչ ազգային հիւանդանոցի յարգարժան հոգաբարձութեան, բժշկական դասուն, պաշտօնէութեան եւ համայն հաւատացեալ մեր ժողովուրդին, հարազատ որդւոց Մայր Աթոռոյ Արքոյ էջմիածնի ողջոյն Դայրական եւ օրհնութիւն Դայրապետական: Դայոց Դայրապետի կոնդակը Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցի հաստատման հարյուր հիսունամյակի առթիւ: 1981, սեպտ., էջ 3-4:

1138. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Դայոց Վեհափառ Դայրապետի շնորհավորական գիրը Ամանորի եւ Սուրբ

Ծննդյան տոմսերի ամօքիվ ուղղված
Հայաստանյայց եկեղեցու նվիրա-
պետական երեք աթոռներին, թեմա-
կալ բոլոր առաջնորդներին և
եկեղեցական համայնքներին: 1981,
հունվար, էջ 11-12:

1139. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Գերաշնորհ Տ. Արսեն
եպիսկոպոս Պերպերեանցին, հարա-
գատ որդւոյ Մայր Աթոռոյ Արքոյ
Էջմիածնի ողջոյն Հայրական և
օրինութիւն Հայրապետական: Երե-
ւան: Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի կոնդակը Տ. Արսեն
եպիսկոպոս Բերքերյանցին Արարատ-
յան Հայրապետական թեմի առաջ-
նորդական փոխանորդ Նշանակելու
մասին: 1981, հունվար, էջ 6-7:

1140. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամանորի և Փրկչի
հրաշափառ Սուրբ Ծննդյան տոմսերի
ամօքիվ Ամենայն Հայոց Ծայրագույն
Պատրիարք և Կաթողիկոս, Նորին
Սուրբ Օծութիւն Տ.Տ. Վազգեն Ա
Հայրապետի և քույր եկեղեցիների
հոգեւոր պետերի միջև փոխանակ-
ված ողջույնի հեռագրերն ու գրու-
թյունները: 1981, հունվար, էջ 8-10:

1141. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Հայրապե-
տական քարոզ Փրկչի հրաշափառ
Սուրբ Ծննդյան տոմի ամօքիվ Մայր
Տաճարում (1981 թ., հունվարի 6):
1981, հունվար, էջ 3-5:

1142. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրա-
պետի քարոզը Փրկչի Հրաշափառ
Սուրբ Հարության տոմի ամօքիվ
Մայր Տաճարում (1981 թ. ապրիլի
19): 1981, ապրիլ, էջ 3-5:

1143. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց
Կաթողիկոսի խոսքը հայ մահա-
տակաց հիշատակին (24 ապրիլի,
1981 թ., Վիեննա): 1981, մայիս-
հունիս, էջ 16-17:

1144. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց
Հայրապետի խոսքը Վիեննայի
Արքեպիսկոպոս, Նորին Գերագան-
ցութիւն կարդինալ Զյունիգին՝ Իր
պատվին կազմակերպած պաշտո-
նական ընդունելության ժամանակ
(22 ապրիլի 1981 թ. Վիեննա):
1981, մայիս-հունիս, էջ 12-15:

1145. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց
Վեհափառ Հայրապետի խոսքը
Վիեննայի սուրբ Ստեփանոս Մայր
Տաճարում՝ Իր այցելության
առիթով (26 ապրիլի 1981 թ.):
1981, մայիս-հունիս, էջ 18-20:

1146. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայ-
րապետի քարոզը Մայր Տաճարում:
(Կիրակի, 18 հոկտ., 1981 թ.):
1981, հոկտ., էջ 5-7:

1147. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց
Վեհափառ Հայրապետի հեռագիրը
Նորին Արքութիւն Հովհաննես-
Պողոս Բ Պապի մահափոքրի
ենթարկվելու առիթով: Վատիկան:
Լաեւ կարդինալ Կասարուլիի պա-
տասխանը: 1981, մայիս-հունիս, էջ
4-5:

1148. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց

վեհափառ Հայրապետի հեռագիրը՝ ուղղված Կուլպենկյան հիմնարկությանը՝ տիար Գեորգ Եսայանի մահվան առթիվ: 1981, ապրիլ, էջ 21:

1149. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետը հուլիսի 10-ին վեհարանում ընդունեց Հայաստանի հեռագրական գործակալության թղթակցին եւ արեց հետեւյալ հայտարարությունը: [Պաշտպանություն է հայտնվում ՍՍՀՄ Գերագույն խորհրդի՝ աշխարհի պառլամենտներին եւ ժողովուրդներին ուղղված դիմումին]: 1981, հուլիս, էջ 3-4:

1150. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Երուսաղեմի Հայոց Նորին Ամենապատվություն տ. Եղիշե սրբազան պատրիարքին՝ Սուրբ Աթոռի նորընտիր լուսարարապետի ընտրության առիթով: 1981, մայիս-հունիս, էջ 11:

1151. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին եւ եկեղեցական համայնքներին: 1981, ապրիլ, էջ 9-10:

1152. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Շայրագույն Պատրիարք եւ կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն S.S. Վազգեն Ա Հայրապետի եւ քույր եկեղեցիների հոգեւոր պետերի միջեւ փոխանակված

հեռագրերն ու գրությունները: 1981, ապրիլ, էջ 6-8:

1153. Վեհափառ Հայրապետը Մյունխենում: 1981, մայիս-հունիս, էջ 40-48:

Բովանդ.: Հանդիպում Մյունխենի հայության հետ: - Ընդունելություն Մյունխենի արքեպիսկոպոսարանում: - Ժամերգություն ս. Աննա տաճարում: - Այցելություններ: - Հ.Բ.Ը. միության Մյունխենի մասնաճյուղի ճաշկերույթը: - Հայրապետական ս. պատարագ եւ քարոզ ս. Թեատինյան տաճարում: - Համայնքային ընդունելություն՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: - Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը Մյունխենի համայնքային ճաշկերույթին (3 մայիսի 1981 թ.): - Այցելություն Բավարիայի վարչապետարան: - Ժամերգություն ս. Հարություն տաճարում:

1154. Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Սիմիստրների խորհրդի նախագահ մեծահարգ տիար Ֆադեյ Սարգսյանին: 1981, մայիս-հունիս, էջ 3:

1155. Վեհափառ Հայրապետի գահակալության քսանվեցերորդ տարեդարձին նվիրված հանդիսություն Մայր Աթոռում: 1981, սեպտ., էջ 5-6:

1156. Տեր-Հակոբյան Զգոն եպս.: - Սծու Փռքը: 1981, օգոստ., էջ 11-14:

1157. Տեր-Հակոբյան Զգոն եպս.: - Սուրբ Աստվածածին եւ օրհնություն խաղողի: 1981, մայիս-հունիս, էջ 93-95:

1158. Տեր-Ղեւոնդյան Արամ: - Անձեռագործ դաստառակը արաբ պատմագրության էջերում: [Ուսումնասիրություն]: 1981, հունվար, էջ 37-43:

1159. Տեր-Սիքայեւյան Նուբար: - Զավեն Ժ. վրդ. Արզումանյանի «Հայկական պատմագրության

ուսումնասիրություններ» [զրքի] գրախոսականը: 1981, օգոստ., էջ 53-55:

1160. Տեր-Միքայելյան Լուսար: - Ցուցակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 1981, հունվար, էջ 55-60, փետրվար, էջ 57-60, մարտ, էջ 51-60, ապրիլ, 59-60, հուլիս, էջ 57-60, սեպտ., էջ 55-60, հոկտ., 55-60, նոյեմբ.-դեկտ., էջ 53-54:

1161. Տեր-Պետրոսյան Լևոն Հ[ակոբի]: - Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն թարգմանության մախօրիմակի հարցի շուրջ: [Ուսումնասիրություն]: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 42-48:

1162. Տերտեռեան Եղիշէ արքեպիսկոպոս: - Յիսուսի Քրիստոսի ծառայ տ. Եղիշէ արքեպիսկոպոս և շնորհիւ ամենասուրբ Դոգույն Պատրիարք Առաքելական Սուրբ Աթոռոյ Երուսաղեմի, վերատեսուչ սուրբ և տնօրինական տեղեացն Քրիստոսի, յորմէ հասցէ շնորհք և օրհնութիւն ի վերայ Դայ Բարեգործական ազգապարծան միութեան: Պատրիարքական կոնդակ Դայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եօթանասունհինգամեայ յոբելեանին առիթով: 1981, մայիս-հունիս, էջ 8-10:

1163. Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1981 թվականի ընթացքում տպագրված նյութերի: 1981, նոյեմբ.-դեկտ., էջ 56-60:

1164. Քահանայական ձեռնադրություն Բուխարեստի Դայոց ս. Դրեշտակապետաց եկեղեցում: [Տիրայր արքեպս. Մարտիրոսյանը կուսակրոն քահանա է ձեռնադրում Սրա սրկ. Շլուկյանին, վերանվանելով տ. Արամայիս քհն. Շլուկյան: {Երկու նկար}: 1981, մայիս-հունիս, էջ 87-88:

1165. Քյոսեյան Դակոբ Դ.: - Անանիա Ամահնեցու «Հակաճառության» դավանաբանական արձրություններ: 1981, հուլիս, էջ 49-52:

1166. Քյոսեյան Դակոբ Դ.: - «Ի խորհուրդ Յովնանու մարգարեի» երկը և նրա հեղինակը: [Ուսումնասիրություն]: 1981, սեպտ., էջ 45-52:

1167. Քյոսեյան Դակոբ Դովհան-նեսի: - Դույն Մատենագիրները հայ դավանաբանական գրականության մեջ. Ամփիլոքս Իկոնացի: [Ուսումնասիրություն]: 1981, հոկտ., էջ 51-54:

1168. Օդլուզյան Արեւ արքեպ: - Փրկագործության և մարդեղության խորհուրդը: [Ուսումնասիրություն]: 1981, մարտ, էջ 5-11:

1169. "Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского католического. 1981, հունվար, էջ 61, փետրվար, էջ 61, մարտ, էջ 61, ապրիլ, էջ 61, մայիս-հունիս, էջ 96-97, հուլիս, էջ 61, օգոստ., էջ 61, սեպտ., էջ 61, հոկտ., էջ 61, նոյեմբ.-դեկտ., էջ 61:

1170. "Etchmiadzin" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzin. 1981, հունվար, էջ 63., փետրվար, էջ 63, մարտ, էջ 63, ապրիլ, էջ 63, մայիս-հունիս, էջ 100-101, հուլիս, էջ 63, օգոստ., էջ 63, սեպտ., էջ 63, հոկտ., էջ 63, նոյեմբ.-դեկտ., էջ 63:

1171. "Etchmiadzin" official journal of Etchmiadzin. 1981, հունվար, էջ 62, փետրվար, էջ 62, մարտ, էջ 62, ապրիլ, էջ 62, մայիս-հունիս, էջ 98-99, հուլիս, էջ 62, օգոստ., էջ 62, սեպտ., էջ 62, հոկտ., էջ 62, նոյեմբ.-դեկտ., էջ 62:

"ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ИЮНЬ 1998)

Редакционная.

1. "Вера есть осуществление ожидаемого и уверенность в невидимом" (стр. 3-6).
2. Встреча Католикоса Всех Армян Гарегина I с Генеральным Секретарем ООН, 22 июня 1998 г. Нью-Йорк (стр. 8).
3. Письмо благодарности Католикоса Всех Армян Гарегина I Председателю Национального Собрания Франции по поводу официального признания геноцида армян 1915 г, 30 мая 1998 г, Нью-Йорк (стр. 9).
4. Приветственное слово Католикоса Всех Армян Гарегина I по поводу визита в Республику Армения Президента Республики Аргентина доктора Карла Саула Менемии, 30 июня, 1998 г. (стр. 10-11).
5. Диякон Арарат Галоян. Годичный акт в Геворковской Духовной Академии, 18 июня, 1998 г, (с публикацией обращения Католикоса Гарегина I) - (стр. 12-15).
6. Навстречу 1700-летию принятия христианства в Армении. Лес Трдата. (о насаждении деревьев в окрестностях Хор-Вирапа) - (стр. 16).
7. Паломничество 1998 года: Франция-Армения. 10-30 августа 1998 г. (стр. 17-18).

РЕЛИГИОЗНО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ОТДЕЛ

8. Проповедь иеромонаха Макара Ованесяна в Кафедральном Соборе св. Эчмиадзина в праздник извлечения из рва св. Григория Просветителя, 13 июня 1998 г. (стр. 20-21).
9. Проповедь иеромонаха Баграта Галстяна в Кафедральном Соборе св. Эчмиадзина, 21 июня, 1998 г. (стр. 22-25).
10. Молитва Св. Иоанна Златоуста пред лицом Святого Духа. (перевод с древнеармянского протоархимандрита Микаэла Ачапаяна) - (стр. 26-30).
11. СВ. ФРАНЦИСК САЛЬСКИЙ. Руководство к благочестивой жизни. Часть III (перевод с русского Арпинэ Папаян) - (стр. 31-44).
12. ГРИГОР БРУТЯН. Древнеармянские представления о календаре на материале "История Армении" Агатаңгелоса (исследование) - (стр. 45-53).
13. ЛИЛИТ ХАЧАТРЯН. Заимствованные слова в "Истории" Гевонда Варданета - (исследование) - (стр. 54-58).
14. ЖАН- МАРИ МАРТИН. Выходцы с Востока в Южной Италии (до XI в.) (Исследование, продолжение. Перевод с французского Азата Бозояна) - (стр. 59-67).
15. КАРЕН МАТЕВОСЯН. Епархиальное разделение Армянской Церкви. Из истории Гутаркской епархии (исследование) - (стр. 68-76).

16. РУБЕН СИМОНЯН. Род меликов Херумянопов (исследование) - (стр. 77-80).
17. РАЧЬЯ МИРЗОЯН. История одной картины (исследование) - (стр. 81-89).
18. АВЕТ АВЕТИСЯН. Рукописное наследие Захарии Ереца Аванци (исследование) - (стр. 90-98).
19. ВАРТАН ГРИГОРЯН. Переписка Католикоса Гукаса Карнеци с царем Картл-Кахетия Гераклом III и членами царской семьи (1786-1792) (исследование, с публикацией ряда документов) - (стр. 99-106).
20. МЕРУЖАН КАРАПЕТЯН. Неизвестные печатные изображения Католикоса Овсепя Аргутяна (исследование) - (стр. 107-113).
21. САСУНИК ВИРАБЯН. Гидростроительные работы на территории Эчмиадзинского монастыря (17 в-начало 20 в) (исследование) - (стр. 114-122).
22. ГОАР КАЗАРЯН. Неопубликованные письма Норайра Бюзандаци. (исследование, с публикацией писем выдающемуся ученому Степану Малхасянцу) - (стр. 123-132).
23. ДИАКОН ГЕГАМ МАРТИРОСЯН. Контуры истории благоустройства Армянской Церкви (XX в) (исследование) - (стр. 133-141).

ЛИТЕРАТУРНЫЙ ОТДЕЛ

24. ВАРТАН ДЕВРИКЯН. "Крестный путь" (стр. 142-147).
25. ИЕРОМАНАХ БАГРАТ ГАЛСТЯН. Доброго полета (к изданию ежегодника "Татев" Геворковской Духовной Академией) - (стр. 148-150).

В ПЕРВОПРЕСТОЛЕ И ЕПАРХИЯХ

26. МАРИАМ ВАРДАНИЯН. Освящение алтаря и Божественная Литургия в Хор-Вирапе, 13 июня, 1998 г. (стр. 152-154).
27. Христианская конференция в Багдаде, 8-10 июня, 1998 г. (стр. 155-157).
28. ОВАНЕС ТАГУКЯН. Выставка Сокровищ Армянской Церкви в Афинах, 2-30 июня, 1998 г. (стр. 158-159).
27. Хроника Первопрестольного Эчмиадзина за июнь месяц (стр. 160-162).
28. ИЕРОМОНАХ ХОРЕН ОВАНЕСЯН. Библиография журнала "Эчмиадзин" (1978-1983) - (стр. 163-174).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(JUNE 1998)

EDITORIAL

1. "Faith is the assurance of things hoped for, the conviction of things not seen" (pp. 3-6).
2. His Holiness Karekin I met with the General Secretary of UN, June 22, 1998 (p. 8).
3. His Holiness Karekin I's letter of gratitude to the Speaker of French Parliament on the occasion of the official recognition of Armenian Genocide of 1915, May 30, 1998 (p. 9).
4. His Holiness Karekin I's greeting letter to the President of Argentine Dr. Carlos Saul Menem on the occasion of his visit to Armenia, June 30, 1998 (pp. 10-11).
5. **DEACON ARARAT GAPOYAN** - Closing ceremony in Kevorkyan Seminary, June 18, 1998. With the letter of His Holiness Karekin I (pp. 12-15).
6. Towards the 1700th anniversary: Trdat's forest (about the planting of a forest around Khor Virap monastery on the occasion of 1700th anniversary) - (p. 16).
7. Pilgrimage of 1998 - France-Armenia, August 10-30, 1998 (pp. 17-18).

RELIGIO-PHILOLOGICAL

8. Sermon of Hieromonk Makar Hovhannisyan on the feast of Liberation of St. Gregory the Illuminator from prison in Virap, June 13, 1998 (pp. 20-21).
9. Sermon of Hieromonk Bagrat Galstanyan in the Cathedral, June 21, 1998 (pp. 22-25).
10. St. John Chrysostom's prayer to the Holy Trinity (translation from classical Armenian by Archimandrite Mikael Ajapahyan) - (pp. 26-30).
11. **FRANCIS of SALES** - Introduction to the Devout Life (translation from Russian by Arpine Papayan) - (pp. 31-44).
12. **GRIGOR BRUTYAN** - Armenian ancient calendar reflections according Agatangelos' "History of Armenia" (pp. 45-53).
13. **LILIT KHACHATRYAN** - Term borrowings in Levond's "History" (pp. 54-58).
14. **JEAN-MARI MARTIN** - The Easterners in Southern Italy (upto XI century) (translation from French by Azat Bozoyan) - (pp. 59-67).
15. **KAREN MATEVOSSYAN** - Diocesan divisions of the Armenian Church: from the history of Gugark diocese (pp. 68-76).
16. **RUBEN SIMONYAN** - There was also Kherumyan house of meliks (pp. 77-80).
17. **HRACHYA MIRZOYAN** - Self-amendment or history of a picture (pp. 81-89).
18. **AVET AVETISSYAN** - Manuscriptal heritage of Priest Zakaria of Avan (pp. 90-98).
19. **VARDAN GRIGORYAN** - The correspondence of Catholicos Ghukas of Karin with Herakli II King of Kartli-Kakheti and the members of royal family (1786-1792) (with some originals) - (pp. 99-106).
20. **MERUJAN KARAPETYAN** - Newly-invited published portraits of Catholicos Hovsep Arghutyan (pp. 107-113).

21. SASUNIK VIRABYAN - Water-providing works in Etchmiadzin monastery (XVII-XX cc.) - (pp. 114-122).
22. GOHAR GHАЗARYAN - Unpublished letters of Norayr Byuzandatsi (with some letters to famous scientist Stepan Malkhasyants) - (pp. 123-132).
23. DEACON GEGHAM MARTIROSSYAN - Sketch of history of reformation in the Armenian Church (pp. 133-141).

LITERARY

24. VARDAN DEVRIKYAN - "Via Crucis" (pp. 142-147).
25. HIEROMONK BAGRAT GALSTYAN - Let Tatev give wings (on the occasion of Seminary's annual publication "Tatev") - (pp. 148-150).

IN THE MOTHER SEE & DIOCESES

26. MARIAM VARDANYAN - Consecration of Holy Altar in Khor Virap monastery, June 13, 1998 (pp. 152-154).
27. Christian Assembly in Bagdad, June 8-10, 1998 (pp. 155-157).
28. HOVHANNES TAKUKYAN - Armenian spiritual values in Athens (about the exhibition of Armenian spiritual treasures in Athens from April 2 upto June 30, 1998) - (pp. 158-159).
29. Church pulpit: News - The description of celebrated Holy Liturgies and delivered sermons in the Cathedral and other ceremonies in the Mother See on June (pp. 160-162).
30. HIEROMONK KHOREN HOVHANNISYAN - Bibliography of "Etchmiadzin" monthly (1974-1983) - (pp. 163-174).

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JUN 1998)

REDACTION

1. "La foi est l'assurance des espérances et la réalité des faits invisibles" (pp. 3-6).
2. Le Catholikos de tous les Arméniens a rencontré le secrétaire général des Nations-Unies. 22 juin 1998 New-York (p. 8).
3. La lettre de remerciements du Catholikos de tous les Arméniens au Président de l'assemblée nationale française à l'occasion de la reconnaissance officielle par la France du Génocide de 1915. 30 mai 1998 New-York (p. 9).
4. La lettre de salutation de SS Karékine Ier Catholikos de tous les Arméniens au Président de la République argentine, Mr Carlos Saoul Menem à l'occasion de sa visite en Arménie. 30 juin 1998 (pp. 10-11).
5. DIACRE ARARAD KAPOYAN. La cérémonie de clôture du collège Kévorkian, le 18 juin 1998. Le message de SS Karékine Ier Catholikos de tous les Arméniens à cet effet (pp. 12-15).
6. Au devant du 1700e anniversaire. La forêt Tridate. A l'occasion du 1700e anniversaire du christianisme en Arménie et au sujet de la plantation d'arbre aux alentours de Khor Virab (p. 16).
7. Le pèlerinage France-Arménie du 10 au 30 août 1998 (pp. 17-18).

PHILOLO-RELIGIEUX

8. L'homélie du père Maguar Hovanessian prononcée dans la cathédrale à l'occasion de la fête de la délivrance de St-Grégoire l'Illuminateur de Khor Virab. 13 juin 1998 (pp. 20-21).
9. L'homélie du père Pakrad Kaloustian prononcée dans la cathédrale le 21 juin 1998 (pp. 22-25).
10. La prière à la Ste-Trinité de St-Jean de Chrysostome. Transcrit de l'arménien classique par l'archimandrite Mikael Adjabayan (pp. 26-30).
11. FRANCISCUS DE SALI. Guide de la vie pieuse. 3e partie. Traduit du russe par Arpiné Babayan (pp. 31-44).
12. KRIKOR BROUTIAN. Les plus vieilles imaginations journalières des arméniens selon "l'histoire des arméniens" d'Akatankéghos. Etude (pp. 45-53).
13. LILIT KHATCHADRIAN. Au sujet de la copie des mots de l'oeuvre "Histoire" du prêtre Ghévond. Etude (pp. 54-58).
14. JEAN-MARIE MARTIN. Les orientaux dans le sud de l'Italie jusqu'au 11e siècle. Etude. Traduit du français par Azad Bozoyan (pp. 59-67).
15. GARENE MATEVOSSIAN. Le partage diocésain de l'Eglise Arménienne. Récit du diocèse de Kougark. Etude (pp. 68-76).
16. ROUPENE SIMONIAN. Il existait également une race mélikienne "Khéroumian". Etude (pp. 77-80).

17. HRATCHIA MIRZOYAN. Complément ou l'histoire d'une image. Etude (pp. 81-89).
18. AVED AVEDISSIAN. L'héritage manuscrit du vétéran Zakaria d'Avan. Etude (pp. 90-98).
19. VARTAN KRIKORIAN. La correspondance du Catholicos Luc de Garni avec le roi Héraclé de Kartli-Kakhet et les membres de la famille royale géorgienne. 1786-1792. Etude. Egalement quelques documents originaux (pp. 99-106).
20. MEROUJIAN GARABEDIAN. Les images imprimées et nouvellement trouvées du Catholicos Hovsep Arzoutian. Etude (pp. 107-113).
21. SASSOUNIG VIPABIAN. Les travaux hydrauliques du monastère d'Etchmiadzine. 17^e siècle-début 20^e. Etude (pp. 114-122).
22. KOHAR GHAZARIAN. Les lettres non éditées de Norair de Byzance. Etude. Se trouvent des lettres adressées au célèbre scientifique Stépan Malkhassian (pp. 123-132).
23. DIACRE KEGHAM MARDIROSSIAN. La "squelette" de l'histoire de la réforme de l'Eglise arménienne. Etude (pp. 133-141).

LITTERAIRE

24. VARTAN DEVRIKIAN. Le chemin de croix (pp. 142-147).
25. PERE PAKRAD KALOUSTIAN. Que Datev "donne des ailes". A l'occasion de la sortie du bulletin annuel "Datev" du collège Kévorkian (pp. 148-150).

AU ST-SIEGE ET DANS LES DIOCESES

26. MARIAM VARTANIAN. Bénédiction du Saint Autel et Ste Messe à Khor Virab. 13 juin 1998 (pp. 152-154).
27. Réunion oecuménique à Bagdad. 8-10 juin 1998 (pp. 155-157).
28. HOVANNES TAKOUKIAN. Les objets d'arts précieux arméniens à Athènes. Exposition du 2 avril au 30 juin 1998 (pp. 158-159).
29. Diverses informations ecclésiastiques. Description des différentes messes, homélies, célébrations et cérémonies au mois de juin 1998 (pp. 160-162).
30. PERE KHORENE HOVANISSIAN. Bibliographie du mensuel "Etchmiadzine". 1974-1983 (pp. 163-174).

ԽՄԲԱԳՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱՇԻՆ

«ԷՋՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՇԻՆԻ ՏՊԱՐԱՆ